

Yancy S
1983 P.

Chyupul
St. Michael's


ՊԱՏՄՈՒԹԵԱՆՅ
ՀԱՄԱՌՈՏՈՒԹԻՒՆ

ԴՊՐԱՏԱՆ ՏՂՈՅ
ՀԱՄԱՐ



Զ Ո Ր Ս

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆՔ



3464

[Handwritten signature]

1429

24

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ի Բ

ՉՈՐԻՑ

ԻՆԻՍՏԻՏՍՆԱԿԱԼՈՒԹԵԱՆՑ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ

Հ. ԵՓՐԵՄ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Ս Ե Թ

ՄԻԹԱՐԵԱՆ



ՎԵՆԵՏԻԿ

ՍՈՒՐԲ ԴԱԶԱՐՈՒ ՎԱՆԻՔ

1833

9(3)

Handwritten mark

2004



1991
47

Ծ Ա Ն Ո Ւ Յ Ո Ւ Մ Ն

ԹԻՒՆՈՐ սուրբ գրոց պատմութիւնը հարկաւոր է մարդուս, հաւատքին վերայ հաստատուելու և պէտք եղած խրատները մէջէն առնելու համար, Արտաքին պատմութիւններն ալ հարկաւոր է որ մարդ իմանայ օրինակներով սուրբ գրոց մէջէն առած խրատներուն պահելու հարկաւորութիւնը, տեսնելով ամէն տեսակ մարդիկ իր աչքին առջև. լսէ թէ անոնցմէ ո՞վ ի՞նչ ըրեր է. որո՞ւն ըրածը գովելու արժանի է, որո՞ւնը արհամարհել պէտք է. իմանայ թէ էրբ մարդ իրեն աղէկ երևցածը պէտք է առաջ տանի և էրբ ուրիշին ուղածին հետևի: Տեսնէ՛ թէ կիրքը մարդուս ինչէր ընել կուտայ, ի՞նչ փորձանքներու մէջ կը ձգուի. ի՞նչպէս մարդուս հարկաւոր է իր չափը գիանալ. արդարութիւնը սիրել. ուրիշի վերայ նաև թշնամիին վերայ գութ սէր ցուցընել: Մէկ խօսքով. ճանչնայ թէ աս աշխարհիս մէջ հաստատուն բան չիկայ. հարուստն ու աղքատը, թագաւորն ու ռամիկը նոյնպէս քիչ ատենէն ամէն բան

կրմնուհան , կրթողուն երեսի վերայ ու
իրենք աշխրբէս կելեն կերթան . միայն
իրենց ըրած աղէկուէ կամ գէշուէ յիշա
տակը կրմնայ : Եւ անդին իրենք ալ ար
դար գտտաւորէն Աստուծմէ ըրածներ
նուն փոխարէնը կառնեն կի՛ վարձ կամ
պատիժ յաւիտենական :

Աս բաներս իրենց գլխէն անցածի պէս
կամ պատմութէց մէջ հայլիի պէս ար
ղաքը առջևնին տեսնելով , խրատին ու
խելք սորվեցընող օգտակար գործքերու
ձեռք զարնեն և գէշէն ըզգուշանան :

Մեր խնդիրքն ալ Աստուծմէ աս բանս
է . որով մենք ալ մեր աշխատանացը վարձ
քերնիս առած կըսեպենք :


Որովհետև Յիս մէջ գլխաւոր հետըզ
հետէ տիրող ազգերը Չորս Ինքնակալուի
ներն են . այսինքն Ասորիք , Պարսիկք ,
Յոյնք և Հռոմայեցիք . անոր համար աս
հատորը չորս մասն կըբաժնենք . և ուրիշ
երևելի ազգերուն հարկաւոր գիանալու
պատմութիւններն ալ յաւելուած կընենք
իրենց ժամանակովը ամէն մէկ մասին ե
տակէն . թողլով միայն մեր ազգին պատ
մութիւր , զատ հատոր տպելու համար :



Ա Ր Տ Ա Ք Ի Ն

Պ Ա Տ Մ ՈՒ Թ Ե Ա Ն Յ

Վ Ը Բ Ա Յ



Հ. Աշխարհիս անցած գացած ազգերուն մէջ եղած գիպուածները բոլոր տեղնիտեղը կայ գրած :

Պ. Ինչպան ջրհեղեղ անաշնչին պատմութիւն գուրս ուրիշ ըստոյգ գրուած պատմունի չիկայ : Ջրհեղեղէն ետքն ալ երբոր Նոյի որդիքն աշխարհիս մէջ ասդիս անդին ցրուեցան ու ըսկսան իրենց քաղաքներ շինելու զատ զատ տերութիւններ ձևանալ, մէջերնին հանդիպած երևելի գիպուածներն արձաններու վըրայ կրփորէին . կամ անոնց վըրայ երգեր շինելով ու երգելով որդիէ որդի կըթողուին : Անոր համար թէպէտ ան ատենները եղած գիպուածներէն շատ քան հիմա

կը յիշատակին , բայց առասպելներով
խառնած են : Ուստի սլատմագիրները
ան գրսի սլատմուհիները անձանչին պատ-
մութիւնը յարմարցնելով , որչափ որ կա-
րելի է ճշմարիտը առասպելներուն մե-
ջէն կը զատեն ու մեզի կաւանդեն :

Հ . Ջրհեղեղէն ետքը ինչպան Ք.Ս ու-
ժով ու անուանի եղած ազգերը որոնք
են :


Պ . Հնուք և մեծագործուք երևելի
եղան Եգիպտացիք , Սինէացիք , Հնդիկք ,
Հայք , Կարբեղոնացիք : Բայց մեծա-
գործուէ հետ մեկտեղ ուժով ալ երևելի
եղան Ասորիք , Պարսիկք , Յոյնք և Հռո-
մայեցիք . որոնք մեկզմեկէ ետև աշխար-
հիս մեծ մասին տիրեցին , անոր համար
Չորս Ինքնակալութիւն կը կոչվին : Ինչպէս որ
Աճ ալ յայտնեց Նաբուքոդոնոսորին
արձանին տեսիլքովը : Ասոնցմէ ետքը
կամաց կամաց Ք.Սի հաւատքը տարած-
վելով , քրիստոնէուէ հետ մարդկութի
օրէնքն ալ մտնալ ըսկսաւ . և անոր հա-
մար ասդիս անդին ինքնագլուխ զօրաւոր
տէրուհիներ ծաղկեցան : Եւ անկէ ինչ-
պան հիմա աշխարհիս մեծ մասին զօրա-
ւոր թագաւորներուն վերայ տիրողը ե-
ղաւ Ք.Սի հաւատքը . ինչպէս որ Դանիէլ
մարգարէն մեկներ էր Նաբուքոդոնոս-
որին երազը :



Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Չ Ո Ր Ի Յ

Ի Ն Ք Ն Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Ե Ա Ն Յ



Մ Ա Ս Ն Ա

Ա Ս Ո Ր Ո Յ

Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ա

Հ. ԱՍՈՐՈՅ Թագաւորուիը երբ Բէէն
 ըսկաւ, և առջի Թագաւորնին ո՞վ է: Ասաջ
 Պ. Զրհեղեղէն հարիւր տարիի չափ 2204
 ետքը երբոր ըսկսան մարդիկ հայաստա-
 նէն բաժնըվիլ ասդիս անդին, և Սենա-
 արայ դաշտին մէջ աշտարակը շինելու
 ատեն լեզուսին խառնակելով երբոր ցը-

րուեցան, Ներբովթ* Քամայ թողը, Քու-
չայ որդին, կարիճ և սիրտ վաստակող
մարդ ըլլալով զօրացաւ, ամենուն վերայ
տիրեց ու շինեց Բաբելոն քաղաքն՝ որ
առաջ աշտարակ շինելու մտքով ըսկոեր
էին : Ետքը գնաց Ասորեստան, Սեմայ
Ասուր որդւոյն ձեռքէն առաւ Նինուէն
ու հոն կըթագաւորէր ինչվան որ մե-
ռաւ Հայկայ մեր նախահօրը ձեռքէն :

Հ . Ներբովթին ոմ յաջորդեց :

Պ . Ներբովթէն ետև հինգ ազգ որ-
դիէ որդի յաջորդեցին, բայց յիշատակի
արժանի գործք մը չընելով, հազիւ թէ
անուանին մնաց : Անոնց ետևէն նստաւ
Նինոս . որ ինչվան Հնդկաստան գնաց
առաւ . Նինուէ քաղաքը մեծցուց զար-
դարեց . որուն պատերուն բարձրութիւն
էր հարիւր ոտք, իսկ հաստութիւն այն-
չափ էր՝ որ վերայէն իրեք կառք քովէ
քով հանգիստ կըրնային երթալ : Հա-
զար հինգ հարիւր աշտարակ ունէր . բարձ-
րութիւննին էր երկու հարիւր ոտք :
Նինոս աս շինուածքները լրմնցընէէն
ետքը Բաղտրիացոց վերայ պատերազմի
գնաց անթիւ զօրքով, և անոնց մայրա-
քաղաքն առաւ Շամիրամին խորհրդովը՝
որ զօրավարներուն մէկուն կինն էր :

Հ . Նինոս ինչպէս մեռաւ :

Պ . Նինոս հաւնելով Շամիրամին խեղ-
քին և կարճուէր, վերան աչք ձգեց . ուս-

* ԲԷԼՄԼ ԻԵՒԼԻ ԻՄԲԱԿԱՂՆ ՈՐ ՄԷՐ ԸՄԷԼԷ :

տի Շամիրամին էրիկն ալ Նինոսի սպառնալիքներէն զարհուրած ինքզինքն ըստաննեց : Անտենը Նինոս Շամիրամն իրեն կին առաւ . ուսկից տղայ մը ունեցաւ Նինուլաս անուանով : Անգամ մը Շամիրամ ուզեց Նինոսէն որ հինգ օր միայն աերուին իրեն յանձնէ , և ան հինգ օրւան մէջ Շամիրամ զՆինոս մեռցնել տուաւ ու ինքն իշխեց . և մեծ անուն թողլու համար Բաբելոնը զարդարեց :

Հ . Բաբելոնին գլխաւոր զարդերը որոնք են :

Պ . Նախ երևելի էին պարիսպներն որ երկուհարիւր կանգուն բարձր էին , և յիսուն կանգուն էր հաստուինին . բոլոր շրջապատը չորսհարիւր ութսուն ասպարէզ՝ աղիւսով ու կայրով շինած . ձևը քառակուսի . ամէն մէկ կողմը քսանը հինգական դուռ՝ թափծու սղնձէ . Շամիրամ պարըսպին գրտի գին մեծ խրամ փորեց՝ երկու կողմը աղիւսով պատած : Երկրորդ երևելի էր կամուրջը . երկայն մէկ ասպարէզ* , ըայն երսուն ոտնաչափ , խոշոր քարերով շինած : Ամբընն երկու ծայրը երկու սալատ կար՝ որ գետին տակէն մէկզմէկու ճամբայ ունէին . մէկուն բոլորաիբր երսուն ասպարէզ , մէկաւ լինը վաթսուն . իրեք կարգ մէկզմէկէ հեռու սալատով սպտած . սպտերուն վը-

* Ասպարէզն է 416 իանգոտն . 4 իանգոտնն է մէկ յոդ :

րայ բոլոր փորված սրատկերներ: Մէկուն մէջն էր Վախաշանաւոր Բարասպան ըսածնին, քառակուսի, կամարներու վերայ առած. ու չորս գին սանդուխի ձևով բարձր սրատ հիւսած՝ սրբիսպներուն բարձրութեամբը. աս կամարներուն վերայ քարէ յատակ էր, քարին վերան ալ եղէգովու կուպրով ծեփած. անոր վերան աղիւս շարած, ալ վերան կասարով սրատ, որպէս զի վերան լեցուցած հողուն թացուիլը՝ շինուածքին մասս չընէ. հոն տնկած կար ամէն տեսակ ծառ. մէջը ջրհաններ շինած: Կամարներուն տակն ալ մեծամեծ աղւոր սրահներ էին: Երրորդ երևելի էր Բելայ մէհեանը, որուն մէջն էր մեծ աշտարակ մը ամէն Եգիպտոսի բրգունքներէն բարձր, քառակուսի. որ կրկարծէն թէ բուն Բաբելոնի աշտարակն ըլլայ: Կրտէն թէ ասոնցմէ մէկ քանին վերջի թագաւորներու շինուածք էն:

Հ. Շամիրամ Բաբելոնին շինուածքէն ուրիշ երևելի ի՞նչ գործք ըրաւ:

Պ. Բաբելոնէն դուրս ալ ուր որ կերթար, շինուածքներով կը զարգարէր, ծուռումուռ ճամբաները կը շրտկէր: Անանկ կառավարուէ հոգի մըն ալ ունէր՝ որ երբ ինքը կերևնար՝ ամէն խռովութի կը դադարէր: Օր մը մազերը շրտկելու զարգարվելու ատենն խմացուցին որ քաղաքին մէջ խռովուի կայ. մէկէն անանկ խառնափնգորած մազերով գնաց

խաղաղուց . և ասոր յիշատակ արձան մը կանգնեցին ան երևցած կերպարան . քոյն, իմացընելով իրեն հոգացողուն ու ջանքը : Շատ պատերազմներ ալ ըրաւ . հայաստան ալ եկաւ մտաւ . ետքը ինչ վան հնդկաստան գնաց , Ինդոս գետէն ալ լաստերով անդին անցաւ . ուսկից որ Աղէքսանդրէն ուրիշ թգր չիկրցաւ անցնիլ : Բայց Շամիրամ յաղթուած ետ գարձաւ , զօրքերուն շառը կորսընցուցած : Քառսուն սարի իշխելէն ետև 'Նինուասայ իր որդոյն հետ ուզեց կարգը վիլ , ան ալ մեռուց զինքն ու տեղն անցաւ :

Բ

Հ . Նինուաս ինչպէս կառավարեց տէրուիլ . և անոր ով յաջորդեց :

Պ . Բոլորովին անհոգութեամբ . միայն զօրք որոշեր էր որ տարւէ տարի կըփոխվէին հաւատարիմ զօրապետներու ձեռքի տակը՝ որ չըլլայ թէ իրեն փնաս մը հասցընեն : Աս անհոգութե մէջ երսուն թագաւոր ետևէ ետև նստեցան և ամենևին յիշելու արժանի պատմութի մը չիթողուցին : Անոնցմէ ետև նստաւ Փուա կամ Փուղա , որուն որ Մանայեմ Իէլացոց թագաւորը տասը տաղանդ տուաւ իրեն օգնելու համար : Վըկարծըվի թէ Յոյնանու քարոզուէն զըջացող թագաւորն առ է և Սարգանապաղայ հայրը :

Ք. Ա

Հ. Սարգանապաղ ի՞նչ մարդ է :

Պ. Ասորեստանցոց առջև թագաւորներուն ցեղին վերջինը . որ կրնատէր կանանց հետ ըոք կրմանէր , կրզարդարվէր կնկտոց պէս ու կուտէր կրխմէր . ինչ վան որ օր մը վարբակէս Մարաց իշխանը տեսնելով Սարգանապաղը կանանց հետ նստած , բարկացաւ , դնաց Պարոյր Հայոց նահապետին ու Բեղեսիս Բաբելոնի իշխանին հետ մէկ եղաւ ու Սարգանապաղը Նինուէի մէջ երկար սաշարելէն ետև , երբոր Տիգրիս գետին սասկացած ատենը սլատին մէկ կողմը փլաւ , բոլոր զօրքը ներս թափեցան . և թագաւորն ալ յուսահատած՝ պալատին չորս դին փայտ գիզած բռնկցրնել տուաւ՝ ու իր կնկտոցմով և շատ ունեցած գանձերուն հետ մէկ տեղ այրեցաւ :

Հ. Սարգանապաղին ո՞վ յաջորդեց :

747

Պ. Վարբակէս Սարգանապաղին յաղթելէն ետև , որովհետև Պարոյրն ու Բեղեսին իրեն օգնեցին , Պարոյրին պատուոց համար թագ խրկեց որ թագաւոր կոչվի . և Բեղեսին ալ Բաբելոնի վերայ թագաւոր դրաւ Սարգանապաղին տեղը : Աս Բեղեսին սուրբ գրոց մէջ Բաղդան կրկոչվի : Բեղեսինն ետևէն նստան որդիքը ինչվան թագաւորութիւնասար , որ ինքզինքը Նինոս կրտսեր անուանեց , ու Նինուէն նորոգելով իր աթոռը հոն փոխեց : Անոր համար ասիկա Ասորեստանի նոր ինքնապալու թէ առաջին թագաւոր

կըսեալի. Աքաղ թագաւորը զասի իրեն Ք. Ա
օգնութի կանչեց. աս ալ գնաց յաղթեց
ամէնուն, Աքաղէն ալ չափէ գուրս
հարկ առաւ ու դարձաւ :

Հ. Թագաղաթփաղասարէն ետև ո՛վ
նստաւ :

Պ. Սաղմանասար. որ Իէլացոց թա- 728
գաւորութիւնը ջնջեց ու մարդիկը գերի
տարաւ, Տօբիթն ալ մէկտեղ: Ետևէն 717
նստաւ Սենեքերիմ Սաղմանասարին որ
գին, որ երկու անգամ Եէմին վերայ ե-
կաւ: Աւջի անգամուն Եթովպացիք իր
երկիրները կոխելուն համար՝ ըստառնա-
լով ետ դարձաւ. երկրորդ անգամուն
Եզեկիա Ա, 7 ինկաւ. և մէկ գիշերւան
մէջ հրեշտակը Սենեքերիմին զօրքէն հա-
րիւր ութսուն և հինգ հազար ջարդեց,
որ առաւօտանց խաղք եղած քիթը կա-
խած ետ դարձաւ, ու սրտին ցաւէն ըսիւ-
սաւ ջարդել իր տէրուէ մէջ եղած Իէլա-
ցիները, որ Տօբիթ կը թաղէր: Իրեննե-
րուն վերայ ալ ըսկսաւ խստանալ. ինչ
վան իրեն երկու մեծ տղաքը զինքը մե-
հենին մէջ ըստաննեցին ու Հայաստան
փախան: Եւ իրեն յաջորդեց սղտի որ-
դին Ասորդան :

Գ

Հ. Ասորդանայ ինչ գործքը կըսելի,
և անոր յաջորդն ո՛վ է:

Պ. Եէմի վերայ սրտերազմ բացաւ,

Ք. Ա Մանասէն գերի տարաւ ու քիչ ատե-
 669 նէն թողուց : Սաւադոքին անոր յաջորդն
 է, որ կրավի Նաբուքոդոնոսոր առաջին :
 Ասոր ատենն ըսկսեր էր ու ժովնալ Մա-
 րաց թագաւորու թիւ, որ առաջ ասդիս
 անդին ցրուած անգլուխ աղգ մըն էր :

Հ. Մարաց թագաւորու թե առջի
 ծաղկեցընողն ո՞վ էրաւ :

710

Պ. Դիովկ խելացի մարդ մը զանոնք
 ամէնքը ժողվեց, մէջերնին կարգ կանոն
 դրաւ, ու Եկբատան քաղաքը շինեց եւ
 թը պարիսպով մէջէ մէջ, և խիստ մէջի-
 նը որ է եօթներորդը՝ ամէնէն բարձր,
 որուն մէջն էր թագաւորին պալատը .
 վեցերորդին մէջն էր իշխաններունը . իսկ
 մէկաւնոնց մէջը քաղաքացոցը : Ամէն
 մէկ պարսպին եզերքը այլևայլ գոյն աը-
 ւած, դրսըվանց խիստ ահաւոր կերևնար :

657

Դիովկ երբոր մեռաւ, անոր տղան Փրաւ-
 որտ կամ Արփաքսադ աւելի ամրացուց
 զԵկբատանը և ըսկսաւ քալել Պարսից և
 Հայոց վերայ և չորսգիին տիրել :

Հ. Արփաքսադ Ասորոց կըրցա՞ւ վը-
 նաս մը ընել :

Պ. Չէ. վասն զի երբոր ըրած յաղթու-
 թիներովը հպարտացած՝ Ասորոց վերան
 ալ վազեց, Նաբուքոդոնոսոր դէմն էլաւ
 յաղթեց, գնաց ինչվան Եկբատանն ալ
 առաւ, բռնեց զԱրփաքսադն ու նե-
 տով ըսպաննել տուաւ :

Ք. Ա

Հ. Նարուբոգոնոսոր Արփաքսադէն ըստ պաննէէն ետև ուրիշ ինչ հանգիպեցաւ Ասորոց ու Մարաց մէջ :

669


Պ. Առջի բերանը Նարուբոգոնոսոր հպարտութիւն լցված ըսկսաւ տիրել ուրիշ ամէն գաւառներուն վերայ որ առաջ իրմէն գլուխ քաշեր էին : Ետքը խրկեց Հողեփեռնէսը Բեաիղուայի վերայ ալ որ գնաց Յուդիթէն յաղթըվեցաւ ու զօրքն աւցրուեցան : Անատենը Կիաքսար Փրաւ Լորտի որդին հօրը աեղն անցաւ ու սաստիկ կատաղած ըսկսաւ Նաբուբոգոնոսորայ վերան վազել . Հողեփեռնէսին ցրուած զօրքին հանգիպեցաւ ու ջարդելով ինչվան Նինուէ հասաւ , և քիչ մնաց որ քաղաքն առնէ : Բայց լսելով թէ Սկիւթացիք Եւրոպայէն Մարաց երկրին վերայ կուգան , ետ դարձաւ , անոնց հետ պատերազմը քէց , յաղթըվեցաւ . և քսանըութը տարի Սկիւթացիք տիրեցին գրեթէ բոլոր Ասիայի . ինչվան անգամ մը խարդախութիւն Մարաց ազգը բոլոր զՍկիւթացիներն իրենց սուներ հրաւիրեցին և մէկ գիշերվան մէջ զամէնքը մէկէն ըսպաննեցին : Անատենը մնացածները ցրուած փախան Լիւդացոց աշխարհքը , և անկէ պատերազմ ըսկսաւ Լիւդացոց ու Մարաց մէջ . ինչվան անգամ մը պատերազմելու ատեն արևու խաւարմունք հանգիպեցաւ . անոնք կարծելով թէ Այտաաթիժն է , խաղաղուի ըրին հաշտուեցան՝ մէկզմէկու արիւն լզելով . ինչպէս

635

626

3464

155 57



Ք. Ա որ սովորութիւն էր՝ դաշն դնելու ատեն
մէկզմէկու թև քիչմը վերաւորել ու ա-
րիւնը լզել:

Դ

Հ. Առաջին Նաբուքոդոնոսորին ո՞վ
յաջորդեց:

648

Պ. Սարակոս իրեն որդին, որ անախ-
տանուէր համար անարգւեցաւ ամէնէն.
և Նաբուսպաղսար զօրապետն ալ ապրս-
տամբեցաւ ու քսանըմէկ տարի Բաբել-
լոնի մէջ գլուխ քաշած իշխելէն ետև,

626

երբոր Կիւքսար Մարաց թաղաւորն ըս-
կիւթացոց ձեռքէն ազատեցաւ, անոր
հետ մէկ եղած եկան Նինուէն առին,
կործանեցին. ինչպէս որ մարգարէացած
էր. Սարակոսն ըսպաննեցին. և անկէ
ետքը Ասորեստանցոց մայրաքաղաքը միշտ
Բաբելոն եղաւ: Ատեն անցաւ, երբոր
ըսկասն ապստամբիլ Նաբուսպաղսարէն
քովի եղած ազգերը, ինքը ծեր ըլլալուն
իր որդին, Բ, Նաբուքոդոնոսորը խրկեց
անոնց դէմ:

606

Հ. Նաբուքոդոնոսոր տէրուին ի՞նչ
պէս կառավարեց:

Պ. Չորսդին ըսկասաւ յաղթութիւններ
ընել, ինչպիսն հրէաստան ալ եկաւ, Յո-
վակիմը բռնեց. ետքը նորէն թողուց.
բայց շատ Իէլացիներ հետը Բաբելոն
տարաւ: Եւ երբոր Նաբուսպաղսար մե-
ռաւ, գնաց Նաբուքոդոնոսոր աթոռը

նոտաւ . և թագաւորուէ չորրորդ տա .
 րին երազ տեսաւ , որնոր Գանիէլը մեկ-
 նեց : Ետքը երբոր Յովակիմ ասպտամ-
 բեցաւ , Նաբուքոդոնոսոր գնաց սաշարեց
 Եէմն ու Յովակիմը բռնեց մեռուց : Ետ-
 քը անոր որդին Յովակիմ երբոր նորէն
 ասպտամբեցաւ , Նաբուքոդոնոսոր եկաւ
 բռնեց դերի տարաւ անով տեղով , ու Սե-
 դեկիան թագաւորեցուց : Սեդեկիան ալ
 երբոր Եգիպտացոց թագաւորին դիմեց ,
 եկաւ Նաբուքոդոնոսոր՝ Յուդայի թա-
 գաւորուծիւր բոլորովին վերցուց : Անկէ
 վերջը պատահեցաւ երից մանկանց քա-
 ջուծիւր : Ետքը Նաբուքոդոնոսոր գնաց
 Տիւրոսի վերայ , տասւիրեք տարի պա-
 շարելով առաւ . անկէ գնաց բոլոր Ե-
 գիպտոսի տիրեց : Եւ երբոր հանգստա-
 ցած ըսկաւ Բաբելոնը զարդարել , հպար-
 տացած ուրախուծեան մէջ եղած ա-
 տենը՝ ծառին տեսիլքը տեսաւ , ու գա-
 զանի բնուի փոխվեցաւ , ինչվան որ խել-
 քը գլուխն եկաւ և անկէ տարիէ մը մե-
 ռաւ , քառսուհւիրեք տարի թագաւո-
 րելէն ետեւ : Տեղը նստաւ որդին Իդմա-
 րովգաք :

589

562

Հ. Երկրորդ Նաբուքոդոնոսորէն ետեւ
 որչափ դիմացաւ Ասորեստանցոց թա-
 գաւորուծիւր :

Պ. Խիստ քիչ . վասն զի Իդմարովգաք
 թոյլ մարդ ըլլալով դաւով ըսպաննելե-
 ցաւ : Տեղը նստաւ Նեգղասարոս , որ Մա-
 րաց գէմ պորզմ բանալով մեռաւ . անոր

561

Ք. Ա որդին Լաբեորաքոս գէշ մարդ ըլլալով
 ընտանիքը մեռուցին զինքը, ու տեղն ան-
 ցաւ Նաբուքոդոնոսորին թուռ Լաբինիտ
 538 Բաղտասար, որուն ատենը վերցըւեցաւ
 Ասորեստանցոց տէրուին. որ պիտի յի-
 շենք Պարսից պատմութե մէջը :






ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԱՍՈՐՈՅ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ

ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ԵՔԻՊՏՈՍԻ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ



Ե

Հ. Եգիպտոսի թագաւորուիւր էրք Բ. Ա
ըսկսաւ, և առջի թագաւորն ոմ էղաւ :

Պ. Զրհեղեղէն հարիւր տարիի չափ 2188
եաքը Բաբելոնին աշտարակը կործանե-
լու առեն Բամ'Նոյայ որդին գնաց Եգիպ-
տոս բնակեցաւ : Եւ որովհետեւ Բամ'
չորս որդի ունէր, Բուշ, Մեսարեմ,
Փուգ, Բանան . ասոնցմէ Մեսարեմը,
որ արտաքին սպամիչները Մենէս կա-
նուանեն, հօրը մեռնելէն ետեւ իշխեց
Եգիպտոսի ու առաջին թագաւոր ըս-
վեցաւ . և զԲամն ալ Արամազդ Ամինն
անուանով Այ տեղ սաշտել ըսկսան : Ա-
նոր համար անձաշունչին մէջն Եգիպտոսը

կրկնովի Երկիր Քամայ կամ Մեսարեմայ : Իսկ Մեսարեմայ իրեք եղբայրներն ալ Եգիպտոսի քովի դաւառներուն իշխեցին . Քանան՝ Քանանացոց երկրին . Քուշ Եթովպիային . Փուդ Լիբիայի կողմերուն : Բայց Եգիպտացիք առ չորս թագաւորներուն յաջորդները՝ ամէնքը մէկ թագաւորուէ իշխեցողի պէս ետեւէ ետեւ կըշարեն ու քառապատիկ շապընելով իրենց իշխանուէ տարիները , աշխրբիս ըստեղծմանէն ալ առաջ կըսանին ազգերնուն ըսկիզբը . որ յայտնի սուտ է :

Հ . Մեսարեմէն ետեւ ո՞վ իշխեց Եգիպտոսի :

Պ . Յաջորդուէ կարգաւ յայտնի չէ . բայց երևելի եղան իմ , Բուսիրիս՝ որ Թեբէ քաղաքը շինեց հարիւր դուռով . որ ամէն մէկ դռնէն՝ մէկէն կըրնար հանել տասնական հազար զինուոր և երկերկու հարիւր կառք : Մէջը պալատ մը շինեց մեծ և գեղեցիկ . և ուրիշ շէնքեր , սիւներ , արձաններ , որոնց աւերակները տեսնելով ճամբորդները ինչ վան հիմա՝ զարմանալով կըսպատմեն : Զարմանալի էր և Մեմփոնի արձանը՝ որ արևը վըրան զարնելու ասեն անուշ ձայն կըհանէր :

Բ . Ոսիմանդ , որուն շինած պալատն ու գրքաստունը երևելի է . նաև իր գերեզմանը՝ որուն վըրայ նշանած էր արեւուն ընթացքը , ամիսները ևն :

ի. Ուկոր, որ Մեմփիս քաղաքը շե Բ. Ա
նեց Նեղոսին բաժնրված տեղը :

ի. Մերիս, որ լիճ մը փորել տուաւ,
որուն շրջապասան էր իրեքհազար վեցհա-
րիւր ասպարէզ, և խորուիը իրեքհարիւր
ոտնաչափ : Աս լիճը Եգիպտոսի խիստ
մեծագործ բաներուն մէկը կըրնայ սեպ-
վիլ և ամէնէն ալ օգտակար : Այսն զի
Եգիպտոսի մէջ անձրև քիչ ըլլալով՝ Նե-
ղոս գետը իրենց ջուր կըհասցընէ . Մե-
րիս աս լիճը շինեց՝ որ երբ գետը խիստ
լեցվի օգոստոս ամսուն, հոն պարպըւի
ու երկրին վնաս չընէ . և երբոր Նեղոս
ցամբի յունվար ամսուն, ան լճէն ջուր
տան արտերուն . ասով բոլոր Եգիպտոս
պարարտացաւ և միշտ գեղեցիկ կանչը-
ցած կերևնայ :

հ. Մերիսէն ետև Եգիպտոսին յիշա-
տակի արժանի թագաւոր ո՞վ եղաւ :

Պ. Երկուհարիւր վաթսուն տարի 2084
չափ օտար հովիւ թագաւորներ տիրե-
ցին : Ետքը եկան ան թագաւորներն որ
սուրբ գրոց մէջ Փարաւոն կըկոչվին . ա-
նոնցմէ մէկը զՅովսէփ գեղեցիկն իրեն 1728
երկրորդ ըրաւ . ուրիշներն ալ զԵլէւացիներ
ըր չարչարեցին ու ան երևելի բուրգերը
շինել տուին : Ասոնց մէջէն երևելի ե-
ղան Սեսոսար, Փերոն, Քէոպս և Քեփ-
րէն երկու եղբարք որ ետևէ ետև յիս-
նական տարի իշխեցին բռնաւորութե-
որոնք հրաման չէին խտար ժողովրդեան
տաճար երթալու, և կըչարչարէին զա-

Բ. Ա մէնքը՝ բուրգեր շինել տալով: Ասոնցմէ
 էտե Միկերին, որ միայն եօթը տարի իշ-
 խեց. ու երբ խնդրեց գիքերէն թէ անի-
 րաւները շատ ապրեցան ու ինքը քիչ,
 պատասխան լսեց՝ թէ Դու ալ յիսուն
 տարի պիտի ապրէիր թէոր անիրաւ ըլ-
 լայիր, անիրաւ ժողովուրդը պատժելու
 համար: Ետքը Ասիբիս Փարաւոն, որ
 Սողոմոնին հետ խնամութի ըրաւ: Սաւ-
 սակիմ, որ շատ զօրքով Այ հրամանովն
 եկաւ Եէմին տաճարը կողոպտեց: Չա-
 րեհ, որ Ասայի վերայ ելաւ ու ջարդը-
 ւեցաւ: Սաբակ, որուն Ողիան գես-
 պան խրկեց որ գայ օգնէ Սաղմանասա-
 րին գէմ: Սեթոն. Թարակ. Երկոտա-
 սան թագաւորք. Փսամետիքոս. Նէքա-
 ւով. Փսամութէս. Վափրէս. Ամասիս.
 վերջինը Փսամենէս:

725

525

2

Հ. Բուրգերը ի՞նչ շինուածք են:

Պ. Թագաւորներու գերեզմաններ.
 յատակնին քառանկիւն և բարձրութի-
 նին եռանկիւն, ու վերի ծայրերնին սուր:
 Մէջերնէն մէկը խիստ մեծ է որ եօթը
 հրաշարեաց մէկը կըրնայ սեպվիլ. 77
 ձողաչափ բարձր է. ամէն մէկ կողմի
 երկայնութիւր 110 ձողաչափ. երսուն
 տարի քչեց շինելը. միայն բանւորնե-
 րուն սօխի սխտորի համար չորս միլիոն
 արծաթ ըստակ գնաց:

Հ. Սեսոստրին վերայ դիւանալու ար. Բ. Ա.
ժանի ի՞նչ կը պատմուի :

Պ. Նախ սղտը կուց իր հայրը Ամենով 1491
փիա հրաման տուաւ որ Սեսոստրի ծնած
օրը Եգիպտոսի մէջ ամէն ծնած տղաքն
իրեն բերեն. ու անոնց հետ մէկտեղ կըր-
թել տուաւ Սեսոստրը՝ ամէն տեսակ չար-
քաշու թէ՛ վարժեցընելով : Ետքը խրկեց
զինքը պատերազմի ան մէկտեղ մեծցած
ընկերներով : Ասանկ քաջուէ՛ վարժե-
լով Սեսոստր, երբ ինքնագլուխ եղաւ՝
ամէնուն սիրտը շահել կընայէր անու-
շուք ու արդարուք. և ան իր ընկերնե-
րը զօրագլուխ դնելով շատ յաղթու թի-
ներ ըրաւ : Բիւրաւոր զօրքերով Գան-
գէսէն ինչվան Գանուբ տիրեց : Աուզէր
անցնիլ նաև Եւրոպա, պաշար չունե-
նալուն ետ դարձաւ : Ամէն հասած տե-
ղերն արձան կրկանգներ՝ վերան իր ա-
նունը գրած : Շատ երևելի շինուածք-
ներ ալ շինեց յարմար չափերով. բայց
իր հպարտութեք չիկըրցաւ չափ դնել :
Յաղթը ող թագաւորներէն երբոր հարկ
տալու կուգային, անոնցմէ չորս հոգի
իրեն կառքին կըրծէր : Ետքը իր ծերուն
ստեն աչվըները կուրցան, յուսահատած
ինք զինքը մեռուց : Բոլոր կենացը մէջ
փառք վաստրկելու աշխատեցաւ, ու չի-
կըրնալով աշխարհիս փառքով սիրտը կը-
տացընել, իր կեանքէն ալ կամօք հրա-
ժարեցաւ :

Ք. Ա
1457

Հ. Սեփարիին ո՞վ յաջորդեց :

Պ. Իր որդին Փերոն : Անգամ մը երբ
Նեղոս տասնըութը կանգուն բարձրա-
ցաւ , Փերոն բարկացաւ , ու գետը սրա-
ժեղ ուզելով՝ գետին մէջը նետ նետեց .
ետքը ինքը սրատժըւեցաւ / կուրցաւ կը-
սեն :

Հ. Ասիքիս ի՞նչ գործք ըրաւ յիշելու
արժանի :

1104

Պ. Օրէնք գրաւ Եդիսպտացոց որ փոխ
առնողն իր հօրը մարմինը գրաւ տայ .
և ով որ սնհոգ ըլլայ գրաւը ետ առնե-
լու , երբոր մեռնի՝ իրեն յուղարկաւո-
րուի չընեն : Ասիքիս առջիններէն աւելի
մեծ բուրգ մը շինեց ու վրան գրեց ,
թէ Ինչպէս Արամազդ կուռքերուն մէջ ,
անանկ ալ աս՝ բուրգերուն մէջ մեծ է :

Հ. Սեթոնի վրայ ի՞նչ կըսատմուի :

719

Պ. Կըսեն թէ Սեթոն շատ ջերմե-
ռանգ ըլլալով , ըսկաւ քրմութի ընել
ու բոլոր զօրքը երեսէ թողուց , եկա-
մուսանին դադրեցուց : Եւ երբոր Սենե-
քերիմ վրան սպտերազմի ելաւ , Սե-
թոն առանց զօրքի մնացած՝ Հեփես-
տոսի տաճարն սպաւինեցաւ ու սատ-
գամ լսեց որ չիվախէ երթայ : Ուստի
ելաւ քաղքին արուեստաւոր մարդիկ
ները ժողովեց ու սպտերազմի գնաց : Եւ
կըսեն թէ ան գիշերը շատ մկներ եկան
Սենեքերիմայ զօրաց աղեղներուն լարերը
և վահանները կրծելով անսպիտանացու-
ցին . անանկ որ երկրորդ օրը Սենեքերիմ

աստիկ ջարդ ուտելով փախաւ : Աս յաղ
 թու թեանս նշան Սեթոն մեհենին մէջ
 կանգնեց Հեփեստոսին արձանը՝ աջ ձեռ-
 քը մուկ մը տուած , արձանին վերան ալ
 գրած թէ Պէտք է բարեպաշտ ըլլալ դի-
 քերուն : Աս Սենեքերիմայ Եհմի վերայ
 գալուն ու հրեշտակէն գիշերը ջարդը-
 ւելուն պատմուին է՝ որ Եգիպտացիք ի-
 րենց յարմարցուցեր են . որովհետև Սե-
 նեքերիմ Եգիպտացոց յաղթելէն ետքը
 եկաւ Եհմին վերան ու գիշերւան մէջ
 հրեշտակէն ջարդըւեցաւ :

Է

Հ . Երկոտասան թագաւորներն ինչ
 մարդիկ են :

Պ . Թարակայ մեռնելէն ետև Եգիպ-
 տացիք չիկրնալով իրենց թագաւոր մը
 որոշել , միաբանեցան տասերկու մեծ
 իշխաններ մեկտեղ թագաւորելու . և
 որովհետև Հեփեստոսէն պատգամ էլեր
 էր թէ Ով որ պղինձ գաւաթով գինի ի-
 րեն նուիրէ , ան կիշիւէ ամենուն , աս
 բանէս տասերկուքն ալ երգումով հրա-
 թարեցան . և իրենց ասանկ միաբանուէր
 յիշատակ՝ շինեցին անուանի բաւիղը Մե-
 րիսեան լճին քով՝ որ էին տասերկու
 պալատ մեկտեղ՝ հազար հինգհարիւր
 խուցով և տասերկու սրահով . թէ որ
 ճամբայ չիգիացողը մէջը մտնէր , ալ չէր
 կրնար ելլել : Տասնըհինգ տարի տաս-

Ք. Ա Լերկուքը միաբանն թագաւորելէն ետև՝ օր մը մէկտեղ մեհենին մէջ ոսկի գաւաթով գինի խմելու առեն, գաւաթ մը սրակսեցաւ. ուստի մէջերնէն Փսամեաիկոսն ուշ չի գնելով՝ գլխէն սղնձէ սաղաւար ար հանեց ու անով խմեց: Աս բանըս մէկաշինոց գէշ երևնալով՝ զինքը քշեցին Եգիպտոսին ներսերը: Հոն Փսամեաիկոսը սրտգամ լսեց՝ թէ Պղնձէ մարդիկ ծովն կողմէն գան քեզի օգնեն սխաի: Ասէն անցաւ, օր մը իմացուցին իրեն թէ սղնձի մարդիկ եկեր են, որ էին մէկ քանի զրահ հալած Յոյն զինուորներ՝ ալէկոծուէ հոն ինկած: Անատենը Փսամեաիկոս զօրք ժողվեց, զանոնք վերակացու դրաւ ու գնաց տիրեց Եգիպտոսի:

Հ. Փսամեաիկոսի վերայ գիանալու ինչ բան կայ:

669

Պ. Խաղաղասէր ըլլալով ամէն բան աղէկ կարգի կը դնէր ու կուժովնար: Բասանըհինգ տարի սաշարելով Ազով տացոց քաղաքն առաւ: Արսէն թէ երկու տղայ մէկըմէկէ զատ այծերու մէջ մեծցընել տուաւ. երկու տարիէն երբոր մարդ քովերնին գնաց, ըսկսան տղաքը Պէգգօս կանչել. քննեցին իմացան որ Պէգգօս Փախգացոց լեզուով հաց ըսել է. ասկէց կարծեցին Եգիպտացիք որ Փախգացիք իրենցմէ հին ազգ են:

Հ. Նեքաւովայ վերան ինչ կըստատմելի:

616

Պ. Նեքաւով ուզեց որ Վարմիր ծովը

Նեղոս գետին հետ միացնէ . բայց հա- Ք. Ա
զար ասպարէզ տեղ փորել տալով, հա-
րիւր քսանհազար մարդ ջարդուէլէն
եաքը թողուց . պատգամ լսելով թէ Ան
թշնամիներուն ճամբայ կըլլայ : Նէքա-
ւովայ օրը Փիւնիկեցի նաւավարներ Վար-
միր ծովէն ճամբայ ինկան՝ Սեպտէի նե-
ղուցէն դարձան Եգիպտոս եկան : Աս
թագաւորն է որ Բաբելոնացոց վերայ եր-
թալու ատեն Յովսիան գէմն ելաւ ու
մեռաւ : Նէքաւոյն ալ Բաբելոնէն ետ
դառնալու ատեն մտաւ Եգիպտոս
ըրաւ :

Հ. Աւափրէս ո՞վ է, ու ի՞նչ երևելի
գործք ըրած ունի :

Պ. Աւափրէսն է Փարաւոն Աւափաւը, 594
որ շատ զօրանալով կարծեց թէ Այ ալ
կըյաղթէ : Սեգեկիան ալ անոր յու-
տացաւ . բայց Այ հրամանովը Նաբուքո-
դոնոսոր Սեգեկիային յաղթեց . եաքը
Եգիպտոսացոց մէջն ալ խռովուի իյնալով,
երբ մէկզմէկուհետ կըկուռէին, գնաց
Նաբուքոդոնոսոր յաղթեց, Տիւրոսին վը-
րայ աշխատելուն վարձքն առաւ, և Ամա-
սիսը թագաւոր դրաւ ու դարձաւ :

Հ. Ամասիս ի՞նչ երևելի գործք ունի :

Պ. Ամասիս առաջ Աւափրէսին իշխան- 569
ներուն մէկն էր որ խրկըւեցաւ ժովու-
վերդեան մէջ Աւափրէսի գէմ ելած խռ-
վութիը դագրեցընելու համար . անա-
տենը ժղվրդը Ամասիսին գլուխը թագ-
դրին . ինք ալ սիրով ընդունեցաւ ու

Ք. Ա ըսկսաւ Վափրէսին գէմ կռուիլ: Եւ
 ետքը երբոր Նաբուքոդոնոսորէն ալ
 հաստատուեցաւ աթոռը, պատերազմով
 նորէն յալթեց Վափրէսին ու բռնեց
 խզգեց: Որովհետև ժողովուրդը Ամա-
 սիսին պէտք եղած պատիւը չէին ընէր,
 ինքն ալ գխանալով որ բռնի ինք զինքը
 պատուել տալ չըլլար, վարպետութիւն
 անոնց խմացուց: Կրէն ոտք լուալու ու-
 կիէ կոնքը արձան թափել տուաւ որ
 պաշտէն, և որ մը երբեկեր երկրպագուի
 կընէին, յայտնեց իրենց արձանին ինչ
 բանէ շինած ըլլայն ու ըսաւ որ զինքն ալ
 չարհամարհէն: Ամէնքը համոզուեցան ան
 օրինակէն: Շատ շինուածքներ ըրաւ.
 Եղեփանտին քաղաքէն մատուռ մը բե-
 ղել տուաւ Նեղոսին մէջէն՝ մէկ կտոր
 քարէ փորած, որ էր քսանըմէկ կան-
 գուն երկայն, տասնը չորս կանգուն լայն
 և ութ կանգուն բարձր. երկու հազար
 մարդ երկու տարւան մէջ կըրցան բե-
 ղել: Յունաց հետ բարեկամուի ըրաւ.
 Կիպրոսի ալ տիրեց: Ասոր յաջորգեց
 Փսամենէան որ Կամբելուսէն ըսպաննըւե-
 ցաւ, և Եգիպտացոց տէրուիլ խառնըւե-
 ցաւ Պարսից հետ:



ԳԻՏԵԼԻՔ

Հ. Եգիպտացիք ի՞նչ մասնաւոր օրէնք ունէին :

Պ. Եգիպտացիք որ գիտուէ ու արհեստի մայր կրսեալէին . թագաւորին օրէնքն էր յաջորդութե՛ն նստիլ որդիէ որդի : Թագաւորին պարտքն էր որ ամէն բանի մէջ ժողովրդեան օրինակ տայ : Ամէն մարդ պարտըկան էր որ իր անունը աղքը գրել տայ գիււանին մէջ, և արհեստի մը տէր ըլլայ : Մեռելին վերայ նախ քննուի կրնէին . թէ որ աղէկ սպրեր էր՝ վերան գովեստ կրխօսէին ու ողբ կրնէին, ետքը զմեռսած՝ տունը խորշի մէջ կրկեցրնէին . որոնցմէ ինչվան հիմա կրգանըւին որ Մոսէս կրկոչվին : Իսկ թէոր գէշ մարդ էր, անոր պատիւ չէին ընէր ու կրթաղէին :


Հ. Եգիպտացոց մէջ աւելի պատուաւոր որո՞նք կրսեալէին :


Պ. Նախ քուրմերը . երկրորդ զինուորները, երկրագործներն ու հովիւները : Գրքատուն շինելն առաջ Եգիպտացիք ըսկսան, անունը դնելով Բժշկարան հոգւոց : Արձանագործուի և գրեթէ ամէն ուրիշ արհեստներ Եգիպտա-

ցոցմէ ըսկսան . միայն նուագարանը կար
համարհէին՝ շնասակար սեպեղով :

Հ . Եգիպտացոց կրօնքն ի՞նչ էր :

Պ . Կընդունէին թէ հողիներն անմահ
են . բայց հողեփոխուէ կըհաւատային :
Այ տեղ կըստաշտէին ամէն տեսակ գա-
ղանները . ինչպէս մուկ , կոկորդիլոս , օձ .
նաև կանաչեղէնները , ինչպէս սոխն ու
սխտորը : Բայց իրենց ամէնէն մեծ աստուծո
էր Ապիս կովը , որ երբ կըմեռնէր , նշան-
ներովը կըփնարուէին ու տեղն ուրիշ մը
կըբերէին : Իմաստուք բոլոր աշխարհք
զարմացընող մարդիկ՝ ճշմարիտ Ածը չի-
ճանչնալնուն համար , կովուն բառաջը՝
սոխին հօտը իրենց իմաստուէր սպառնալու
կարծեցին :





Մ Ա Ս Ն Բ

ՊԱՐՄԻՅ

ԻՆՔԵՆԱԿԱԼ ՈՒԹԻՒՆԸ

Թ

Հ. Ի՞նչ կերպով ըսկաւ Պարսից ինք. Բ. Ա
նահալուիը :

Պ. Կիաքսար Մարայ թագաւորը Նա. 635
բուսաղսարայ հետ Նինուէն կործանե-
լէն ետև ըսկաւ տէրութիը մեծցընել :
Երբոր մեռաւ, անոր որդին Աժգահակ
կամ Ասուերոս տեղն անցաւ ու եր-
կար ատեն թագաւորեց. որ երկրորդ Նա-
բուքոգոնոսորայ ատենները կիյնայ : Աս
Աժգահակը մանչ մը և աղջիկ մը ունե-
ցաւ. մանչը իրեն յաջորդեց, որ կրկոջ
ւի Կիաքսար երկրորդ, կի՛ Դարեհ Մար-
աղջիկն ալ, որուն անուէն էր Մանգա-
նէ, տուաւ Կամբիւս անուէնով Պարսկի
մը, ուսկից ծնաւ Կիւրոսը, որ եզաւ
Պարսից առջև ինքնահալը :

Ք.Ա Հ. Աժգահակ ինչո՞ւ Մանգանէն Պարսկի հետ կարգեց :

599 Պ. Աժգահակ երազ մը տեսաւ որ Մանգանէին բերնէն շատ ջուր բխելով բոլոր Ասիան կըլէցընէր : Հարցուց մոգերուն , ու ըտեց որ Մանգանէն տղայ մը ծնի պիտի որ բոլոր Ասիային տիրէ . անոր համար Աժգահակ վախցաւ կարգելու զինքը Մարաց ազգէն իշխանի հետ : Կարգելէն ետև երազմալ տեսաւ որ Մանգանէն որթ մը բուսաւ ու բոլոր Ասիային շուք կընէր . անոր համար ետևէն եղաւ որ տղան ծնածին պէս ըստաննէ . և աս բանս յանձնեց Արբակ իշխանին : Արբակ վախնալով Մանգանէն , տղան տարաւ Թագաւորական հովուի մը տըւաւ որ մեռցընէ . հովիւն ալ նոյն օրը մեռած տղայ մը ունեցած ըլլալով , անոր հետ փոխեց . և հովուին կնոջն անունը քած նշանակելուն համար կըսեն թէ շուն մը հոգացեր մեծցուցեր է զՎիրոս : Օր մը տղաքը խաղ կըխաղային , որոնց մէջ իշխանի տղայ ալ կար , ու զՎիրոսը Թագաւոր ձևացուցին . Վիրոսն ալ իշխանին տղան իբրև թէ յանցանք ըրեր է , պատժեց : Աս բանս Թագաւորին ականջը հասաւ , ու զէց տեսնել ան հովուին տղան , և տղուն համարձակ կերպին հաւնեցաւ . շատ քննելէն ետքը խնայաւ որ Մանգանէին տղան է : Բարկացաւ Արբակին որ չէ մեռուցած . ու վրէժը հանել ուզելով , անոր

տղան գաղտուկ բերել տուաւ, մորթեց,
խորովեց, ու սեղանի վըրայ Արբակին
առջևը դնել տուաւ: Արբակ չի գիտ-
նալով ուտելէն ետքը, թագաւորը դար-
ձաւ հեգնելով ըսաւ իրեն. Արբակ,
ինչո՞ւ իմ թոռս ողջ պահեցիր՝ թէ որ
համով կուտւի սիրելւոյն միսը: Լսեց
սոսկացաւ Արբակ, խշխշաց կարտեցաւ
սիրաբ, և ոխը ո՞վ կըրնար մարել: Իսկ
Աժգահակ մոգերուն խորհրդովը Պարս-
կաստան իր հօրը խրկեց զՎիւրոսը:

Ժ

Հ. Վիւրոս ի՞նչ կերպով ինքնակա-
լու թէ՛ հասաւ:

Պ. Պարսից երկրին մէջ Վիւրոս ըսկը-
տաւ քաջուհիներ ընել. և անունը մեծ-
նալով մեր Տիգրան թագաւորին հետ
աւբարեկամացաւ: Աժգահակ աս բա-
րերըս լսելով ըսկսաւ խռովիլ: Անատենը
երազմ ալ տեսաւ որ վիշապ մը իրեն հետ
կռուեցաւ ու սասաիկ վիրաւորեց զինքը:
Անոր համար մեծերուն հետ խորհուրդ
ընելով Տիգրանայ քոյրն իրեն կին առաւ
որ խաբէուք զՏիգրանը մեռցընել տայ՝
որպէս զի Վիւրոսին օգնել չի կարենայ:
Աս բանըս Տիգրան լսելով Վիւրոսին ի-
մացուց: Վիւրոս ալ որ արդէն ոխացած
էր Աժգահակայ իրեն դէմ ըրած թշնա-
մուհիներուն համար, երբոր Աժգահակ
խաբէու թէ՛ Տիգրանը կը կանչէր տեսնը-

Ք. Ա ւելու, Տիգրանն պատերազմի պատրաստը
 տրւած գէմն ելաւ՝ Կիւրոսին հետ մէկտեղ
 և Արբակ ալ՝ որուն հաւտացեր էր Աժգահակ իր զօրքը, պատերազմին
 սաստկացած ատենը Կիւրոսին կողմնանցաւ:
 Անտենը Աժգահակ կատղած՝ Տիգրանին հետ
 զարնըւեցաւ ու մեռաւ:
 560 Ետքը Կիւրոս Աժգահակայ որդին զԿիւ
 աքսարն որ Դարեհ Մար կրկուցի, հօրը տեղը
 նստեցուց՝ իր ձեռքին տակը, և ինքը
 Պարսից առաջին ինքնակալ ըսեցաւ,
 տիրեց բոլոր Ասիայու Տիգրանին օգնութիւն
 555 Կիւրոս ինչպէս վերջացուց Ասորեստանի
 թագաւորութիւնը:

555

Պ. Ասիայի ամէն կողմերուն յաղթելէն
 ետքը զԿիւաքսար Մարաց թագաւորն հետն
 առած՝ Ասորոց վերան գնաց, տիրեց ամէն
 քաղաքներուն, հասաւ ինչ վան Բաբելոն,
 անտենն որ կիշխէր Բաղասար, ու ամէն
 ինն անհոգ հանգիստ էր՝ քաղաքին ամբողջ
 թէր տալու նաձ. և մէջն ալ քսան տարւան
 պաշար կար. բայց չէր գիտէր թէ մարդուս
 զըզ ջումէն ուրիշ բան՝ Այ սպառնալեացը
 չիկրրնար յաղթել: Որովհետև Եփրատ գետը
 քաղաքին մէջէն կանցնէր, Կիւրոս քաղաքին
 բոլորտիքը լայն փոս բանալ տուաւ շատ
 աշխատանքով. և Բաբելացոց մեծ տօնի մը
 գիշեր, որ բոլոր քաղաքը կերուխումով
 կանցընէին, պա-

որաստըւեցաւ ներս վաղելու : Ան գի-
 շերն ալ Բաղտասար սեղանի վըրայ ու-
 րախացած՝ Այ տաճարին ամաններովը
 գինի խմելու ատեն՝ սրտին վըրայ գրած
 գիրը տեսաւ , ու սարսափած՝ Դանիէլը
 կանչեց մեկնել տուաւ . բայց կարծէր
 թէ դեռ ուշ կրկատարւին ան ըստառ-
 նալիքները : Կէս գիշերէն ետքը Կիւրոս
 գետին բերանը դարձուց գէպի իրենց
 նոր բացած փոսէն քալեցուց . անանկ
 որ ան մեծ գետին ան կտորն որ քաղա-
 քին մէջէն կանցնէր՝ ցամքեցաւ : Ան-
 տենը զօրքը քաղաքին երկու կողմէն՝
 ցամքած գետին ճամբէն ըսկսան ներս
 վաղել : Քաղաքացիք բոլոր գինովցած ,
 քաղաքին մէջը գետին երկու բովի սղնձէ
 դռներն ալ դոցելու մոռցեր էին . ու ստի
 զօրքը գիւրաւ մտան՝ աղէկ ջարդ մը տը-
 ւին , թագաւորն ալ մեռուցին : Ասան-
 կով վերջացաւ Ասորեստանցոց տէրուեր .
 և Կիւրոսի ինքնակալութիւն ալ աւելի
 հաստատուեցաւ : Իսկ Բաբելոնին իշխան
 եղաւ Կիաքսարը , որ և Դարեհ :

538

ԺԱ

Հ . Կիւրոս Բաբելոնն առնելէն ետե-
 ինչ գործքի հետ եղաւ :

Պ . Քիչ ատենէն երբոր Կիաքսար մե-
 ռաւ , Մարաց թագաւորուէն ալ բոլոր-
 րովին ինքն իշխեց . ու իր աթոռը գրաւ՝
 ձմեռը Բաբելոնի մէջ , իսկ ամառը Շօշ

536

Ք. Ա ու Եկբատան : Բոլոր տէրուիք հարիւր
քսան նախարարութի բաժնեց . անոնց
վերայ ալ իրեք իշխան դրաւ , որոնց մէջ
առջինն էր Դանիէլը . անոր համար նա
խանձեցան Դանիէլի, ու առիւծին գու
534 բը ձգել տուին : Ետքը Կիւրոս Աստուծ
մէ շարժած , Եէմին տաճարը շինելու
հրաման տուաւ :

Հ . Կիւրոս ինչպէս մեռաւ :

525 Պ . Անգամ մը Սկիւթացոց վերայ պա
տերազմ բացաւ , և զանոնք խաբելու
համար բանակին տեղը շատ բարեքներ
թողլով՝ փախչել ձեացուց . անոնք ալ
հասան , նստան ուտելու խմելու : Անա
տենը Կիւրոս վերանին հասաւ՝ ջարդեց
փախուց , և անոնց թագուհին տղան
բռնեց : Թագուհին շատ աղաչեց որ տղան
ես տայ , Կիւրոս չիտուաւ . տղան ալ
յուսահատուէն ինքզինքը մեռուց : Ան
ատենը Տոմիւր թագուհին կատաղած՝
նորէն Կիւրոսի վերայ պատերազմի ելաւ
ու զինքը նեղ տեղւանք խոթելով մեծ
ջարդ տուաւ . հոն Կիւրոս ալ մեռաւ
եօթանասուն տարւան : Եւ Տոմիւր թա
գուհին գտնալով Կիւրոսի մարմինը , գը
լուխը կտրեց՝ արիւնով լեցուցած տիկի
մէջ դրաւ , ըսելով . Կշտացիր արիւնով :
Ետքը Կիւրոսի մարդիկը մարմինը ձեռք
ձգեցին ու բերին Պարսկաստան թա
ղեցին :

Հ . Կիւրոսին յաջորդ ո՞վ եղաւ :

524 Պ . Իբ մեծ որդին Կամբիւս , որ Ե-

գիպտացոց վերայ պատերազմ բացաւ .
 և որովհետև պէտք էր որ նախ Պեղուս
 սահմանակից ամուր քաղաքն առնէ ,
 աստնկ խորամանկութի բանեցուց . Եւ
 գիպտացոց պաշտած կենդանիներէն շատ
 մը իր բանակին առջևէն տանելով գնաց
 քաղաքին մօտեցաւ . Պեղուսցիք վախ-
 նալով իրենց աստուածներէն , դէմ չի-
 դրին . Կամբիւս ալ մէկէն մտաւ քա-
 ղաքն առաւ : Ետքը Եգիպտոսի Փսամե-
 նէս Թագաւորն եկաւ դէմ ելաւ . և
 պատերազմը չըսկսած , որովհետև Փա-
 նէս Յոյն զօրավար մը Փսամենէսին կող-
 մէն Կամբիւսին կողմն անցեր էր ու ճամ-
 բայ կըցուցընէր , որուն երկու որդիքը
 Փսամենէսին քով մնացեր էին , անոր հա-
 մար ուրիշ Յոյներ Փանէսին ան երկու
 աղաքը բերին երկու բանակին մէջ տեղը
 մորթեցին ու արիւնը խմեցին : Ասոր վը-
 րայ Պարսիկք սասաիկ կատղեցան ու Ե-
 գիպտացոց յաղթելով Փսամենէսն ինչ-
 վան Մեմփիս փախուցին :

Հ . Կամբիւս ինչ կերպով առաւ
 Մեմփիսը :

Պ . Նաւով դեսպան խրկեց որ իրենց
 կամբոյն անձնատուր ըլլան . անոնք բըռ-
 նեցին դեսպանները ջարդեցին : Անատե-
 նը Կամբիւս պատերազմով քիչ ժամա-
 նակի մէջ առաւ քաղաքն ու քանի հո-
 գի որ էին իր դեսպան խրկած նաւուն
 մէջը , ամէն մէկուն տեղը Մեմփիսին
 իշխաններէն տասնական հոգի ըսպան-

Ք. Ա նեց: Եւ Փասմենէսը բռնեց՝ պատուով
 պահեց: Բայց երբոր իմացաւ թէ Փաս-
 մենէս կըջանայ նորէն խռովուի հանել,
 ցլու արիւն խմցընելով մեռուց:

ԺԲ

Հ. Կամբիւս Մեմփիսն առնելէն ետև
 ինչ գործքի հետ եղաւ:

523

Պ. Եթովպիան ալ առնել ուզեց. ուս-
 տի բարեկամուի կեղծելով՝ պարգև տա-
 նող դեսպաններ խրկեց որ լրտեսեն ան
 երկիրները: Եթովպացիք իմանալով
 ծաղր ըրին զդեսպանները. Եթովպացոց
 թագաւորն ալ Կամբիւսին պարգև խըր-
 կեց մէկ աղեղ մը որ Պարսիկք հազիւ
 կըրնային վերցընել: Ան աղեղով թագա-
 ւորը առաջ նետ մը նետեց, ու ըսաւ.
 Երբոր Պարսիկներն ինծի պէս աս աղեղը
 կարենան գործածել, անատեն թող գան
 մեր վըրայ պատերազմի: Միայն Շմերդ
 Կամբիւսայ եղբայրը կըրցաւ ան աղեղը
 գործածել, անոր համար Կամբիւս վախ-
 ցաւ Շմերդէն ու զինքը Պարսկաստան
 խրկեց, ետքը ըսպաննել տուաւ, որ չըլ-
 լայ թէ ապստամբուի մը հանէ: Իսկ ին-
 քը Կամբիւս կատղած ըսկսաւ երթալ
 դէպի Եթովպիա առանց աղէկ մը սրաշար
 պատրաստելու: Ճամբան սաստիկ սով
 ինկաւ մէջերնին. նախ արմատներ՝ խո-
 տեր ըսկսան ուտել, ետքը գրաստները.
 խիստ ետքը վիճակ ձգելով ըսկսան մէկ-

ըզմէկ ուտել: Թագաւորին ամենևին
հոգը չէր. բայց ետքերը վախնալով որ
չըլլայ թէ ինքն ալ փորձանքի գայ, յու-
սահատած ետ դարձաւ. մտաւ թեքէ
ու ըսկսաւ կուռքերը կործանել, յափըշ-
տակել: Երբ հասաւ Մեմփիս ու տեսաւ
որ Ապիս աստուածը գանելնուն համար
ուրախուն կընէին, չիհաւտալով կար-
ծեց թէ իր ձախորդութիւնը վըրայ կուրա-
խանան, ու շատ մարդ ջարդեց. ետքը բե-
րել տուաւ աստուածը, տեսաւ որ կով
մըն է, հանեց թուրը՝ վիրաւորեց, ու
սողէկ մը քուրմերը ծեծել տուաւ. կոփն
ալ նորէն տարին մեհեանն ու հոն ցա-
ւէն մեռաւ:

Հ. Կամբիւսին կառավարունն ինչ-
պէս էր:

Պ. Անողորմութիւն իր ամէն ուզածն ա-
ռաջ կըտանէր. մարդու մընալ չէր խնայ-
էր: Օր մը գաղանամարտ տեսնելու
գնացեր էր, ուր որ առիւծ մը շան հետ
կըկըռուէր. երբոր շունը յաղթըւելու
եղաւ, ուրիշ շուն մը վըրայ հասաւ օգ-
նելու: Անատենը Մերովէ՛ Կամբիւսին
քոյրն՝ ըսկսաւ լալ: Կամբիւս երբոր հար-
ցուց պատճառը, ըսաւ Մերովէն. Յի-
շեցի Ամերդ եղբօրըս մահն որ ան շու-
նէն ալ դժբաղդ գտնըւեցաւ: Բարկա-
ցաւ Կամբիւս. զարկաւ ոտքովն ու ըս-
պաննեց Մերովէն: Ամէն օր իր մեծե-
րէն մէյմէկ հոգի կըսպաննէր: Պրէք-
տասպ իրեն խիստ ընտանի իշխանը օր մը

ըսաւ թէ Պարսիկները գայթակղեր են վերան ինքզինքը շատ խմելու տալուն համար : Անտեսնը Կամբիւս Պրէքսասսսին որդին գիմացը կեցընել տուաւ ու նետով մը վերան նշան առաւ , ըսելով . Շխտակ սրաին : Նետը զարնելէն ետքը՝ աղուն սիրար բանալ տուաւ , ցըցուց . Գինովուէս ատենն ալ , ըսաւ , ըրածըս գիտեմ : Պրէքսասսսին ալ վախուէն պատասխանեց , թէ Ասորոնն ալ ատանկ աղէկ նշան չիկրրնար առնել : Անգամ մը Կրեսոս զինքը քիչմը խրատելուն համար՝ հրաման տուաւ որ ըսպաննեն . մարգիկը գիտնալով որ ետքը պիտի զղջայ , գաղտուկ սրահեցին . և երբոր ըսկսաւ ցաւիլ անոր մահուանը վըրայ , ըսին թէ Ողջ է : Ուրախացաւ , կանչեց քովը , և անոր տեղն ըսպաննել տուաւ զինքը ողջ սահողները :

ԺԳ

Յ . Կամբիւսին նախարարներէն ո՞վ եղաւ իրեն անողորմուէր հետևող :

Պ . Ովքետէս Սարգիկէին նախարարը գրգռուէլով մէկ իշխանէ մը , որ կրնախատէր զինքը՝ Սամոսին տիրել չիկրրնալուն համար , խաբէու թէ իրեն կանչեց Պողիկրատէս Սամոսին իշխանը , ձևացընելով թէ ինքը Կամբիւսէն ասպտամբեր է ու կուզէ անոր դէմ պատերազմի երթալ , և ունեցած գանձերը Պողիկրատէ-

սին կուզէ յանձնել : Պողիկրատէս առջի բերանը չհաւտալով մարդ խրկեց որ իրաւն իմանայ : Ովքեաւս ցըցուց եկողին քարով լեցուն տոպրակներ՝ միայն բերաններն ոսկի դրած : Պողիկրատէս երբոր լսեց ոսկիին ձայնը՝ չիդիմացաւ , մէկէն ելաւ գնաց : Ովքեաւս ալ անիրաւու թէրունեց զինքը կախել տուաւ :

Հ . Պողիկրատէս ինչպիսի մարդ էր :

Պ . Պողիկրատէս Սամոսին իշխանը խիստ հանգիստ կեանք կանցընէր , Ամասիս Եգիպտոսի թագաւորը դրեց իրեն որ խիստ հանգստուիը դէշ վերջ կունենայ . ուստի թէ որ կուզես ըսաւ , կամօք քեզի վիշտ մը հասցու : Պողիկրատէս ալ մտիկ ընելով իր անգին զմրուխտ մտանին ծովը նետեց : Մէկքանի օրէն ձկնորաները մեծ ձուկ մը բռնեցին , Պողիկրատէսի պարգև տուին . Պողիկրատէս ան ձկան փորէն դտաւ իր մտանին և ուրախացաւ : Բայց Ամասիս լսելով հրաժարեցաւ անոր բարեկամութենէն , որ գալու դժբաղդուէր վերայ ինքն ալ չիցաւի : Ինչպէս որ ետքը Պողիկրատէս հանգիստ փառքի մէջ թաղւած ըլլալով , յանկարծ ինքզինքը կախաղանը գտաւ :

Հ . Կամբիւս ինչպէս մեռաւ :

Պ . Թագաւորուէ ութերորդ տարին բանակին մէջ ձայն ելաւ թէ Շմերդ Կամբիւսայ եղբայրը Պարսկաստան թագաւորեց : Կամբիւս զարմանալով կանչեց ան պատգամը բերողն ու բռնադատեց՝

Ք. Ա իմացաւ որ Պատիզիթ մոգսէտը լսելով
 Կամբիւսայ ըրած անգթութիւները, իր
 եղբայրն որ Շմերդայ նման էր՝ թագա-
 ւորեցուցեր է: Ուստի փութացաւ որ
 դառնայ պատժէ. բայց ձի հեծնելու ա-
 տեն դիպուածով սուրը սահեցաւ, ազ-
 522 դրին վերայ սաստիկ վիրաւորեց, որ քիչ
 օրէն մեռաւ:

Հ. Շմերդ մոգին թագաւորուելը ո՞ր
 չափ քշեց:

Պ. Վեց ամիս: Թէպէտ շատ ազա-
 տութիւններ կըսարգււէր ժողովրդեան,
 որպէս զի զինքը սիրցընէ, և ինքը չէր
 երևնար որ չիճանչըւի, բայց անանկով
 աւելի կասկածելի կըլլար: Եւ որովհետև
 Շմերդ մոգին ականջները Կիւրոս կըտ-
 րեր էր յանցանքի մը համար, Պարսից
 իշխաններէն մէկը՝ որուն աղջիկը թա-
 գուհի էր, մարդ խրկեց աղջկանն ա-
 պրսպորելով որ քննէ թէ թագաւորն
 ականջ ունի: Երբոր իմացաւ թէ կարած
 են ականջները, եօթը մեծ իշխաններ
 մէկ եղած եկան կոխեցին սլաւաք, ո-
 րոնց մէկն էր Գարեհ Վ շտասայ որդին:
 Ան միջոցին մոգերն եղածը չգիտնալով
 յորդորեր էին բուն Շմերդը մեռցնող
 իշխանին՝ որ վկայէ թէ չէ մեռուցած.
 ան ալ յանձն առաւ, ու ելաւ բարձր
 տեղ մը ժողովրդեան կանչեց թէ Շմեր-
 դը ես իմ ձեռքովըս մեռուցի, և ճշմար-
 տուելը յայանելու համար առանց վախի
 կ'իմացընեմ. ըսաւ ու ինքզինքը կեցած

տեղէն լար ձգեց մեռաւ, զամէնքն ալ
 ասլէցուց: Իսկ իշխանները մտան ինչ
 վան թագաւորին սենեկին մօտ, ու յան
 կարծ թրերնին հանած ըսկսան ջարդել
 հոն կեցողները: Ետքը ներս մտան ու
 ըսպաննեցին երկու եղբայրը մէկտեղ. և
 Շմերդ մոգին գլուխը ժողովրդեան ցցու
 ցին:

ԺԴ

Հ. Շմերդէն ետև Պարսից թագա
 ւոր ուլ եղաւ:

Պ. Եօթը իշխան խորհուրդ ըրին, և
 որոշեցին որ առաւօտանց ձի հեծած եր
 թան մէկ տեղ մը՝ հոն արևը սրաշտելու.
 և որուն ձին որ առաջ խինջայ, ան ըւ
 լայ թագաւոր: Աս բանս խմանալով Գա
 րեհին ձիապանը, առջի իրիկընէ Գա
 րեհին ձին ու մատակ ձի մը հոն տարաւ
 կապեց. և առաւօտանց Գարեհն ան
 ձին հեծած, և իշխաններն ալ ձիերով
 երբոր հոն հասան, Գարեհին ձին խխըն
 ջաց. ուստի մէկէն ամէնքն ինկան Գա
 րեհի երկրպագուի ըրին. Գարեհ ալ զա
 նոնք իրեն խորհրդական ըրաւ: Եւ ան,
 կէ ետև սովորութի եղաւ որ ան եօթը
 արնէն եօթը խորհրդական միշտ թագա
 ւորին քովը գանըւին:

519

Հ. Գարեհ Աշտասպեանին վերայ ինչ
 մասնաւոր գործք կըսպատմուի:

Պ. Ովքեաէս Սարգիկէին կուսակալը

Ք. Ա մեռցրնել տուաւ, իր բռնութիներուն հա-
մար, անոր պալատին մեծերն ալ գերի
բռնած Շօշ բերին: Անոնց մէջ էր Դե-
մոկեդէս բժիշկն որ Դարեհին ոտքն ա-
ռողջացուց, ու իր բանտին շղթային տեղ
երկու ոսկիէ շղթայ պարգև առաւ: Աս
միջոցիս էր որ Դարեհ Եէմի տաճարը շի-
նեւու հրամանը տուաւ: Կըսեն թէ աս
Դարեհն է ան Արտաշէսը որ Ասուերոս
ալ կը կոչուի, որ զԵսթերն իրեն կին ա-
ռաւ, Համանը մեռցրնել տուաւ: Ու
զէց Դարեհ որ Յունաստանի ալ տիրէ,
բայց անկէ առաջ զԲաբելոնն առաւ,
որ ասպտամբեր էր:

Հ. Դարեհ զԲաբելոնն ինչպէս ա-
ռաւ:

516

Պ. Բաբելացիք քաղաքին ամրութենը
վատահացած՝ շատ պաշար պատրաստե-
լով գլուխ քաշեցին, և որպէս զի պա-
շարը երկար ստեն օգտէ իրենց, որչափ
որ տկար անպիտան մարդիկ կային քա-
ղաքին մէջ՝ զամէնքն ալ ըստօրինակեցին:
Դարեհ պաշարեց, ու շատ վարպետու-
թիներ բանեցուց, Կիւրոսին պէս գե-
տին ճամբան փոխեց. բայց բոլորէն ալ
պարապն ելլելով երբոր յուսահատած
կըմտած էր, Զոպիրոս իշխանը քիթն ու
ականջները կտրրտած դիմացն ելաւ:
Դարեհ զարհուրեցաւ ու կը հարցընէր
թէ ո՞վ ըրաւ ատ անգթութիւնը: Զոպի-
րոսն ըսաւ. Քու փառացի համար ես
ինձի ըրի, և հրաման կուզեմ որ քու ձեռ-

քէդ փախածի պէս ասանկ երթամ ու Ք. Ա.
 քաղաքը քու ձեռքդ մատնեմ : Հրաման
 տուաւ թագաւորը . Չոպիրոս գնաց :
 Երբոր տեսան Բաբելայիք, հաւատա-
 ցին, ու անոր ուզելովը քիչմը զօրք տը-
 ւին ձեռքը . Չոպիրոս երկու իրեք օր շաա-
 մը մարդ ջարդեց Պարսիկներէն ու բոլը-
 բովին իր վըրայ վստահ ըրաւ քաղաքա-
 ցիները, ինչվան բոլոր զօրքն իրեն ձեռքը
 յանձնեցին . ինքն ալ ինչպէս որ Դարե-
 հին հետ խօսք գրեր էր, դուռը բացաւ,
 քաղաքը մատնեց : Դարեհ մտաւ քաղա-
 քը, միայն իրեք հազար հոգի մեծերէն
 կախել տուաւ . ետքը քաղաքին պարիս-
 պը փլուց, դռները կոտորեց, որ մէյ-
 մալ չապստամբին : Եւ դարձաւ անկէ
 քալեց Սկիւթացոց վըրայ :

ԺԵ

Հ . Դարեհ ինչ պատճառաւ Սկիւ-
 թացոց վըրան գնաց . և կըրցաւ անոնց
 յաղթել :

Պ . Պատճառ բերելով թէ Սկիւթա-
 ցիք ուրիշ ատեն Ասիայի վըրայ վազեր
 են, եօթըհարիւր հազար զօրքով անցաւ
 Վոսփորոսէն նաւէ կամուրջ շինելով,
 ու չորս դիին տիրելով հասաւ անոնց եր-
 կիրը : Սկիւթացիք ալ ամէն տեղ աւրե-
 լով, ուտելիքը ջնջելով փախան : Երբոր
 Դարեհ շատ նեղուք անասպատ դարձած
 տեղերէն առաջ կերթար, Սկիւթացիք

Ք. Ա խրկեցին իրեն թռչուն մը, գորտ մը և մուկ մը, հինգ ալ նեա, խմացընելով թէ Աս կենդանիներուն կարողութիւնը թէ որ ունենաք, այսինքն թռչիլ, ջրերու մէջ բնակիլ, գետնին տակէն քալել, անասունը մեր նեաերուն կր յաղթէք: Դարեհ յուսահատած ամբնալով՝ գաղտուկ փախաւ գիշերանց՝ բանակին տեղը ասդիս անդին կրակներ վառած, և հիւանդներն ու ծերերը հոն թողուցած. էշերն ալ ձգեց որ չըլայ թէ ճամբան զուարթ փախչելնին խմացընեն: Սկիւթացիք խմանալով՝ ետևուն վաղեցին. և թէպէտ չիհասան, բայց վրէժ խնդրելու համար անցան Դանուբէն Պարսից երկիրը՝ Թրակիայ՝ ինչպէս Ելլեսպոնտոս, Ջարդեցին կողոպտեցին, եա դարձան: Ասկէ ետքը Դարեհ գնաց Հնդկաստան ու շատ տեղերու տիրեց: Անկէց դարձաւ Յունաց հետ Մարաթոնեան մեծ պատերազմն ըրաւ. և յաղթուելով ինքն անձամբ նորէն երթալ ուղեց. անոր համար ալ իրեք տարի պատրաստուի տեսաւ. բայց մահը վերայ հասաւ երսունըվեց տարի թագաւորելէն ետև, ու ամէն յոյսը փճացուց:

508

Հ. Դարեհի վերայ ինչ մասնաւոր անգթուէ գործք կը յիշուի:

Պ. Մէյմը որ Ինտափեռնետը՝ եօթը նախարարներուն մէկը՝ իր տղոցմով ըսպաննել տուաւ, անոր համար որ թագաւորին դռնասպաններէն մէկ քանին վերաւորեր էր՝ իրեն թող չիտալնուն հա-

մար որ Թագաւորին քով մանէ : Երկ Բ. Ա
 րորդ՝ երբոր Սկիւ Թացոց վերայ կերթար,
 Եբասոս ծեր իշխաններուն մէկն աղա-
 չեց որ իրեն իրեք տղուն մէկը Թողու իր
 ծերունէը մխիթար . Դարեհ բարկացաւ
 ու հոն իրեքն ալ մէկէն ըսպաննել տուաւ,
 ըսելով . Իրեքն ալ Թող քովըդ կենայ :

ԺԶ

Հ . Դարեհին ո՞վ յաջորդեց, և ի՞նչ
 գործք ըրաւ :

Պ . Քսերքսէս որդին, որովհետև Դա 485
 րեհի Թագաւորունն ատենը ծնածնե-
 րուն մէջ անդրանիկ էր : Նախ գնաց
 ապստամբած Եգիպտացիները հնազան-
 դեցուց . ետքը շատ աշխարհներու ախ-
 րել՝ և Մարաթոնեան պատերազմին վը-
 րէժը հանել ուղեւով, ճամբայ ինկաւ
 դէպի Յունաստան . որուն ծովն ու ցա-
 մաքի զօրքը, և բանակին մէջն մարդիկը
 մէկտեղ առած՝ հինգ միլիոն էր կրսեն,
 իրեքհազար ալ նաւ : Հանգիպեցաւ
 Քսերքսէս Լիւդացոց Պիւթիոս Թագա-
 ւորին, որ շատ ոսկի ընծայ տուաւ իրեն,
 ու ինքն ալ անկէ սպասուեցաւ . բայց
 երբոր Քսերքսէս երթալու ատեն անոր
 հինգ որդին ալ կրտանէր, Պիւթիոս խըն-
 դրեց որ անդրանիկն իրեն Թողու . Քսերք-
 սէս Պիւթիոսին աչքին առջին զանի-
 կա ըսպաննել տուաւ, ըսելով Թէ Գնա
 շնորհակալ եղիր որ քու սիրոյդ համար

Ք. Ա մէկալ սրգւոցդ ու քեղի խնայեցի :
 Երբոր հասաւ Ելլէսպոնտոս , կրսէն թէ
 Քսերքսէսն ալ մօր Արտաշէս թագա-
 ւորին պէս բարձր տեղէ մը տեսնելով իր
 զօրաց անթիւ բազմուիը՝ լացաւ , ըսե-
 լով . Հարիւր տարիէն ասոնցմէ մարդ մը
 չիմնայ սլիախ :

Հ . Քսերքսէս ինչպէս անցաւ Եւ-
 րոպա :

480 Պ . Նաւէ կամուրջ մը շինեց Ելլէսպոն-
 տոսին եօթը ասպարէզ լայն նեղուցին
 վերայ , որ սասաիկ քամի է մը աւրըւե-
 ցաւ : Քսերքսէս բարկացաւ ծովին , ու
 պատժելու համար զոյգ մը շղթայ մէջը
 ձգել տուաւ , և իրէքհարիւր ալ գաւա-
 ղան ջրին զարնել տուաւ : Գործաւորնե-
 րուն մեծերուն ալ գլխրնին կտրել աը-
 ւաւ : Ետքը նորէն երկու կամուրջ քովէ
 քով շինեց . մէկը իրէքհարիւրվաթսուն
 նաւէ քովէքով կապած , մէկալը իրէք-
 հարիւրտասնըչորս նաւէ . վերանին փայ-
 տեր սրառկեցուցած , անոնց վերան ալ
 տախտակով ծեփած ու հողով ծածկած .
 և երկու կողմն ալ բարձրացուցած որ ձի-
 երը ծովը չիտեսնեն՝ չիխըրախն : Եօթն օր
 ու եօթը գիշերւան մէջ զօրքերն անցան :
 Յոյնք շփոթած՝ կրրցածնուն չափ մէկըզ-
 մէկ քաջալերելով պատրաստուած , ծո-
 վու և ցամաքի վերայ այլևայլ անգամ
 զարնըւեցան , վերջապէս զՔսերքսէսն
 ամօթով փախուցին : Աս պատերազմնե-
 րուս միջոցին՝ անգամ մը չորսհարիւր

նաւ՝ սաստիկ մերթիկէ, և ուրիշ անգամ Ք. Ա մըն ալ երկու հարիւր նաւ Եւֆրատին քով կորուսին Պարսիկները. որ Յունաց մեծ օգնութիւն եղաւ :

Հ. Քսերքսէս Յունաստանէն ետ դառնալէն ետե ի՛նչ ըրաւ :

Պ. Յուսահատութէն ինքզինքը զեղխուէ տուաւ, և իրեն թուլամորթութիւնը պատճառ եղաւ որ Ամեսարիս թագուհին Քսերքսէսին եղբօրը Մասիստրէին սպարկէշտ կինը բռնեց, քիթն ու ականջները, շրթունքները, ծիծերը կտրտել տուաւ. և ետքը երբոր Մասիստրէն իմանալով կուզէր վրէժ խնդրել, Քսերքսէս ալ զՄասիստրէն ըսպաննել տուաւ :

Հ. Քսերքսէս ի՛նչպէս մեռաւ :

Պ. Անչափ զեղխուէր համար ժողովորդէն ալ արհամարհած ըլլալովը, Արտաւան անունով իր սիրելի իշխանը մէկքանի հոգւոյ հետ խօսքը մէկ ըրած՝ քնացած ատենը մտաւ ըսպաննեց :

ԺԷ

Հ. Քսերքսէսին ո՞վ յաջորդեց :

Պ. Արտաշէս Երկայնաձեռն՝ սա կեր. 472 սով: Արտաւան զՔսերքսէսն ըսպաննելէն ետե, մէկէն գնաց թագաւորին երրորդ որդւոյն Արտաշէսին ըսաւ, թէ Դարեհ քու մեծ եղբայրդ շուտ թագաւորել ուզելով զՔսերքսէսն ըսպաննեց, և զքեզ ալ կուզէ մեռցըննել որ

Բ. Ա հանգիստ թագաւորէ : Արտաշէս հաւ-
տաց ու մէկէն Արտաւանայ հետ մէյ-
տեղ գնաց ըսպաննէց զԴարեհը . և Ար-
տաւանայ ձեռքոյն ինքը նստաւ աթո-
ռը : Արտաւանայ միտքն ան էր որ իր
կուսակիցները շատցնէ ու ետքը զԱր-
տաշէսն ալ ըսպաննէ, ինքը թագաւորէ :
Բայց Արտաշէս անոր միտքը և ըրած
խարդախուհիներն իմանալով, ըսպաննէց
զինքը . և որովհետև Արտաւան եօթը
կարիճ տղաք ունէր և շատ կուսակից-
ներ, անոնց գէմ պատերազմի ելաւ,
զամէնքն ալ ջնջեց : Արտաշէսին մեծ
եղբայրը Աշտատայ՝ Բակարիայի կուսա-
կալն էր . երբ իմացաւ թէ իր սղտի եղ-
բայրը թագաւորեց, պատերազմի ելաւ
ու յաղթըւեցաւ : Ետքը Արտաշէս ա-
մէն կողմէն հանգստացած՝ կարգերը կա-
նոնները նորոգեց ու ամէնուն սիրելի ե-
ղաւ : Աս Արտաշէսն է որ Եզրի ու Նե-
էմիին հրաման տուաւ Եէմ գառնալու :
Հ. Արտաշէս Երկայնաձեռն ինչ
պատերազմներ ըրաւ :

466

Պ. Նախ ուզելով Յունաց գէմ ելլել՝
Թեմիստոկղէսին մեռնելոյն արգիլե-
ցաւ, ու հաշտուի ըրաւ Յունաց հետ :
Ան միջոցին Եգիպտացիք Աթենացիներէն
օգնութի առած՝ սպստամբեցան .
Արտաշէս անոնց վերայ նախ եղբայրը
խրկեց, որ գնաց յաղթըւեցաւ . ետքը
նորէն զօրք խրկեց, ու վեց տարի պա-
տերազմելով բոլորովն յաղթեց . բայց

մեծերուն հետ դաշինք դրաւ որ զիրենք
 չիմեռցնէ : Յոյնք ալ բոլոր նաւերնին
 կորսորնցուցած՝ ամօթով ետ դարձան :
 Անատենը ուրիշ յիսուն Յունաց նաւ-
 եր ալ եղածը չիգիտնալով օգնուի կեր-
 թային . երբոր Նեղոսին մէջը մտան ,
 Պարսիկները ծովէն հասան՝ ետենին ա-
 ուին , ու ծովէն ցամաքէն զարնելով զա-
 մէնքն ալ ջնջեցին :

Հ . Արտաշէս Եգիպտացոց հետ դրած
 դաշինքը հաստատ պահէց :

Պ . Չէ . վասն զի Արտաշէսի մայրը
 ուղեց դերիններն որ զոհ ընէ մեռած ար-
 զուն համար . Արտաշէս շատ առեն
 դէմ կենալէն ետքը չիգիտնալով անոր
 թախանձանքին , տուաւ : Անատենը մայ-
 րը բոլորն ալ բռնեց անդթուք ըսպան-
 նեց : Աս անիրաւուէր վերայ բարկացաւ
 Մեգաբիս զօրագլուխն որ դաշինքը դը-
 րեր էր . ելաւ գնաց Ասորիք , ու երկու
 անգամ Արտաշէսի յաղթելէն ետքը՝
 շատ աղաչանքներ լսելով հաշարեցաւ
 ու ետ դարձաւ : Օր մը որսի առեն ա-
 ուիւծ մը թագաւորին վերայ վաղեց , Մե-
 գաբիս աուիւծին դէմն առաւ ըսպան-
 նեց . Արտաշէս շնորհակալ ըլլալու տեղ,
 հրաման տուաւ որ գլուխը կարեն , ըսե-
 լով թէ Ձիս արհամարհեց , որսը ձեռ-
 քէս յափշտակեց : Բայց ետքը ուրիշնե-
 րուն աղաչանքովը քշել տուաւ : Մեգա-
 բիս հինգ տարիէն նորէն ետ դարձաւ
 աղքատի հագուստով . բայց իմացուցաւ ,

Ք. Ա ու թագաւորին քրոջն աղաչանքովը նորէն հաշարւեցաւ թագաւորին հետ :

Հ. Արտաշէս Երկայնաձեռն որչափ թագաւորեց, և իրեն սլ յաջորդեց :

425

Պ. Քառսուներու թը տարի թագաւորելէն ետքը մեռաւ, և տեղն անցաւ Քսերքսէս ք, իր մէկ հասիկ որդին. որ քառսուներհինգ օր թագաւորելէն ետե՛ Արտաշէսի հարձորդին Սոգդիանոս զինքը քնոյն մէջ ըսպաննեց ու նստաւ անոր աթոռը :

ԺԸ

Հ. Սոգդիանոս ինչպիսի թագաւոր եղաւ :

Պ. Աթոռը նստելուն պէս Բագորաւ հաւատարիմ մարդը սուտ պատճառով մը քարկոծել տուաւ : Անկէ ետե ինքն ալ ըսկսաւ վախնալ որ չըլլայ թէ իր եղբայրներն ալ զինքն ըսպաննեն. և աւելի Ովքոսէն վախնալով խաբէուք մը կանչեց իրեն որ ըսպաննէ : Ովքոս խմանալով անոր չար միտքը, ստեն մը ուշացուց երթալը. ետքը զօրքով գնաց, ըսելով թէ կուզէ վրէժ խնդրել Քսերքսէսին մահուանը համար : Աս ձայնըս տարածւելով ամէնքն Ովքոսին կողմն անցան ու թագաւորեցուցին, Սոգդիանն ալ փախչելու տեղ՝ գնաց Ովքոսին քովը՝ հետը գաշինք դրաւ. ան ալ բռնեց զինքը մոխրի մէջ խղդեց : Ետքը Ովքոս իր անու-

424

նը փոխեց Գարեհի Նովոս գրաւ որ հարձ-
 ուրդի ըսել է :

Հ . Գարեհի Նովոս ինչպիսի թագա-
 ւորուի քշեց :

Պ . Նստաւ չինստաւ՝ Արշէս եղբայրն
 իրմէն ապաստամբեցաւ Արտիփիոս իշխա-
 նին հետ . և մէկ երկու անգամ պատե-
 րազմեւէն ետև՝ Արտիփիոս ձեռք ինկաւ .
 բայց Պարիսատ խորամանկ ու անգուժ
 տիկինը խորհուրդ տուաւ Գարեհին որ
 զանի ազատ պահէ . որպէս զի Արշէսն
 ալ յուսալով թէ կապրի՝ անձնատուր
 ըլլայ : Ինչպէս որ եղաւ . և երկուքը մէ-
 կէն մոխրի մէջ խղճեցին : Բայց թագա-
 ւորուի մէջ խռովուիւր պահաս չէր : Եւ
 որովհետև Պարսից թագաւորն ամէն բան
 իրէք ներքինի ձեռքով կրնէր , և անոնց
 ուզածը գէշ ալէկ առաջ կերթար , ա-
 սով Արտաքսար ներքինին յանդգնեցաւ՝
 թագաւորը մեռցնել ուզեց , բայց իմաց-
 ւեցաւ , ու ինքը սաստիկ տանջանքնե-
 րով մեռաւ : Գարեհ՝ փոքր Ասիայի վը-
 րայ կուսակալ գրաւ Վիւրոսն՝ իր պզտիկ
 տղան : Ասիկա օր մը իր հօրը քրոջն եր-
 կու տղաքը մեռցնել տուաւ՝ իրեն առջև
 բայց ձեռքով կենալու համար : Եւ
 որովհետև մեծամեծները միայն թագա-
 ւորի առջև պարտրկան էին ծածկած
 ձեռքով կենալու , աս Վիւրոսին ըրած
 պատուասիրուիւր Գարեհի գէշ երեցաւ
 ու պատճառով մը ետ կանչեց : Վիւրոս
 երբոր հասաւ , Պարիսատին աղաչանքը

Ք. Ա վր թագաւորը հաշտուեցաւ հետն ու քա-
 404 նի մը օրէն մեռաւ : Իրեն յաջորդ թո-
 զուց իր անդրանիկ տղան Արտաշէս Մնէ-
 ին որ Ուշեշ ըսել է :

Հ. Արտաշէս Մնէմոն Վիւրոսին հետ
 ի՞նչպէս վարուեցաւ :

Պ. Երբոր Արտաշէս մեհեանը գացեր
 էր՝ թագաւորուիլը առնելու, ան միջո-
 ցին Վիւրոս զինքն ըսպաննել ուզելով,
 գաղտուկ իրեն բարեկամ քուրմին յայտ-
 նեց. բայց քուրմը խմացուց թագաւորին:
 Արտաշէս ուզեց ըսպաննել զՎիւրոսը,
 բայց Պարսաատ մայրը լալով աղաչե-
 լով ազատեց, հաշտեցուց, ու նորէն իր
 տեղը խրկել տուաւ : Վիւրոսն ալ գնաց
 ըսկսաւ պատերազմի պատրաստուիլ
 Սպարտայոց օգնուիլ :

Հ. Վիւրոս իր եղբօրը դէմ ըրած պա-
 տերազմը ի՞նչպէս առաջ տարաւ :

402

Պ. Տասւիրեք հազար յոյն և հարիւր
 հազար ուրիշ զօրքերով երբոր գնաց Ար-
 տաշէսի վերայ, Արտաշէս միլիոն մը զօր-
 քով դէմն ելաւ, Վուհաքսա ըսւած տեղը
 զարնուեցան. և թէպէտ Վիւրոսի Յոյն
 զօրքերը շատ քաջուհներ ըրին, բայց Վիւ-
 րոս ինքն անձամբ եղբօրը հետ զարնը-
 ւելով՝ հոն ինկաւ մեռաւ. զօրքն ալ ցը-
 րուեցան : Իսկ Յոյնք շատ քաջուհներ
 ընելով ետ դարձան փախան :

Հ. Պարիսատ ի՞նչ անգլթուէ գործք
ըրած ունի :

Պ. Գլխաւորներն ասոնք են. Հռոք-
ասնէն Արշակայ կնոջը քոյրը՝ կէս մէջ-
քէն սղոցել տուաւ ընդգիմուէ մը հա-
մար. ուրիշ շատ մարդիկ ալ ըսպաննել
տուաւ: Կիւրոսին մեռնելէն ետքը Պարի-
սատ երգում ըրաւ որ անոր մահը ու-
ղոյներն ըսպաննէ. անոր համարՎարիա-
ցի զինուոր մը որ կըպարծէր թէ ինքն ըս-
պաններ է զԿիւրոսը, տասը օր չարաչար
տանջել տալէն ետքը հրամայեց որ աչվը-
ները փորեն, ականջէն հալած պղինձ
լէցընեն: Միհրգատ անունով իշխան մը
սեղանի վերայ Կիւրոսի մահուանը վերայ
ուրախութի ցուցընելուն համար Կուր
ըսած տանջանքովը մեռուց: Անգամ
մը Պարիսատ թագաւորին հետ նարտ
խաղաց՝ դաշինք դնելով որ յաղթողն ու-
զած ներքինին յաղթըւողէն առնէ. ին-
քը յաղթեց, ու թագաւորէն ուղեց
Մեսաբատ ներքինին, որ թագաւորին
հրամանովը Կիւրոսին գլուխն ու աջ
ձեռքը կտրեր էր. ողջ ողջ կաշին հանել
տուաւ ու գլխի վար խաչել տուաւ: Թա-
գաւորին Ստասիրա կնոջն ալ ռիս սրա-
հեր էր, ըսկսաւ սուտ բարեկամութիւն
ձևացընել. թէպէտ անիկա կասկածե-
լով կըզգուշանար, բայց օր մը սեղանի

Ք. Ա վերայ հաւին կէսէն ինքը կերաւ, կէսն Ստատիրային տուաւ. Ստատիրան թուհաւորւեցաւ՝ մեռաւ: Թագաւորը քրննեց իմացաւ որ դանսակին մէկ երեսը թոյն քսել տուեր է եղեր: Ասոնցմէ իզատ միշտ երբոր յանցաւոր մը ձեռքը իյնար, սաստիկ տանջելով կըմեռցընէր:

Հ. Ուշեղ Արտաշէսն ինչպէս մեռաւ:

363 Պ. Երբոր ծերացաւ, որովհետեւ իրեք տղայ ունէր և յիսուն ալ հարձորդի, որպէս զի խռովուի չըլլայ՝ հրաման տուաւ որ ինքը չիմեռած՝ անդրանիկը Գարեհ թագ գնէ: Ան ալ հպարտացած՝ հօրը հարձերուն մէկն ալ իրեն կին ուղեց. երբոր Արտաշէս չիտուաւ, Գարեհ բարկացաւ ու զհայրն ըսպաննել ուղեց. խորհուրդն իմացւեցաւ, ուստի Արտաշէս զինքն ըսպաննեց: Անատենը Ովքոս պըզտի տղան ոտք ելաւ ու միջին եղբօրը մեռնելուն պատճառ եղաւ, և Արտաշէսին սիրելի Արշամ հարձորդին ալ, ուսկից որ կըվախէր, ըսպաննել տուաւ: Թագաւորն ան ծերուէր մէջ լսելով տըղոցը խռովութիւր՝ սրտագողէն մեռաւ՝ քառսուն տարի թագաւորելէն ետքը: Ովքոս վախնալով թէ Ժողովուրդը զինքը չուղէր, տասը ամիսի չափ հօրը մեռնիլը ծածկեց, ու անոր անունովն ինք զինքը յաջորդ ընտրել տուաւ:

Հ. Ովքոս ի՞նչպէս քշեց թագաւո՞ւ Բ. Արուժիը, և ի՞նչպէս մեռաւ :

Պ. Նստածին պէս ամէն եղբայրները մեռուց, և ուրիշ ազգականներն ալ՝ որոնց վերայ որ կրկասկածէր թէ կրնան իրեն արգելք մը ըլլալ: Ետև ըսկսաւ ապստամբները նուաճել: Նախ Սիդոն քաղաքը հիմնայատակ կործանեց: Սիդոնացիք քաղաքին մտանբւէլու ատենը յուսահատած՝ աներնուն կրակ տուին ու մեռան, որ էին քառսուն հազար միայն էրիկմարդիկ: Անոնց թշուառուն օրինակ եղաւ ուրիշներուն. ուստի Փիւնիկէն ու Կիպրոսն իրենք իրենցմէ հնազանդեցան: Անկէ անցաւ գնաց Եգիպտոս, զամէնքը հնազանդեցուց. շատ քաղաքներուն պարիսպները կործանեց, մէհեաններն աւրեց, ու պահծու գրուածները վերուց տարաւ: Անոնց Ասիա կովաստուածն ալ իշու մը առջին զոհ ընել տուաւ, ու միսն իր ծառաներուն կերուց. որովհետև Եգիպտացիք ծաղրելով իրեն էշ ըսեր էին: Ետքը դարձաւ աթուր: Բագու ներքինին թագաւորին մտերիմը Եգիպտացի ըլլալով շատ նեղացեր էր աս բաներուս վերայ, անոր համար թոյն խմցուց Ովքոսին՝ քսան լիրէք տարի թագաւորելէն ետև:

Հ. Ովքոսէն ետև ո՞վ եղաւ ինքնակալ Պարսից :

Պ. Բագու՝ Ովքոսին տղոց մէջ ամէնէն պզտիկն Արշէսը թագաւոր նստե-

Ք. Ա. ցուց, անոր մէկալ եղբայրները բոլորն
 ալ մեռուց. և ինքն ուղածին պէս կը-
 կառավարէր: Բայց իմանալով թէ Ար-
 շէս իրեն վերայ գէշ միտք ունի, անոր
 ալ թոյն խմցուց, ու տեղը նստեցուց
 336 Դարեհ երրորդ Կողոմանոսը: Քիչ ժա-
 մանակէն ետև Դարեհէն ալ վախնալով
 թոյն պատրաստեց որ անոր ալ խմցնէ:
 Դարեհ խմացաւ, իրեն խմցուց ու մե-
 ռուց: Աս Դարեհը վէց սարի թագա-
 ւորելէն ետև բոլոր ուժովն Աղեքսան-
 դրի գէմէլաւ ու մեռաւ. Պարսից Ինք-
 նակալուին ալ իրեն հետ վերջացաւ:

Ի

ԳԻՏԵԼԻՔ

Հ. Արևելքի կառավարութիւնները
 հին ատենն ինչ կերպ էին:

Պ. Ամենն ալ միապետութիւն էր. և
 թագաւորին հրամանը օրէնքի տեղ կանց-
 նէր. մանաւանդ Պարսիկներն Այ փո-
 խանորդ կըճանչնային զթագը: Պար-
 սից թագաւորաց որդեքը կըթելու համար
 չորս հոգի կորուչէր, որոնց մէկը մո-
 գուի կըսորվեցնէր, մէկալն իրաւունք,
 երրորդն ինքզինքը սանձել, չորրորդը
 կարճուէ մէջ կըթըւիլ:

Հ. Ի՞նչ կարգ կըստահէին Պարսիկները պատերազմի մէջ, և ի՞նչ կերպով քաղաք կառնէին :

Պ. Սովորական կերպով պատերազմի երթալու ատեն՝ հետևակները մէջ տեղէն, ձիաւորներն երկու կողմէն կը քալէին . և զօրքը տասներկու կարգ ետևէ ետև շարւած . առջի կարգը կեցողները կը գործածէին կարճ կոթով տէգ՝ ու թուր . երկրորդ կարգիները երկայն տէգ, ու կոթը ծանր, որ զարնելու ատեն ուժ առնէ . երրորդիներն աղեղով նետ կը նետէին, կամ պարսաւիկ, որուն մէջ ոմանք կասարէ գնտակ կը դնէին : Ետևի կարգիները պատրաստ զինուորներ էին ինկածներուն տեղն անցնելու համար, հետերնին ալ տախտրկէ շինած բերդեր ունէին որ կովերը կը քաշէին . ամէն մէկուն մէջ քսանական հոգի կեցած՝ թշնամիին վըրայ նետ ու քար նետելու համար : Գերանդազէն կառքեր ալ կար հետերնին, որոնց անիւներուն վըրայ թուրեր դրած էր որ ջարդեն զամէնքը . ետևի կողմն ալ որ մարդ չի կարենայ մօտենալ : Իսկ քաղաք առնելու առջի հնարքն էր սաշարելը՝ դրսուանց փոս փորելով, կամ պատ քաշելով, ինչպէս որ մէջիներուն կերակուրը հատնի . երկրորդ՝ սանդուխներով պատերէն վեր վազել : Ասոր դէմ երբոր պատերը խիստ բարձր շինել ըսկտան, անոր ալ ճարը գտան . երկայն փայտէ աշտարակներ

կըմօտեցընէին պարսպին ու դէպի պարիսպը կամուրջ կըձգէին : Երբորդ, գետնին տակէն ինչպան քաղաքին մէջը ճամբայ բանալ, կի՛վահաննէրով ծածկըւած՝ պարսպին հիմը քակել : Չորրորդ՝ պարիսպը խոյով կըծեծէին, և բաբանով մէկզմէկու խոշոր քարեր կընետէին : Մէջիններն ալ նոյնպէս դրսիններուն հակառակ . և պարսպին չորսդին խորունկ փոս բացած՝ մէջը ջուր կըլծողուին . պարիսպները կըհաստըցընէին կըբարձրացընէին, ներսէն նոր պարիսպ կըբաշէին, ևն :

Հ . Պարսիկներն ի՞նչ կրօնք ունէին :

Պ . Արևն ու չորս տարերքը կըսպաշտէին : Երկու գլխաւոր աստուածներ կընդունէին, մէկը գէշ, մէկալն աղէկ : Պարսիկք մեռելը կըլծաղէին, իսկ այրելը կամ զըմռսելն անարգանք կըսեպէին :





Մ Ա Ս Ն Գ

Յ Ո Ւ Ն Ա Յ

Ի Շ Խ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն Ը

Ի Ա

Հ . Յուճաց պատմութիւնը սր ատենէն
կրտսի :

Պ . Ինչպիսի աշխարհիս 2000 տարին որոշ
պատմութի մը չունին . աս միայն գի-
տենք որ ան ատենները Յոյնք , որ Յա-
բեթի Յաւան տղէն առաջ եկած կրտսե-
ւին , վայրենի մարդիկ էին . բնակարան-
նին , հագուստնին , և ուրիշ ամէն բա-
ներնին անասնոց նման էր : Մէջերնէն
ուժովը իր ուղածն օրէնքի տեղ առաջ
կրտանէր : Զուրիշը կողոպտեն իրա-

ուռնք կրսեպէին, և կողոսուտը հաւա-
սար իրենց մէջ կրբաժնէին: Չինուորա-
կան կերպով պատերազմ ընել չէին գի-
տէր. թէոր պէտք ըլլար կրժեծ կրուէին
իրարու հետ. անոր համար ալ վերջերը
ուժերնին կրթելու խաղեր հնարեցին:

Հ. Ուժերնին կրթելու համար հնա-
րած հին աստեղի Յուճաց խաղերը որոնք
են:

Պ. Առջինն է Ըճբշամարտն՝ որ մեկը
մէկ կանրկի վերայ պառկեցնել կըջու-
նային: Երկրորդը Կոճամարտ՝ որ ձեռու-
նուն վերայ կաշիով պատած ու վերան
պղնձէ կամ երկրթէ թիթեղ անցուցած
մէկզմէկու կըղարնէին կըվերաւորէին:
Երրորդը Հասնառի խաղը՝ որ ըմբշամար-
տուէ և կռիամարտուէ գործքերը խառն
մէկտեղ կընէին: Չորրորդ Սիտեշի խաղը՝
որ փայտէ կամ քարէ կիճ երկրթէ ծանր
բոլորակ մը ուժով կընետէին, և հեռու
նետողը կըյաղթէր: Հինգերորդ Ընդա-
ճի խաղը՝ որ էր վազել ոտքով կամ ձիով
և կիճ կառքով: Յաղթողներուն վարձքն
էր մոլաձիթենիի կիճ սոճիի կիճ լախուրի
և կիճ գամինիի ճիւղէ շինած պսակ մը: Աս
փառքը և ժողովրդեան ծափ զարնելը
անոնք ամէն հարստութի ալ վեր կրսե-
պէին: Աս խաղերուն աստեղները Յոյնք
մէջերնին ունեցած պատերազմը կըդա-
դրեցնէին որ կարենան հանգիստ զը-
ւարճանալ ու ան խաղերով իրենց կուռ-
քերը կարենան պատուել: Եւ ան միջո-

ցին կրկարդացէին իրենց դիւցազանց Ք. Ա
 քաջութիւններն որ աւելի սիրտ առնեն :
 Չորս տեղ կըլլային աս խաղերը . գլխաւ
 ւորն էր Ուշիմպիականը որ չորս տարին
 մէյմը կըլլար Ողիմպիա քաղքին քովը .
 ասկից ըստաւ Ուշիմպիատին Բուսականը որ 776
 չորս տարին մէկ կըսեպէն : Երկրորդը
 Պիտիական+ . երրորդը Նեմական+ : Չոր-
 րորդը Իսթիական+ : Բայց ատեն անցնե-
 լով աս խաղերը օգտի տեղ ինասներու
 պատճառ եղան . ըստըկով բռնըւած ըմ-
 քիչներն ըսկասն քաղաքացի սեպւել : Ա
 մէն մարդ կըջանար աղէկ ձիեր ունենալ
 որ անոնցմով յաղթութիւններ ընէ : Եւ
 ըսկասն թատրոններ շինել , ու հասարա-
 կաց բարւոյն սերը կամաց կամաց մէջեր
 նէն պակսեցաւ :

Հ . Յունաց առջի նախահայրները
 որոնք են .

Պ . Կռնոս , Արամազդ , և ուրիշ
 հսկաներն՝ որ ետքը աստուած սեպւե-
 ցան :

ԻԲ

Հ . Յոյնք իրենց առջի բրտուէն ինչ
 կերպով ըսկասն կըթըւել :

Պ . Եգիպտացի ու Փիւնիկեցի քանիմը
 գաղթականներ եկան Յունաստան բնա-
 կեցան ու սորվեցուցին Յունաց օրէնք ,
 կրօնք , գիտութի , արհեստ ու վաճառա-
 կանութի :

- Ք. Ա Ջ. Յունաց քաղաքականունն սորվը-
ցընողներուն մէջ գլխաւոր որոնք կը-
յիշէին :
- 1474 Պ. Դանաւոս եգիպտացին, որ եր-
կրագործութի ու քանիմը արհեստներ
մտցուց իր տէրուէը մէջ Արգոս քաղա-
քը: Կադմոս փիւնիկեցին Թեբէ քաղաքը
- 1055 Ժապիեցուց. այգեգործութի, դարբնուի
և գրել կարգաւ սորվըցուց. Թէսպա և
Յոյնք առջի բերանն իրենց Թանձր տգի-
տութիը սորվիլ չէին ուղէր. անոր համար
Տրիպտոլոմէոսը քիչ մնաց որ կրսականե-
ին՝ երկրագործութի սորվըցընելուն հա-
մար. Դիոնիսոսն ալ՝ այգեգործութի ը-
նելու խրատ տալուն համար:
- Ջ. Յունաց առջի ատեններն եղած
երևելի դիպուածները որոնք են:
- 1825 Պ. Ուլգիգեան և Դեւկալիոնեան ջըր-
հեղեղները. Թեբէ քաղաքին պատերազ-
մը, ուր որ եօթը Թագաւոր միաբաներ
էին Եթէոկղէսի դէմ. Ոսկիգիսակին հա-
մար Արգոնաւորդաց Կողքիս երթալը.
- 1184 և Տրոյիայի պատերազմը, ուր որ բոլոր
Յոյնք միաբաներ էին մէկ մարդու մը ա-
նիրաւութեանը դէմ: Բայց որովհետև
աս պատմութիներն աւելի դիցաբանու-
թեան կը վերաբերին, անոր համար հոս
զանց կառնենք յիշելու տեղնիտեղը: Դար-
ձեալ երևելի դիպուած է Յունաց փոքր
Ասիա անցնիլը՝ հալածուելով Հերակ-
լէանցմէ՝ որ Հեքքիւլէսի ցեղէն էին ու
առաջուց Պեղոպոնեսէն վաճարուեր էին.

եկան բռնի մտան Յուճաստան, առին Ք.Ա
Միկենքը, Սպարտան և Արգոսը, և զա 1104
մէնքը սարսափեցուցին: Անատենը Յու-
նաց մէջէն շատը ուրիշ կողմներ ու փոքր
Ասիայի կողմերն անցան բնակեցան. ո-
րոնց մէջ անուանի են Յոնիացիք, Եւո-
զացիք ու Դորացիք:

Հ. Յոյնք երբոր ըսկսան կրթուելի՞նչ
տեսակ կառավարուի ունեցան:

Պ. Աւաջները այլևայլ քաղաքներ՝ մանր
մանր թագաւորուիներ ձևացան, բայց
կամաց կամաց մէկզմէկու յաղթելով և
թագաւորներուն բռնաւորուէն ձանձ-
րացած՝ փոխւեցան զանազան հասարա-
կապետուիներ եղան: Ատտիկէ գաւա-
ռին մէջն ալ Ամփիկտիոնի ժողովքը հաս-
տատեցին:

Հ. Ամփիկտիոնի ժողովքն ի՞նչ բանի
համար էր:

Պ. Ատտիկէի մէջ տասուերկու գլխա-
ւոր քաղաքներ մէկ եղան, մէջերնին ո-
րոշեցին՝ որ տարին երկու անգամ երկեր-
կու դատաւոր խրկեն Ջերմագրուիք ըս-
ւած տեղը, որ հոն զո՛հ մատուցանեն
ու բոլոր Յուճաստանի պէտք եղածը մէկ
տեղ խորհին: Աս ժողովքը Ամփիկտիոն
կոչւեցաւ՝ առջի հնարողին անուանովը,
որ էր Ամփիկտիոն Աթենացոց երրորդ
թագաւորը: Անոնք կը հոգային Գեղփիս
քաղաքին տաճարն ալ, որուն մէջ Ա-
սլողոն կուռքը պատգամ կրխօսէր, և
անոր համար շատ անուանի էր:

Հ. Յուշաց խիստ երևեւի քաղաքները որոնք են :

Պ. Սպարտա՝ որ քաջութիւն շատերուն իշխեց ու երկար ատեն դիմացաւ : Ա թէնք, որ խիստ ծաղկեցաւ իմաստութիւն : Թեբէ և Արգոս ալ կարըճուք երևեւի եղան :

Հ. Սպարտացոց թագաւորուն ինչ պէս ըսկաւ :

1516 Պ. Տրոյիայի պատերազմէն ետեւ երբոր եկան Հերակլէանք նորէն տիրեցին Պեղոսոնեսին, ըսկան թագաւորել Սպարտայի մէջ ինըհարիւր տարիի չափ երկեր կու թագաւոր մէկտեղ. անոր համար մէջերնին խռովուի պակաս չէր. ինչպէս Ղիզուրկոսի ասենը, որ իրենց առջի օրէնսդիրն եղաւ :

Հ. Ղիզուրկոս ո՞վ է :

884 Պ. Եւնոմիոս թագաւորին պզտի որդին : Ասոր մեծ եղբայրն որ կը թագաւորէր, առանց զաւկի մեռաւ. անտունը թագուհին որ յղի էր՝ ուղեց մեռցնել իր ծնանելու աղան ու Ղիզուրկոսին հետ թագաւորել : Սոսկացաւ Ղիզուրկոս, յանձն չառաւ, բայց դրսւանց ձեռաց թէ ինքը կը հօգայ : Ու երբոր աղան ծնաւ, Ղիզուրկոս հանեց ժողովրդեան ցոց՝ Չեր թագաւորն է ըսելով. և անունը Քարիլաոս դրաւ :

Իսկ ինքը քիչմը ատեն դաստիարակի պէս
սպուն վերայ հոգ տանելով թիբու թիբ
կառավարելէն ետև, երբոր իմացաւ թէ
իր վերայ գէշ կըխորհին, ելաւ գնաց Ա-
սորեստան, Եգիպտոս և բոլոր Յունաս-
տան պարտեցաւ ու ան տեղերուն սովո-
րութիներն ու օրէնքները սորվեցաւ :

Հ. Լիգուրկոս ի՞նչ կերպով կըրցաւ
օրէնք գնել Սպարտացոց :

Պ. Քիչ ատեն աագիս անդին պար-
տելէն ետև, Սպարտացոց ուղեւորը դար-
ձաւ եկաւ որ իրենց մէջի անկարգուի-
ներուն ճար մը ընէ : Բայց գիտնալով
որ անկիրթ մարդիկներուն որ կարգ դը-
նելը գժուար է, անոր համար ձեացուց
որ աստուածները զինքը յորդորեր են :
Աս լսելով Սպարտացիք խօսք տուին որ
հնազանդին. իսկ Լիգուրկոս աւելի ա-
պահով ըլլալու համար՝ առաջ Սպար-
տացոց գլխաւորներուն հասկըցուց իր
միտքը. անոնք հաւնելով որոշեցին որ
ան օրէնքներուն կարգացելու ատենը
գէմ խօսողն ըսպաննընի :

ԻԴ

Հ. Լիգուրկոսի դրած օրէնքներն ու-
րո՞նք են :

Պ. Նախ թագաւորին իշխանութիւնը
պահպեցուց. քսանըութը հոգի որոշեց
Ծէրախոյս անունով, որ ամէն բանի վը-
րայ խորհուրդ ընեն. Ժողովըգեան ալ

իշխանութի տուաւ՝ անոնց ըսածն ընդու-
նելու կամ չընդունելու : Հինգ հոգի ալ
որոշեց Եփ'ոս կամ Պարէպ անունով որ
տարւէ տարի ընտրուին ու կարող ըլլան
պատժելու զծերակոյտը , և քննելու
զթագաւորը : Թէպէտ աս կարգը ետքէն
մտած կերևնայ : Իսկ ժողովըգեան կող-
մանէ ուղելով որ ամէնքը հասարակաց
բարւոյն համար աշխատին , հարկ սեպեց
որ աղքատութի՝ հարստութի վերցըրի : Ա-
նոր համար գետինները հաւասար բաժ-
նեց ամէնուն . ոսկին արծաթը և աւե-
լորդ զարդերն արգիլեց . անոնց տեղը եր-
կըթէ ըստակ մը հանեց ծանր : Թագա-
ւորն ու քաղաքացին մէկ սեղան նստին
ըսաւ . կերակուրնին չափաւոր : Սեղա-
նին վերայ մինակ հարկաւոր բաներու վը-
րայ խօսին , կատակնին ալ խելացի ու
պարկեշտ : Աս օրէնքներուն հաստատուե-
լուն վերայ պէտք չէ զարմանալ , վասն
զի բոլոր Սպարտայի տէրութե մէջ , որ
Լակեդեմոն ալ կրուի , երեսունըինը հա-
զար հոգի էին . ինըհազարը Սպարտայի
մէջ , մնացածը գեղերը :

Հ . Տղոց կրթութի համար Լիգուրկոս
ի՞նչ օրէնք դրաւ :

Պ . Տէրութիւնը հոգա ըսաւ զտղաքը .
ջանան որ պզտրկուց չարքաշ ու սրտոտ
ըլլան . աղջիկներուն ալ մանչերուն պէս
կտրիճ՝ ըլլալ սորվեցընեն : Եօթը տար-
ւան եղածնուն պէս , հասարակաց վար-
պետներն առնեն զերեւք կրթինն աշխա-

տիւ, համբերել, հնազանդիւ : Աւելի աւազ գացածները մէկաշնոնց հրամայեն, բայց միշտ ծերոց աչքին առջևը : Արթըւին տղաքը կենցաղավարիւ մեծերու հետ ալ, կարճ խօսքով ու խելացի կերպով սրատասխան տալ սորվին : Ասով ունեցան իրենք Լահնահն ոճը, ի՞նչ կարճ ու խելացի կերպով ուղածնին խմացընելը : Գողնալը արգիլելու տեղ տղոց սարաք դրաւ, չիկրցողը կըստաժըւէր, որպէս զի անով վարժին սրատերազմական հնարքներու, արթուն ըլլան, վասն զի բոլոր վախճաննին էր կարիճ զինուոր ըլլալը :

Հ. Սպարտացոց կարճուէր մէջ ի՞նչ պակասուի կար :

Պ. Չափէ դուրս փառասիրուի, անոր համար չափէ դուրս անգթուի ալ կրնէին, տկար տղաքն որ կերենար թէ բանի չիգան պիտի, կըսպաննէին : Մէկաշներուն ալ չարքաշուի սորվըցընելու համար՝ անխնայ կըծեծէին Անահիտ կուռքին սեղանին վըրայ, անանկ որ ոմանք ծեծի տակ կըմեռնէին : Աս իրենց անգթուէր կըվարէին նաև Եղոսացոց հետ, որ իրենց մօտ քաղաք մը կըբնադէին. Սպարտացիք անոնց Լիգուրիոսէն քիչմը առաջ յաղթեցին, ու զամէնքը գերի ըրին, և իրենց ամէն գործքն անոնց ընէլ կուտային՝ անխնայ չարչարելով, անկէ իրենց սովորուի եղաւ՝ ամէն իրենց գերիներն Եղոսացի անուանել :

Հ . Լիգուրկոսի վերջն ի նչպէս եղաւ :

Պ . Իր օրէնքները դնելէն ետև Գեղ-
փիա քաղաքը գնաց , Սպարտացիները
երգվընցընելով որ ինչվան որ ինքը դառ-
նայ ան օրէնքները չիփոխեն . հոն պատ-
գամ հարցուց ու լսեց թէ . Սպարտան
թէ որ ատ օրէնքները պահէ՛ բոլոր աշ-
խարհիս մէջ անուանի պիտի ըլլայ : Ան-
ատենը Լիգուրկոս կամօք անօթի մը
նալով մեռաւ հոնտեղը , ունի Սպարտա-
ցիք իրենց երգմանը մէջ կապուած մընան :

Հ . Լիգուրկոսի ժամանակէն ետև
Սպարտացիք ի նչ պտորղմներ ունեցան :

Պ . Թէոպոմպոս Թագաւորին ատենն
Արգիացոց գէմ պատերազմի ելան . և
որպէս զի շատ կոտորած չըլլայ՝ որոշե-
ցին որ երկու կողմէն ալ իրեքհարիւր հա-
գի խրկեն , ու որ կողմն որ յաղթէ , ա-
նոնց ըլլայ յաղթուի : Ան իրեքհարիւր
ներն եկան մէկգմէկ ջարդեցին ինչվան
իրիկուն , ու Արգիացիներէն երկու հո-
գի ողջ մնալով և մէկ հոգի Սպարտացի-
ներէն , Արգիացիք գնացին յաղթու-
թիւր խնացընելու . ան մէկ Սպարտացին
ալ մեռած Արգիացիները կողոպտեց տա-
րաւ : Երկրորդ օրն Արգիացիք կըպար-
ծէին որ երկուք ողջ մնացին , Սպարտա-
ցիք ալ՝ որ թշնամին կողոպտեցին . անոր
համար նորէն պատերազմ ըրին ու Սպար-
տացիք յաղթեցին : Ասկէ ետքը ու-

բիշ երկու սաստիկ պատերազմ ալ ունի. Բ. Ա
ցան Սպարտացիք Մեսենացոց հետ :

Հ. Սպարտացոց Մեսենացոց գէմ
ըրած առջի պատերազմն ինչպէս եղաւ :

Պ. Սպարտացիք հպարտացած ամէ- 743
նուն վըրայ տիրել ուզելով, սուտումուտ
պատճառներով ըսկսան պատերազմիլ,
ու Մեսենացոց Ամֆէաս քաղաքն առին.
Մեսենացիք յաղթուելով աւելի կատ-
ղեցան. Սպարտացիք ալ սիրտ առին,
երգում ըրին որ ինչքան բոլոր Մեսենա-
ցոց չիյաղթեն, ետ չիդառնան : Երկու
անգամ անօգուտ զարնուեցան. բայց
Մեսենացոց մէջ սովը սաստկանալով
Դեղփիսին Ապոլոնն կուռքին պատգա-
մովը Արիստոմէնին աղջիկը զոհ ըրին, և
եօթը տարի յաղթուելը անորոշ մնաց :
Ութերորդ տարին Եւփայէս Մեսենա-
ցոց թագաւորը վերաւորուեցաւ, և Մե-
սենացոց կարիճները Սպարտացոց ձեռ-
քէն քաջութիւն փրկեցին զինքը. և քսանե-
րորդ տարին Մեսենացիք բոլորովին յաղ-
թուեցան : Սպարտացիք անոնց ծառայ-
ութիւնը նշան՝ հրաման տուին որ երկ-
մարդ և կնիկմարդ ամէնքը սուգ մտած՝
Սպարտացոց թագաւորներուն ու մե-
ծամեծներուն թաղմանը գան :

Հ. Սպարտացոց երկրորդ պատերազ-
մը Մեսենացոց գէմ ինչ պատճառով
եղաւ :

Պ. Մեսենացիք Սպարտացիներէն 681
սաստիկ չարչարուելուն համար ապրո-

Ք. Ա սամբեկցան ու Արիստոմէնին առաջնորդելովը պատերազմեցան, յաղթեցին. և Արիստոմէն Սպարտացիները վախցընել ուղելով, գիշեր ատեն մտաւ Սպարտա, ու Աթենասայ մեհենին գրանը վերայ վահան մը կախեց, վերան գրած թէ Արիստոմէն կընուիրէ Աթենասայ՝ Ըսպարտացոց աւարէն: Սպարտացիք զարհուրած՝ Դեղփիս պատգամ հարցուցին, ու պատասխան առին թէ Աթենքէն զօրասպետ մը բերել տան: Թէպէտ աս բանս իրենց նախաախիք էր, բայց նեղը մտած՝ ուզեցին: Աթենացիք զանոնք ծաղը ընելու համար խրկեցին Տէրախոս կաղ բանաստեղծը: Սպարտացիք նորէն երկու անգամ յաղթըւեցան, ու երբոր յուսահատած կըմտածէին, Տէրախոս իրեն բանաստեղծութիւն անանկ սրտերնին վառեց որ մտքերնին գրին մեռնիլ, քան թէ ետ դառնալ, ու բոլորովին յաղթեցին:

ԻԶ

Ճ. Ո՛վ շինեց Աթենքը:

1556

Պ. Կեկրոպ Եգիպտացին, որ քաղաքականութիւն ալ մտցընել ուզելով, հաւատքի ու ամուսնուէ կարգ դրաւ. Արիսպագոս ըսւած անուանի արգար ատեանն ալ ինքը հաստատեց՝ մարդասպանները դատելու համար. և հոն դատաստանները գիշեր ատեն կըլլային:

Հ. Աթենացոց առջի կառավարուէր Վ. Ա.
ի նչպէս էր :

Պ. Ինչպէս Վոդրոս թագաւորը միապետութի էր . բայց երբոր Հերակլէանք պատերազմով ինչպէս Աթէնքին դուռը հասան , Աթենացիք պատգամախօսին հարցուցին թէ ի՞նչ ընեն . պատասխան եղաւ թէ Որ կողմին թի՛րն որ առաջ մեռնի , ան կողմը կըյաղթէ : Անասենը Վոդրոս քաղաքացոց համար մեռնիլ յանձն առնելով , հագաւ գեղացիի հագուստ , մտաւ պատերազմին սաստկացած տեղն ու ըսպաննըւեցաւ : Հերակլէանք լսելով թէ պատգամս Աթենացոց վերայ կատարւեցաւ , սրտերնին կտրած՝ թողուցին ետ դարձան : Աթենացիք ալ Վոդրոս թագաւորին յիշատակին համար՝ ալ թագաւոր չիդրրին . ուստի Արխոն անունով իշխաններ կըկառավարէին իրեքհարիւր տարիի չափ . որոնք առջի բերանը որդոց որդի կընրատէին . ետքը տասը տարւան կապեցին , ալ վերջը՝ տարւետարի կըփոխուէին . և իրենք ինը հոգի էին :

1070

Հ. Աթենացիք ի՞նչ օրէնքով կըվարւէին :

Պ. Առջի ատենները գրաւոր օրէնք մը չունենալով՝ խառովուէ մէջերնէն պահաս չէր . անոր համար իրենց ուզելովը Դրակոն անունով մէկը գրաւոր սաստիկ օրէնք մը առաւ՝ որ ամէն յանցանքի պատիժ՝ գլուխ կտրուէ , ըսելով թէ Մա.

624

Ք. Ա հը սղտիկ յանցանքներուն արժանի սա-
 աիժն է . իսկ մեծ յանցանքներուն հա-
 մեմատ սրատիժ չիկայ աշխարհիս մեջ :
 Անոր համար Աթենացիք նեղացած՝ ա-
 զատութի ուզէլ ըսկսան : Աղքատները
 Ռամկապետուի ըլլալ կուզէին որ իրենք
 ալ իշխեն . հարուստները Աղնուապե-
 տուի ըլլայ կըսէին՝ որ իրենք միայն կա-
 ռավարեն : Անասներ Սողոմնին անուան
 էլած ըլլալով, իրեն թողուցին որ որոչէ :
 Հ. Ո՛վ էր Սողոմ :

604

Պ. Սողոմն թէսլէտ աղնուական ցեղէ
 էր, բայց ինքն անուանի եղաւ իսէլքին
 ու առաքինուէր համար . ուսմունք սոր
 վելով և ճամբորդութի ընելով ինքզինքը
 կրթեց . անուշ բնուի ունէր . ամէնուն
 բարիքը կուզէր՝ իր շահը չինայելով, ա-
 նորհամար ալ չուզէլով յանձն առաւ
 Արխոնի սրատիւը . բայց իր դրած օրէնք-
 ներն անկատար էին . վասն զի Անկէ ա-
 ւելին Աթենացիք չեն կըրնար սրահել
 կըսէր :

ԻԷ

Հ. Սողոմն Աթենացոց ի՞նչ կարգ դրաւ :

Պ. Գլխաւոր իշխանուիը ժողովրդեան
 ձեռքը տուաւ . իսկ դատաւորուիը քա-
 ղաքացոց մեծերուն յանձնեց որ ծէրա-
 կոյք կըսէին, ու չորսհարիւր հոգի էին .
 ետքը վեցհարիւր եղան : Աւաջ ամէն
 բան հրատարակական ժողովքով կորոչ-
 ւէր, որ կըլլար ութ օրը մէյո՛ր, և հոն

յիսուսն տարւան եղողն իշխանուի ունէր
 խօսելու . ուստի ճարտասանութի մէկը
 կըրնար յաղթելու բոլոր ծերակուտին
 խոհեմուէր . անորհամար ըսեր էր Անա-
 քարսիս Սկիւթացին Սողոնի , թէ Ձեր
 մէջ մտածելու իրաւունքը խելացինե-
 բուն արուած է , իսկ որոշելը՝ խենթե-
 բուն : Ուստի Սողոն Արիսպագոսի իշ-
 խանութիւր նորէն հաստատեց , ու անոնց
 յանձնեց հրապարակական բաներուն՝ և
 աղոց կրթուէ հոգը , գիտնալով որ ամէն
 բարիք աղոց կրթուէն կելլէ :

Հ . Սողոն քաղաքական բաներուն ինչ
 օրէնք դրաւ :

Պ . Պարսպ մարդը՝ մսխողը՝ կամ իր
 ծնողքը չի հոգացող տղան իրեք անգամ
 ամբաստանուէլէն ետքը վատանուն սեպ-
 ւի : Գինով իշխանին պատիժը մահ ըլլայ :
 Պատերազմի մէջ մեռնողներուն աղաքը
 հասարակապետուիւր հոգայ : Օտարա-
 կաններն Աթենացոց մէջ մանեն , բայց
 կառավարուէ չիխառնըլին : Որպէս զի
 փառքի ետեւէ չըլլան , որոնց վըրայ որ
 կասկածին զօրաւոր ըլլալու , խեցեկոյս
 վճռով թէոր վեցհաղարէն աւելի վիճակ
 ելլէ վըրան , տասը տարի աքսորւի : Աս
 սրտաճառաւ երբեմն բարի մարդիկ ալ
 կաքսորուէին՝ իրենց շատ նախանձողներ
 ունենալնուն համար :

Հ . Սողոնին օրէնքները դրուելէն ետեւ
 Աթենացոց վիճակն ինչպէս եղաւ :

Պ . Ինչպէս որ կերուեսայ՝ Սողոն նեղա-

Ք. Ա ցած Աթենացոց թեթևամտուէր վերայ
 559 գնաց Աթէնքէն ասդիս անդին տասը տա-
 րի ստորտեցաւ : Ան ժիջոցին մէկքանի
 հոգի ժողովրդեան մէջ խռովուի ձգել
 ըսկասն . որոնց մէկն էր Պիսիստրատոս .
 որ յաղթեց մէկալնոնց իրեն խելքովն
 ու կուղէր թագաւորել : Անգամ մը ինք-
 զինքը վերաւորած արիւնլուայ՝ կառքով
 հրապարակ եկաւ ու ձեացուց թէ թըշ-
 նամիներն ըրեր են . ուստի իրեն յիսուն
 թիկնասպահ ուզեց ու անոնցմով ըսկը-
 սաւ թագաւորի պէս վարել . և կամաց
 կամաց քովիններուն թիւը շատցնելով
 բոլորովին տիրեց : Սողոն վերայ հասաւ .
 և անօգուտ տեղը ազատուինին սպահե-
 լու համար ժողովուրդը յորդորելով .
 քիչ ատենէն ինքը մեռաւ :

Հ. Ի՞նչ կերպով Պիսիստրատոս կըր-
 ցաւ Աթենացոց սիրտը շահիլ :

Պ. Գեղացիներուն գետին բանիլ՝ վաս-
 արկիլ սորվեցուց . քաղաքացոց մէջ ար-
 հեսաներ խոթեց . ուսման ջանք մտցուց .
 գրքատուն շինեց . հոմերոսի գիրքերը
 գտաւ ու անոնց հասկըցուց , և փառա-
 ւոր շէնքերով քաղաքնին զարգարեց : Ա-
 թենացիք ըզբաղելով աս հոր բաներուն ,
 ասանկ թագաւորի տակ ըլլալն իրենց
 ազատուի ալ անուշ եկաւ :

ԻԸ

Հ. Պիսիաարատէն ետքը Աթենացոց Բ. Ա
նով իշխեց :

Պ. Իր երկու որդիքն Իպպարքոս ու 526
Իպպիաս, որոնք իրենց հօրը պէս գի-
տուի ու արհեստ ծաղկեցրնել կը ջանայ-
ին : Բայց ութը տարիէն Իպպարքոսն
ըսպաննեցին, Իպպիասն ալ լակեդեմոն
փախաւ :

Հ. Իպպարքոսն ինչո՞ւ ըսպաննեցին,
և Իպպիաս ալ ինչո՞ւ փախաւ :

Պ. Արիստոգիտոն և Արմոդիոս եր-
կու բարեկամ էին : Իպպարքոս Արմո-
դիոսին քոյրն իրեն կին առաւ ու ետքը
վաճակեց, աս բանիս վերայ երկու բար-
եկամ մէկտեղ այնչափ սաստիկ բար-
կացան, որ խօսքը մէկ ընելով՝ օր մը յան-
կարծ մեռուցին Իպպարքոսը . թէպէտ
իրենք ալ մեռան : Իպպիաս սաստիկ կատ-
ղելով, որուն վերայ որ կասկած ունե-
ցաւ՝ ըսպաննեց, և շատերն ալ խոստո-
վանցրնել կը ջանար : Որոնց մէջ լիոնես-
սա անուանով կին մը երբոր ասնջէլ ըսկը-
սան, կինն ինքիրմէ վախնալով որ չը-
լայ թէ ցաւէն խօսք մը ըսէ, լեզուն խա-
ծաւ՝ փրցուց, ու բռնաւորին առջին
ձգեց . որուն համար ետքը Աթենացիք
առիւծի արձան մը կանգնեցին՝ լեզուն
կարած : Ետքը Իպպիաս վախնալով ու-
ղեց որ գրսէն իր քովը մարդիկ ժողովէ :

ուստի ելաւ Վակեգեմոն փախաւ . բայց
հոն օգնուի մը չիգանելով , ելաւ դնաց
Պարսից Արտափեռնէս կուսակալին քով :

Հ . Սպարտացիք ինչո՞ւ չօգնեցին Իս-
պիասայ :

Պ . Ազկմէոնեանք Պիսիատրուտոսին
բռնակալու թէր դէմ կենալնուն համար
Աթէնքէն քչւած՝ Սպարտա գնացեր
էին , ու Գեղփոսի տաճարը շինելով
քուրմերուն սիրար վաստըկեր էին . ա-
նանկ որ ամէն պատգամ հարցընելուն՝
կուռքը Սպարտացոյ վերայ պարտք կը-
ղընէր Աթէնքին օգնելու՝ որ առջի ա-
զատութիւնին ձեռք ձգէն . և թէպէտ
իրենք Աթենացոյ դէմ էին , բայց Իս-
պիասին օգնելու վախցան , որովհետև
պատգամին դէմ ըրած կըլլային :

Հ . Իսպիաս կրրցա՞ւ Աթէնք դառ-
նալ՝ Արտափեռնէսին օգնելովը :

Պ . Չէ . վասն զի Աթենացիք ալ նոյն
ատենն Իսպիասայ վերայ ամբաստանու-
թի գրեցին Արտափեռնէսին . և երբոր
Արտափեռնէս գրեց Աթենացոյ թէ
Թէոր կուզեն պատերազմէն ազատ ը-
լալ , Իսպիասն ընդունին . անոնք Ար-
տափեռնէսին ըսպառնալիքն արհամար-
հեցին . չուզեցին նորէն կորսընցընել
իրենց ազատութիւր :

ԻԹ

Հ. Ի՞նչ պատճառաւ Պարսիկք Յու. Բ. Ա
նաստանի վերայ ելան :

Պ. Մէյմը Իսպիհաւը չընդունենին 500
պատճառ կրքերէին . երկրորդ Յոնիա-
ցոց ըրած ապստամբութիւնը , որ շատոնց
լիւղացոց թագաւորին տակը մտած էին,
ու անասանը Միլէտացոց Իսաիէոս՝ իշ-
խանէն գրգռուած ապստամբեր ու զօ-
րացեր էին , և Աթենացոցմէ ալ օգնուի
տուած՝ Լիւդիայի գլխաւոր քաղաքը
Սարգիկէն առեր ու այրեր էին : Բայց
բուն պատճառը Պարսից անխորհուրդ
հարարուին էր որ առանց կարգի կա-
նոնի կուզէին բոլոր աշխարհիս տիրել :

Հ. Պարսից Յունաց գէմ պատերազմն
ի՞նչպէս ըսկաւ :

Պ. Նախ Արտափեռնէս ելաւ նուա- 497
ճեց զՅոնիացիքը , և Իսաիէոսը բռնեց խա-
չեց : Ետեւէն Դարեհ խրկեց իր փեսան
Մարգոնիոսն որ վրէժ խնդրէ Սարգիկէ-
ին այրելուն համար ու տիրէ բոլոր ծո-
վեզերքին : Մարգոնիոս անհմուտ ըլլա-
լուն համար ցամաքին վերայ յաղթուե-
ցաւ , նաւատորմիդն ալ Աթոս լեռանը
ուարաւանդին քով փոթորիկէ մը ջարդը-
ւեցաւ , և ինքն ամօթով ետ դարձաւ :
Դարեհ առ եղած փրասներուն ճար ը-
նել և բոլոր Յունաստանի տիրել ուզե-
լով , դեսպան խրկեց թէ Յունաստանի

Ք. Ա հողն ու ջուրը կուզեմ : Սպարտացիք և Աթենացիք՝ Առէք ուզածնիդ ըսելով Պարսից գեսպաններուն մէկը ջրհորը ձգեցին , մէկալն ալ գետինը թաղեցին : Ետքը քաղաքին պիտաւորներն ալ ջարդել տուին որ կուզէին Պարսից անձնատուր ըլլալ : Թէպէտ սուրիշ շատ քաղաքներ սարսափած՝ հնազանդեցան Դարեհին :

Հ. Դարեհի Յունաց գէմըրած առջի պատերազմն ինչ վերջ ունեցաւ :

490

Պ. Հարիւրքսան հազար հետեակ զօրք և վեցհարիւր նաւ խրկեց Դարեհ , հետերնին ալ շատ շղթաներ , որ բոլոր Յոյները գերի վարեն : Պարսիկները նախ Երեգրիացոց վերայ գնացին , ու վեց օր սաստիկ պատերազմէն ետքը յաղթեցին , քաղաքը մոխիր դարձուցին : Անկէ անցան Իպպիասայ առաջնորդելով հասան Մարաթոնեան դաշտը Աթէնքին մօտ : Աթենացիք Սպարտացիներէն օգնուի ուղեցին , բայց անոնք ուշացան , որովհետեւ սովորուի ունէին որ լուսինը լրանալէն առաջ պատերազմի չէին երթար : Աթենացիք բոլորը տասըհազար հոգի՝ տասը զօրապետով , որոնք ամէնքնին մէյմէկ օր պիտի հրամայէին , պատրաստուեցան . և խորհուրդ ըրին որ քաղաքին մէջ ըսպասեն . բայց ետքը Միլտիադէսին խորհրդովը գէմ ելլել որոչեցին . և որովհետեւ ամէն օր զօրապետ փոփոխուելով գժուար կըլլար կառա-

վարելը, բոլոր Միլաիադէսին յանձնեցին : Գնաց Միլաիադէս լեռան մը տակ կեցաւ, ու կտրտած ծառերէ իրեն սլատնէշ շինեց : Պարսից զօրասպետը Դատ տեսաւ որ ան դիրքը իրեն յաջող չէ, բայց բազմութիւնը ապաւինած՝ սլատերազմինչան տուաւ : Յոյնք չարաչար կատողած՝ վերանին վազեցին . ու երբոր անոնք մէջ տեղէն կըզօրանային, Յոյնք երկու կողմէն զարկին ցրուեցին զօրքն ու նաւերուն մէջ փախուցին . մէկքանի նաւ բռնկցուցին, շատ նաւեր առին, շատ մարդ ալ ջարդեցին . և իրենցմէ միայն երկու հարիւր հոգի ինկան : Արսէն թէ Ալենեգիրոս կտրիճը լողալով փախչող նաւ մը բռնեց աջ ձեռքովն ու կուզէր վեր ելել . կտրեցին ձեռքը . ձախովը բռնեց, ան ալ կտրեցին . անասենը ալ ուսներովը խածաւ զնաւը . գլուխն ալ կտրեցին՝ մեռաւ : Իսկ Սպարտայէք հազիւ երկրորդ օրը հասնելով տեսան եղածն, ուրախացան, բայց ամօթով մը նային :

Լ

Հ . Մարաթոնեան սլատերազմէն ետև Աթենացիք ինչ փոխարէն ըրին Միլաիադէսին :

Պ . Ան սլատերազմին սլատիերը քաշել տուին՝ Միլաիադէսը զօրասպետ ձեռացուցած : Եւ որովհետև Պարսիկք քար

Ք. Ա մը բերեր էին՝ յաղթուէ նշան կանգնե-
լու համար, ան քարը Փիղիասին փորել
առին՝ Նեմէս կուռքին արձանը. մեռ-
նողներուն համար ալ արձաններ կանգ-
նեցին : Բայց քիչ ստենէն երբոր Միլ-
տիադէս կղզեցոց անհաւատարմութիւ
պատժելու գնաց և Պարոս կղզիէն զար-
նուած ետ դարձաւ, Քսանթիպպոսին
ամբաստանելովը զինքը մահաստարա սե-
պեցին. բայց մահուանէ ազատելով՝ կոր-
սըւած նաւատորմիլին դինն իրմէն ու-
ղեցին. ինք ալ այնչափ ըստակ չունենա-
լուն համար՝ բանտին մէջ մեռաւ : Ետքը
իր որդին Վիսոն բարեկամներու ձեռքով
վճարեց հօրը պարտքը : Ուրիշի բարեք
ընողը, թէոր իր յոյսը աշխարհիս վերայ
դրեր է, պատրաստ ըլլայ Միլտիադէսին
պէս փոխարէնն ընդունելու :

489

Հ. Միլտիադէսէն ետև Աթենացոց
մէջ ո՞վ եղաւ երևելի :

Պ. Արիստիդէս ու Թեմիստոկղէս :
Թեմիստոկղէսի հնարքովը զԱրիստիդէսն
աքսորեցին խեցեկոյա վճռով իր արդա-
րուէր համար : Եւ իր քչւելուն պատ-
ճառն աղէկ կերևնայ աս դիպուածէս՝
որ պատմեմ : Գեղացի մը գրել չիգիտ-
նալով, և Արիստիդէսը չիճանչնալով,
ճամբան հանդիպեցաւ Արիստիդէսին ու
աղաչեց որ ոսորէի մը վերայ գրէ Արիս-
տիդէսին անունը. Արիստիդէս հարցուց
Թէ Քեզի ի՞նչ ինաս ըրեր է անիկա :
Պատասխանեց գեղացին՝ Թէ Բան մը չէ

ըրած, բայց ես ձանձրացեր եմ ըսելէն Ք. Ա
անոր արգարուէը գովեսառ: Անտանը
Արիստիդէս ձայն չիհանած՝ գրեց ար-
ւաւ: Իսկ Թեմիստոկլէս խելացի էր և
հայրենասէր, բայց խիստ նախանձոտ,
որ մեծերուն սովորական ախան է:

Հ. Արիստիդէսին աքսորւելէն ետքը
Թեմիստոկլէս ի՞նչ ըրաւ:

Պ. Մեծամեծ գործքերով իր անիրա-
ւուէր պարտըկել ջանաց: Գիտնալով որ
Դարեհ նորէն կըպատրաստուի գալու-
վորանին, հարիւր նաւ շինել տուաւ.
ու երբ լսեց ԹէՔսերքսէս Դարեհի տեղն
անցեր է և գէպի Յունաստան ճամբայ
ելեր է, նախանձը մեկդի Թողուց, Արիս-
տիդէսը ետ կանչել տուաւ որ խորհուրդ
ընեն:

Լ

Հ. Յոյնք ի՞նչպէս Քսերքսէսին դէմ
դրին:

Պ. Նաւատորմին որ երկուհարիւր 480
ուԹսուն նաւ էր՝ Եւրիբիադէս Սպար-
տացիին յանձնեցին. իսկ բոլոր զօրքին
գլուխ Թեմիստոկլէսն եղաւ: Աւոնիդէս
Սպարտայի Թագաւորն ալ վեցհազար
զօրքով առաջ գնաց Թերմոպլէ կամ
Ջերմագրունք ըսած նեղ կիրճը պահե-
լու: Քսերքսէս նաւէ կամուրջ շինելով,
և ծովը հանգարտ չիկենալուն համար
սրատեւելով, հինգ միլիոնի չափ մարդով

անցաւ Ելէսպոնտոսէն մտաւ Յունաս-
տան, և միաքը գրեր էր թէ առանց սա-
տերազմի ամէնքն իրեն սլիախ հնազան-
դին, և երբ տեսաւ զանոնք քիչ հոգի
սպտորաստրւած հոն ճամբան արգիլե-
լու, զարմացաւ. մարդ խրկեց ըսաւ որ
զէնքերը թողուն. Լևոնիդէս սատաս-
խանեց. Եկո՛ւ առ: Ոմանք ըսին Յոյնե-
րուն թէ Պարսից զօրքն այնչափ շատ է
որ մէկտեղ նեա նեա տելով կրնան արևը
խաւարցընել. Սպարաօացոց մէկն ալ
սատասխան տուաւ. Ալ աղէկ. շուքի
մէջ կըսատերազմինք: Պարսիկները վը-
րայ վազեցին և երկու որ սասախկ կռուե-
լով չիկըրցան զանոնք տեղերնէն շար-
ժեւ. բայց երբոր ծածուկ ճամբով մը
կըճին վըրայ ելան, Լևոնիդէս յուսա-
հատեցաւ, և քովէն արձըրկեց զօրքն ը-
սելով թէ Ես հայրենեացս սաշտպանե-
լու համար սլիախ մեռնիմ, դուք գնա-
ցէք յաջող առթի ըստատեցէք: Վասն
զի սաագամեղեր էր որ եթէ հերակ-
լեան ցեղէն թագաւոր մը զո՛հ ըլլայ,
Յոյնք կըյաղթեն. և անոր համար հոն
եկեր էր: Բայց հազար հոգիի չափ մար-
դիկ քովէն չիզատեցան, ըսելով թէ
Աս իրիկուն Պլատոնի հետ կերակուր սլի-
ախ ուտենք: Ուստի վազեցին գիշերով
թշնամեաց վըրայ ու մեծ ջարդ տուին.
Վասն զի չիճանչնալով Պարսիկները մէկ-
զմէկ կըջարգէին: Բայց առաւօտանց երբ
խնացան թէ Յոյնք քիչ հոգի են, սա-

չարեցին, ու նետով զամէնքը մեռուցին :
 Միայն երկու Սպարտացի ազատեցան
 փախան. որոնց մէկը խիստ արհամարհւե-
 լուն չիգիմնացաւ, ինքզինքը մեռուց .
 երկրորդն ալ նորէն քաջուհներ ընելով
 երես ճերմկեցուց : Ետքը աս պարզ ու
 գեղեցիկ յիշատակարանը գրուեցաւ
 Թերմոպիլէի կրճին վերայ : Ո՛վ անցաւ որ,
 գնահ ըսէ Ղահեգեմոնին որ մէնք հոս մե-
 ռանք իրեն օրէնքները պահելու համար :
 Հ. Թերմոպիլէի պատերազմէն ետև
 ի՞նչ ըրաւ Քսերքսէս :

Պ. Քսանհազար հողի կորսընցուցած
 ըլլալով կատաղաբար առաջ քալեց թրով
 կրակով : Աթենացոց պատգամ մը ելաւ
 թէ Աթէնքին ապատուէր փայտէ պա-
 րիսպով պիտի ըլլայ : Բայց ինչպէս որ
 կերենայ՝ Թեմիսաոկղէսի հնարքն էր
 աս. որով կրցաւ համոզել զամէնքը թէ
 ան փայտէ պարիսպները նաւերն են :
 Վասն զի օրէնք ունէին որ իրենց տունը
 տեղը՝ գերեզմանները տաճարները չի-
 թողուն : Իսկ ան պատգամին ուժովն
 Աթենաոց պաշտպանուէր յանձնեցին
 զքաղաքը, ու ամէն պատերազմի եկող
 մարդիկը նաւ մտան. իսկ ընտանիքիին
 շատր փախան ուրիշ քաղաք, ոմանք ալ
 չուղելով քաղաքէն ելլել՝ միջնաբերդը
 մտան կեցան, փայտէ է ըսելով : Քսերք-
 սէս ալ եկաւ զանոնք ամէնքը քաղաքին
 հետ մէկտեղ այրեց :

Հ. Թերմոսիլէի պատերազմէն ետև նորէն Պարսիկք ուր զարնըւեցան :

Պ. Սաղամինայի նեղուցին մէջը : Թէ պէտ Եւրիբիադէս կուզէր Կորնթոսի ծոցը տանել նաւատորմիւր՝ Պեղոսպոնեսը պաշտպանելու համար, Թեմիստոկլէս Սաղամինա կուզէր կենալ՝ նեղ տեղ ըլլալուն համար : Ա՛էճ՛ն այնչափ տաքցաւ որ ինչվան Եւրիբիադէս դաւազան վերուց Թեմիստոկլէսին վերայ : Չարի ըսաւ Թեմիստոկլէս, բայց մտիկ ըրէ : Աս խօսքէս ամբնալով Եւրիբիադէս Թեմիստոկլէսին թողուց կառավարուիլ : Անտաներ Թեմիստոկլէս ծածուկ իմացուց Քսերքսէսին իբրև բարեկամութիւն, թէ Յոյնք հեռանալ կուզէն Սաղամինայէն, ուստի խորհուրդ կուտար որ շուտով վերանին վազէ : Թագաւորը խաբւելով, ու չիմտածելով տեղւոյն նեղուածք ըլլալը, հրամայեց որ պաշարեն զՅոյները. Թեմիստոկլէսն ալ Արիստիդէսին հետ մէկ սիրտ՝ հովին յաջող կողմը դիտելով այնպէս շարեց նաւերն որ իրենց քիչ նաւովը երկուհարիւր Պարսից նաւերէն կտորակեցին, մնացածն ալ ցրուեցին. որոնց նաւերը ծանր ըլլալով և շառ, նեղուցին մէջ պաշարուեր էին : Ետքը Թեմիստոկլէս ուզեց կամուրջը քակել, բայց Արիստիդէս արգիլեց, ըսելով թէ Յու-

սահառոտ զօրքը ակ մեծ փնաս կրրնայ
ընել : Քսերքսէս ալ վախնալով շուտ մը
խաղք եղած էտ դարձաւ : Ասանկ սուտ
պատճառով հպարտացողը , ճշմարիտ
պատճառով կըխոնարհի : Բայց իրէքհա-
րիւր հազար հոգի թողուց Մարգոնիոս
զօրասպետին ձեռքը որ պատերազմը լմըն-
ցընէ :

Հ . Քսերքսէսին էտ դառնալէն էտև
Մարգոնիոս Յունաց ինչ կըրցաւ ընել :

Պ . Յունաց մէջ երկպառակուելի ձգե-
լու համար՝ Աթենացոց հաշտուէ դես-
պան խրկեց . բայց Արիստիդէս գլխաւոր
Արիստն ըլլալով՝ յանձն չառաւ . Քանի
որ , ըսաւ , ձեր արև աստուածը երկինքը
կըստըտի , Աթենացիք Պարսից թշնա-
մի պիտի ըլլան : Անատենը Մարգոնիոս
կատղած՝ իր սէրն արհամարհէլնուն
համար , ըսկաաւ երթալ Աթէնքին վը-
րայ . Աթենացիք առջինին պէս թողու-
ցին քաղաքնին՝ Սաղամինա քաշւեցան :
Պատրիկին մէկը Պարսից հետ միաբանիլ
ուզելուն համար քարկոծեցին . անոր
կինն ու աղջիկն ալ կանայք քարկոծե-
ցին : Աս ատենըս Սպարտացիք ըսկասն
իրենց սահմանը ամբացընել . բայց ետքը
Աթենացոցմէ յանգիմանուելով օգնուել
եկան հինգ հազար հոգի , երսունըհինգ
հազար Եղոսացի ալ մէկտեղ : Ուստի բո-
լորը եղան դրեթէ վաթսունհազար ,
որոնց միայն ութհազարը Աթենացիք
էին : Նախ Բէովտիա ճակատեցան . և

Բ. Ա երբոր ջրոյն պակսուէր համար Յոյնք գիւ-
 շեր ատեն անկէ գնացին, Մարգոնիոս
 կարծելով թէ փախան, հասաւ ետե-
 նուն Պլատէա քաղաքին քով. ու երբոր
 սաստիկ զարնըւելով Պարսիկք ըսկսան
 փախչիլ, Մարգոնիոս նեաւեցաւ մէջեր
 նին որ զօրքը եա դարձընէ, բայց ինքը
 զարնըւեցաւ մեռաւ: Անտենը զօրքը
 ցրուեցան, հարիւր հազար մարդ կորսըն-
 ցընելով: Նոյն օրը Յոյնք մնացած նա-
 լատորմիզին վերայ մէկ ուրիշ յաղթու-
 թի ալ ընելով՝ բոլորովին հեռացուցին
 Պարսիկները Ելլեսպոնտոսէն. որ մէյ-
 մալ Եւրոպա անցնիլ չի համարձակեցան:

ԼԳ

Հ. Ա թէնացիք Պարսից յաղթելէն
 ետե Ա թէնքը նորէն շինեցին:

478

Պ. Մտածելով որ քաղաքն ամրութի
 չունենալով միշտ վտանգի մէջ է, ըսկը-
 սան ամուր բերդով պատել: Բայց Սպար-
 տացիք երբ լսեցին, նախանձելով գես-
 պան խրկեցին. իբրև թէ Պեղոպոնեսէն
 դուրս ամուր տեղ պէտք չէ շինել, որ
 պատերազմի ատեն թշնամեաց ամրանա-
 լու տեղ չըլլայ: Թեմիստոկղէս անոնց
 միտքն իմանալով, ըսաւ՝ թէ Դեսպան
 խրկենք որ մեր միտքն իմացընենք. և
 ինքը գեսպաններուն մէկն եղած՝ մի-
 նակ առաջ գնաց, ապսպրրելով որ մե-
 կալնոնք ուշանան, ինչպան որ փութա-
 լով պարսիսպին շէնքը առաջ երթայ: Երբ

որ Թեմիստոկղ Սպարտա հասաւ, մի Ք. Ա նաև ատեան չեղաւ, Ընկերներըս պիտի գան ըսելով. և երբոր անոնք ուշացան, Թեմիստոկղ յորդորեց որ Սպարտացիք նորէն դեսպան խրկեն փութացընելու համար: Ետքը երբոր Աթենացոց խօսք գրած ատենը հասաւ, Թեմիստոկղ ելաւ իմացուց թէ Աս բանս Աթենացոց իրաւունքն էր. և ինծի ալ չէք կրնար փնասել ըսաւ, վասն զի ձեր դեսպաններն ալ իմ տեղըս պատանդի կեցած են: Սպարտացիք թէպէտ նեղացան, բայց չիկրցան ձայն հանել, վասն զի Աթենացիք ալ ամբըցած էին:

Հ. Թեմիստոկղ այնչափ քաջուններուն փոխարէն ի՞նչ ընդունեցաւ:

Պ. Մեծ յարգ և գովութի ամենէն մէկբերան. անանկ որ երբ մտաւ Ողիմպիական խաղուն մէջ, ամէն խաղերը գազրեցուցին՝ զինքը պատուելու համար. այնչափ որ իր փառասիրունն ալ գոհ ըլլալով, ըսաւ. Այսօր կը քաղեմ աշխատանքիս պատուը: Բայց վերջերը սուտ զրարատուք՝ իբրև թէ Պաւսանիասայ հետ խօսքը մէկ ըրած է, աքսորեցին զինքն ու թշուառութի մեռաւ:

Հ. Պաւսանիասայ ըրած յանցանքն ի՞նչ էր:

Պ. Յոյնք ուզելով աղատելմնացած կղզիներն ալ Պարսից ձեռքէն, նաւատորմիդ մը պատրաստեցին, և գլուխ դրին Սպարտացիներէն Պաւսանիասը, և Ա-

Ք. Ա Թե՛նացիներէն Արիստիդէան ու Կիմոնը: Գնացին ասոնք շատ յաղթուիներ ըրին, ինչպան Բիւզանդիոնն ալ առին. և Պաւսանիաս ինքզինքը շուայլու թեան տալով՝ աւարներով լցուած, գաղտուկ Պարսից գերիները փախուց, և խօսք տուաւ Քսերքսէսի՝ բոլոր Յունաստանն իրեն ձեռքը մատնելու, թէոր անիկա տայ իր աղջիկը Պաւսանիասին: Սպարտացիք ըտելով Պաւսանիասայ անկարգ կերպերը, ետ կանչեցին. վերան երկու անգամ դատաստան եղաւ, ու խիստ յայտնի նշան մը չի գրուելով՝ ազատեցաւ: Իսկ Պաւսանիաս թող թակցուի կրնէր Պարսից Արտաւազ նախարարին հետ: Անգամ մը թուղթը տանողը կասկածելով իր վերայ, բացաւ թուղթն ու իմացաւ որ զինքն ալ մեռցնել պիտի տայ որ չիմացուի թուղթ տանելը: Պարեաները զատ ըտելով քննել ըսկսան. և Պաւսանիաս երբ իմացաւ ու Աթենասայ մեհեանը փախաւ, Սպարտացիք դռները ծեփեցին, ու հոն Պաւսանիաս անօթուէ մեռաւ: Աս ատեններըս Թեմիստոկղէս քըշուած ըլլալով, Պաւսանիաս անոր ալ թուղթ գրեց էր. և Թեմիստոկղէս թեպէտ չէր հաւնած անոր խորհրդին, բայց մարդու ալ չէր ըսած. անոր համար ինքն ալ դատաստանի կանչըւեցաւ. սն ալ փախաւ՝ ասդիս անդին բարբարական կըստըտէր: Ետքը ելաւ Քսերքսէսի ազուն Երկայնաձեռն Արտաշէսին քով.

Կնայ, ու հոն թագաւորէն շատ պա-
 տիւ գտաւ . և երբոր թագաւորը Յու-
 նայ դէմ պատերազմ բացաւ, թեմիստոկ-
 ղէսը զօրասլետ դրաւ . թեմիստոկղէս
 չուղելով իր հայրենեացը ինասել, թոյն
 սուաւ մեռաւ : Ալ աղէկ սեպեց իր ազ-
 գին ապերախտու թէր համար ինքը պա-
 տիժ քաշէ՝ մեռնի, քան թէ անոնց ա-
 պերախտու թէր փոխարէն հատուցանէ :
 Մենք եղբօրնուս ըրած ապերախտու էր
 չենք համբերեր, թող թէ աղգերնուս :

ԼԻ

Հ . Արիստիդէսին վերջը ի՞նչպէս ե-
 դաւ :

Պ . Նաւատորմիղին գլուխ եղած ասե-
 նը Կիմոնին հետ ամէնուն սիրելի ըլլա-
 լով խելքով վարւելնուն համար, Սպար-
 տացիք զինքը բոլոր զօրքին գլուխ ընարե-
 ցին : Ետքը երբոր Աթէնք դարձաւ,
 զինքը գանձապետ ըրին՝ որ քիչ ծախ-
 քով ամէն բան կը հոգար ու ինքն աղ-
 քատուք կապրէր : Քաղաքացիք զկալ-
 լիաս անոր հարուստ բարեկամը յանցաւ-
 ւորի պէս դատատանի կանչեցին՝ զԱ-
 րիստիդէսը չի հոգալուն համար . բայց
 կալլիաս Արիստիդէսի վկայելովը խնա-
 ցուց թէ շատ անգամ ըստակ տուեր էր
 անոր, բայց ան չէր առած : Մեռնելէն
 ետքը թաղմանը ծախքը հասարակապե-
 տու թին ըրաւ, և հոգաց անոր ընտա-

Ք. Ա նկքը . Ո՛ւր էր թէ մէկը Քմի սիրուն
համար Արիստիդէսի առաքինութիւններն
ու աղքատսիրութիւն ունենար :

Հ . Արիստիդէսին տեղն ո՛վ անցաւ :

471

Պ . Կիմոն Միլտիադէսի որդին . որ
թէսկէս անկարգ մեծցած էր , բայց Ա
րիստիդէսի խրատներովը յաջորդն ալ
ըլլալու արժանի եղաւ : Ասիկա շատ
յալթուհիներ ըրաւ Պարսից դէմ : Ասի
այի կողմն եղած Յունաց քաղաքներն ալ
Պարսից ձեռքէն ազատեց : Եւ այն պա
տերազմներէն վատորկած ըստրկոյն Ա
թէնքը զարգարեց շատ երևելի ճարտա
րապետութիւններով որ ան միջոցին շին
ւեցան :

Հ . Աթենացիք ինչվան էրբ հաշտ
մնացին Սպարտացոց հետ :

470

Պ . Քսերքսէսի դէմ ըրած պատե
րազմներէն ետքը Աթենացիք ըսկսան ար
համարհել զՍպարտացիները , և անգամ
մը երկրաշարժէ մը գրեթէ բոլոր Սպար
տացոց տները փլան : Եղոսացիներն ալ
ապստամբելով , երբոր Սպարտացիք նե
ղը մտած օգնուի խնդրեցին Աթէնքէն ,
Պերիկլէս ոտք կոխեց սր չօգնեն . բայց
Կիմոն ըրած դաշնագրուինին և Յունաց
օգուար յիշելով համոզեց որ օգնեն : Եւ
ինքը զօրապետ ընտրուելով յաջողութի
ւնաց ու դարձաւ : Ուրիշ անգամ ալ
երբոր նորէն ապստամբեցան Եղոսա
ցիք , նորէն դնաց օգնելու բայց . Սպար
տացոց միտքը փոխուելով չընդունեցան :

Աթենացիք կարծելով թէ Վիմոն եղաւ Բ. Ա.
 պատճառ աս անարգութիւն, զինքը քշե-
 ցին, և մէկքանի ուրիշ պատճառ ալ
 բերելով ըսկսան կռուիլ Սպարտացոց
 հետ: Վիմոն օգնել ուզեց Աթենացոց,
 բայց անոնք արգիլէցին՝ Սպարտացոց
 կողմը կարծելով զինքն ալ ու հարիւր
 հոգի իրեն կուսակիցներն ալ: Ան հա-
 ռիւրը անուսնին շինելու համար Վիմոնին
 յորդորելովը Սպարտացոց դէմ էլան ու
 սաս ժիկ զարնըւելով մեռան: Ասով իմա-
 ցան թէ Վիմոն Սպարտացոց դէմ է. և
 իրեն կարօտ ըլլալով, հինգ տարիէն ետ
 կանչէցին՝ Պերիկղէսին յորդորելովը.
 Թէպէտ ինքը Վիմոնին նախանձորդ էր:

ԼԵ

Հ. Վիմոն աքսորանքէն դառնալէն
 ետքը ինչ երևելի գործք ըրաւ:

Պ. Նախ ուղեւորով հաշտեցընել Աթե- 469
 նացիքը Սպարտացոց հետ, հինգ տար-
 ւան զինադադարում ըրաւ, և միաբա-
 նեցուց զանոնք գրօի թշնամեաց դէմ.
 և իր առաջնորդելովը գնացին երկու-
 հարիւր նաւով Վիպրոս կղզին ազատե-
 ցին թշնամեաց ձեռքէն. բայց պատերազ-
 մին վերջերը Վիմոն սաստիկ վիրաւորւած՝
 տեսաւ որ յալթուին անկատար պիտի
 մնայ, հրաման տուաւ որ իր մահը թըշ-
 նամեաց չմտացընեն ինչվան պատերազմին
 ետքը, և այնպէս մեռաւ: Իր մահուա-

նէն ետքը երսուն օր բանակը իր հրամանին կը հնազանդէր, ինչպէս որ թշնամիները բոլորովին յաղթըւեցան : Միայն մեռած զօրապետին անունը հնազանդ զօրքին յաղթուն ընել տուաւ : Հապա որչափ աւելի մեր անմահ զօրապետին Յսի անունովը մենք կը յաղթենք մեր թշնամիին սատանային, թէ որ հնազանդ ըլլանք :

Հ. Կիմոնէն ետև Աթենացոց մէջ ելեւ յաւանդուեցաւ :

Պ. Պերիկղէս. որ թէպէտ մեծ ցեղէն էր, բայց Անաքսագորասին աշկերան ըլլալով խորունկ մտածող և վարպետ խօսող էր : Կուզէր իշխան ըլլալ, բայց ուրիշի նախանձը չիշարժելու համար առջեւ բերանը բանի մէջ չէր մտնէր : Երբ որ Կիմոն Աթենքէն հեռացաւ, Պերիկղէս ամէնուն սիրտն իրեն քաշէլ ըսկտաւ. Արիստագոսին իշխանութիւնը տկարացուց, ամէն վճիռները ժողովորդեան հաւանութիւնը թողուց, և ինքը շատ չէր երևնար ժողովորդեան : Խաղերը թատրոնները շատցուց, քաղաքական ժողովներու գնացողներուն ըստակ բաժնելու հրաման հանեց, մէկ խօսքով, Աթենացոց աչքը մտնելու համար անոնց բարիքը աւրեց : Աթենքը զարդարեց Փիդիաս արձանագործին ձեռքովը, բայց դաշնակից քաղաքներն ըսկտան գանգատիլ՝ Պատերազմին ըստակը Աթենքին վերայ կը ծախէք ըսելով : Անատեն ուզեց Պերիկղէս

զէս որ իր քովէն վճարէ , և իր անունը
 դնէ ամէն բանի վերայ : Աթենացիք
 յանձն չառին որ փառքը բոլոր իրեն եր-
 թայ , ուստի իրեն ձեռքը թողուցին հա-
 սարակաց գանձը : Բայց կամաց կամաց
 իրեն անուշ վարւելը պակսեցընելով իր
 թշնամիներն ալ շատցան , թէպէտ ճար-
 տասանութիւն և քանի մը յաղթունե-
 րով մեծ անուն հաներ էր :

Հ . Պերիկլէսի թշնամիներն իրեն կըր-
 ցան զնաս հասցընել :

Պ . Շատ ամբաստանուիներէն ետքը
 Պերիկլէսին ըրած ծախքերուն հաշիւն
 ըսկսան ուզել . և ինքը երբոր տարակու-
 սած կըսպտորաստըւէր պատասխան տա-
 լու , Պեղոպոնեսին մեծ պատերազմը
 բացեցաւ , ինչպէս որ կըկարծեն՝ Աս-
 պասիա Միլետացի իմաստուն կնոջ մը
 պատճառաւ որ Սպարտացոց թշնամի
 էր ու Պերիկլէս իրեն կին առեր էր , և
 անոր կամքը կուզէր կատարել . մէյմալ
 որ Աթենացիք մեծամեծ գործքերով
 չափերնին մոռնալով ատելի եղեր էին
 ուրիշներուն , և ան ատեններն ալ ըսկը-
 սեր էին Կորնթացոց դէմ պատերազմ
 բանալ , ու Պոտիդէա քաղաքը պաշարեր
 էին . ուստի Կորնթացիք ուրիշներուն
 հետ միաբանած՝ գանգատեցան Սպար-
 տացոց ու յորդորեցին որ միաբան դէմ
 ելլեն : Սպարտացիք հաւանեցան , բայց
 ատեն վաստըկելու համար ըսկսան խօսք
 տանել բերել Աթենացոց , և կուզէին

431

Ք. Ա որ Պատիգէայի պաշարումը վերցըւի .
 Պերիկղէս ուզելով որ խառովուն ըլլայ ու
 ինքը համար տալէն ազատի , գէմ կե-
 ցաւ . Աթենացիք ալ անոր յորդորելովը
 սպառերազմն առաջ տարին , և Պերիկղէս
 ազգին մնաստիւն իր փառաքինն հասաւ :

ԼԶ

Հ . Ի՞նչ կերպով ըսկսաւ Պեղոպոնեսի
 սպառերազմը :

Պ . Սպարտացիք և ուրիշ Աթենացոց
 գէմեղող ժողովուրդները վաթսուն հա-
 զարի չափ՝ ըսկսան Աթենացոց վերայ
 գալ . իսկ Աթենացիք միայն երսուն հա-
 զարի չափ ըլլալնուն համար՝ Պերիկղէ-
 սի խորհրդովը միայն Աթենքը պաշա-
 պանել նայեցան ու ծովու վերայ սպառե-
 րազմիւ . ուստի բոլոր Ատտիկէն կորսն-
 ցուցին . բայց ծովու վերայ անոր վրէժը
 հանեցին : Պատերազմին ատեններն ա-
 րևը խաւարեցաւ , և սաստիկ վախ ին-
 կաւ Աթենացոց մէջ . բայց Պերիկղէս
 բնական պատճառն իմացընելով քաջա-
 լերեց զանոնք : Պատերազմէն ետքն ալ
 գեղեցիկ դամբանական մը խօսեցաւ մե-
 ռաճհերուն վերայ , յորդորելով ողջերն
 որ ջանան անոնց փառքին հասնելու :

Հ . Ա՞րչափ ատեն քչեց Պեղոպոնեսի
 սպառերազմը :

430

Պ . Քսանդեօթը տարի . բայց երկրորդ
 տարին սոսկալի ժանտամահ ինկաւ Ա-

Թե նացոց մէջ, ու մեռնող մեռնողի կրլային : Ասոր պատճառը կարծելով թէ Պերիկլէան է՝ որ քաղաքը շատ մտորդիկներով լեցուցեր էր, վերան սուգանք դրին ու իշխանուէն ձգեցին : Բայց իրեն կարօտ ըլլալով, ետքը նորէն թողուի խընդրեցին իրմէն ու ալ աւելի մեծցուցին անոր իշխանութիւնը : Իսկ ինքը քիչ ատենէն մեռաւ Ժանտամահէն, և պատերազմը երթալով կրօսաստիանար : Աս միջոցիս երևելի եղաւ Պլատոնայի պատերազմը :

429

Հ. Պլատոնայի պատերազմն ի՞նչպէս եղաւ :

Պ. Նախ Լակեդեմոնացիք պաշարեցին Պլատոնա քաղաքն ու ըսկսան հողաբլուր շինել չորս դին, Պլատոնացիք ալ անոնց դէմ ըսկսան իրենց պարիսպը բարձրացրնել տախտարկէ կրկին պատ քաշելով ու մէջտեղը աւերակ լեցրնելով, դրսի դիէն ալ տախտարկին վերայ կաշի փռելով որ չիկարենան բռնկցրնել, անանկ որ մեքենաներով ալ չէր կործաներ, մէկ կողմանէ ալ գեանի տակէն գէպի հողաբլուրը ճամբայ ըրած՝ անոնց լեցուցած հողը տակէն կրկրրէին, բայց անոնց բազմուէր չիյաղթելով յուսահատեցան թողուցին : Երբոր անոնք ըսկսան բաբանով պարիսպը ծեծել, Պլատոնացիք գէպի վար չուան կերկրնցրնէին ու զարկած աստենը բաբանին գլուխը վեր կըքաշէին, դարձեալ երկու

428

ծայրէն շղթայով կապած հաստ փայտ
 մը ուրիշ երկու փայտով պատէն դէպի
 դուրս կերկնցրնէին ու բաբանը զարնե-
 լու ատեն դիմացը կիջեցրնէին, որ անոր
 զարնելով պարիսպը կազատէր: Ախ-
 նալով ալ որ չըլլայ թէ օր մը փլչի, մէ-
 ջի կողմէն ըսկսան նոր պարիսպ մը հիւ-
 սել: Երբոր իմացան Ղակեդեմոնացիք ու
 տեսան որ քաղաքն առնելը կը դժուա-
 րանայ, ուզեցին կրակ տալ, չորս դին
 ծառի ճիւղեր լեցուցին ու բռնկցու-
 ցին. անատենը մէջինները յուսահա-
 տեցան, բայց զան ալ յանկարծական սաս-
 տիկ անձրև մը մարեց: Ղակեդեմոնա-
 ցիք քաղաքն առնելէն յոյսերնին կտրած,
 նոր ամուր պատ մը քաշեցին քաղաքին
 չորսդին որ սովէն անձնատուր ըլլան.
 ու պահապան դնելով զԳէովտացիները՝
 իրենք գնացին: Քաղաքացիք փախչե-
 լով չորսհարիւր հոգի մնացեր էին, ա-
 նոնք ալ յուսահատած, մէջերնէն կտրիճ-
 ները հարիւրքսան հոգի ելան որ փախ-
 չին: Գիշեր մը անձրևի քամի ատեն
 սանդուխներով պատէն իջան բոպիկ ու-
 քով որ ձայն չէլէ, փոսերէն անցան, ան
 կողմի պահասանները մեռուցին. և թէ-
 պէտ ելլելու ատեն պատէն կղմինար մը
 իյնելով իմացեցան, բայց փախան ա-
 զատեցան: Իսկ մնացածները բոլորովին
 յուսահատած անձնատուր եղան, և
 յոյս ունէին որ իրենք զիրենք արգարա-
 ցրնեն ու ազափին, բայց անօդուտ. վն

զի Սպարտացիք Թերացոց խօսքին նայել Ք.Ա
 լով, որ Պլատոնացոց Թշնամի էին, զա-
 մէնքն ալ ըստականնեցին :

ԼԵ

Հ. Պերիկղէսէն ետև ո՞վ առաջնորդեց
 Աթենացոց :

Պ. Կղէոն ցածազգի ճարտասանը . որ
 իր կատաղութն աւելի գրգռելով զԱթե-
 նացիքը, սատճառ եղաւ պատերազմը
 շարունակելու ինչվան տասը տարի միշտ
 մէկզմէկ տկարացրնելով, ինչվան որ Կը-
 դէոն ալ ինկաւ : Ետքը Նիկիասայ յոր- 421
 գորելովն որոշեցաւ որ յիսուն տարի
 զինագադարում ըլլայ . բայց խիստ քիչ
 քշեց . վն զի Աղկիբիադ զօրանալով, որ
 Սոկրատայ աչկերան էր ու խիստ փա-
 ռասէր մարդ մըն էր, Աթենացիները
 պատերազմի գրգռեց :

Հ. Ի՞նչպէս կրրցաւ Աղկիբիադ Նի-
 կիասայ ըրած յիսուն տարւան զինագա-
 դարումը ստորապը հանել :

Պ. Նախ Արգոսի բնակիչները յորդո-
 րեց որ Սպարտացոց դէմ ելեն : Երբոր
 Սպարտացիք խմացան, դեսպան խրկե-
 ցին Աթենացոց . Աղկիբիադն ալ վախ-
 նալով որ ուզածը չիյաջողի, ինքը Ա-
 թենացոց Թշնամի ձեւանալով, դեսպան
 ներուն գաղտուկ աստպրրեց որ իրենց
 իշխանու թին Աթենացոց չիյայանեն . և
 դիտնան որ անոնց սատճառները սղայ-

Բ. Ասկան բաներ են : Իսկ երբոր դեպանները երևցան ժողովքին մէջ անծանօթ մարդիկ ձևանալով, ինքը արհամարհեց զանոնք ըսելով թէ խարդախութիւն է Սպարտացոց ըրածը, սէտք չէ մտիկ ընել : Ասանկով արհամարհւեցան դեպանները . և թէպէտ Նիկիաս չգիտնալով, ջանոց Սպարտացոց մտքն իմանալ ու սատերազմը խափանել, բայց ճար չեղաւ : Իսկ Աղկիբիադ աս կռիւը դրդուելը բաւական չնայելով մտածեց որ Սիկիլիան ալ առնէ :

Հ. Աղկիբիադ ինչ պատճառաւ Սիկիլիան առնել ուզեց :

415

Պ. Սիկիլիայի մէջ Յունաց հատուածներ կրբնակէին, որոնցմէ էին և Լէոնոսացիք ու Եգեստացիք, որոնք Սիրակուսացիներէն նեղւելով, Աթէնքէն օգնութի խնդրեցին : Նիկիաս թէպէտ շատ գէմկեցաւ՝ շատ թշնամի ունենալնուն համար, բայց ժողովուրդն արդէն ուրիշ ատեն Սիկիլիան առնելու ետեւ եղեր էին և Պերիկլէս արգիլէր էր, և հիմա Աղկիբիադէն ալ յորդորւելով աւելի համոզւեցան ու պատերազմիլ որոշեցին, և զօրապետ ընտրեցին Աղկիբիադն ու Նիկիասը :

Հ. Աղկիբիադ որչափ ատեն զօրապետութի ըրաւ :

Պ. Խիստ քիչ . վասն զի երբոր զօրքը ճամբայ ելլելու պատրաստուէր էին, նոյն գիշերը քաղքին մէջ գտնուած հեր

մէս կուռքին արձաններուն քթերը ձեռ-
 վըները սավըները կտորտած գտան : Աս
 բանըս Աղկիբիադին վերայ ձգեցին . Աղ-
 կիբիադն ալ անվախ բողոքեց որ դատաս-
 տան ըլլըւի : Եւ որովհետև զօրքը իրեն
 պաշտպան էր , թշնամիները վախնալով ,
 և ճամբորդուիւր չուշանայ ըսելով՝ դա-
 տաստանն ուրիշ ատենի թողուցին : Բայց
 Սիկիլիա հասածնուն պէս Աղկիբիադը
 ետ կանչուեցաւ որ սրատասխան տայ .
 ինքն ալ գիտնալով որ իր վերայ անոնք
 գէշ կրիտորհին , գնաց Սպարտացոց քովն
 ու երդում ալ ըրաւ որ անհոշտ թշնամի
 ըլլայ իր հայրենեացը : Աթենացիք ալ
 զինքը մահապարտ վճռեցին՝ դատաստա-
 նի չիգալուն համար . և քուրմերը զինքն
 անիծեցին :

ԼԸ

Հ . Նիկիաս Սիկիլիայի սրատերտղմը
 ինչպէս առաջ տարաւ :

Պ . Գնաց Սիրակուսան պաշարեց . և
 գուցէ կըրնար բան տեսնել . բայց Աղկի-
 բիադին յորդորանքովը Սպարտացիք ու
 Աորնթացիք Սիրակուսացոց օգնուի հա-
 տան , և շատ ջարդեր տալով Աթենացոց
 ետ քաշելը ըստիպեցին : Եւ թէպէտ Նի-
 կիասայ խնդրելովն Աթենացիք հորէն՝ Գե-
 մուսթենէս զօրտպեան օգնուի խրկեցին
 վաթուռն նաւով , բայց անոնք յանդըգ-
 նուի Նիկիասայ խորհրդին մտիկ չընելով

ցամաք ելան՝ զարնըւեցան ու յաղթըւե-
 ցան: Ետքը յուսահատած երբոր որոշեցին
 գաղտուկ ետ դառնալ, լուսնի խաւա-
 րում մը պատահեցաւ. ուսկից վախցան,
 պատգամ հարցուցին և հրաման առին
 որ ինը օր նաւ չիմըանեն: Նիկիաս աւե-
 լորդապաշտուք հրաման տուաւ որ ըս-
 պասեն: Թշնամիք ալ մտքերնին իմանա-
 լով ու ասեն գանելով, ծովէն ու ցա-
 մաքէն վերանին վազեցին ու սաստիկ պա-
 տերազմով մեծ ջարդ տուին: Եւ որպէս
 զի մնացածները չիկարենան փախչիլ,
 նուահանգստին բերանը, որ հինգհա-
 րիւր քայլ լայն էր, նաւերով գոցեցին:
 Աթենացիք յուսահատած՝ բոլոր ուժով
 ուղեցին զարնըւիլ ու ճամբայ բանալ,
 բայց որովհետև խիստ քիչներ էին, նո-
 րէն չարաչար յաղթըւեցան: Աս կատա-
 ղի պատերազմը բոլոր քաղաքացիք ալ կը-
 տեսնէին պարիսպներուն վերայ ելած,
 ու կանչելով շարժմունքներով սիրա կու-
 տային: Երբոր տեսան Աթենացիք թէ
 անցնելու ճար չեղաւ, թէպէտ շատ սիրտ
 կուտային զօրագլուխները նորէն զար-
 նըւելու, բայց վախը տիրեր էր ամէնուն
 սիրաը. ուստի որոշեցին որ գիշեր ասեն
 ցամաք ելեն ու փախչին: Երմոկրատէս
 Սիրակուսացոյ զօրագլուխն աս բանիս
 կատկած երթալով, և գիտնալով որ նոյն
 գիշերը չեն կրնար դէմ գնել հանդէսի
 սպառճառաւ, մէկքանի ձիաւոր Աթե-
 նացոյ կողմը անցուց որ բսեն թէ Աս

գիշեր չորս դին ճամբաներուն վերայ
 դադառուկ զօրք կեցած են : Նիկիաս հաւ-
 տաց ու երկրորդ օրւան [Թողուց եր-
 թալը . և երկրորդ օրը բոլոր ճամբանե-
 րը՝ կամուրջները բռներ էին Սիրակու-
 սացիք . ուստի չարաչար պատերազմելով
 շատ մարդ ջարդուէլով կամօք ճամբէն
 մոլորեցան որ ազատին : Բայց ալ գէշ
 եղաւ . վն զի շատը մոլորած մէկզմէկ կոր-
 սընցուցին . որոնց վերայ նորէն հասնե-
 լով Սիրակուսացիք շատը գերի բռնե-
 ցին , Դեմոսթենէս զօրապետն ալ մէկ-
 տեղ : Ետեւ հասան Նիկիասայ վերան ալ
 որ շատ գէմ գնեւէն ետքը երբ իմացաւ
 թէ մինակ մնացեր է , յուսահատեցաւ ,
 ու բռնի անձնատուր եղաւ : Այսպէ-
 սով քառսունհար հոգի՝ ցամաքէն
 փախչողներն ալ ջնջուեցան : Ետքը Սի-
 րակուսացիք կատաղած՝ անգթութեւն Նի-
 կիասին և Դեմոսթենէսին աղէկ ծեծ մը
 քաշեւէն ետեւ ըսպաննեցին . թէպէտ
 Գիլիպպոս Լակեդեմոնացոց զօրապետը
 շատ ջանաց արգիլելու , բայց ճար չե-
 զաւ :

ԼԹ

Հ . Աթենացիք Սիրակուսացոց յաղ-
 թուելը երբոր իմացան ինչ ըրին :

Պ . Յաղթուելնին իրենց խիստ խեղճէ
 դուրս երևնալով , առջի լուր բերողն
 իբրև սուտզբուց ըսպաննեցին . բայց

Ք. Ա երբոր իմացումն թէ լսածներնէն ալ աւելի է եղած մնասը, վախը և յուսահատուիլը վերանին տիրեց. մանաւանդ երբոր ըսկսան իրենց գաշնակիցները բոլոր թշնամի դառնալ, աւելի Ազկիբիադին ձեռքովը: Ուստի ըսկսան ամէն ջանքն ընել ըստակ ժողովել՝ վերայ գալու համար: Աս միջոցիս Ազկիբիադն ալ Սպարտացոց թագաւորին կնոջը դէմանիրաւու թի մը ընելուն հստնոր գլխապարտ սեպեւելով Պարսից քով փախաւ. և ուզելով դառնալ իր հայրենիքը, իմացուց որ, եթէ ռամկապետուիլը վերցընեն ու ազնուապետուի ընեն, կուգայ: Աթենացիք հաւնեցան ըսածին, կառավարութիւնը փոխեցին ու միայն չորսհարիւր հոգւոյ ձեռքը յանձնեցին. բայց անոնք Ազկիբիադը չուղեցին կանչել՝ վախցան որ կուգայ ամէնուն կրտիրէ. և իրենք ըսկսան անկարգութիւններ ընել. շատ քաղաքացիներ ըսպաննեցին: Եւ երբոր Սամոն եղած զօրքին մարդ խրկեցին որ աս նոր կառավարուն ընդունին, անոնք արհամարհեցին, ու կանչեցին Ազկիբիադը զօրապետ դրին, ըստիպելով զինքն որ Աթէնքին բռնաւորները վերցընէ:

Հ. Ազկիբիադ յանձն առաւ նորէն Աթենացոց առաջնորդ ըլլալու:

409

Պ. Սիրով. բայց առաջ Սպարտացոց դէմ յաղթութիւններ բրաւ՝ ու ծովային տէրութիւնը նորէն ձեռք առած երբոր

Աթէնք եկաւ , Աթենացիք փառքով Գ. Ա
 զինքն ընդունեցան , ու ան չորսհարիւր
 բանաւորները վաւրեացին : Եւքը զղջա-
 լով առջի ըրածնուն վերայ Ազկիբիադին
 գէմ , հրամայեցին քուրմերուն որ անոր
 վերայ ըրած նզովքնին վերցընեն : Ազկի-
 բիադն ալ սրալէս զի իր գէշ անունը մոռ-
 ցընէ , Գեմեարէ աստուածուհւոյն տօ-
 նը հանդէսով կատարեց . բայց Աթենա-
 ցոց թեթեամտութիւնը չիկըրցաւ յաղթել :

Հ . Աթենացիք երկրորդ անգամ ինչ
 անիրաւուն ըրին Ազկիբիադին :

Պ . Երբոր Աթենացիք Սպարտացոց 405
 ուղած հաշտութիւնը գէմ կեցան ու պատե-
 րազմ ըսկասն , լիւսանդր Սպարտացոց
 զօրապետն օգնուն աւեր էր Պարսիկ-
 ներէն : Անաստենները Ազկիբիադին հարկ
 եղաւ որ նաւաստորմիղէն քիչմը հեռա-
 նայ ըստակ ժողվելու համար . և Անտիո-
 քորը թողուց իր տեղը , ասպարբելով որ
 չիզարնրւի : Բայց անիկա ինքիրեն քա-
 ջութի մը ընել ուղեւով զարնրւեցաւ ,
 յաղթընեցաւ , ինք ալ մեռաւ : Ազկի-
 բիադ պարապ տեղը ուղեց օգնուն հաս-
 նիլ . վասն զի լիւսանդր վարպետ ըլլա-
 լով գիտցաւ ձեռք ձգած փառքը չիկոր-
 սընցընէ : Անոր համար Աթենացիք կաս-
 կածելով Ազկիբիադին վերայ , զինքը ձգե-
 ցին ու տեղը տասը զօրապետ գրին՝ որոնց
 մէկն էր Աոնոն :

Ք. Ա Ջ. Կոնոն իր ընկերներովը պատե-
րազմը ի՞նչպէս առաջ տարաւ :

405

Պ. Սպարտացիք Լիւսանդրին տեղ
Կալիկրատիգատը խրկեցին Աթենացոց
վերայ . Աթենացիք ալ հարիւրտասը
ցուկանաւ օգնուի խրկեցին Կոնոնին որ
նեղն ինկեր էր : Սպարտացոց զօրապետը
յաղթըւեցաւ ու ըստանուեցաւ հոն Ար-
դինուսայի պատերազմին մէջ , դաշնա-
կիցներուն ալ շատ մնաս եղաւ . իսկ Ա-
թենացոց քսանըհինգ նաւը կորաւ . բայց
մեռելները չիթաղելու համար ամբաս-
տանուեցան զօրագլուխները , և վեց հո-
գի մեռնելու դատապարտեցին՝ ամենևին
թողչիտալով որ իրենք զիրենք արդա-
րացընեն : Ասանկ անգթութիւններով
յայտնի կխնացընէին որ վերջերինն հա-
սեր է :

Հ. Արդինուսայի պատերազմէն ետև
ուրիշ ի՞նչ պատերազմ ըրին Աթենացիք :

Պ. Սպարտացիք նորէն Լիւսանդրը
զօրապետ դրին որ Լամպուսակ քաղաքն
առաւ . ետքը նաւատորմիլով գնաց Ա-
թենացոց դէմ , և վախ ցուցընելով զա-
նոնք կուզէր խաբել . ու Աթենացիք երբ
պատերազմիլ կուզէին՝ չէր ընդունէր :
Աղկիբիադ որ թրակիա քաշուեր էր՝ գիտ-
նալով Լիւսանդրի վարպետուիլը , եկաւ
Աթենացոց կերպ սորվեցուց , բայց մտիկ

չըրին՝ փառքը անոր կըլլայ ըսելով : Ուստի քանի մը անգամ Աթենացիք զԼակեդեմոնացիները պատերազմի հրաւիրելէն ետքը տեսնելով որ անոնք կը վախեն չեն իգար, իրենք ալ անհոգ եղած՝ ցամաքն ելած կը հանգչէին : Ան միջոցին Լիւսանդր նաւատորմիւղով քալեց վըրանին ու առանց պատերազմի բոլոր նաւերուն տիրեց՝ շարժելու ստեն չիտալով . և ետքը ելաւ ցամաք Եգոս գետին քով զամէնքը ցրուեց . իրեքհազար ալ գերի բռնեց, ու ըսպաննել տուաւ, յիշելով Աթենացոց անգթութիւնն որ ամէն գերիներուն ձախ ձեռքին բռթ մատը կը կըտրէին որ աղէղ չիկարենան քաշել : Մէկ ժամու մէջ որոշեցաւ այն սոսկալի պատերազմին վիճակը՝ որ քսանը եօթը տարի քշեց :

Հ. Աթենացիք բոլոր նաւատորմիւղ երկրորդ անգամ կորսընցընելէն ետեւ ինչ վիճակ ունեցան :

Պ. Լիւսանդր հրաման հանեց որ Աթէնքէն դուրս Աթենացի չիգանըւի, մահ ըսպառնալով . որպէս զի պաշարէ քաղաքն ու սովի բռնէ : Աթենացոց սուգը անպատմելի էր : Պաշարուեցաւ քաղաքը, սովը սաստկացաւ, և ճարերնին հատած ըսկսան խնդրել որ դաշնադրուի ընեն : Կորնթացիք ու Թեբացիք կուզէին որ Աթէնքը բոլորովին կործանուի . բայց Սպարտացիք Աթենացոց առջի ազէկուիները յիշելով խնայեցին ա-

նոնց : Ուստի դաշնագրեցան որ նախ՝
Պիրէոնի բերդերն ու Աթէնքին հետ
միացնող պատը փլցրնեն . ինչպէս որ
էտքը Լիւսանդր եկաւ շատ արհամար-
հելով զԱթէնացիները՝ փլուց : Երկրորդ՝
տաուերիու ցռկանաւէն աւելի չունե-
նան : Երրորդ՝ որչափ աեղ որ աիրեր էին՝
բոլորը թողուն : Չորրորդ՝ աքսորւած-
ները ետ դարձրնեն : Հինգերորդ՝ պա-
տերազմի հրամանը Սպարտացիներէն
առնեն : Ասանկ ահա Պեղոպոնեսեան պա-
տերազմը անխելք փառասիրութեամբ
ըսկաւ , խելքէ դուրս առելուք սասա-
կացաւ , և անթիւ մնասներով ըմբնցաւ :

ԽԱ

Հ . Պեղոպոնեսեան պատերազմէն
ետև Աթէնացիք և Սպարտացիք ի՞նչ
տեսակ կառավարութի ունեցան :

Պ . Փառասէր Լիւսանդրը շատ աե-
ղերու աիրելէն ետև , Աթէնացոց վերայ
ալ երսուն բռնաւոր իշխան դրաւ . ան եր-
սուն բռնաւորները երբոր իրենցմէ մե-
կուն վերայ կասկած կերթային թէ իրենց
գէմ կըրնաց բան մը ընել , մէկ պատճա-
ռաւ մը կըսպաննէին : Ինչպէս հրաման
հանեցին թէ մէկ քաղաք մըն ալ՝ փախ-
չող Աթէնացի չընդունի : Մեգարա ու
Թերէ մերժեցին աս հրամանը : Իսկ
Սպարտայի մէջ Լիւսանդր հարստութի
խոթելով բարբերնին աւրեց :

Հ. Աղկիբիադ ո՛ր էր Պեղոսյոնն Ք. Ա սեան պատերազմէն ետքը :

Պ. Թէպէս աքսորուած էր, բայց իր հայրենեաց ազատուէր համար Պարսից Արտաշէս ուշեղ Թագաւորին քով գնաց որ կիւրոսի անոր որդւոյն ապստամբու թէ խորհուրդն խնայրնէ. և անշուշտ անատեն մեծ օգնուի կրգտնէր. բայց Աթէնքին բռնաւորները վախնալով անոր հնարքներէն՝ համողեցին Պարսից Փառնաւազ նախարարը որ ըսպաննէ զԱղկիբիադը : Ան ալ մարդ խրկեց որ կեցած տանը կրակ տուին. Աղկիբիադ խնայաւ, Թուրը ձեռքը դուրս ցաթկեց. անատենը նետով զարկին ըսպաննեցին :

Հ. Երսուէն բռնաւորները ո՞րչափ ատեն իշխեցին Աթէնքին :

Պ. Քիչ. վն զի երբոր Թրասիբուլոս Աթէնքէն փախչող կարիճներուն գլուխ կենալով եկաւ վաւրնաց ան երսուէն բռնաւորները երբոր անոնք անհոգ կեցած էին : Եւ աւելի զօրացաւ Թրասիբուլոս ներելով բոլոր բռնաւորներուն կողմը եղող Աթենացոց յանցանքը :

Հ. Թրասիբուլոսի ատենները Աթէնացոց մէջ երևելի ո՞վ եղաւ :

Պ. Սոկրատ. որ ճշմարիտ վիլլատիաց էր և բարի օրինակ ամենուն. իր աշակերաններուն կըսորվեցրնէր Այ էուելը, անոր համար աւելորդասպաշաներն ու կեղծաւորները Թշնամի եղան իրեն ու

Ք. Ա գատապարտեցին զինքը : Թէպէտ ինքը
կրնար տուգանքով մը ազատիլ, բայց
402 չուզէ՛ց՝ որ չըլլայ թէ յանցաւոր կարծը
ւի : Անոր համար խմցուցին իրեն մուշ-
խինդ, որ Աթենացոց սովորական սա-
տիճն էր : Սոկրատէն ետև ուրիշ շատ
փիլիսոփաներ ալ ելան Յունաց մէջ,
բայց անոր պէս ճշմարտասէր ուրիշ մէյմ
ալ չի գտնուէցաւ :

Հ. Սոկրատայ մահուան ատենները
Յոյնք ինչ երևելի գործք ըրին :

Պ. Տասւիրէք հազար Սպարտացի՝
Կրտսեր Կիւրտսին օգնուի գնացին, և
Կիւրոս մեռաւ . իրենք ալ մինակ մնա-
լով և կորճուք շատ կռիւներ ընելով ետ
գարձան . և որովհետև Տիսամիեռն խար-
գախուք զՎղէարքոս Յունաց զօրապետը
ուրիշ մէկքանի մեծերով ըսպաննեց և
կուզէր զամէնքը ջարդել, անոր համար
397 Սպարտացիք նոր զօրքով Ագեսիլայոս
թագաւորը խրկեցին որ երթայ վրէժ
հանէ : Ագեսիլայոս երսուն զօրագլուխ
իրեն խորհրդական առաւ գնաց Պարսից
դէմ, շատ յաղթուիներ ըրաւ : Պարսիկ-
ները նեղը մտնելով, հնարք մտածեցին,
ու թեքացիքը՝ Արգիացիքը՝ Կորնթա-
ցիքը և Աթենացիքը գրգռեցին որ գլուխ
քաշեն :

ԽԲ

Հ. Երբոր Աթենացիք ու մէկալ հա- Ք. Ա
սարակապետու թիներն ապստամբեցան,
Սպարտացիք ի՞նչ ըրին :

Պ. Լիւսանդր դէմեւաւ անոնց, բայց 394
պատերազմի մը մէջ մեռաւ, ուստի
Սպարտացիք նեղը մոնելով Ագեսիլայ-
ոսն ետ կանչեցին. որ յողթութիւն կէս
թողուցած եկաւ : Շատ պատերազմներ
ընելէն ետև Սպարտացիք նորէն յող-
թեցին ու տիրեցին բոլոր Յունաց, բայց
բռնաւորուք. ինչպէս որ Թեբացոց վը-
րայ ալ ցցուցին իրենց բռնուիք :

Հ. Ի՞նչ բռնութիւն ըրին Սպարտացիք
Թեբացոց վըրայ :

Պ. Փեբիգաս զորապետնին Ողիւնթա- 382
ցոց վըրայ երթալու ատեն Թեբէին մօ-
տիկ կանցնէր. քաղաքին մէջ խռովուէն
մը պատճառաւ մէկ կողմինները զինքը
ներս կանչեցին որ օգնէ իրենց. Փեբի-
գասն ալ խաբիւրբելով գնաց միջնաբեր-
դին տիրեց : Երբոր Թեբացիք գանգատ
ըրին Սպարտացոց, Ագեսիլայոս պա-
տասխան տուաւ թէ Ամէն բանի մէջ օգ-
տակարն ընելու է : Անոր համար թէպէտ
Փեբիգասին վըրայ տուգանք դրին, բայց
որոշեցին որ Թեբէի միջնաբերդին մէջ
միշտ իրեք պահապան դնեն :

Ք. Ա Ն. Թեբացիք կրրցան ազատիլ Սպարտացոց բռնուէն :

378

Պ. Չորս տարի համբերելէն ետև, չորսհարիւր թեբացի Աթենքէն քշած ըլլալով, անոնց մէջէն Պեղոպիդաս ու Միլոն խօսք գրին որ երթան ազատեն իրենց հայրենիքը : Տասնըմէկ կարիճ հետերնին առած՝ գեղացիի ղգեստով գաղտուկ մտան քաղաքը : Օր մը երբոր դատաւորները հարկիքի մը ժողվուէր էին, մէկերնուն նամակ մը եկաւ, որուն մէջը գրած էր Պեղոպիդասին պատրաստութիւնը : Դատաւորը չուզէց բանալ նամակը, ըսելով թէ Կարևոր գործքերը վաղը կըմտածենք : Ան միջոցին Պեղոպիդաս իր ընկերներովը ղէնքերնին ծածկած ներս մտան ըսպաննեցին զամէնքը, ու ձայն տուին ժողովրդեան որ ազատ ըլլան : Երկրորդ օրը գունդ մը Աթենացիք ալ մէկալ քշածներուն հետ վերայ հասան ու միջնաբերդը պաշարեցին : Սպարտացիք ալ նեղը մտած՝ անձնատուր եղան : Թէոր դատաւորներն արթուն ըլլային, աս խեղճուէ չէին հանդիպիր :

Ն. Սպարտացիք ինչ հատուցումն ըրին թեբացոց, իրենց դատաւորները ըսպաննելուն համար :

Պ. Մէկէն Ագեսիլայոսը թեբացոց վերայ խրկեցին : Թեբացիք վախնալով թողուցին քաղաքը փախան բլի մը վերայ, և Քարրիաս զօրապետը գէմ գնե-

ըւ հնարք մտածեց . հրամանն տուաւ որ ամէնը ծուռնկի վերայ գան , վահանովն զիրեկիք ծածկեն ու նիզակնին դէպի գուրս երկնցուցած անշարժ կենան : Ագեօսիդայոս անոնց յուսահատած պատրաստու թինին տեսնելով , ետ կեցաւ . բաւական սեպեց բոլոր գաւառն աւրըշարկել ու դառնալ : Քաբրիասայ ըրածը այնչափ մեծ համարուեցաւ՝ որ ան զօրքին կեցած դիրքովը արձան մը փորել տուին : Ետքը նորէն Պեղոպիդաս սրբազան ըսւած գնդով , որ իրէքհարիւր հոգի էին , մեծ կարճուէ ըրաւ Տեգիրայի պատերազմին մէջ , թշնամիին երկու զօրապետները մեռուց ու մեծ վախձգեց Սպարտացոց սիրտը :

Հ . Երբոր Թեբայիք ըսկասն զօրանալ մէկաւ Յոյնք ի՞նչ կրնէին :

Պ . Չանձրացած աս բաժանմունքներէն՝ Սպարտացոց հետ դաշինք գրին . ուստի Թեբայիք մեծ վտանգի մէջ կերևնային . վասնզի միաբանիլ չուզենալնուն համար , Սպարտացիք մէկաւ Յոյներն ալ մէկտեղ վերանին կուգային որ ջնջեն վերցրնեն զանոնք , բայց չկաջողեցաւ :

ԽԳ

Հ . Թեբայիք ի՞նչպէս կըրցան դէմ դնել Սպարտացոց ու մէկաւ Յունաց :

Պ . Եպամինոնդն ու Պեղոպիդասը զօրապետ եղան , ու տեսնելով թէ թշնա

միք իրեքսպատիկ իրենցմէ աւելի են , գու-
 շակուհներ հանել տալով իրենց զօրացը
 սիրտ տուին : Աէցհազար չորսհարիւր
 հոգւով Եպամինոնդ քսանըվէցհազարի
 չափ թշնամեաց առջևն ելաւ . գիտնա-
 լով որ Սպարտացոց դաշնակիցներն ալ
 կըմբռնային անոնց դէմ : Ուստի անանկ
 աղէկ կարգաւորեց իր զօրքը ու Լեւկ-
 տրային քով զարնըւեցաւ՝ որ միայն Սպար-
 տացիներէն հազարչորսհարիւր հոգի մե-
 ռան , Կղէոմբրոտ թագաւորնին ալ մէկ-
 տեղ : Այնչափ մարդ մէկէն ուրիշ ան-
 դամ չէին կորսնցուցած Սպարտայիք :

Հ . Լեւկարայի պատերազմին լուրն եր-
 բոր Սպարտա հասաւ՝ ինչ ըրին :

Պ . Սպարտայի մէջ խաղեր կըլլային
 անատենը : Եփորոսները յաղթըւեւնին
 ծածկել ուզելով չիթողուցին որ խա-
 ղերը դադրին : Իսկ երկրորդ օրը երբ ի-
 մացւեցաւ , մեռնողներուն աղգականքը
 կուրախանային և փախչողներունը կը-
 տրամէին : Այն զի օրէնքը կըհրամայէր
 որ փախչողներուն հետ ընկերու թի չըլ-
 լուի , և ամէն մարդ իշխանութի ունէր
 զանոնք ծեծելու արհամարհելու : Դա-
 տաւորներն աս անգամուն օրէնքը զանց
 առնել ուզելով որ սրտերնին չիկտարի ,
 Ագեսիլայոսի յանձնեցին որ հոգայ :
 Ագեսիլայոս ալ ըսաւ թէ Օրէնքները
 մէկ օր մը քնացընելու է որ ետքը աւելի
 ուժով գործածւին : Ասանկով ազատեց
 զամէնքը ան նախաախնքներէն :

Հ. Լեւկտրայի յաղթուէն հաքը ինչ
ըրին թեբացիք :

Պ. Դաշնակիցներուն մէկ մասը իրենց
հետ միաբանելով աւելի զօրացան, ու
վաթսուն հազարով մտան Լակոնիան
աւրեցին : Ագեսիլայոս Սպարտային մէ-
ջը կեցաւ որ քաղաքը պաշտպանէ : Բայց
Եպամինոնդ խնայեց ան հռչակաւոր
քաղաքին . և միայն զՄեսենացիքը ազա-
տեց Սպարտացոց բռնութէն, ու մեծ
յաղթութիւն դարձաւ իր հայրենիքը : Բայց
որովհետեւ Եպամինոնդ որոշեաժ ժամա-
նակէն չորս ամիս աւելի զօրապետութի-
ւնէր էր, անոր համար դատաստանի
կանչուեցաւ : Եպամինոնդ պատասխան
տուաւ թէ Սիրով կը մեռնիս՝ օրէնքին
համար, թէ որ ամէնքնիդ ընդունիք և
ուրիշներուն ալ իմացընէք թէ մինակ Ե-
պամինոնդ առանց հասարակապետուն
հաւանութեւ հասարակաց բարւոյն հա-
մար այսչափ քաջութիւններ ըրաւ : Դատա-
պարտելու տեղ զարմացան իր օրինապա-
հութեւնը վերայ : Բայց իրեն թշնամիները
զինքը անարգելու համար՝ իրեն պզտի
պաշտօն մը տուին : Իսկ Եպամինոնդ
ջանալով աղէկ ընել իր պաշտօնը՝ կըսէր .
Ոմանք մեծ պաշտօններով պատիւ կու-
նենան, ոմանք ալ իրենցմով պզտի պաշ-
տօնները պատուելի կընեն :

Ք. Ա Հ. Պեղոսիգաս Լեւհարայի յաղթու-
թէն ետքը ի՞նչ երևելի գործք ըրաւ :

369

Պ. Փերացոց Աղէքսանդր բռնաւորին
գէմ խրկըւելով, անոր զօրքը փախուց, և
երբոր նորէն գեսպանուի գնաց, ու ան
ալ իրաւանց գէմ երբոր բռնեց զինքը գե-
րի ըրաւ, Պեղոսիգաս գերուելը մէջ ան-
վախ զանի կրյանդիմանէր՝ ըրած ան-
գթու ինեբուն համար. վնդի շատ անգամ
մարդիկը կրակը կրձգէր ու կրզուարձա-
նար. կամ անասնոյ մորթ վերանին անցը
նելով շներուն առջին կրձգէր. և բոլոր
Թեսաղիան աւրեր էր : Ետքը Եպամի-
նոնգ եկաւ սաստիկ նեղը խոթեց զԱղէք-
սանդրն ու ազատեց Պեղոսիգասը : Պե-
ղոսիգաս ալ կատղած նորէն անոր վը-
րան ելաւ՝ վրէժ խնդրելու համար, և
սաստիկ կռուելու ատեն զարնրւեցաւ
մեռաւ : Իսկ Աղէքսանդրի կինն ու տը-
ղաքը ձանձրացած անոր գէշու իներէն,
ուղեցին մեռցրնել զինքը. և որովհետեւ
Աղէքսանդր կասկածելով իր թշնամիներէն՝
իր սպառափն չորսդին պահապան-
ներ գրած ունէր, և մէկ գամբու շուն
մը իր գրանը քովը, կինը հնարքով մը
շունը գանէն հեռացուց, և սանդուխին
վերայ կասկերտ փռած՝ որ ոտքի ձայն
չէլէ, տղոցմովը եկաւ խուցը մտաւ, ու
զարկին մեռուցին :

Հ. Եսրամինոնդին վերջն ի՞նչպն եղաւ:

Պ. Սպարտացոց դէմ պատերազմը նուրէն սաստիկանալով, Եսրամինոնդ քաշեց դէպի Սպարտա: Բայց անոնք առաջուց խնայալով պատրաստուեցան ու քաջութիւնը դէմ գրին. ուստի պէտք եղաւ որ ետ դառնայ: Ետքը նորէն ուղեւոր Մանափնէ քաղաքին վերան երթալ, թշնամիք վերայ հասան. Եսրամինոնդ ամէն կերպ վարպետութի բանեցուց. և երկու կողմէն ալ մտքերնին հաստատ գրեւ էին որ չիյաղթած ետ չիդառնան: Եսրամինոնդ զարնրուեցաւ նետով մը, Թեբացիք քաջութիւնքը գրկեցին պատերազմէն դուրս հանեցին, և երկու կողմէն սաստիկ կոտորածով դադրեցան՝ ինքզինքնին յաղթող սեպելով: Բժիշկներն ըսին Եսրամինոնդայ որ եթէ նեար հանեն վերքէն՝ կըմեռնի: Ինքը հարցուց պատերազմին համար, ու երբոր լսեց թէ Թեբացիք յաղթեցին, ըսաւ. Մի կարծէք թէ աս կենացս ետքի օրն է. մանաւանդ թէ իմ երջանկուէս ըսկիզբն է և փառքիս կատարելու իր. որովհետեւ Թեբէն յաղթող կըթողում և Յունաստանն ազատ: Ետքը իր ձեռքովը քաշեց հանեց նեան ու մէկէն մեռաւ: Աս մարդս էր գիտուն և քիչ խօսող. կըրնար հարըսանալ ու միշտ սղքատ կասկեր:

Հ. Մանափնեան պատերազմէն ետքը Յոյնք ի՞նչ ըրին:

Պ. Թեբացիք բոլորովին ուժերնին կո,

րուսին . և Յոյնք ամէնքը հաշտուի ըրին .
 սրոշեցին որ ամէն քաղաք իր ազատու
 թիւր պահէ . բայց Սպարտացիք չխնտան
 աս դաշնագրուէրս մէջ : Աս միջոցիս Ա
 գեսիղայոս օգնուի գնաց Եգիպտացոց ,
 որ Պարսիկներէն ապստամբեր էին . և
 յաջողուի գործքը լմնցուցած դառնա
 լու ատենը ճամբան մեռաւ ու թսուն
 տարւան : Անուանի է իրեն աս խօսքը
 որ կըսէր . Պարսից թագաւորը ինձմէ
 մեծ չէ թէոր ինձմէ արգար չէ : Ագե
 սիղայոսի մահուանէն ետև ինչվան փի
 լիպպոս մակեդոնացիին ատենը յիշա
 տակի արժանի բան մը չունի Յունաս
 տան :

ԽԵ

Հ . Ե՛րբ ըսկսաւ Մակեդոնացոց թա
 գաւորուիւր :

Պ . Մակեդոնիայի թգրները Հերքիւ
 լէսի ցեղէ էին , և չորսհարիւր տարիի
 չափ Սպարտացոց ու Աթենացոց պաշա
 պանուէր կարօտ էին , ուստի երբոր Ա
 մինտաս թագաւորին մեռնելէն ետքը
 աղոցը մէջ խռովուի ինկաւ . Մակեդո
 նացիք ալ Պեղոպիդասին դիմեցին , որ
 Փերէսի բռնաւորին դէմ գացերէր : Պե
 դոպիդաս հանգարտեցուց զիրենք ու շաա
 սրատանգներ առաւ անոնց ազնուական
 ներէն՝ Թեբէ խրկեց : Անոնց մէջն էր
 Փիլիպպոսն ալ՝ Պերդիկկաս թագաւորին
 Եղբարցը մէկը :

Տ . Փիլիպպոս ի՞նչ կերպով թագաւոր Ք . Ա
եղաւ :

Պ . Պերգիկկասին մեռնելէն ետքը իր 360
աղան խիստ սզտիկ ըլլալով, երկու հոգի
իրարու գէմ ելած անոր իրաւունքը յա-
փրշտակել կուղէին : Անասէնը Փիլիպ-
պոս, որ քսանըջորս տարւան էր ու Ե-
պամինոնդին խրատներովը կրթըւած,
փախաւ Թեբէէն, եկաւ Մակեդոնիա՝
կառավարութե՛ մէջ մտաւ, իր եղբօրը
աղուն սաշտպանել ուղելով : Մակեդո-
նացիք ալ խելացի մարդու մը կարօտ ըլ-
լալով, քիչ ատենէն ղինքը թագաւոր
գրին, և անով ըսկտան առաջ երթալ :

Տ . Փիլիպպոս ի՞նչպէս առաջ քաշեց
ՂՄակեդոնացիքը :

Պ . Առաջ զօրքերը կրթեց, ու գունդ
մը նոր զօրք հնարեց Փաղանգ անունով,
որ էին վեց եօթը հազար հոգի՝ տասնը-
վեց կարգ ետեւէ ետեւ շարւած . ղէնքեր
նին տէգ էր՝ տասնըջորս կանգուն եր-
կայն, և այնպէս վարպետ կերպով մէկըզ
մէկու ետեւէն գէպի թշնամին երկնցու-
ցած, որ բոլորը մէկտեղ ամուր պարիսպ
մը կրճկանային : Փիլիպպոսի վարմունքն
անուշ էր . իրեն ղինուորներուն ընկեր կը
կանչէր, և ինքն օրինակ կուտար ամէն
բանի . բայց աւելի առաջ գնաց իր վար-
պետ կերպերովը : Ոսկիի հանք գտաւ Մա-
կեդոնիայի մէջ, և կաշառք ստալով իրեն
կուսակիցներ կրճոյվէր, ու կըսէր .
Ոսկի բեռըւած ջորի մը ամէն ղինուոր

Բ. Ա ներէն քաջ է . մէկ վերայ վաղելուն ա-
մուր բերդերը կառնէ :

Տ . Փիլիպպոս ի՞նչ երևելի պատե-
րազմներ ըրաւ :

358

Պ . Ամէնուն հետ սրատերազմ՝ ընել
ըսկաւ . յաղթեց Պէոնիացոց և Լիւ-
րիկեցոց . տիրեց Ամփիպոլսին . առաւ
Կրենիդէն ուր գտաւ ոսկիի հանքը : Ետքը
բոլոր Թրակիային տիրել ուզելով՝ նախ
գնաց առաւ Մեթոնը . հոն իր մէկ
աչքն ալ կուրցաւ աս կերպով : Աստե-
րիոս Ամփիպոլսեցին ելաւ քաղքէն եկաւ
Փիլիպպոսին ծառայելու , ըսելով թէ
լինքը կըրնայ զարնել թռչունները թռու-
չելու ատեննին : Փիլիպպոս ալ ըսաւ .
Երբոր սարեկներու հետ պատերազմիմ՝
քեզ քովըս կառնեմ : Աստերիոս բար-
կացաւ , մտաւ Մեթոն , պատերազմի
ատեն նետ մը նետեց՝ Փիլիպպոսին աչքը
հանեց : Նեախն վերան թուղթ մը պլամծ
ու գրած էր , Փիլիպպոսին աչքին : Ետքը
Փիլիպպոս անցաւ Թեսսաղիան ալ ազա-
տեց Լիկոքրոն բունաւորին ձեռքէն որ
Ազեքսանգրի յաջորդն էր . ու Թեսա-
ղացոց ձիաւորներն ալ իր փաղանգին հետ
միացուց : Թրակիայէն քանի մը գլխա-
ւոր քաղաքներ ալ առաւ : Աս միջոցիս
հանգիստեցաւ Յունաց մէջ Մեհենական
ըսւած սրատերազմն ալ , որ աւելի օգտա-
կար եղաւ Փիլիպպոսի :

ԽԶ

Հ . Ինչո՞ւ Մեհենական ըսւեցաւ Փի . Բ . Ա
 լիպպոսի ատեն Յունաց մէջ գրգռուած
 պատերազմը :

Պ . Փովկիսացիք Դեզփիսի տաճարին 355
 երկիրներէն քիչ մը տեղ մշակեցին . որ
 ուրիշները սեղանակապատու թի սեպեցին
 և Ամփիկափոնին ատեանին մէջ անոնց
 վերայ դատաստան ըրին ու շատ ըստակ
 տուգանք դրին : Փովկիսացիք չեկրրնա-
 լով հատուցանել, տեսան որ ուրիշ ճար
 չիկայ, Փիլոմեւասի գրգռելովք պատե-
 րազմի ելան . Սպարտացիք ալ Ամփիկ-
 ափոնի ատեանէն տուգանք քաշած ըլ-
 լալնուն՝ ձեռքի տակէն օղնեցին : Ուս-
 տի Փիլոմեւաս յաղթեց, մտաւ Ամփիկ-
 ափոնի տաճարը, աւրեց անոր սիւնե-
 ըուն վերայ գրւած վճիռը . ու բռնի
 պատգամ հանել տուաւ թէ Ղրածներն
 աղէկ է : Ետքը նորէն բոլոր Յունաստան
 երկուք բաժնրւած սաստիկ կռուեցան,
 երկու կողմէն ալ բռնրւած գերին մէկէն
 կրտսաննէին : Փիլոմեւաս ալ զարնրւե-
 ցաւ ժայռի մը վերայ, և որպէս զի ձեռք
 չիյնայ՝ ինքզինքը վար նետեց ու մեռաւ :
 Աս պատերազմիս ետքերը Յնաւ մեծն
 Աղէքսանդր : Իսկ Աթենացիք Դիմոս
 թենէսին ճարտասանութիւն գրգռուած՝
 Փիլիպպոսի շատ արգելք եղան մէկէն
 բոլոր Յունաց սիրելու :

Բ. Ա

Հ. Ո՞վ էր Դիմասթենէս :

Պ. Որովհետեւ Աթենացոց ժողովուրդը ամէն բան ճարասանի մը խօսքով առաջ կըրտանէր, Դիմասթենէս ալ ճարասանութե սիրովը վառւած տղայ մըն էր. բայց ձայնը տկար ու լեզուն պակասաւոր ըլլալով, առջի անգամ ճառ խօսելուն ամէնուն առջև խաղք եղաւ : Ինքն ալ սրակաութիները շտակելու համար երբեմն ծովէզրը կերթար կրկանջ վըռտէր, բերանը մանր քարեր առած կրխօսէր, ինչպէս որ լեզուն շտակեց ու աշխարհիս ճարասաններուն գլուխն եղաւ :

Հ. Փիլիսպոս ի՞նչպէս մտաւ Յունաստան :

346

Պ. Մեհենական ըսած պատերազմը տասը տարի քշելէն ետե թեբացիք Փիլիսպոսէն օգնուն ուղեցին, անոր ուղածն ալ աս ըլլալով, շուտ մը ելաւ թերմոսլիէ եկաւ, մտաւ Փովկիս, ու առանց կռուելու Մեհենական պատերազմը վերջացուց և բարեպաշտ թագաւոր սեպւեցաւ : Անիլիաիոնին ժողովքէն Փովկիսացիքը դուրս ձգել տուաւ՝ զանոնք սրբապիղծ սեպելով, ու ինքը անանց տեղն անցաւ : Պիւթեան խաղերուն ալ ինքը գլուխ եղաւ՝ զրկելով Կորնթացիքը՝ որ մտանակից սեպւեր էին Փովկիսացոց ըրած սրբապղծուէր :

Հ. Փիլիսոսոս Յուհայ հետ միշտ բարեկամ էր: Ք.Ա.

Պ. Չէ. վն զի ինքը միայն իր սուտ փաստքին և սպասուոյն բարեկամ էր, անոր համար բարեպաշտութի կեղծելով զամէնքը տկարացընելէն ետև գնաց Բիւզանդիոնն ալ սաշարեց՝ որ Աթենացոց մէջ սով ձգէ, վն զի գրեթէ անոնց բոլոր ապրուստը Թրակիայէն կուգար: Մէկ կողմանէ ալ կըսնդէր թէ ինքը հաւատարմութե կըսա՛նէ գաշինքները, բայց Աթենացիք կաւրեն, զՊարսիկներն իրեն գէմ գրգռելով: Աթենացիք ալ Գիմնոսթենէսին Փիլիսոստան ըսած ճառերովը յորգորւած՝ զէնքի ձեռք զարկին, Բիւզանդացոց օգնութի խրկեցին Փոկիոն փիլիսոստան, որ կարիճ զօրապետ էր, և միշտ խաղաղուի ընելու կը յորգորէր զիրենք. Գիմնոսթենէս ալ նեղացած կըսէր՝ թէ Փոկիոնը իմ ճառերուս կացինն է:

ԽԷ

Հ. Փոկիոն ինչ կըրցաւ ընել Փիլիսոստան գէմ:

Պ. Գնաց յաղթեց. Փիլիսոստա ալ տեսնելով որ իր խորհուրդն առաջ չի գնաց, ուրիշ նոր սրտաերազմ գրգռեց Գեղիկիա երկիրը պղծողներուն գէմ, և ինքը բարեպաշտ մարդու մը պէս զօրաց գլուխ ընարըւեցաւ. բայց Լոկրացոց վերայ երթալու տեղ, եկաւ Փովկի

սացոց Եղատիա բերդին տիրեց . և ասով
 իմացուց թէ իր միտքն ուրիշ է : Ուստի
 Դիմոսթենէս համոզեց ՂԱթենացիքը որ
 միաբանին թեբացոց հետ Փիլիպպոսի
 դէմ , թէպէտ և թեբացիք թշնամի էին
 իրենց . և աս բանին դեսպան ինքն որոշ
 ւելով գնաց թեբէ ու զանոնք ալ հա-
 մոզեց : Փիլիպպոս վախնալով աս երկու-
 քին միաբանուէն , ձախորդ պատգամներ
 հանել տուաւ որ վախնան : Բայց Դի-
 մոսթենէս ծաղր ընելով ըսաւ . Աստղո-
 նի քրմու հիին բերնովը Փիլիպպոս կըխօ-
 սի : Ետքը Փիլիպպոս հաշարելի ուզեց .
 և երբոր մտիկ չըրին , մտաւ Բէովտիա
 ու զարնըւեցաւ անոնց հետ Քերոնէայի
 մօտ : Փիլիպպոսի տղան Աղէքսանդր ճըղ-
 քեց թեբացոց սրբազան գունդը : Բայց
 երբոր Աթենացոց զօրապետներուն մէկն
 ալ գունդ մը ճղքեց ու յաղթածի պէս
 ըսխաւ ետեւուէն իյնալ , Փիլիպպոս տես-
 նելով ըսաւ . Աթենացիք պատերազմիլ
 չեն գիտեր . ու առաջ քէց իր փաղան-
 գը , վազեց թշնամեաց վըրայ՝ երբոր ա-
 նոնք զիրենք ապահով կրկարծէին , ու
 յաղթու թիւնը ըմնցուց : Դիմոսթենէս
 կարիճ ճարտասան , բայց վախկոտ սա-
 տերազմող ըլլալով , զէնքը ձգեց փախաւ :
 Փիլիպպոս Աթենացոց գերիները ձրի
 արձըկեց , և առջի գաշնագրուիլ նորէն
 հաստատեց : Աս իրեն աւելի մեծ փառք
 եղաւ : Թեբացոց ալ ներեց , բայց պա-
 հապաններ թողուց թեբէին մէջ :

Հ. Քերոնէայի յաղթուէն վերջը Փի. Ք. Ա
 լիպպոս ի՞նչ ըրաւ, և ի՞նչպէս մեռաւ:

Պ. Պարսից վերայ երթալ ուզելով, 337
 Յոյները յորդորեց որ հեարդ գան: Երբ-
 որ պատգամ հարցուց, սովորական կեր-
 պով անորոշ պատասխան մը ելաւ, թէ
 Յուլը պասկէր է, մահը մօտեցեր է,
 կուզէ մորթըիլ: Փիլիպպոս աս պատ-
 գամը Պարսից տէրութի կործանելուն
 վերայ մեկնեց: Բայց ուզեց որ աւաջ իր
 կղէտպարա դատերը հարսնիքը լմնեցը-
 նէ. հոն Պաւսանիաս անունով կարիճ մը
 զինքն ըսպաննեց: Արովհետև աս Պաւ-
 սանիասն իշխանէ մը նախատուած ըլա-
 լով Փիլիպպոսին բողոքեր էր, ու ինքը
 արհամարհէր էր: Փիլիպպոս քսանը-
 չորս տարի թագաւորեց:

Հ. Փիլիպպոսին տեղն ո՞վ անցաւ:

Պ. Ազէքսանդր որդին, Արիստոտէլին 336
 ձեռքը կրթըւած. որուն համար ըսեր
 էր Փիլիպպոս թէ Տղայ ունենալէս աւելի
 շնորհակալ եմ աստուածներուն՝ Արիս-
 տոտէլին ատենը ունենալուս համար:
 Ազէքսանդր միշտ հոմերոսի Եղիականը
 կը կարդար՝ մէջի դիւցազանցը քաջուի-
 ներուն համար: Օր մը իր բարեկամնե-
 րէն մէկուն գանգաւորով ըսաւ. Հայրս
 ամէն տեղ կառնէ, ինձի բան չի թողուր:
 Փիլիպպոսի ատեն շատ քաջուիներ ընե-
 լէն ետքը քսան տարւան թագաւոր նըս-
 տաւ:

Ք . Ա Հ . Փիլիպպոսի մեռնելէն վերջը Յոյնք
 ի՞նչ ըրին :

Պ . Աթենացիք մեծ ուրախուի ըրին .
 զՓիլիպպոսն ըստաննող Պաւսանիասին
 ալ պսակ մը նուիրեցին : Ուրիշներն ալ
 գլուխ քաշել ըսկան . բայց Աղէքսանդր
 գնաց շուտ մը զամէնքը նուաճեց . ետքը
 Թեբացոց վըրայ գնաց՝ որ Մակեդոնացի
 սրահապան զօրքերուն մէկ մասը ջարդեր
 էին , անոնց քաղաքը հիմնաշատակ կոր-
 ծանեց . միայն քուրմերուն ու Պինդա-
 րոս բանաստեղծին ցեղին ազատութիւն
 տուաւ . երսուն հազար մարդ ալ ծա-
 խեց : Աթենացիք սարսափած՝ Գիմոս-
 Թենէսին ձեռքովն Աղէքսանդրէն հաշ-
 տուի ուղեցին . սն ալ ներեց ամէնուն
 սիրտերնին շահելու համար . միայն սր-
 հանջեց որ Քարիգեմոս ըւած խառվա-
 րարը քշէ :

ԽԸ

Հ . Աղէքսանդր Թեբացոց յաղթելէն
 վերջն ի՞նչ ըրաւ :

335

Պ . Կորնթոս ժողվեց ամէն հասարա-
 կապետուիներուն գեսպաններն ու խնա-
 ցուց որ կուզէ Պարսից վըրայ երթալ :
 Անատենը գլխաւոր քաղաքացիներն ու
 Փիլիսոփաներն եկան իրենց ուրախուի-
 նին ցուցնելու . միայն Գիոգինէս չե-
 կաւ : Աղէքսանդր գնաց որ տեսնէ զին-
 քը . և անոր սղքատու եր վըրայ խղճա-

լով երբոր հուզէր ստարգե տալ, Գիտ. Բ. Ա
 գինէս սրտատսխանեց. Մէկգի կէցի որ
 արևը չիտախանէս, քեզմէ ուրիշ բան
 չեմ ուզեր: Զարմացաւ Աղէքսանդր ու
 ըսաւ. Թէոր էս Աղէքսանդր չըլլայի,
 հուզէի Գիտգինէս ըլլալ:

Հ. Աղէքսանդր Պարսից վերայ երթա-
 լու խորհուրդն ինչպէս առաջ տարաւ:

Պ. Մակեդոնիա դարձաւ որ պատրաստ
 տըւի. սառա ըստակ բաժնեց իր իշխան
 ներուն. ու երսունըհինգ հազար ընտիր
 զօրքով, և ուրիշ ամէն հարկաւոր եղած
 ամիրվան մը պաշարով ճամբայ ելաւ: Իսկ
 Մակեդոնիան Անտիպատրոսի յանձնեց
 որ տաւիրէքհազարով պահէ: Ետքը
 հարիւրվաթասուն ցուկանաւով հասաւ
 Ելլեսպոնտոսի ցամաքը: Գնաց Լամպ-
 սակին վերայ սառերազմէլու. Անաքսի-
 մենէս երևելի փիլիսոփան գիմացն ելաւ
 քաղաքին համար աղաչէլու: Աղէքսանդր
 խմանալով անոր գալուն սրտաճառը, եր-
 գումըրաւ որ բարեկամուն չինայի, ա-
 նոր ուզածը չիկատարէ: Անաքսիմենէս
 ալ գնաց ըսաւ. Կրխնգրեմ որ Լամպ-
 սակը կործանէս: Ասանկով ազատեցաւ
 քաղաքը: Ետքը Փուլեգիայէն անցնելու
 ատեն Ա. քիւլլէսի գերեզմանը պատուեց.
 անկէ գնաց Գրանիկոն գետէն անցնելու
 ատեն զարնըւեցաւ Պարսից հետ ու շատ
 քաղաքներ ալ առաւ: Յաջորդ տա-
 րին ելաւ գնաց Գորգիոն քաղաքը. և
 ուզեց տեսնել Գորգիոնի հանգուրցը

Ք. Ա կամ կծիկը, որուն համար պատգամե-
 լած էր թէ Ուր քակէ, Ասիայի կրտի-
 րէ : Աղեքսանդր հանեց թուրը՝ կտրեց,
 ու իբրև թէ պատգամը կատարեց : Ետքը
 քիչ ատենի մէջ փոքր Ասիան առնելով
 Վիլիկիայի վերայ գնաց. Պարսիկները
 վահնալով ձգեցին փախան. ու երբոր
 Տարսան քաղաքին ալ նոր կրակ տուեր
 էին որ փախչին, Աղեքսանդր հասաւ
 առաւ : Հոն Աղեքսանդր քրտնած ըլ-
 լալով գեար մտաւ որ լուացւի, ու սա-
 տիկ հիւ ընդցաւ : Երբոր ամէնքը ձեռք
 քաշեցին՝ վահնալով գեղ տալու՝ և միայն
 Փիլիպպոս բժիշկը խոստացաւ ըռնոցը
 նեւ, անատենը սուտ ամբաստանութի
 թուղթ մը եկաւ Աղեքսանդրին թէ Փի-
 լիպպոս բժիշկը կուզէ քեզի թոյն խմը-
 նեւ : Աղեքսանդր պահեց թուղթը. ու
 ետքը դեղը խմելու ատենը ցցուց Փիլիպ-
 պոսին, ու անոր երեսին այլայլուեր դիտե-
 լով կտոր ձուք խմեց ու առողջացաւ : Դա-
 րեհ լսելով թէ Աղեքսանդր իր վերայ կու-
 գայ, անհամար զօրքով դիմացն ելաւ.
 բայց իր զօրապետներուն խնդրը արհա-
 մարհեց ու Իսոս քաղաքին քով նեղուածք
 տեղ մը զարնըւեցաւ ու յաղթըւեցաւ : Ա-
 ղեքսանդր կուզէր իր ձեռքով ըսպաննել
 զԴարեհը. բայց Դարեհ փոխաւ ազա-
 տեցաւ, և Պարսիցմէ շատ մարդ մեռան :
 Դարեհի մայրը՝ կինն ու աղաքն ալ գե-
 րի ընկան. բայց Աղեքսանդր անուշու-
 թի վարեցաւ անոնց հետ :

ԽԹ

Հ. Իսոսի քով ըրած յաղթուէն ետքը Ք. Ա
Աղէքսանդր ուր գնաց :

Պ. Ըսկասա գէպի Տիւրոս երթալ . և 332
շատ քաղաքներ ու գաւառներ հնազան-
դեցան իրեն . Պարմենիոն զօրաստան ալ
Դամասկոսն առաւ , ուր որ սրահեր էր
Դարեհ իր գանձը , իրէքհարիւրէն աւե-
լի կանայքը , ուրիշ շատ ըստասաւորներ ,
և շատ ալ հարըստուի : Սիդոնացիք ալ
իրենց թագաւորին բռնուէն ձանձրա-
ցած՝ Աղէքսանդրի դիմեցին . Աղէքսան-
դրէն ալ Աբդողոնիմոսը անոնց թագաւ-
որ դրաւ :

Հ. Աբդողոնիմոս ի՞նչ մարդ էր :

Պ. Թագաւորական ցեղէ մէկն էր ,
որ սմէն բան թողուցած՝ սլարաիզաւ-
նութի կրնէր . և երբոր պնացին զինքը
կանչելու՝ առջի բերանը կարծեց թէ
իր վերան կը ծիծաղին : Երբ Աղէքսանդր
հարցուց անոր թէ ի՞նչպէս կը համբե-
րէիր ատ աղքատութեդ , պատասխան
տուաւ Աբդողոնիմոս . Երանի՛ թէ թա-
գաւորուէս մէջ ալ այնչափ ուրախ կա-
րենայի կենալ :

Հ. Աղէքսանդր ի՞նչպէս առաւ Տիւ-
րոսը :

Պ. Տիւրոս քաղաքը կղզի մըն էր՝ ցա-
մաքէն չորս տասարէզ հեռու . և ան մի-
ջոցին մէջ ջուրը սաստիկ կը վազէր խոշոր

ալիքներով . քաղաքին պարիսպն ալ բարձր
 էր հարիւր յիսուն ոտք , հին Տիւրոսին
 աւերակներուն դիմացը շինած : Ուստի
 մէջինները խիստ ասպահով ըլլալով ուղե-
 ցին որ Աղէքսանդր իրենց հետ խաղա-
 ղուի ընէ ու անցնի երթայ : Աղէքսանդր
 յանձն չառաւ , դեսպան խրկեց որ
 առանց պատերազմ ընելու քաղաքը տան ,
 անոնք նեղացած՝ դեսպաններն ըստան-
 նեցին ու մարմիննին ծովը նետեցին :
 Աղէքսանդր կատղեցաւ՝ հրաման տուաւ
 որ ծովը լեցրնեն քարերով ծառերով
 ու հողով . երբոր ասանկ խիստ դժուա-
 րուք ալիքներուն յաղթեցին ու պարբ-
 սին մօտեցան , Տիւրացիք մէկ նաւ մը
 լեցուն չոր ճիւղերով կուսրով և նաւ-
 թով ինչպէս որ պէտք է պատրաստած
 ուրիշ պատերազմական նաւերով տարին
 խոթեցին լեցուցած թումբին մէջտեղ-
 ւանքը . բռնկեցուցին ու փախան , որ մա-
 րելու ճար չեղաւ : Աղէքսանդր յուսա-
 հատելու տեղ ալ աւելի կատղած՝ նորէն
 լեցրնել տուաւ , մէկ կ. զմանէ ալ պա-
 տերազմ կրնէին : Աս երկրորդ լեցու-
 ցածն ալ սաստիկ ալէկոծուէ մը աւրը-
 ւեցաւ : Անատենը նորէն ալ ամուր ըսկը-
 սան շինել . Տիւրացիք շատ հնարքներ
 բանեցրնէլէն իզատ լուղորդներով ալ
 շատ միաս կրնէին , ջրին տակէն ճանկեր
 կանցրնէին ծովուն մէջ ձգած ծառե-
 րուն ու հեռուէն քաշելով կրփրը ընէ-
 ին : Յոյնք աս ամէն դժուարութիւններուն

յաղթելով լեցուցին . ու երբոր վերան
 էլան պատերազմելու , Տիւրացիք ալ
 իրենց բարձր սարսաղին վերայ ամուր քա-
 րէ աշտարակներ շինեցին : Ծովի կողմէն
 ալ խոշոր քարեր ձգած էր որ նաւ չէր
 կրնար մօտենալ . զան քարերն ալ շար-
 փեցին Մակեդոնացիք ու ծովէն ցամա-
 քէն ըսկասն կռուիլ : Անատենը Տիւրա-
 ցիք հաստ փայտեր ծայրը երկաթներով
 նեախ պէս վերանին կրնեառէին : Իրենց
 վերայ նեառած քարերուն դէմ լաթ կը-
 տարածէին որ ուժը կտարի : Ահաննե-
 լով վերանին տաքցուցած աւազ կըլեցը-
 նէին՝ որ զըահներուն ծակերէն ներս կը-
 մրանէր ու սաստիկ կըտանջէր զՄակե-
 դոնացիքը : Այնչափ եղաւ որ Աղէք-
 սանգր յուսահատեցաւ : Բայց ետքը
 նորէն ուժ առած վերջի սաստկուք սա-
 տերազմելով սարսաղին մէկ կողմը փլու-
 ցին , ու կամուրջ դնելով ներս մտան ,
 և անինայ ջարդել ըսկասն : Տիւրացիք
 յուսահատած՝ ոմանք ինքզինքնին կը-
 մեռցընէին , ոմանք ինչվան վերջի շունչը
 կըկռուէին , ոմանք ալ սատուհաններէ
 ինչ որ ձեռքնին գար՝ վերանին կընե-
 տէին . և թէպէտ Աղէքսանգր ձայն հա-
 նեց թէ մէհեանները փախչողներն ազա-
 տին , բայց կնկտոցմէ և տղոցմէ իզատ
 մէկը չէր փախչէր , ու կըսարաննըւէին :
 Բայց Սիդոնացիք՝ որ Աղէքսանգրի հեռ-
 էին , Տիւրացոցմէ տասնըկէցհազար մարդ
 փախուցին իրենց նաւերը : Մեռնողնե-

րուն թիւը՝ միայն վեց հազար ազնուական
 իշխան էին, թող ժողովուրդը • Ազեք-
 սանդր բռնըւածն երէն ալ երկու հազար
 հոգի խաչել տուաւ, երսուն հազար ալ
 գերի ծախեցին : Եւ թը ամիս քչեց Տիւ-
 րոսի պաշարումը :

Ծ

Հ • Ազեքսանդր Տիւրոսն առնելէն
 ետքը ինչ ըրաւ :

Պ • Անցաւ Եէմի վերայ գնաց մնասե-
 լու մտքով, որովհետեւ իրեն պաշար չէին
 խրկած : Անասենը հրէից քահանայապե-
 տը իր քահանայապետական հագուստ
 վը հանդէսով գիմացն ելաւ : Ան որ տեսաւ
 Ազեքսանդր, բարկանալու տեղ առջևն
 ինկաւ երկրպագուի ըրաւ, ըսելով թէ
 Մակեդոնիա եղած ատեն ըստ տեսիլքի մէջ
 տեսեր եմ աս զգեստով մէկը որ զնս կը-
 յորդորէր Ելէսպոնատուն անցնելու :
 Անկէց անցաւ գնաց Գազա քաղաքն ա-
 ռաւ Բեախսին ձեռքէն, որ քաջութիւն
 դէմ կէցեր էր, հոն անգթութիւն տասը հա-
 զար հոգի թրէ անցուց, մնացածն ալ
 ծախեց • իսկ Բեախսը ռավըներէն կապեց
 իր կառքին ու քաղաքին չորս դին քաշ-
 կըռտելով ըսպաննեց, պարծելով թէ
 Աքիւլէսի նման եղաւ : Անկէց Եգիպ-
 տոս անցաւ, և Եգիպտացիք զինքը սի-
 րով ընդունեցան • վասն զի Եգիպտացոց
 օրհնութիւնը Պարսից ատելի էին : Ետքը

գնաց Մեմփիս՝ Արամազդայ Ամոնի տա-
ճարը, Արամազդայ որդին կոչելի կու-
զէր. պատգամախօսն իմանալով անոր
միտքը, Որդի Արամազդայ կանչեց իրեն.
և երբոր Աղէքսանդր հարցուց թէ իմ
հայրս մեռցնողները պիտի պատժուին,
քուրմը պատասխան տուաւ թէ հայրդ
Արամազդ անմահ է: Ասով իր ծաղրա-
կան հպարտուիք գոհ եղաւ: Ետքը Ա-
ղէքսանդր Եգիպտոսի երկրին մէջ Աղէք-
սանդրիա քաղաքը շինեց, որ աշխարհիս
երևելի քաղաքներուն մէկն եղաւ:

Հ. Երբոր Աղէքսանդր Եգիպտոսի ալ
տիրեց, Պարսիկներն ինչ կրնէին:

Պ. Դարեհ գեսպաններ խրկեց, ու-
զեց Աղէքսանդրէն իրեն ընտանիքը, և
անոր խոստացաւ տալու իր գուսարը և
Եփրատին ու Ելլեսպոնատոսին մէջ աեղ
գտնըւած երկիրները. բայց Աղէքսանդր
չընդունեցաւ: Դարեհ նեղը մտնելով
եօթը ութը հարիւր հազար զօրք ժողոված՝
կուզէր արգիլել զԱղէքսանդրն որ Տիգ-
րիսէն չանցնի, բայց չիկրրցաւ: Ուստի
Տիգրիսէն անցնելով Արբեղային քով զար-
նըւեցան ու նորէն շատ ջարդ ընելով
յաղթեց Աղէքսանդր: Իսկ Դարեհ իր
զօրքովը փախչելու ասեն, Բեսոս իշխա-
նը Նաբարզանին հետ խորհուրդ ընելով
ասպատամբեցուցին զամէնքը, և կուզէին
Դարեհը մատնել Աղէքսանդրին, ու
ինքնագլուխ թագաւորել. բայց կաս-
կածելով թէ ետքը զԱղէքսանդր չեն

Ք. Ա կըրնար իրենց հետ հաշտեցընել, նեաւ-
րով զարկին Դարեհը մեռուցին ու փա-
խան :

Հ. Աղէքսանդր Դարեհի բոլորովին
յաղթելէն ետքն ի՞նչ ըրաւ :

330

Պ. Հատ հարստուհով լեցւած՝ զեղ-
խուէ ետեւէ եղաւ : Պերսեպօլիս քաղա-
քին մէջ գինովուէ ատեն Պարսից թա-
գաւորին սալաար կամօք կրակի սուա-
յոյն կնոջ մը խօսքով, որ կըյորգորէր
զԱղէքսանդրը անով Պարսիցմէ վրէժ
խնդրելու : Ետքը Աղէքսանդր Պարսից
սէս հագւեցաւ . և այնչափ եղաւ ան-
կարգուիւր՝ որ Մակեդոնացիք ալ ապրս-
տամբուէ խորհուրդ մը ըսկան ընել բա-
նակին մէջ . բայց ինքը բարկուիւ և ան-
գըլթուիւ իր կամքն առաջ կըտանէր :

Հ. Աղէքսանդրի գլխաւոր անգլթուէ
գործքերն որո՞նք են :

Պ. Թէպէտ շատ բանի մէջ յայանի
կերևնար, բայց խելքէ գուրս երեցաւ
անգլթուիւր երբոր Փիլոտասն ըսպաննեց,
որ ապատամբուէ խորհուրդը իմացեր էր
ու սուտ կարծելով ձոյն չէր հանած . և
անոր հայրը Պարմենիոնն ալ մէկտեղ, որ
Փիլիպպոսի և Աղէքսանդրի խնտ սի-
րելին էր և շատ յաջողութիներուն ալ
սպառճառ էր եղեր : Անգամ մըն ալ հար-
կիքի մը մէջ երբոր Աղէքսանդր գլուխը
տարցած իր ըրածներուն վերայ կըսար-
ծ էր ու Փիլիպպոսինները վար կըզարնէր,
Կղիտոս ծեր սիրելի զօրապետը՝ որ սա-

Ք. Ա կըրնար իրենց հետ հաշտեցընել, նեան-
րով զարկին Դարեհը մեռուցին ու փա-
խան :

Հ. Աղէքսանդր Դարեհի բոլորովին
յաղթելէն ետքն ինչ բրաւ :

330

Պ. Շատ հարստուիով լեցւած՝ զեղ-
խուէ ետեէ եղաւ : Պերսեպոլիս քաղա-
քին մէջ գինովուէ ասեն Պարսից թա-
գաւորին սալաար կամօք կրակի առաւ
յոյն կնոջ մը խօսքով, որ կըյորդորէր
զԱղէքսանդրը անով Պարսիցմէ վրէժ
խնդրելու : Ետքը Աղէքսանդր Պարսից
պէս հագւեցաւ . և այնչափ եղաւ ան-
կարգուի՛ր՝ որ Մակեդոնացիք ալ ասլըս-
տամբուէ խորհուրդ մը ըսկասն ընել բա-
նակին մէջ . բայց ինքը բարկուէ և ան-
գըթուէ իր կամքն առաջ կըտանէր :

Հ. Աղէքսանդրի գլխաւոր անգթուէ
գործքերն որոնք են :

Պ. Թէպէտ շատ բանի մէջ յայանի
կերևնար, բայց խելքէ գուրս երեցաւ
անգթուի՛ր երբոր Փիլոտասն ըսպաննեց,
որ ապատամբուէ խորհուրդը իմացեր էր
ու սուտ կարծելով ձայն չէր հանած . և
անոր հայրը Պարմենիոնն ալ մէկտեղ, որ
Փիլիպպոսի և Աղէքսանդրի խնատ սի-
րելին էր և շատ յաջողութիւններուն ալ
պատճառ էր եղեր : Անգամ մըն ալ հար-
կիքի մը մէջ երբոր Աղէքսանդր գլուխը
տաքցած իր ըրածներուն վերայ կըսար-
ծէր ու Փիլիպպոսիները վար կըզարնէր,
Կղիտոս ծեր սիրելի զօրապետը՝ որ սա-

Ք. Ա տուաւ . Ինչպէս որ կը վայլէ վարել
 Թագաւորի մը հետ : Աղէքսանդրին հա-
 ճոյ եղաւ անոր վէհանձնու թիւր . ուստի
 զինքն ազատ թողուց : Բայց զօրքը շատ
 աշխատած ըլլալով, ալ առաջ երթալ
 չուղեցին ան անծանօթ տեղանիքը : Իսկ
 Աղէքսանդր՝ գէթ ովկիանոսը տեսնելիք
 ըսելով Ինդոսին մէջէն գնաց նաւով ինչ
 վան ովկիանոս, ու չորս կողմին աիրե-
 լով դարձաւ :

Հ. Աղէքսանդր Հնդկաստանէն ուր
 գնաց և ի՞նչ ըրաւ :

325

Պ. Դարձաւ Պարսկաստան . մեծ սով
 քաշեց ճամբան, և զօրքին շատը մեռան
 սովէն ու ժանտամահէն : Երբոր հասաւ
 Պարսկաստան, անիրաւու թիւ ընող կու-
 սակալները սրատօեց : Ինքն ալ կարգը ե-
 ցաւ, Պարսից Թագաւորին ցեղէն կին
 առաւ, և միտքը դրեր էր որ Բաբելոնի
 մէջ շատ նորոգութիւններ ընէ ու երթայ
 ուրիշ աշխարհներու ալ աիրէ . բայց մահը
 վերայ հասնելով իմացուց՝ թէ Միտքը
 գրած բաները՝ ինչվան ան ատենը ըրած
 ներուն սլէս անպիտան են՝ ու իրեն օգուտ
 մը չեն կրնար բերել . և զինքը անմահ
 կեանքէն զրկելէն ետքը, աս անցաւորին
 վայելքէն ալ կը զրկեն :

Հ. Աղէքսանդրի մահն ի՞նչպէս եղաւ :

323

Պ. Բաբելոնի մէջ կերուխուսի հետ
 ըլլալով, անգամ մը մէկ անուանի ար-
 բեցողի մը վերայ նախանձեցաւ՝ ու զեց
 անոր յաղթել, ուստի խիստ շատ խմե-

լով վերան գող մը եկաւ ու մեռաւ . թէ սկէս ոմանք կըսեն թէ զինքը թիւնաւորեցին : Իրեն յաջորդ չորոշեց , ըսելով թէ Աւելի արժանաւորին կը թողում տէրութիւն : Մեծախորհուրդ էր Աղէքսանդր և առատաձեռն , բայց անգութ և փառասէր : Տասերկու տարի թագաւորեց ու երեսուն տարւան մեռաւ . որուն խիստ մեծ փառաւոր թաղում ըրին : Երկու տարի քչեց թաղման պատրաստուելը : Ետքը մեծ հանդիսով Բաբելոնէն Աղէքսանդրիա տարին մարմինը . ու Աղէքսանդրին անուենովը մեհեան մը շինեցին , հոն թաղեցին , կէս աստուածներուն կարգը սեպելով զինքը :

ԾԲ

Հ . Յոյնք երբ լսեցին Աղէքսանդրի մահն՝ ինչ ըրին :

Պ . Ազատուինին կորսնցընէնուն վերայ շատ նեղացած ըլլալով ըսկսան ուրախանալ . և Աթենացիք Դիմոսթենէսէն և ուրիշ ճարտասաններէն գրգռուած՝ մէկէն ելան պատերազմի Մակեդոնացոց Անախարոսս իշխանին դէմ . առջի բերանը յաղթեցին , բայց ետքը Անախարոսսին զօրք օգնութիւն հասնելով , իրենք ամէնքն ալ յաղթուեցան : Իսկ Անախարոսս գլխաւոր ճարտասանները՝ Իպերիգէսն և ուրիշները բռնեց մեռուց . Դիմոսթենէսն ալ փախաւ Վա-

Ք. Ա

լաւրիա կղզին՝ Պիտիգոնի տաճարը . և
 երբոր հասան ետևէն խաբիւրբելով տա-
 նելու համար , թոյն առաւ մեռաւ :
 Ասկէ ետքը Յոյնք ալ չիկրցան առջի
 ազատութիւնին ձեռք ձգել ասոր անոր
 հրնազանդելով ինչպէս որ բոլորովին
 հռոմայեցոց իշխանութե տակը մտան :

Հ . Աղէքսանդրին ո՞վ յաջորդեց :

Պ . Աղէքսանդրին ըրած կտակին նայե-
 լով ամէն մարդ ինքզինքը աւելի արժա-
 նաւոր կրտսէպէին : Անոր համար ամէնքը
 միաբանեցան՝ Արիդէոս Աղէքսանդրի եղ-
 բայրը նստեցուցին՝ խիստ տկար ըլլա-
 լուն համար . Պերդիկկաս ալ խնամակալ
 կեցաւ ինչպէս որ Աղէքսանդր ապսպրբե-
 ր : Հռոքսանէ Աղէքսանդրի կինն ալ
 յղի ըլլալով աթոռակից սեպեցին ծնե-
 լու ազան , որուն անունը Աղէքսանդր
 դրին . և թէպէտ Սոստիրա մէկալ կինն
 ալ յղի էր , բայց Հռոքսանէն ղինքը դադ-
 տուկ ըստաննել տուաւ : Իսկ իշխաննե-
 րը իբրև դաւառապետ երկիրները մէջեր-
 նին բաժնեցին , ու գնացին ամենևին
 ինքնագլուխ ըսկսան իշխել , և մեծ կռիւ
 բացուեցաւ : Ասոնց մէջէն Եւմենէսը
 հաւատարիմ գանձուէլով , Աղէքսանդրի
 տանը սպաշտստան կեցաւ . բայց ետքը իրեն
 զօրականները ղինքը Անտիգոնոսին ձեռ-
 քը մատնեցին . որ առջի բերանը բանալ
 դրաւ , ետքը ազատեց ու հետը բարե-
 կամութի ըրաւ : Աս Անտիգոնոսն ինք-
 ղինքը թագաւոր անուանելով ըսկսաւ

տիրել բոլոր Ասիայու, իր Դեմեար որդին Ք. Ա
 ալ հօգնել իրեն . աս բանիս մէկալ իշ-
 խանները չիհաւնէցան, վախնալով որ
 իրենց ինկած մասը կըկորսընցընեն : Ա-
 նորհամար Բաբելոնի Սելեկոս իշխանին
 յորդորելովը՝ ամէնը մէկ եղած՝ սլառե-
 ըազմի սլառաասաըւեցան Անտիգոնոսին
 դէմ :

ԾԳ

Հ. Անտիգոնոսին որդին Դեմեար ինչ
 գործք ըրած ունի յիշատակի արժանի :

Պ. Աս Դեմեարը Պողիորիէտ կըուի՝ որ 306
 Պաշարիչ ըսել է, շատ վարպետուինե-
 ըով քաղաքներ սաշարելուն ու առնե-
 լուն համար : Խելացի, սրտոտ, հեզ բը-
 նու թի մարդ մըն էր. շատ յաջողուիներ
 ունեցաւ, շատ ալ ձախորդու թի . շատ
 անգամ դէպի Եւրոպա սլառերազմի ե-
 լաւ, ուրիշ շատ քաղաքներէն իզատ Ա-
 թէնքին ու Վիպրոսին ալ տիրեց . բայց
 Հռոգոս կղզին չիկորցաւ առնել :

Հ. Դեմեար Պողիորիէտ ինչո՞ւ հա-
 մար կուզէր տիրել Հռոգոսին :

Պ. Հռոգացիք երևելի վաճառական 304
 ներ ըլլալով Դեմեարին սաշարով չէին
 օգնած Պաղոմէոսին դէմ . ուստի ծովէն
 ու ցամաքէն սաստիկ ուժով վըրանին
 դնաց, շատ տեսակ մեքենաներ գործա-
 ծեց, անոնք ալ բոլոր ուժով դէմ կե-
 ցան, մեքենաներուն շատը այրեցին :

Բ. Ա Դեմեարին ճարը հատած՝ նոր հնարք
 մըն ալ բանեցուց. շինեց մէկ մեծ բաբան
 մը քաղաքին սարի: Կներէն բարձր, չորս
 դին երկըթով պատած, անանկ որ ա-
 մէնքը կրկարծէին թէ մէկէն քաղաքը
 պիտի առնուի: Ուստի բաբանը անիւ-
 ներու վըրայ առած ըսկտան պարըստին
 մօտեցրնել. բայց յանկարծ ճամբուն
 մէջը գետինը բացւեցաւ, բաբանն ալ
 մէջը խրեցաւ մնաց: Այն զի Հռոգացիք
 գիտնալով որ այրել չեն կրրնար, խելք
 բանեցուցեր էին ու ան ճամբուն տակը
 փորեր էին՝ ուսկից որ պիտի բերուէր բա-
 բանը: Դեմեար յուսահատեցաւ, ու
 պատճառ բերելով թէ ուրիշ տեղ զինքը
 կրկանչեն, խաղաղուի ըրաւ Հռոգացոց
 հետ, և ան գործիքներէն մէկ քանին
 303 անոնց ընծայ տուաւ ու գնաց: Ետքը
 Հռոգացիք ծախեցին անոնք, և ան ըս-
 տրելով շինեցին մէկ մեծ պղնձէ արձան մը
 Հռոգոսին նաւահանգստին բերնին վը-
 րայ, որուն երկու սոքին մէջէն կանցնէին
 ամէն մեծ առագաստով նաւեր որուն
 միայն բուժ մատը հազիւ կրգրկուէր:
 Աս արձանը ութսուն տարիէն ետեւ եր-
 կրաշարժէ մը կործանեցաւ: Ատեն անց
 նելէն ետքը երբոր Սարակինոսներն առին
 ան տեղւանքը՝ ան արձանը աժան գնով
 Հրէի մը ծախեցին, որուն պղինձը ինը-
 հարիւր ուղաի բեռ եղաւ:


Հ. Միաբանած իշխաններուն Անտիո. Բ. Ա
գոնոսին գէմբրած պատերազմը ինչ
վերջ ունեցաւ :

Պ. Դեմեար Հռոգացոց հետ հաշար. 301
ւելէն եաքը գնաց իր հօրը Անտիգոնոսին
քով ու մէկտեղ՝ միաբանած իշխան-
ներուն գէմ սրատերազմի ելան և Փռիւ-
գիայի մէջ Իսսոս քաղաքին քովը զար-
նրւեցան : Դեմեար թէպէտ իրեն կող-
մին յաղթեց, բայց աւելի մեծ փառքի
ցանկալով՝ առանց մտածելու թէ բա-
նակին մէկալ կողմն ինչ կրլայ՝ ետևնուն
ինկաւ քշեց իր գիմացիները, ու բանա-
կէն հեռանալով կորսընցուց յաղթուիը :
Վասն զի երբոր ետ գարձաւ, չիկրցաւ
բանակին քովն երթալ՝ ճամբան թշնա-
մներուն փիղերէն արգիլած ըլլալով :
Ան միջոցին Սելևկոս ընտիր զօրքով կա-
տաղաբար վազեց Անտիգոնոսին վերայ
ու քիչմը ատեն կըռուէրով ըստաննեց
զինքը . Դեմեարն ալ նեղը ինկած՝ փա-
խաւ : Ուստի ան չորս միաբանած իշ-
խանները բոլոր Անտիգոնոսին երկիրներն
ալ մէջերնին բաժնեցին ու իրենք զիրենք
թագաւոր անուանեցին . Սելևկոս եղաւ
Ասորոց թագաւոր, որուն ինկաւ գրե-
թէ բոլոր Ասիան ինչվան Ինգոս գետը .
Պաղոմէոս Ղազոսը Եգիպտոսի թագաւ-
որ . Կասանդր Մակեդոնացոց . Լիւսի-
մաքոս ալ Թրակացոց :



ՅԱՒԵԼՈՒԱԾ

ՅՈՒՆԱՅ ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԵԱՆ
ԵՏՔԻ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ :



Ե Գ Ի Պ Տ Ո Ս Ի

ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԾԴ

Բ.Ա. Հ. Պատմէոս Ղազոսն ինչպիսի՞ թա
գաւոր եղաւ :

300 Պ. Պատմէոս Ղազոսը որ Սոսեր * ալ
կրկոյնի. քառսուն տարի թագաւորեց :

* Սոսեր փրկելու է. հարաջիտ Գրեմբրեն պա
շարած ապենին իրենց զինուորի իրկելու
համար :

իր յաջորդներուն ամէնէն աւելի խելա-
ցի կառավարուն ունեցաւ . և պարզուն
խիստ կրօնէր : Անգամ մը ըսին իրեն՝
Թէ Թագաւորին կրկայլէ քիչմը աւելի
վառք ու հարստուն : Պատասխանեց .
Ճշմարիտ մեծութի մէկ Թագաւորի մը
իրեն հարստակներուն հարստութիւն է :
Գիտութիւր ծաղկեցուց , իմաստունները
սրատուեց . և ըսկսաւ Աղէքսանդրիայի
գրքատունը շինել՝ որ խիստ անուանի է .
կրտն Թէ եօթը հարիւր հազարէն աւելի
գիրք կար մէջը :

Հ . Պաղոմէոս Ղազոսին յաջորդն
ով է :

Պ . Անոր տղան Պաղոմէոս Փիլագեղ
փոս քն եղբայրասէր * : Ասիկա շինեց
Փարոս կղզիին աշտարակը՝ Եգիպտոս
գնացող եկող նաւերուն լոյս ընելու հա-
մար գիշերները , որ եօթը հրաշալեաց
մէկը կրտակի : Հրէից Աստուածաշունչ
գրքին վերայ շատ գովեստ լսելով ուղեց
որ յունարէն Թարգմանի Աղէքսան-
դրիայի գրքատանը համար : Անատենը
Հրէից քահանայապետը խրկեց իրեն ու-
կի գրով գրած օրինակ մը , եօթանա-
սունւերկուք ալ կարդացողներ՝ որ գնա-
ցին Թարգմանեցին . ան է Եօթանասից
Թարգմանութի ըսւած Աճաշունչը : Պաղո-
մէոս զարմացաւ Մովսէսի օրէնքին ար-

285

277

* Եւրոպէս համար . որովհետեւ իր եր-
կոս եւրոպէս ըսկանել փոսէր էր :

Ք. Ա գարուէն վերայ . ետքը ան կարդացող ներուն շատ աղնիս պարգևներ տալով տաճարին ու քահանայից համար , մեծ պատուով ճամբեց զիրենք : Պողոմէոս ուզելով հարստցընելիր Թագաւորուիր՝ ջանացաւ ծաղկեցընել արևելքի վաճառականուիր իր երկրին մէջ , որ ինչպան անատենը Տիւրացոց ձեռքն էր . անոր համար կարմիր ծովէն գէպի Նեղոս գետ մը փորեց՝ որ ճամբայ եղաւ կարմիր ծովէն գէպի միջերկրական ծովը երթալու : Աս բանըս քանի մը անգամ հին Եգիպտացիք ըսկսեր էին ու չէին կրցած առաջ տանել : Ասով Աղէքսանդրիան եղաւ աշխարհիս իրեք մասին համբարանոցը , և մայրաքաղաք Եգիպտոսի :

Հ . Պողոմէոս Փիլադելփոսին ո՞վ յաջորդեց :

247

Պ . Պողոմէոս Եւերգետ քր բարերար : Ասիկա վրէժխնդրուի ընելով իր Բերինիկէ քրոջը մահուանը համար որ Ասորոց Թագուհին էր , շատ զօրքով Ասորոց վերայ ելաւ , ըսպաննեց զլաւոգիկէ Թագուհին՝ Բերինիկէին ըսպաննողը , ու ատրեց բոլոր Ասորեստանի ինչպան Եփրատ : Բայց ըսելով Թէ Եգիպտոս խռովուի կայ , շատ աւարով ետ դարձաւ . և երբոր Երուսաղէմէն կանցնէր , Այ շատ զոհ ըրաւ՝ շնորհակալ ըլլալով ըրած յաղթուիներուն վերայ : Ասիկա իր ցեղին մէջ ետքինն եղաւ որ քիչմը մարդկուի ունեցաւ :

ԾԵ

Հ. Պաղտմէսս Եւերգեանէն ետև ով Բ. Ա
նտաւ :

Պ. Պաղտմէսս Փիլոսոփոսովը քի հօրա. 221
մոյն* : Ասիկա պատերազմի ելաւ մեծին
Անտիոքոսի Ասորոց Թագաւորին գէմ,
որ ելեր էր ասոր նախորդին յափշտա-
կած երկիրները եւ առնելու համար :
Շատ անգամ աս երկուքին զօրքը մէկը
մէկու հետ զարնըւելէն ետև՝ իրենք եր-
կու Թագաւոր մէկզմէկու գէմ ելան
հաւաքիտ քաղաքին քով : Անտիոքոս
կատղած վաղեց Եգիպտացոց բանակին
ձախակողմին վերայ ու վախճողներուն
ետևէն ինկաւ . անատենը Փիլոսոփոսովը
իր աջ կողմի զօրքովն յարձրկեցաւ անոր
բուն բանակին վերայ, ու Անտիոքոս եւ
չիգործած՝ բոլոր բանակը ջարդեց . ա-
սանկով յաղթեց պատերազմին ու ասի-
րեց Պաղեստինու և Ասորեստանի մէկ
մասին : Ետև ինքզինքը տուաւ ամէն ան-
կարգուիներու . ըսպաննեց իր եղբայրն
ու իր կինը : Ըրած անկարգուիներովը
բոլորովին ուժէ ալ ինկած, ամօթալի
մահուամբ չարաչար մեռաւ երսունըեօ.
Թը տարւան :

Հ. Փիլոսոփոսովին յաջորդ ով եղաւ :

Պ. Պաղտմէսս Եպիփան քի երևելի . 204

* Իր հայրը Ռոմանաորբելոան համար ծաղ-
րելով իրեն հայրասէր ըսին :

Բ. Ա որուն անդթուէր և անհաւատարմութիւնը
 միայն կը լիշատակուի : Զասի թունաւո-
 181 րեցին , ու տեղը նստաւ իր աղան Պողո-
 մէոս Փիլոմեատովը իմ մայրասէր , որ սաս-
 տիկ պատերազմ բացաւ Ասորոց թագա-
 ւորին Անտիոքոս Եպիփանին դէմ , ու
 անոր ձեռքը մատնըւեցաւ գրեթէ բոլոր
 տէրութիւնն ալ՝ ինքն ալ : Անատենը Ա-
 ղեքսանդրացիք անոր տեղը նստեցուցին
 168 անոր եղբայրը Պողոմէոս Փիսկոնը իմ մե-
 ծափոր : Անտիոքոս գնաց պաշարեց Ա-
 ղեքսանդրիան՝ սուտ ձայն հանելով թէ
 կուզէ նորէն նստեցնել Պողոմէոս Փի-
 ւոմեատովը . և քիչ մնաց որ քաղաքն
 առնէր , բայց Հռոմէն դեսպան հասաւ
 ու արգիլեց աս կերպով . Նախ դեսպանը
 տուաւ Անտիոքոսին՝ ծերակուտին հրա-
 մանագիրը՝ ուզելով որ մէկէն պատաս-
 խանը տայ : Անտիոքոս երբոր նորէն մտա-
 ծելու ատեն ուզեց , Պոսլիղիոս դեսպա-
 նը բարկացաւ ու ձեռքի գաւազանովն
 Անտիոքոսին չորս գիէն աւազին վըրայ
 կըր գիծ քաշեց , ըսելով թէ Պատաս-
 խանը չիտուած կարող չըլլաս աս կըրէն
 դուրս ելլելու : Անտիոքոս վախնալով
 հնազանդեցաւ հրամանին ու ետ դար-
 ձաւ Ասորեստան գնաց : Ետքը երկու
 Պողոմէոսները խօսք գրին որ մէջերնին
 տէրութիւնը բաժնեն որ Անտիոքոս չիկա-
 րենայ գալ իրենց վըրայ . բայց քիչ ատե-
 նէն Փիսկոնը գաշինքը աւրելով՝ Փիլո-
 մեատովին վըրայ պատերազմի ելաւ ,

յաղթըւեցաւ ու բանտ դրւեցաւ : Ետքը Ք. Ա
 Փիլոմետովը եղբօրմէն ապստամբութե
 վրէժը հանելու տեղը՝ նորէն վերան սէր
 ցրցուց՝ ներեց, ու առջի իշխանութեը
 հասուց. և ան սէրը ինչպէս որ ծերա-
 ցան մէջերնին հաստատուն մնաց : Ետքը
 երբոր Փիլոմետովը մեռաւ, Փիսկոնը 145
 նորէն օիրեց բոլոր տէրուէր, բայց միայն
 անգթութիներ ընելու ու անկարգ յօժա-
 րութիները կատարելու համար ինչպէս
 մահը :

ԾԶ

Հ. Փիսկոնէն ետև ո՞վ նըստաւ :

Պ. Փիսկոնին դէշ ճամբան բռնող եր
 կու հոգի ալ նստէլէն ետև յաջորդեց
 Պապովէոս Աւլեար ք սրնգահար : Եգիպ- 65
 տացիք առաջուց բարեկամ էին Հռոմայ
 եցոց բայց Աւլեար ջնդուներեցան՝ Փողար
 կոչւելուն համար : Ետքը Կեսար և Պոմ-
 պէոս վեցհարիւր տաղանդ ըստակ առ-
 նելով զինքն ալ դաշնակից գրեցին .
 Աւլեան ալ ան պարտքը վճարելու հա-
 մար ըսկաւ շատ աուրք առնել ժողո-
 վըրդէն, և ան պատճառաւ ամէնուն
 ատելի ըլլալով փախաւ Եգիպտոսէն .
 բայց քիչ ատենէն նորէն դարձաւ Հռո-
 մայեցոց զօրքովը, ու առաջ իրեն դէմ
 եղող մեծերէն հեռու կեցաւ և անոնց
 ունեցածներն ալ յափշտակեց : Թէպէտ
 աս բաներուս Եգիպտացիք համբերեցին,

Ք. Ա բայց որ մը Հռոմայեցի մը կատու մը
ըսպաննելուն համար կատղեցան ու վա-
րատեցին Աւլեար :

Հ. Պաղոմէոս Աւլեաին ոմլ յաջորդեց :

51

Պ. Աւլեա մեռնելու ատեն իրեն յա-
ջորդ դրաւ իր երկու զաւկները Պաղո-
մէոսն ու Վղէոպատրան, Հռոմայեցոց
յանձնելով զանոնք Պոմպէոսին ձեռքո-
վը : Բայց աս երկուքը քոյր ու եղբայր
ըսկան կառուիլ, և Վղէոպատրան վարն-
տըւեցաւ : Ետքը երբոր Պոմպէոս Վե-
սարէն յաղթըւած գնաց Եգիպտոս՝
Պաղոմէոսի բարեկամութիւնը վատահա-
ցած, Պաղոմէոս սլատանին երկու ան-
սլատան ծառաներու ձեռքով ըսպաննել
տուաւ զինքը, կարծելով թէ անով Վե-
սարին աչքը կրմոնէ, բայց խաբւեցաւ,
վասն զի Վեսար նեղացաւ խաբէութիւն
մեռցնելուն համար, և Վղէոպատրային
փաղաքշանքովը նորէն զինքը իր իշխանու-
թիւնը հասուց : Պաղոմէոս նեղանալով
Վեսարին վերայ պատերազմի ելաւ, յաղ-
թըւեցաւ ու մեռաւ : Անատենը Վղէո-
պատրան որ թէպէտ տարւօք պղտիկ էր,
բայց իր փառասիրութիւնը համար չարիք
մտածել աղէկ գիտէր, վասնալով որ չըլ-
լայ թէ աերութիւնը նորէն երկուք բաժ-
նուի, իր մէկաւ ողջ եղբօրը թոյն խում-
ցուց մեռուց ու ինքը տիրեց բոլոր Եգիպ-
տոսի. ինչվան որ Մարկոս Անտոնիոս
Հռոմայեցի իշխանը եկաւ Վղէոպատրայ-
ին հետ կարգըւեցաւ, թողլով իր առջի


43


կինը Ոկտաւիան, որ Օգոստոս կայսեր
քոյրն էր: Աս պատճառաւ Եգիպտոսի
մէջ Հռոմայեցիք մեկզմէկու հետ ըսկը-
սան կռուիլ, ինչվան որ Վղէոպատրան
զԱնտոնիոսը մատնեց ու անոր մեռնե-
լուն պատճառ եղաւ: Եւ իր չարութի-
ներուն ալ չափը լեցւելով յուսահա-
տած ինքզինքը իժի մը խածնել տը-
ւաւ ու մեռաւ: Չար կենացը չար մահ-
երկուքնալ ինքիրեն ընտրեց:

30

Հ. Վղէոպատրայի մահուանէն ետեւ
Եգիպտոսի Թագաւորուիը ի՞նչ վիճակ
ունեցաւ:

Պ. Մեծին Աղեքսանդրի մահուանէն
ետքը ինչվան Վղէոպատրա երկուհա-
րիւր իննսունւիրէք տարի դիմանալէն
ետեւ, Հռոմայեցոց աէրութե՛ գաւառ
եղաւ ինչվան վեցերորդ գարուն կէսը:
Անկէ ետեւ տիրեցին Իսմայէլացիք մահ-
մետականք ինչվան հիմա:





Ա Ս Ո Ր Ո Յ

ԵՐԿՐՈՐԴ ԹԱԴԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

ԾԷ

Ք. Ա Յ. Լ՛ղէքսանգրի մահուանէն ետև
Սեւեւկոս ի՛նչ եղաւ :

300

Պ. Սեւեւկոս որ նիկատոր քոյ յաղթող
կրաւի, Իպսոսին քով եղած յաղթու թէն
ետքը երբոր Ասիայի իշխանու ին իրեն ին
կաւ, Ասորեստանին ալ իշխեց, ու հոն Ո-
րոնա գեաին վերայ շինեց Անտիոք մեծ
քաղաքը որ Ասորեստանի մայրաքաղաք
եղաւ. իսկ Բաբելոնը երեսի վերայ մնալով
քաղաքացիքը պակսեցան. առեն անցնե-
լէն ետքը կործանեցաւ. և հիմա ուր շի-
նած ըլլալն ալ չի գիտցը իր՝ ան աեղւանքը
Եփրատին վազելէն ձեւացած մեծ լիճով
մը ծածկըւած ըլլալուն : Բաբելոնցոց
հպարտուէն ու զեղխուէր պատիժ՝ աս
ըլլալիքը Եսայի մարգարէացիք էր : Սեւեւ-

կոս միշտ բարեկամ էր Թրակիայի իշխա-
նին Լիւսիմաքոսին հետ . բայց ծերուն
ատեննին մէջերնին կռիւ բացւեցաւ :
Սէլէւկոս պատերազմով մտաւ Լիւսիմա-
քոսին փոքր Ասիայու կողմի գաւառները .
Լիւսիմաքոս դէմն ելաւ , բայց յաղթը-
ւեցաւ ու ըսպաննըւեցաւ . և Թրակիոյ
Թագաւորուին ալ իրեն հետ ըմբեցաւ .
որուն գաւառներուն մնացորդներէն
ձեւացան Բիւթանիոյ և Պերգամայու
մանր Թագաւորութիւնները :

Հ . Սէլէւկոս ինչպէս մեռաւ , և
իրեն սկ յաջորդեց :

Պ . Մեծին Աղեքսանդրի տէրութիւնը
մէջերնին բաժնող իշխաններուն մէջը եր-
կայն ապրողն եղաւ Սէլէւկոս , բայց ետքը
ետքը զինքն ըսպաննեցին : Երևելի մարդ
էր Սէլէւկոս , բայց աւելի զարմանալի էր
իրեն արգարուիւր գթութիւր , և կրօնասի-
րութիւր : Իրեն յաջորդեց որդին Անտիոքոս
Սոսեր . Սոսերին ետեւէն նստաւ Ան-
տիոքոս Թէոս քի աստուած :

280

Հ . Անտիոքոս Թէոսն ինչպիսի Թա-
գաւորուի քչեց :

Պ . Խիստ անկարգութիւն վարւեցաւ .
անոր համար երբոր Եգիպտացոց գէմ
պատերազմի գնացեր էր , վերին Ասիայի
մէջ խռովութի մը ելաւ : Պարթևները
գլուխ քաշած՝ իրենց Թագաւոր դրին
Արշակը որ քաջ ու խելացի մարդ էր , ու
Պարսկաստանէն իզատ շատ երկիրներու
ալ տիրեց : Անոնց քովի ազգերն ալ նոյն

261

Ք. Ա ատենը ապստամբեցան . անանկ որ Ան-
տիոքոս Տիգրիսէն անգին եղած արևե-
լեան դաւառները բոլոր կորսընցուց : Աս-
բանիս վերայ խիստ նեղանալով Պողո-
մէոս Եղբայրասէրին հետ հաշտութիւն
ըրաւ՝ անոր ուղածին հաւնելով թէ ինքը
ձգէ Լաւոգիկէ թագուհին ու Պողոմէ-
ոսին Բերինիկէ աղջիկն առնէ : Ասանկ
անկարգ հարսնիքին լսէ անկարգ վերջը :
Երբոր Եղբայրասէրը մեռաւ , Անտիոքոս
Բերինիկէն թողուց ու նորէն առաւ
2/46 Լաւոգիկէն : Աս անզգամ կինը վախնա-
լով որ չըլլայ թէ նորէն իր պատուէն
կնայ՝ թոյնով մեռուց զԱնտիոքոսը , և
զԲերինիկէն խաբելով բռնեց ու Բերի-
նիկէին հաւնած Եգիպտացիներն ալ
մէկտեղ ըսպաննեց ու իր Սելէւկոս Կա-
լինիկոս որդին թագաւորեցուց : Բայց
ինքն ալ պատիժը դտաւ . վն զի Պողո-
մէոս Եւերդեան եկաւ իր քրոջը մահու-
անը վրէժ խնդրելու համար բռնեց ըս-
պաննեց զԼաւոգիկէն , ու ետքը անոր
որդւոյն Սելէւկոս Կալինիկոսին ձեռքէն
Ասորեստանի մեծ մասը յափշտակեց :

ԾԸ

Հ. Կալինիկոսին ո՞վ յաջորդեց :

Պ. Անոր որդին Սելէւկոս Կերաւնոս .
223 ետքը անոր եղբայրը Անտիոքոս , որ իր
քաջութիւններուն համար մեծ կոչւեցաւ :
Առջի բերանը Եգիպտացոց վերայ եր-
թալով Հռափիայի քով յաղթուեցաւ

ու ամօթով ետ դարձաւ : Ետքը զՀեր-
միաս իր մեծ իշխանն՝ որուն զօրութեն
ինքն ալ կրվախէր՝ ըսպաննել տուաւ ,
երբ իմացաւ թէ անիկա զինքն ալ մեռ-
ցրնել կուզէ . և ամէն ասպտամբները
հնազանդեցրնելէն ետքը , ըսկսաւ քա-
լել գէպի արևելք ու ժով ու քաջութի .
և թէպէտ չիկրրցաւ բոլորովին ջնջել
Պարթևաց տէրուին , բայց անոնց ետ-
քէն ձեռք ձգած երկիրները ամէննալ
ձեռվընուն առաւ : Անկէ անցաւ Կով-
կասէն անդին ու ինչպէս հնդկաստան
տիրեց եօթը տարւան մէջ ու դարձաւ՝
խելացի և զօրաւոր ըսելով ամէնէն :
Անկէ գնաց գէպի Պաղեստին ու առանց
աշխատանքի Եգիպտացոց ձեռքէն ա-
ռաւ . վն զի հրեայք Եգիպտացոցմէ
նեղացած՝ սիրով հնազանդեցան Անտիո-
քոսի , և անկէ ետքն ալ՝ ինչպէս որ Ա-
սորոց տէրուին կործանեցաւ :

Հ . Մեծն Անտիոքոս հրէաստանը
առնելէն ետքը ինչպէս մահը իր ամէն
ուղածը կրրցաւ առաջ տանել :

Պ . Չէ . վն զի ինքն իրեն քաջութիւնը
վստահացած ու արգարութիւն մեկդի
դրած , ջանալով միայն իր փառասիրու-
թիւնը կշտացրնել՝ ըսկսաւ փոքր Ասիային
վերայ երթալ : Անատենը Չմիւռնայիք
և ուրիշ քաղաքներուն Յոյները տեսնե-
լով որ մինակ չեն կրնար գէմ գնել ,
զհռոմայեցիքը իրենց օգնութի կանչե-
ցին : Անտիոքոս իր ուժին վստահացաւ ,

Ք. Ա մանաւանդ որ Աննիբաղ Կարբէդոնացոց խելացի զօրասլէտը Հռոմայեցոց սաստիկ թշնամին ալ իրեն քոյն եկեր էր : Բայց չիգիտցըւիր ինչո՞ւ համար Աննիբաղին խորհուրդը արհամարհեց, որ կըսէր թէ Խաալիայի մէջ ընէ պատերազմը, և զինքն ալ զօրքին հետ խրկէ : Ուստի Յուսաստանի մէջը Թերմոպիլէին քով յաղթըւած Ասիա վախաւ : Հոն նորէն պատրաստըւած Մաքնեսիայի մօտ Ղուկիոս Սկիպիոն զօրասլէտին հետ սաստիկ զարնըւեցաւ յաղթըւեցաւ, ու պէտք եղաւ որ բոլոր պատերազմին ծախքը վճարէ և Տուրոս լեռնէն ասդին բոլոր Հռոմայեցոց թողու : Անտիոքոս դարձաւ իր աթոռը, և չէր դիտէր ինչ ընելիքը . վն զի իր գանձը պարպըւած էր . ուստի ըստակ ժողվէլու համար ելաւ պարտելու արևելքի քաղքընէրը . և մէկ գիշեր մը Եղիմայիս քաղաքին մէջ Արամազդ Բէլին կռատունը մտաւ, և ուզեց որ կողոպտէ ան կռատանը գանձը . քաղաքացիք աս սրբապղծութենը համար կատղած՝ վերան վազեցին ու ըսպաննեցին իր քովի ընկերներովը :

Եթ

Հ. Մեծին Անտիոքոսի յաջորդն ո՞վ եղաւ :

187

Պ. Որդին Սելէւկոս Փիլոպատոր, որ խրկեց զՀեղիսդորոսը Հրէից տաճարը

կողոսպտելու համար : Սեւեւկոս Փիլոսոփանը : Ասիկա շատ անգամ կելլէր իր պաշտօնէն Անտիոք քաղաքին փողոցները կը պտըտէր ու վարի արհեստաւորներուն հետ կրի. օսակցէր՝ պարծենալով թէ ինքն առնն արհեստէն կը հասկընայ : Երբոր իմանար թէ աեղ մը կերուխուժի ուրախութի կայ, մէջերնին կերթար առանց ամբշնալու կը խրճէր կերգէր . բայց քաջասրտութիւն ու փառասիրուին ալ ձեռքէ չէր ձգէր : Ուզէց որ նորէն տիրէ Եգիպտոսին, և շատ յաղթութիւններ ընելէն ետքը Հռոմայեցիներէն արգիլւեցաւ : Անտէնը Հրէից վերայ թափեց իր բարկութիւնը՝ սաստիկ հալածանք հանելով, ինչպէս որ անձաշունչին պատմուէրը մէջ գրած է . ինչ վան որ Մակաբայեցիք յաղթեցին ու ետքը Անտիոքոս չարաչար որդնոտած մեռաւ :

170

Հ . Անտիոքոս Եպիփանէն ետև թագաւորուիլ որով անցաւ :

Պ . Շատ խռովութիւններէն ու այլևայլ մարդիկ մէկզմէկու ձեռքէ թագաւորութիւնը յափշտակելէն ետքը, յաջորդեց Անտիոքոս գրիպոս քի մեծաբիթ : Առջեւ բերանը Գրիպոսին մայրը Կլէոպատրան կը կառավարէր տերուիւր անոր անուով . բայց երբոր Գրիպոսն ինքիւր գլխուն իշխելը ըսկսաւ, Կլէոպատրան որ առաջուց իր երկու էրիւր և մէկ տղան ըս-

124

Բ. Ա պաններ էր, զինքն ալ մեռցրնել ուզէց. ուստի օր մը երբոր Գրիպոս զօրքէն դարձաւ հոգնած, ծարւած, Կղէոպատրան թունով շինած խմելիք մը առաւ իրեն. Գրիպոս կասկածելով քաղաքովարուի ձեւացուց ու ուզէց որ ինքը խմէ. երբոր Կղէոպատրա յանձն չառաւ, անասներ Գրիպոս յայանի ըսաւ. Աս սուա կասկածը վերայէդ վերցրնելու համար պէտք է որ խմես: Ան ալ նեղը մտաւ, խմեց ու մէկէն մեռաւ. և ազատեցաւ թագաւորը մէկ խռովարարէ մը որ աշխարհքը տակնուվերայ կրներ: Աս Գրիպոսին մեռնելէն ետև անդադար կաիւ էր նոր թագաւորի ընտրութե՛ համար, ինչվան որ ձանձրացած՝ անձնատուր եղան մեծին Տիգրանայ հայոց թագաւորին:

65 Բայց ետքը Պոմպէոս եկաւ տիրեց Ասորեստանին ու հռոմայեցոց գաւառ ըրաւ, մեծին Ալեքսանդրի մահուանէն երկու հարիւր քառասունըօթը տարի ետքը:





ՄԱԿԵԴՈՆԻՅ

ԹԱԳԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Կ

Հ. Կասանդր ի՞նչ կերպով առաջ Գ. Ա
տարաւ իր իշխանուէրը :

Պ. Կասանդր չորս իշխաններուն մէկը 300
որ Անտիպատրոսին մահուանէն ետե
դնաց տիրեց Մակեդոնիոյ, Աթէնքն
ալ առաւ. Թեբէն ալ որ կործաներ էր՝
նորէն շինել տուաւ, և զՈղիմպիան Մե
ծին Աղէքսանդրի մայրը ըսպաննել աը
ւաւ անոր անդթուիններուն համար, և
ինքը խաղաղութիւն իշխելէն ետքը մեռաւ :

Հ. Կասանդրէն ետե ո՞վ իշխեց Մա
կեդոնիոյ :

Պ. Իր երկու որդիքը Անտիպատրոս և 297
Աղէքսանդր, որոնք մեծին Աղէքսանդրի
բրոջմէն ծնած էին, մէկզմէկու հեա
թագաւորութե համար կռուելով եր
կուքն ալ թագաւորութե և կեանքէ զոր
կրուեցան : Անտիպատրոս զԹեսաղոնիկէ
իր մայրը մեռուց՝ Աղէքսանդրի կողմը
բռնելուն համար : Աղէքսանդրը զԴե
մետր Պոլիորիկեար իրեն օգնութի կան
չեց. ան ալ եկաւ պատճառաւ մը զԱ

Ք. Ա ղէքսանդրը մեռուց ու ինքզինքը թագա-
 ւոր Մակեդոնիոյ անուանեց: Անտիպա-
 տրոսն ալ իր մայրն ըսպաննելուն հա-
 մար անարգւած՝ փախած տեղը մեռաւ:
 Մեծին Աղէքսանդրի և Փիլիսոպոսի ցե-
 ղէն ասոնք միայն մնացեր էին: Բոլոր
 աշխարհիս տիրել կուղէին, բոլոր ցեղով
 աշխարհէս ջնջուեցան:

Հ. Դեմետր կրրցաւ Մակեդոնիոյ
 թագաւորուէր մէջ հաստատ մնալ:

287

Պ. Ինքը կարծելով թէ հաստատ պի-
 տի մնայ, ուզեց Ասիա երթալ ու ամէն
 հօրը կորսընցուցած երկիրները ձեռք
 ձգել. բայց յանկարծ զօրքը իրմէն ցրուե-
 ցան: Անատենը յուսահատած՝ քիչ զօր-
 քովը գնաց Ասիայու կողմերը, միտքը
 գրած որ կամ մեռնի կամ բաղգի մը
 հանգիպի. բայց շատ աշխատելէն ետքը,
 նեղը ինկաւ և անձնատուր եղաւ Աս-
 րոց Սելէւկոս Նիկատոր թագաւորին:
 Սելէւկոս թէպէտ հանգիստ և պա-
 տուով կրպահէր զինքը, բայց պարսպ
 կենալով և ուտելու խմելու ետևէ ըլ-
 լալով կեանքը կարճըցաւ ու իրէք տա-
 րիէն մեռաւ գերուէ մէջ: Թէպէտ իր
 որդին Անտիգոնոս Գոնատաս սաստիկ
 սէր ցուցընելով իր հօրը Դեմետրին վը-
 րայ, գրեթէ էր ամէն թագաւորներուն՝
 Սելէւկոսին ալ՝ աղաչելով որ իր ամէն
 ունեցածները սայ իր հօրը տեղը և ինք-
 զինքն ալ պատանդ սայ՝ որ ազատի հայրը,
 բայց Դեմետրին զեղխուածիները աւելի

աստիկ ըլլալով իր տղուն ջանքին յաղ- Բ. Ա
թեց . աղան զինքը գերուէ գեռ չխփըր-
կած՝ զեղխուիը զինքը տարաւ մահուան
ձեռքը մասնեց :

Հ . Գեմեարին Յունաստանէն հեռա-
ցած ատենը Մակեդոնացոց ով կիշխէր :

Պ . Քիչմը ատեն ընտրեցին Մակեդո- 286
նացիք Պիւռոս իշխանը Գեմեարին տե-
ղը , բայց անոր բռնութիւններուն ալ չիգի-
մանալով վաւրեցին , ու եկաւ տիրեց
Անտիգոնոս Գոնատոս Գեմեարի որդին .
որուն հայրը Ասիա երթալու ատեն զինքը
Յունաստանի մէկքանի քաղքըններուն
վերայ իշխան ըրեր էր : Աս Գոնատոսը
խաղաղուէ տիրեց Մակեդոնիոյ ինչվան
իր ծերուիը . և իրեն յաջորդեց որդին 232
Անտիգոնոս Գոսոն՝ Յունաց վերայ ալ
տիրելով :

ԿԱ

Հ . Անտիգոնոս Գոսոնին ատենը Յոյնք
ի՞նչ վիճակի մէջ էին :

Պ . Մեծին Ալեքսանդրի մեռնելէն
ետքը Սպարտացիք Վիկուրգոսի օրէնքը
ոտքի տակ առնելով զեղխուէ՝ հարրս-
տուէ ետևէ եղեր էին , և բոլոր քաղա-
քացիքը խեղճ աղքատուէ մէջ ինկած
էին . ուստի Ագիս Սպարտացոց թա-
գաւորներուն մէկը ուղեց նորոգել Վի-
կուրգոսի օրէնքները . բայց անօգուտ
աշխատելէն ետքը անողորմ մահուամբ
մեռաւ քաղաքացոց ձեռքէն : Ետքը Կը-

Ք. Ա զէոմէն Ագիտին քրոջը էրիկը նստաւ տե-
 223 ղը, և ուզէց առաջ ասնիլ Ագիտին խոր-
 հուրդը. նախ իրեն զէմ եղողները քաղ-
 քէն հեռացուց. ետքը ժողովեց ամէն մե-
 ծերն ու խնացուց որ կուզէ քաղաքացոյ
 օգուտ մը ընել իրենց ձեռքովը, ու առ-
 ջի կտրճուինին ու աղէկութիւնին ձեռք
 ձգել: Աս տեսակ խօսքերէն ետքը իր
 ամէն հարստութիւնը հասարակաց ձգեց:
 Անատենը ամէնքը՝ ալ աւելի օրինակէն
 համոզուելով քան թէ խօսքէն, իրեն
 հետեւեցան, ըսկտան պահել առջի կար-
 գերը: Կղէոմէն Ա. քայեցոյ զէմ պա-
 տերազմ բացաւ. Ա. քայեցիք չիկրնալով
 զէմ գնել, իրենց օգնուի կանչեցին Ան-
 ախիգոնոս Դոստնը: Իսկ Կղէոմէն որ ար-
 գէն քանի մը քաղաք առեր էր Արգոսի
 և Կորնթոսի մէջ, Անախիգոնոսէն ալ չի-
 վախնալով կուղէր առաջ երթալ. բայց
 Անախիգոնոսը զօրքը շացուց, գնաց
 գէպի Լակոնիա, ու Սեղասիոյ նեղուցին
 մէջ Կղէոմէնին հետ զարնուեցաւ, և
 շատ անգամ մէկզմէկու միասելէն ետքը
 Մակեդոնացոյ փաղանգը անանկ ու-
 ժով Լակեդեմոնացոյ վերան վազեց որ
 զանոնք իրենց ամրացած տեղէն դուրս
 ըրաւ, և Անախիգոնոս բոլորովին յաղ-
 թեց Սպարտացոյ: Անատենը Կղէոմէն
 խորհուրդ տուաւ Սպարտացոյ որ Ան-
 ախիգոնոսն ընդունին. բայց ինքը փա-
 խաւ Եգիպտոս ու չիդարձաւ ինչվան
 մահը: Անախիգոնոս մտաւ Լակեդեմոն

բարեկամի մը պէս, ըսելով թէ Կուզեմ յիշատակ թողուլ, որ ես առի Սպարտան ու ես ազատեցի Սպարտան: Ետքը իր խոստմունքը պահելով ազատ թողուց քաղաքն ու Մակեդոնիա դարձաւ:

ԿԲ

Հ. Անտիգոնոս Դոսոնէն ետքը ո՞վ նստաւ:

Պ. Փիլիպպոս՝ Գոնատասին պզտի որդին, որ առջի բերանը խեղքով ըսկսաւ կառավարել, բայց վերջերը յաջողուններովը հպարտացած՝ Կարբեգոնացոց հետ մէկ եղաւ՝ Հռոմայեցոց դէմ դնելու համար: Հռոմայեցիք նեղուէ մէջ ըլլալով քիչմը ատեն անոր միտքը չի հասկընալու զարկին, բայց երբոր հանգիստ առին Կարբեգոնացոց ձեռքէն, ուղեցին իրմէն վրէժ առնել, և Կուինտիոս Փլամինինոս անուշով մէկը եկաւ ինչպէս Մակեդոնիա. Փիլիպպոս դէմն ելաւ, սաստիկ պատերազմելով յաղթուէցաւ, և ձեռւընուն ազատելու համար պէտք եղաւ որ բոլոր նաւերը Հռոմայեցոց թողու, իր Դեմետր տղան ալ պատանդ տայ, և Յունաց քաղաքները որ պատերազմէն առաջ առեր էր՝ ետ դարձընէ:

Հ. Երբոր թողուց Փիլիպպոս Յունաց քաղաքները, ազատ մնացին:

Պ. Ազգային իրաւունքը մտածելով ազատ էին, բայց խիստ տկար ըլլալով և

220

197

Հռոմայեցոց օգնուէր կարօտ՝ կրվախէ-
 ին որ չըլլայ թէ Հռոմայեցիք բռնութիւն
 զիրենք տակերնին առնեն : Ան միջոցին
 Իսթմեան խաղին օրերն ըլլալով ամէնքը
 հոն կրթողվըւէին որ իմանան Հռոմայե-
 ցոց կամքը . Կուինտիոսն ալ հոն գնաց,
 և հրաման տուաւ որ մէկը ելլէ կանչէ
 թէ Հռոմայեցիք կուզեն որ Յոյներն ի-
 րենց օրէնքն ու ազատութիւնն պահեն :
 Աս երբոր լսեցին Յոյնք, ուրախութեն
 անանկ կանչվըւտեցին որ ծովը հեռու-
 էն արձագանգ ըրաւ, և ագռաւներն
 որ անմիջոցին կըթռչաէին՝ վար թափե-
 ցան . և մարդիկը զօրասէտին քովը վա-
 զեցին՝ շնորհակալ ըլլալով ձեռքը օտքը
 կըստօգնէին : Խեղճերը չէին գիտէր որ
 աս իրենց ազատութի խոստանալը ճամ-
 բայ մըն էր որ կըբանեցընէին Հռոմայե-
 ցիք բոլոր Յոյները իրենց տակն առնե-
 լու, և Մակեդոնացոց թագաւորութիւնը
 պզտիկցընէլու : Ասն զի Յոյնք տուանց
 վերջը մտածելու ամէնքը մէկզմէկէ գլուխ
 քաշած՝ ազատութե սիրով մէկզմէկու
 գէմ կուտիլ ըսկսան՝ ու աղաչել որ Հռո-
 մայեցիք իրենց օգնեն . ինչպէն որ մէկըզ-
 մէկու յաղթելու ջանքով ամէնքն ալ
 Հռոմայեցոց իշխանութե տակը մտան :

ԿԳ

Հ . Փիլիպպոս Հռոմայեցոցմէ յաղ-
 թըւէլէն ետքը ինչ գործքի հետ եղաւ :
 Պ . Երբոր Հռոմայեցիք հեռացան ան

կողմերէն, ըսկաւ գաղտուկ սրատերազ մի սափարաստու թի տեսնել. բայց սղոցը սպառնաւ սրտին ցաւէն շուտ մեռաւ: Այն զի Դեմետր իր սղան որ Հռոմ սրատանդ գնացեր էր, իր անուշ կերպերովը ազատու թի գտաւ, ետ դարձաւ. բայց հայրը վերան կասկածիլ ըսկաւ՝ տեսնելով որ ուրիշ կերպ կրխօսի Հռոմացեցոց վերայօք. և Դեմետր Հռոմացեցոց ու ժողովրդեան ալ սիրելի ըլլալով, Պերսէոս եղբայրն ալ վերան նախանձիլ ըսկըսաւ, գիտնալով որ անիկա կը թագաւորէ. և սա բանը արգիլելու համար վերան յանցանք ձգել կը ջանար, ինչիւն որ յարմար դիպուածով մը ուղածն եղաւ: Մէկ հանդիսի օր մը սովորուի էր որ Մակեդոնացոց զօրքը երկուք բաժնըւած՝ սպատերազմ կը ձեւացընէին. ան տարին երբոր հասաւ նոյն օրը, զօրքը երկուորդուցը հրամանին ուշ դնելով՝ մէկվմէկու դէմ առանց բերնի թրերով սպատերազմ ձեւացընելու ատեն՝ մարդ ալ վերաւորեցին, և Դեմետր յաղթող երեցաւ: Իրիկւան երկուքն ալ առանձին իրենց կողմը գանձուղներուն սեղան ըրին. Պերսէոս գաղտուկ մարդ խրկեց որ իմանայ թէ Դեմետրին սեղանը ի՞նչ կրխօսին. սա բանս Դեմետրի մարդիկնէրէն ոմանք իմացան ու զան մարդը ծեծեցին վաւերեցին: Դեմետր եղածը չըգիտնալով՝ սեղանէն ետքը ըսաւ թէ Երթանք Պերսէոսին սիրաը առնենք. բայց

Պերսէոսին լրատար ծեծողները վախնալ
 լով որ չըլլայ թէ փորձանքի մը հանդի-
 սին, գաղտուկ հագուստներուն տակը
 թուր ծածկած՝ անանկ գնացին : Պեր-
 սէոս խնայաւ, սենեկին դուռը դոցեց
 ու սրատուհանէն բարկացաւ, ըսելով թէ
 եկեր են գիշեր ատեն զինքը մեռցընելու,
 և երկրորդ օրը իր հօրը խնացուց : Հայ-
 րենին Փիլիպպոս իխատ նեղանալով ու
 ցաւելով գասաստանին ստաւ, որովհետեւ
 իր երկու տղոց մէկը պէտք էր որ դատա-
 պարտուի : Պերսէոս թէպէտ շատ սա-
 տանուք խօսեցաւ, բայց Դեմեարն ալ
 ինքզինքը արդարացուց : Փիլիպպոս չի-
 կըրնալով որոշել՝ ետեւէն էր շետակն ի-
 մանալու, և ան օրերը Դեմեարի յաջո-
 զու թի մը հանդիպելով ուզեց Իտալիա
 վախչիլ : Բայց իր սուտ բարեկամները
 խնացուցին թագաւորին : Անտենը Պեր-
 սէոսին վերայ տալովը՝ հայրը հրաման
 տուաւ որ սեղանին վերայ թուռաւո-
 րեն զԴեմեարը, ան ալ թոյնը առնելէն
 ետեւ՝ իր անմեղուէր և հօրը խաբէլուն
 վերայ ողբ ընելով մեռաւ : Ուշ խնայաւ
 Փիլիպպոս Դեմեարին անմեղութիւնը, և
 գիշեր ցորեկ ողբ ընելով քանի մը օրէն
 ինք ալ սրաին ցաւէն մեռաւ : յիշելով
 որ ինքը զրկեց ան անմեղ աղանձ Դեմեարը
 թուէն ու կեանքէն, և թողուց Պեր-
 սէոսին որ երկուքին ալ անարժան էր :

Հ. Պերսէոս կըրցաւ իր հօրը աթոռը Բ.Ա
ժառանգել :

Պ. Շատ կուսակիցներ ունենալով 179
բռնի նստաւ աթոռն ու տասնըմէկ տա-
րի թագաւորեց : Ետքի չորս տարին Հռո-
մաւեցոց գէմ պատերազմեցաւ, և վերջը
ազահուէ մը համար կորսընցուց յաղ-
թութիւր. վն ղի Պերսէոս քսանհազար
Գաղղիացի իրեն օգնական կանչեր էր
ըստակ խոստանալով, և երբոր անոնք
հասան՝ ըսկտաւ պակսեցընել ըստակը՝
պատճառներ բերելով: Գաղղիացիք բար-
կացան խաբւէնուն համար ու ետ դար-
ձան՝ աւրըշարկելով Մակեդոնիոյ մէկ
կողմը : Պերսէոս իմացաւ որ գէշ ըրաւ,
բայց անօգուտ : Եկաւ Պաւղոս Եմիլիո-
սը՝ անցաւ Ողիմպոս լեռը. Պիւգնային 168
քովը զարնըւեցան, ու Պերսէոս չարա-
չար յաղթըւած փախաւ Պելլա մայրո-
քաղաքը, և կուզէր ալ հեռու փախչիլ
բոլոր ընտանիքովը. բայց բռնըւեցաւ,
ու Հռոմ Պաւղոս Եմիլիոսին յաղթա-
նակին զարդ ըլլալէն ետև հոն անօթու-
թենէն ու սրաին նեղութէն մեռաւ :
Անասենը Հռոմայեցիք նորէն ազատ
թողուցին զՄակեդոնացիքը. բայց ետքը
նորէն իբր թէ մէջերնին ելած խռովուելը 148
խաղաղընելու համար՝ Մակեդոնիային
ազատութիւր վերուցին ու Հռոմայեցոց
գաւառ ըրին :



ԱՔԱՅԵՑՈՑ

ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

ԿԴ

Ք. Ա. Հ. Ա. քայեցոց աերու թիը ինչ կերպով ըսկաաւ :

Պ. Ա. քայիա Պեղոսոնեսի մէջ գաւառ մըն էր, և առջի ատենները իրեն արգարուէր և մեծ անուանը համար՝ ուրիշ քաղաքներ ալ հետը միաբանեցան. որոնք ծերակոյս մը որոշեր էին, և մէջերնին կարգ կանոն կըստահէին : Բայց Աղեքսանդրի ատենը, որ ամէն Յունաստան տակնուվերայ եղաւ, աս քաղաքներուն ալ մէյմէկ բռնաւորներ տիրեցին : Ետքը երբոր Ա. քայեցիք առջի ազատութիը ձեռք ձգել ուզեցին, Արատոս կարիճն որ զՍիկիոն իր հայրենիքը ազատեր էր Նիկոկղէս բռնաւորին ձեռքէն, եկաւ միաբանեցաւ Ա. քայեցոց հետ. անոր օրինակին հետևեցան ուրիշներն ալ, և Արատոսը իրենց գլուխ ընտրեցին՝ որ Պեղոսոնեսին գլխաւոր քաղաքը Կորնթոսը Անտիգոնոս Գոնատասին ձեռքէն ազատեց, ու շնորհեց Կորնթա-

244

ցոց իրենց քաղաքին բանալին : Անատենը Գ. Ա
 Կորնթացիք խիստ ուրախացած՝ Աքայ-
 եցոց հետ միաբանեցան : Ետքը Արա-
 տոս Պեղոստոնեսին ուրիշ շատ քաղաք-
 ներն ալ բռնաւորներուն ձեռքէն ազա-
 տեց , և խիստ սիրելի եղաւ բոլոր Յու-
 նաց . բայց սիալեցաւ որ Սպարտացոց
 դէմ ալ պատերազմ բացաւ :

Հ . Արատոս ինչ պատճառաւ Սպար-
 տացոց դէմ ելաւ :

Պ . Սպարտայի թագաւորը Կղէոմէն 225
 Աքայեցոց զօրապետ կոչելիլ ուզեց . Ա-
 րատոս չուզէրով աս պատիւը տալանոր ,
 մէջերնին պատերազմ բացւեցաւ : Յաղ-
 թըւեցաւ Արատոս և իրեն օգնուի կան-
 չեց զԱնտիգոնոս Դոսոն Մակեդոնիոյ
 թիւրը , որ եկաւ յաղթեց Սպարտա-
 ցոց Սելասիա քաղաքին քովն ու անուա-
 նեցաւ գլուխ դաշնակցաց : Անատենը
 Աքայեցիք ազատութիւնին նորէն կոր-
 սընցուցին , ինչպէս որ Անտիգոնոսի յա-
 ջորդը Փիլիպպոս Հռոմայեցոցմէ յաղ-
 թըւեցաւ : Ետքը Փիլոպեմէն իր ըրած
 յաղթուիներովը նորէն ձեռք ձգեց Ա-
 քայեցոց առջի փառքը և ազատուիլ :

Հ . Փիլոպեմէն ո՞վ էր :

Պ . Մեգաղուպօլսեցի կարիճ աղայ
 մըն էր , որ երբոր քսան տարւան էր՝
 Դոսոնին Սելասիային քով ըրած յաղ-
 թուն պատճառն ինքն եղաւ . և Դո-
 սոնին վկայութիւնովը մեծ փառքի հա-
 սաւ : Վասն զի Դոսոն պատերազմէն

Բ. Ա ետքը բարկանալ ձեացուց թէ նշան տալէն առաջ սրատերազմի ըսկսան : Չօրապետը վախնալով ըսաւ՝ թէ Մեգաղացի տղայ մը սրատճառ եղաւ : Անատենը Անաիգոնոս սրատասխանն տուաւ թէ Անիկա սրատճառ ըլլալով, զօրապետ ըլլալու արժանի եղաւ, և դու առ վախկոտ սրատասխանովք տղայ եղար : Ետքը Փիլոպեմեն Արատոսին տեղը Ա. քայեցոց զօրապետ եղաւ, ու Սպարտացոց Մաքանիդ բռնաւորին յաղթեց ու ըսպաննեց : Իսկ Սպարտացիք թէպէտ կը ջանային ազատ ըլլալու, բայց չիկրցան :

ԿԵ

Հ. Մաքանիդ բռնաւորին տեղը Սպարտացոց ո՛վ իշխեց :

206

Պ. Նաբիս բռնաւորը, որ խիստ ազահ ու անողորմ ըլլալուն, հնարեց մէկ քալող մեքենայ մը իր կնիկանը գէմքով. ուրուն կուրծքին վերայ սուր երկրթներ շարած էր, ու վերայէն փառաւոր լաթով գոցած : Երբոր Նաբիս մէկէ մը ըստակ կուզէր, ու անիկա չէր ուզէր տալ, Նաբիս կըսէր. Կարելի է որ ես զքեզ չիկրցնամ համոզել, բայց կըյուսամ որ իմ կինս քեզի խօսք կըհասկըցընէ : Աս ըսելով մեքենային ձեռքէն բռնած կըմօտեցընէր ան մարդուն, մեքենան ալ կըգըրկէր զան մարդն ու կըմեայընէր. ասանկով շատ մարդ մեռուց :

Ասիկայ ալ Ա. քայեցոց դէմ պատերազմ Բ. Ա.
բացաւ ու Փիլոպեմենէն յաղթըւեցաւ,
եւ քը իրեններէն ըսպաննըւեցաւ:

Հ. Փիլոպեմեն Սպարտացոց Նաբիս
բռնաւորին յաղթելէն ետքը ի՞նչ ըրաւ: 191

Պ. Գնաց Սպարտա, տեսաւ որ իրար
անցեր են, ժողովք ընել տուաւ ու հա-
մոզեց որ Ա. քայեցոց դաշնակից ըլլան:
Անոնք ալ Փիլոպեմենին աս ըրած աղէ-
կուէր համար Նաբիսին ամէն հարստու-
թիւները անոր տալ ուղեցին. Փիլոպեմեն
չնորհակալ եղաւ ու ըսաւ որ ան ըստակը
տան՝ չէթէ աղէկ մարդիկներուն՝ որ
առանց շահու ալ կօգնեն, հապա ան
գէշ մարդիկներուն, որ ըստակով կուր-
նան ու իրենց չիվընասեն: Աս տեսակ
արդար մտածուի ունեցողներէն ետքի-
նը եղաւ Փիլոպեմեն Յունաց մէջ: Ծն-
րուէր ատեն դիպուածով մը Մեսենա-
ցիք բանա գրին ու թոյն խմցուցին իրեն:
Ետքը Ա. քայեցեք զան մարդիկը պատ-
ժեցին, ու անանկ փառաւոր թաղում
ըրին Փիլոպեմենին որ աւելի յաղթանակ
կըկարծըւէր քան թէ թաղում:

Հ. Փիլոպեմենին մեռնելէն ետեւ Ա.
քայեցեք ի՞նչ վիճակ ունեցան:

Պ. Քիչմը ատեն ալ մնացին իրենց
ազատութիւնը մէջ. Աթէնքն ու Թեբէն
առաջուց բոլորովին ջնջուած էին. Կորն-
թոսն ու Սպարտան ալ Ա. քայեցոց դաշ-
նակից էին, բայց փառասիրութիւն ու ա-
դահութիւն իշխանները մէկզմէկու դէմ

- Ք. Ա ըսկասան կուուիլ. Հռոմայեցիք ալ զասոնք
 հանգարտելու հմբ խրկեցին Մուսմիոս
 հիւսպատոսը՝ որ եկաւ Աորնթոսը պա-
 147 շարեց. Աքայեցիք դէմէլան՝ իրենց կրնկ
 տիքը և տղաքը մօտ բարձր տեղ մը հա-
 նելով որ վկայ ըլլան իրենց քաջութիւնը :
 Եւ իրենց յաղթուէր վերայ խիստ ապա-
 հով ըլլալով, հետերնին կառքեր բերեր
 էին որ աւարները կրեն : Ասանկ յան-
 դուգն ու խառնափնդոր պատերազմ
 չէր եղած : Քիչմը ատեն դիմանալէն
 ետքը, Գիէոս իրենց առաջնորդը որ պա-
 տերազմին ալ պատճառ եղեր էր, փա-
 խաւ Մեգաղուպօլիս, և իր կինն ու
 տղաքը ըսպաննեց, տանը կրակ տուաւ,
 ետքն ալ ինքզինքը մեռուց : Մուսմիոսին
 հրամանով զօրքը ամէն փախչող մարդի-
 կը թրէ անցուցին . կիներն ու տղաքը
 ծախեցին . քաղքին ալ կրակ տուին ու
 146 պարխասները փլուցին : Ասոր վերայ բո-
 լոր Յոյները զարհուրած՝ Հռոմայեցոց
 հնազանդեցան, և Յունաստան Հռո-
 մայեցոց տէրուէր մէկ գաւառն եղաւ :





ԳԻՏԵԼԻՔ

42

Հ . Նին ատենը քուրմերը կուռքերէն ինչպէս պատգամ կը հանէին :

Պ . Շատ անգամ ըստակ վաստրկելու համար՝ իրենցմէ ձեացուցած երկդիմի խօսքեր կը զրուցէին . անանկ որ ժողովուրդը իր ուզածը հասկընայ , Բայց ետքը իրենք եղածին վերայ յարմարցընեն առջի ըսածնին : Ինչպէս էր ան մեծին Աղեքսանդրի հօրը Փիլիպպոսին համար ցուլին օրինակովը ելած պատգամը : Եւ որովհետեւ կուռքերուն հաւտալը մարդկային չարուէ գործք էր՝ անկարգ կիրքերնին հանգիստ կատարելու համար , Ա՞՞՞՞ ալ զիրենք երեսէ ձգած՝ թող կուտար որ շատ անգամ ալ սատանան իրենց իմացընէ եղած անցած բաները որ անով իրենց չարու թէր մէջ աւելի կը հաստատուէին : Բայց Քնի աշխարհք դալէն ետքը աս տեսակ պատգամները բոլոր դադրեցան :

Հ . Յունաստանի մէջ պատգամ հարցընելու տեղերը որոնք էին :

Պ . Ամէնէն անուանի էր Դեղփիս քաղաքին պատգամախօրը . որուն անունն

էր Պիւթեան Ապողոն : Դեղփիսին մօտ
առաջ փոս մը կար, ուսկից գոլորշիք մը
կելէր՝ կըսեն, որ այժերը ան հօտը առ-
նելով կըցաթկըռտէին, և մարդիկ ալ կը
թմրէին կըխենթենային : Անգամ մը հօ-
վիւ մը փորձի համար մօտեցաւ հոն ու
ըսկաւ խենթուխելառ բաներ խօսիլ.
Ետքը ուրիշներն ալ փորձեցին, և ան
գոլորշիքը անային բան մը սեպելով փո-
սին վըրայ եռոտանի մը գրին մորթով
ծածկած, ու քրմուհի մը որոշեցին որ
շատ զոհեր՝ ծամասպահութիւններ ընելէն
ետեւ ան եռոտանիին վըրայ կելէր ու
կըսկսէր դիւահարի պէս փրփրալ, գող-
գըղալ, մազերը անկըւիլ, ու խառնակ
բաներ խօսիլ. ուրիշ քրմուհիներ ալ ան
խօսքերը կարգի կըգնէին ու ոտանաւոր
կամ արձակ կըգրէին : Ետքը ան փոսին
վըրայ կռատուն շինեցին, ու ամէնքը
հոն կըվաղէին պատգամ հարցընելու.
Բայց քրմուհիները միայն ամիսը մէյմը
պատգամ կուտային :

Եպիւրոսի մէջ ալ Գողոնէ քղքին պատգա-
մախօսը անուանի էր, որ Արամազդ կը
կոչէր. երբեմն կաղնի ծառերուն մէջէն,
որ ծառերուն վերի ծայրերը գործիքներ
գրած ըլլալով, հովին փչելէն խառնակ-
ձայներ կելէին. երբեմն սղնձէ ամաններ
ղարնելով երբեմն ալ քուրմերուն բերնով:
Բէովտիայի մէջ ալ Տրոփոնիոս կիսաս-
տուածին պատգամախօսը կար : Հոն
պատգամ հարցընողը առաջ կըլուաց-

ւէր, զոհեր կրնէր, ու Լիթոս գետին
 ջրէն կրխորմէր որ ամէն բան մտնայ*,
 ետքը ձեռքը եփած մեղր առած՝ նեղ ու
 մուժ ճամբէ մը սանգուխներով մուժ
 այրի մը մէջ կիջնէր, ու գուռը հասածին
 պէս՝ յանկարծ ուժով մը ներս կը հըրուէր
 երեսն խլար կիյնար. ու հոն բաներ տես
 նեւէն ու լսեւէն ետե թմրած մարմըրած
 գուռա կելէր: Անաստեւը Յիշողութեան
 կուռքին աթուր կրնասեցընէին զինքն
 որ ան շփութութե ատեն տեսածներն ու
 լսածները միտքը գան:

Հ. Յոյնք ինչ տօներ ունէին:

Պ. Ամէն քաղաքի մէջ մասնաւոր տօ
 ներ կային. բայց երևելի էին Աթենա
 ցոց իրեք տօները: Ի. Համաթենական,
 Աթենաս չածուհիին՝ որ Աթէնքին
 սրաշատան կուռքն էր: Ա տօնին ատենը
 օրերով խաղեր կրխաղային ու թափօր
 ներ կրնէին: Բ. Սարանգարամե տական,
 որ Դիօնիս կամ Բաքոս՝ գինիի չաստու
 ծոյն օրը կերպ կերպ այլանդակ հագուստ
 ներ կը հագնէին ու բոլոր քաղաքը գի
 նովցած պարտելով ամէն անկարգութի
 կրնէին: Գ. Ելեւսեան խորհրդատօնքը՝
 առջի երկուքէն ալ մեծ, որ կը լար ինը
 օր Ելեւսիս քաղաքը Դեմեարէ չաստու
 ծուհւոյն համար, որուն համար կըսեն
 թէ իր Պերսեփոնէ աղջիկը վնասուելու
 ատեն Ելեւսիս եկեր ու քաղաքացոց սո

* Լիթոս հոռացոսին ըսել է:

վին ցորենով օգներ է, և աղէկ օրէնքներ դրեր է եղեր: Անորհամար պարտք կրսեպէին Աթենացիք իրենց զաւկրները ան տօնին ընծայելու. և ընծայւողները Իդիս գետին մէջ լուացւելէն՝ զօհեր ընելէն ու ինչվան ատեն մը ժուժկալուք օրէնքները սորվելէն ետև կրմբանէին կռատունը, ուր գիշեր ատեն քուրմերը ստկալի բաներ կրձևացընէին, երբեմն լոյս՝ երբեմն մութ, գետնաշարժներ, որոմունքներ, ևն. և ընծայւողները ասով դողով մտիկ կընէին ան օրէնքներուն կարգացմունքը. և ուրիշ ինչ սատանայական բաներ ալ որ կընէին, ընծայւողներուն արգիլած էր որ մէկու մը չըսեն, թէ չէ՛ կրմեացընէին զանոնք: Եւ աստօ՛ր հինգ տարին մէյմը կըլլար, ինչվան որ մեծն Թէոգոս բոլորովին դադրեցուց:

ԿԵ

Հ. Աշխըրքիս եօթը հրաշալիքը որոնք են:

Պ. Թ. Սողոմոնի տաճարը: Թ. Եփեսոսի մէջ Անահտայ կռատունը, որ կտեսիփոն ճարտարապետն ըսկասու, և ուրիշները ըմնցուցին երկուհարիւր քսան տարիէն: Հարիւր քսանը եօթը սիւն կար մէջը մարմարիոնէ՛ վաթսուն ռանաչափ բարձր: Աղէքսանդր Մակեդոնացիին ծնած օրը Երոստրատոս անունով մէկը այրեց աս կռատունը՝ ուղեւով որ իր ա-

նունը մնայ աշխարհիս վերայ : Դ . Բաբել-
 լոնի պարիսպն ու կախաղանաւոր բու-
 րաստանը : Դ . Հռոգոսի նաւահանգրս-
 տին պղնձէ արձանը : Է . Մաւսու թա-
 գաւորին գերեզմանը՝ վաթսուենիրէք
 ոտնաչափ երկայն , լայնուին ալ քիչ սրա
 կաս . բարձրուին երսուենըվէց ու կէս ոտ
 նաչափ , և չորս դին երսուենըվէց սիւն :
 Չորս կողմը չորս երևելի վարպետներ
 բանեցան . Ետքը շէնքին վերայ բուրգ մը
 շինեցին , անոր վերան ալ չորս ձիով կառք
 մը քարէ փորած : Արտեմեսիա կարիա-
 ցոց թագուհին ըսկտաւ շինել աս գե-
 րեզմանը իր Մաւսու էրկանը համար , և
 ինքն ալ մեռնելով ուրիշները լմնցուցին ,
 ու քիչ ատենէն կործանեցաւ : Դ . Արա-
 մազդայ արձանը Ողիմպիային մօտ , բարձ-
 րուին վաթսուեն ոտնաչափ , լայնութին
 ալ համեմատ , կէսը ոսկի՝ կէսը փղոսկր :
 Փիղիաս երևելի արձանագործը շինեց .
 որ դեռ աղէկ մը չիլըմընցած՝ ինքը կը-
 պահւըտէր ու մտիկ կընէր թէ անցնող
 դարձող ինչ պակսուի կըգըտնեն վերան ,
 որ իմանայ ու շահէ : Ետքը արձանին
 տակն ալ գրեց Արամազդայ բերնէն թէ
 Փիղիասը շինեց զիս : Է . Եգիպտոսի բուր-
 գերը : Ը . Աղէքսանդրիայի մէջ Փարոս
 կղզիին աշտարակն որ Պաղոմէոս Եղբայ-
 րասէրը շինեց՝ գիշերը նաւերուն լոյս
 տալու համար՝ ձերմակ մարմարիոնէ ,
 ութը յարկով , ձևը քառակուսի , և
 բարձրութիւնը իրէքհարիւր կանգուն ,

անանկ որ ինչպէս հարիւր մղոն հեռուէն
 լոյսը կրտեսներէր կրտէն: Թ. Շամիրամայ
 հայաստանի լեռներէն բերած միակտուր
 քարը՝ հարիւր յիսուն ոտք երկայն,
 քսանըչորս ոտք լայն: Ժ. Հերակլիա
 քաղաքին մեծ Թատրոնը մէկ արձանի
 մը գլխուն վըրայ կեցուցած: Ժն. Կա
 սիատլիոնի կռատունը, ևն:

Ասոնց Թիւր Եօթնէն շատ ըլլալուն հա
 մար, որոնք որ Եօթը Թիւր պահէլ կու
 ղեն, ասոնցմէ հաւնածնին միայն Եօթին
 մէջը կրտեսսին: Բայց համրանքին սրոշ
 մունքը մարդիկներուն մեծագործունը
 չիկըրնար պատկերնել:





ԿԱՐՔԵԴՈՆԱՅՈՑ

ՏԵՐՈՒԹԻՒՆԸ

ԿԸ

Հ. ԿԱՐՔԵԴՈՆԱՅՈՒՔ ԸՆԴ ԿԱՐՔ

Պ. Կարքեդոնացիք որ Կարթագինեցիք ալ կըսուին, Տիւրացոցմէ առաջ եկած են. վասն զի քսէն ութ հարիւր քսուսունըվէց տարի առաջ Դիդէ Թագուհին իր եղբօրը Պիգմալիոնի Տիւրացոց Թագաւորին ձեռքէն փախաւ ու դնաց Ափրիկէի մէջ Կարքեդոնը շինեց, որ քիչ ատենի մէջ առաջ եկաւ. նաւերը շատցուց, վաճառականութիւն, հարստութիւն, և զինուորութիւն ծաղկեցուց, և ուրիշ Թագաւորութիւններու դէմ դնել ըսկսաւ. Սպանիայի մեծ մասին անրեց ու բոլոր

Ք. Ա անոնց հարստուիր առաւ : Իսկ իր երկրին վաճառքը ոսկի ու արծաթ էին որ հանքերէն կը հանէր :

Հ. Կարբէգոնացոց ըրած երևելի պատերազմները որոնք են :

Պ. Առջինը եղաւ Սիկիլիացոց հետ ըրած պատերազմին : Երկրորդը հառմայեցոց դէմ, որ Պունիկեան կըսէ :

Հ. Կարբէգոնացիք ինչ պատճառաւ Սիկիլիացոց դէմ ելան :

484

Պ. Խիստ մեծ նալով ուղեցին որ Սիկիլիային ալ տիրեն. ուստի խրկեցին Գիսգոնին աղան Ամիլիարը իրեք հարիւր հազար զօրքով որ գնաց պաշարեց Հիմերա քղքը : Անոնք նեղն ինկած՝ իմացուցին Սիրակուսայի Գեղոն թաղաւորին : Գեղոն մէկէն ճամբայ ինկաւ, ու խնայալով թէ Ամիլիար դաշնակից զօրքի կըսպասէ՝ սատանուէ Ամիլիարին ուզած ինչափ զօրք ինքը խրկեց, որ անոր ուզած ստենը հասան Կարբէգոնացոց բանակը, անոնք ալ խաբւելով ընդունեցան : Անատենը ասոնք յանկարծ Ամիլիարին վերայ վաղեցին ըսպաննեցին, ու նաւերուն ալ կրակ տուին. Գեղոնն ալ վերայ հասաւ անոնց շփոթած ստենը սասաիկ ջարդ տուաւ ու շատմը գերի ըրաւ : Կարբէգոնացիք նեղը ինկած՝ Գեղոնին խիստ պայմանները յանձն առնելով մէջերնին դաշինք գրին :

Հ. Ամիլկարին ըսպաններուէն ետքը
 Կարբէգոնացիք կըրցան նորէն Սիկիլիա
 ոտք կոխել :

Պ. Սիրահուսային առջև Աթենացոց 412
 հանդիպած կոտորածէն ետև՝ Սեգես-
 տացիք Աթենացոց դաշնակիցները վախ-
 նալով ուրիշ Սիկիլիացիներէն, օգնութի
 խնդրեցին Կարբէգոնէն : Կարբէգոնա-
 ցիք ալ առջի նախատանոց ռիւր հանել
 ուզելով Ամիլկարին թողը Աննիբալը
 խրկեցին, որ եկաւ նորէն սպառեց Հի-
 մերա քաղաքը, առաւ ու կործանեց. և
 իրէքհազար գերի բռնեց անոնցմէ, սաս-
 տիկ տանջանքներով ջարդեց հոն տեղը,
 ուր որ իր սպալը ըսպաններ էին : Աս-
 յաղթութիով հպարտացած Կարբէգո-
 նացիք, ուզեցին արեւ բոլոր Սիկիլիայ-
 ին, անորհամար գնացին Ակրագանդ-
 հարուստ քաղաքին վերայ, ութը ամիս
 սպառեցին. քաղաքացիք ալ սովուն չի-
 դիմանալով ծերերն ու հիւանդները թա-
 ղուցին փախան : Անատենը Կարբէգո-
 նացիք մտան ջարդեցին զամէնքը ու շա-
 ոսի արծաթ կողոպտեցին տարին : Ա-
 նոնց մէջն էր Փաղերեան ցուլն ալ՝ որ
 Ակրագանդին առջի բռնաւորներուն մէ-
 կը շիներ էր : Առաջին Գիոնեսիոս Սի-
 րահուսայի բռնաւորը սլարապ տեղը գէմ
 գնել ջանալէն ետքը, անոնց գրած դա-
 շինքներուն սլայմանները յանձն առաւ :

Հ. Սիկիլիացիք Աննիբաղէն յաղթը
ւէլէն ետքը կըրցա՞ն նորէն գլուխ քա-
շէլ :

404

Պ. Սիկիլիացիք կատղած՝ գաղտուկ
պատրաստըւեցան ռիսերնին հանելու .
ետքը որ մը յանկարծ Գիոնեսիոս հրա-
ման տուաւ որ Սիկիլիայի մէջ գտնըւած
Կարքեգոնացիները բոլոր ըսպաննեն :
Կարքեգոնացոց Իմիլիոն զօրավարը մէ-
կէն վըրայ հասաւ, բոլոր Գիոնեսիոսին
տիրած երկիրները նորէն ետ առաւ ու
զինքն ալ Սիրակուսա փախուց . և ինքը
մէհեանները կողոպտեց, գերեզմանները
կործանեց . մանաւանդ Գեղոնինը՝ որ
կըկարծէին թէ անոր գպչել չըլլար : Աս
միջոցիս Կարքեգոնացոց զօրացը մէջ սաս-
տիկ ժանտամահ ինկաւ . Գիոնեսիոս ալ
ատեն դտաւ, վըրանին վազեց՝ մէծ ջարդ
տուաւ . նաւերուն ալ կէսին կրակ տը-
ւաւ, կէսն ալ կտորտեց : Իմիլիոն յու-
սահատած՝ խնդրեց Գիոնեսիոսէն որ
ազատ թողու զերենք որ երթան . Գիո-
նեսիոս Կարքեգոնի բուն բնակիչներուն
միայն հրաման տուաւ . Իմիլիոն ալ անոնց
մէջ խառնըւած փախաւ : Կարքեգոնա-
ցիք երբոր իմացան եղածը՝ սաստիկ յու-
սահատու թեան մէջ ինկան : Իմիլիոն ալ
տրամուէն չիգնաց իր տունը . առանձին
տեղ մը քաշւած՝ յուսահատու թէն մե-
ռաւ :

Հ. Իմիկոնին մեռնելէն ետքը կար- Ք. Ա
քեդոնացիք կըրցա՞ն նորէն Սիկիլիացոց
դէմ ելլել :

Պ. Սիկիլիացոց մէջ եղած խռովուլն 348
իրենց առիթ առնելով Մագոն զօրապե-
տը վրանին խրկեցին, բայց օգուտ մը չե-
տեսան : Վասն զի առջև Դիոնեսիոս բռ-
նաւորը մեռնելէն ետև՝ փոքրն Դիոնե-
սիոս աթոռէն վաւերացեցաւ, որ շատ
արիւն ընելով նորէն գնաց նստաւ : Աս
միջոցիս Մագոնն ալ հասաւ ու ըսկաւ
տիրել Սիկիլիային : Սիրակուսացիք մեծ
նեղուէ մէջ ըլլալնուն՝ կորնթացոց ա-
պաւինեցան, որոնք կորնթոսէն գնացեր
Սիկիլիա կըբնակէին : Անատենը Տիմո-
լէոն կորնթացին գնաց հազար զինուո-
րով, նեղը խոթեց Դիոնեսիոսը, որ բեր-
դը քաշած ըլլալով չիկըրցաւ դէմ գնել
ու բերդը ամէն բանով անոց ձեռքը յանձ-
նեց : Մագոնն ալ իր զօրացը մէջ շատ
Յոյներ սեննալուն, վախցաւ որ կորն-
թացոց հետ կըմիանան, ուստի կարբե-
դոն դարձաւ, քննուէ կանչուեցաւ, ու
ամօթէն ինքզինքն ըսպաննեց : Ետքը
կարբեդոնացիք խրկեցին ուրիշ նաւա-
տորմիղ մը առջինէն մեծ, Տիմոլէոն վեց
եօթը հազար զօրքով եօթանասուն հա-
զարէն աւելի կարբեդոնացոց դէմն ելաւ,
գիտնալով որ կարգը բազմուէն աւելի
բան կըտեսնէ, ու յաղթեց, շատ կողո-
պուտ առնելէն ետև հաշտութի ըրին
մեծ փառքով : Ետքը Տիմոլէոն քաշու-

Ք. Ա յաւ առանձին կեանք անցընելու հա-
մար . թէպէտ ժողովուրդը զինքը միշտ
կրպատուէին . մեռնելէն ետքն ալ խիստ
մեծ թաղման հանդէս ըրին :

Հ

Հ . Տիմոէոնին մեռնելէն ետքը կար-
քեդոնացիք Սիկիլիացոց հետ ըրած հաշ-
տուէր մէջ մնացին :

319

Պ. Չէ . վասն զի Ագաթոկոս սիկիլիա-
ցին որ կարքեդոնացոց ձեռք դնելովը
առաջ եկեր ու Սիրակուսայի մէջ մեծ
իշխան եղեր էր , ըսկսաւ իրեն բարերար
ներուն դէմ ելլել : կարքեդոնացիք բար-
կացած՝ զօրք հանեցին որ Սիրակուսան
պաշարեն : Ագաթոկոս մինակ մնալով իր
անդթուիններուն համար , և տեսնելով
որ չիկրնար դէմ դնել , միտքը դրաւ որ
երթայ Ափրիկէի մէջ պատերազմի . և
աս յանդուգն խորհուրդը մարդու չի-
յայտնած՝ զօրք ժողովեց ու նաւատորմի-
ղով ճամբայ ելաւ : Երբոր հասան Ա-
փրիկէ , անատենը յայտնեց՝ ըսաւ թէ
Չեղիս անպիտան մարդիկներու հետ պա-
տերազմելու եկանք , և շատ կողոսուտ
պիտի առնենք : Աս տեսակ խօսքերէն
երբոր զօրքը սիրա առաւ , անատենը Ա-
գաթոկոս նաւատորմիդն ալ այրեց , որ
յուսահատած պատերազմին՝ կամ մեռ-
նելու կամ յաղթելու մտքով : Ասան-
կով յանկարծ վազեց կարքեդոնին վը-

բայ, մէկէն տիրեց քաղքին ու շատ կո-
ղոսուա ձեռք ձգեց: Կարբեգոնացիք
խիսա խռովեցան՝ կարծելով թէ իրենց
զօրքը բոլորովին ջարդըւեր է, ու նորէն
զօրք հանեցին, բայց Ագաթոկղ զամէնքն
աւջարդեց: Սիրահուսացիք աս բաներս
լսելով սիրտ սուին, յանկարծ գիշեր մը
վազեցին Կարբեգոնացոց վըրայ, շատ
մարդ ըսպաննեցին, և զօրապետնին աւ
բռնեցին սաստիկ տանջելով մեռուցին:
Ագաթոկղ կարծելով թէ աւ ամէն յա-
ջողութի իր ձեռքն է, նորէն Սիկիլիա
անցաւ. բայց խաբւեցաւ. վն զի իր մնա-
ցած զօրքերն ըսկսան յաղթըւիլ. և թէ-
պէտ ինքը նորէն ետ դարձաւ, բայց չի-
կրնալով բան առաջ տանիլ, վատութի
զօրքը թողուց ու Սիրահուսա փախաւ:
Իր զօրքն աւ նեղացած որ զիրենք թշնա-
մւոյն ձեռքը մատնեց, Ագաթոկղին տը-
ղաքը բռնեցին ըսպաննեցին, ու իրենք
զիրենք թշնամւոյն ձեռքը մատնեցին:
Քիչ ատենէն Ագաթոկղն աւ անօրէնութի
անցուցած կեանքը թշուառութի ընն-
ցուց:

Հ. Ագաթոկղ բռնաւորին մեռնելէն
ետքը ինչ երևեւի պատերազմ ըրին Կար-
բեգոնացիք:

Պ. Պունիկեան պատերազմին ձեռք 280
զարկին, ու զելով սրաշապանէլ ուրիշ տե-
րութիներու՝ հռոմայեցոց դէմ. և աս
պատերազմը քշեց հարիւրտասնըութը
տարի. ետքը Սկիպիոն հռոմայեցին

Ք. Ա. 1/45 Կարբէզոնը կործանեց, տէրու ինն լեր-
ցուց, 7/42 տարի գիմանալէն ետքը :

Տ. Կարբէզոն Սկիպիոնին ձեռքով
կործանուելէն ետքը կըրցաւ նորէն վերայ
դալ :

Պ. Յուլիոս Կեսար նորէն շինեց զար-
դարեց Կարբէզոնը, որ Ափրիկէի մայ-
րաքաղաք սեպուեցաւ, ու գիմացաւ ինչ
վան Էօթներորդ դարը : Անկէ ետքը
ինչվան հիմա Մահմետականք տիրած
են, որոնք քրիստոնէութիւն ալ, որ առաջ
ծաղկած էր, բոլորովին ջնջեցին :

ԳԻՏԵԼԻՔ

ՀԱ

Տ. Կարբէզոնայիք ի՞նչ կրօնք ու-
նէին :

Պ. Կուռք կըսաշտէին, և անանկ
ջերմեռանդ էին կուռքերուն որ առանց
զոհեր ընելու պատերազմ չէին ըսկսեր,
լմընցընելէն ետքն ալ մէկէն կուռքերուն
շնորհակալութիւներ կընէին : Ուրիշի հետ
գաշինք դնելու ատեն հինգ վեց աս-
տուածներ վկայ կըկանջէին : Իրենց գըլ-
խաւոր աստուածներն Երկուք էին. մէ-
մը Ուռանիա, որ Երկնային ըսել է, ք
Լուսինը. երկրորդը Կռոնոս, որ սք գրոց
մէջ Մողոք կըսուի, որուն առջին մարդ

կըզոհէին . մահաւանդ մեծ դժբաղդու-
 թի մը հանդիպած տտեն մեծամեծներն
 իրենց որդիքը զոհ կընէին որ կուռ-
 քերուն բարկուելը անցնի : Շատ անգամ
 հասարակ ժողովուրդն ալ փորձանքներէ
 ազատ մնալու համար տղաքնին զոհ կը-
 նէին . և տղայ չունեցողը տղաքսաթի մը
 տղայ կըզընէր ու կըզոհէր : Իսկ զոհ ը-
 նելու համար երբեմն կըրակի մէջ կըձըգէին
 և երբեմն ալ Առոնոսին սղնձէ արձանը
 կարմրցուցած՝ տղաքը մէջը կըզոցէին .
 և անոնց կանչվըռաւելու ձայնը չիլտելու
 համար թմբուկներ սրինգներ կըզարնէ-
 ին : Երբեմն ալ միայն բոցին վըրայէն
 կանցընէին տղաքնին . բայց անանկով ալ
 շատ անգամ կըմեռնէին : Թէպէտ ու-
 ըիշ շատ կուսալաշտ ազգերու մէջ ալ
 կար աս մտրդաղոհը , բայց Արքեդոնա-
 ցոց մէջ խիստ հասարակ եղած էր . եր-
 բեմն հարիւրն ու երկուհարիւրը մէկէն
 կընէին : Բայց աս բաներուս վըրայ պէտք
 չէ զարմանալ , վն զի ովոր շիտակ ճամ-
 բէն դուրս ինկած է , տեսակ տեսակ
 մտքէ չանցած փոսերու մէջ կըընայ իյ-
 նալ :

Հ . Արքեդոնացոց կառավարութիւն
 ինչ կերպ էր :

Պ . Արքեդոնացիք բնութեան գուլթ ,
 կեղծաւոր , բայց խորագէտ ու բարակա-
 միտ ըլլալով խառն սէտուի ընտրեր էին
 իրենց . նո կէամը ազնուապետուի , կէս-
 մը ռամկապետութի : Երկու գլխաւոր

դատաւոր ունէին՝ Սոփեա անուանով, որ
 տարւէ տարի կըփոխուէին. և ազնուա-
 կաններուն ձեռքովը կըլլար ամէն խոր-
 հուրդները, դատաստաններուն վճիռ-
 ները, պատերազմի որոշմունքները, ևն :
 Թէոր ասոնք իրարու մէջ միաբան ըլլայ-
 ին՝ վճիռը հաստատ էր. բայց երբոր կէ-
 սը աս՝ կէսը ան կըսէին, Ժողովուրդը
 կորոշէր : Ան ազնուականներուն մէջէն
 ալ հարիւր չորս հոգի որոշած էին գըւ-
 խաւոր, որոնց իշխանուիր մշտնջենա-
 ւոր էր, բայց Աննիբաղ անոնց իշխանու-
 թիը փոխեց տարեկան ըրաւ. վն զի կա-
 մաց կամաց անկարգուինները շատցնե-
 լով՝ մէյմէկ բռնաւոր դարձեր էին :





Մ Ա Ս Ն Դ

Հ Ռ Ո Մ Ա Յ Ե Յ Ո Յ

Թ Ա Գ Ա Ի Ո Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ը

Հ Բ

Հ. Հ Ռ Ո Մ Ա Յ Ե Յ Ո Յ ա էր ու թիւնն Գ. Ա
ուսկից կըսկըսի :

Պ. Իրենց մատենագիրները կըսեն՝ թէ 1203
Տրոյիայի պատերազմէն ետքը Անքիսէսի
աղան Ենէասը Իտալիայի կողմերն ան-
ցաւ, ու Լատիններուն կատինոս թա-
գաւորին փեսայ ըլլալով՝ անոր աեղը յա-
ջորդեց : Աս Ենէասին ցեղէն կուգայ
Հռոմուլոս թագաւորն որ Հռոմ քա-
ղաքը շինեց :

Հ. Ո՛վ էր Հռոմուլոս :

Պ. Պրոկաս՝ որ Ենէասէն ետև տաս-
ներչորսերորդ թագաւորն էր, երկու
տղայ ունեցաւ՝ Նուվիտոր ու Ամուլոս :

Ք. Ա և մեռնելու ատենը իրեն յաջորդ ըն-
 800 արեց Նումիատորն որ անդրանիկն էր :
 Բայց Ամուլիոս ուրիշներուն կաշառք
 կերպրնելով ձգեց Նումիատորն ու ինքը
 անոր տեղն անցաւ . և Թագաւորուիը
 միշտ իր ցեղին մնալու համար՝ Նումի-
 տորին տղուն վերայ յանցանք մը ձգելով
 ըսպաննեց . Բէա Սիլվիա անոր աղջիկն
 ալ բռնի Աեստեան կուսանացը մէջ խո-
 թեց : Իսկ Սիլվիան գաղտուկ զօրասպե-
 տի մը հետ կարգըւեցաւ ու երկուորեակ
 տղայ ծնաւ՝ Հռեմոսն ու Հռոմուլոսը :
 Ամուլիոս լսածին պէս՝ զՍիլվիան բանա-
 դրաւ . տղաքն ալ Տիբերիս գետը ձգել
 սոււաւ : Թագաւորին հովիւը Փաւս-
 տուլոս զանոնք գանալով, սուն տարաւ
 մեծցուց : Ոմանք կրսեն թէ գայլ մը վեր-
 ցուց զիրենք՝ և ասեն մը ծառի տակ իր
 կաթովը կերակրեց, ետքը հովիւները
 գտան մեծցուցին : Օր մը աս երկուքը
 որսորդութի ընելու ստեն բռնըւեցան .
 Հռոմուլոս փախաւ, բայց զՀռեմոսը
 Թագաւորին տարին՝ Նումիատորին երկիրը
 կաւրըշարկէ ըսելով . Թագաւորն ալ զին-
 քը Նումիատորին խրկեց : Անասենը Փաւս-
 տուլոս հովիւը խնայուց Հռոմուլոսին
 անոր ցեղը . Նումիատորն ալ երբոր խնայաւ
 անոնց ինչ մարդ ըլլանին, հետեւին
 մէկտեղ Ամուլիոսին վերայ վազեց ըս-
 պաննեց . Ժողովոգեան ալ հասկըցրնե-
 լով աս զխպուածները, ինքը նորէն Թա-
 գաւոր նստաւ :

Հ. Հռոմուլոս Հռոմայեցոց տէրուին
ինչպէս բսկաւ :

Պ. Առջի բերանը երկու եղբարք մէկ
եղած, որ գեաին մէջն որ ձրգւեր էին՝
անոր քովը քաղաք մը շինել ուզեցին .
բայց մէջերնին կռիւ ելաւ թէ ով իշխե-
ան քաղքին վերայ : Նուժիտոր սրապեր-
նին խրատ տուաւ իրենց որ թռչուննե-
րուն թռչելէն խմանան աստուածներուն
կամքը . ուստի երկուքն ալ ելան մէյմէկ
լեռներու վերայ . Հռեմոս վեց անգղ
տեսաւ . ետքը Հռոմուլոսն ալ տասեր-
կուք տեսաւ . անոր համար ժողովրդին
կէսը Հռեմոսին կողմն անցաւ՝ առաջ
տեսնելուն համար, կէսն ալ Հռոմուլ-
ոսին՝ շատ թռչուն տեսնելուն համար :
Առիւր տաքցաւ, Հռեմոսն ալ սրտե-
րազմին մէջ մեռաւ : Ոմանք ալ կրսեն
թէ Հռեմոս՝ Հռոմուլոսին քաղքին չորս
դին փորել տուած խրամին վերայէն
ցաթկեց՝ արհամարհելով անոր պղտրկու-
թիւր . անոր համար Հռոմուլոս կատուե-
ցաւ, զարկաւ ըսպաննեց զՀռեմոսը . և
ինքը տասնըութը տարւան մինակ ինք-
նիշխան մնալով քաղաքը շինեց քառա-
կուսի ձևով : Ետքը բնակիչները շատցը-
նելու համար հրաման հանեց որ յան-
ցաւոր փախստական մարդիկ իր քաղաքը
գան : Անանկով շուտ մը լցեցաւ քա-
ղաքը ամէն տեսակ գէշ մարդիկներով :

Հ. Հստմուշու ի՞նչ կարգ դրաւ իր շինած քաղքին մէջ :

Պ. Նախ վարսէտուածի բանեցընելով ժողովրդեան կամքին թողուց՝ որ ամէն բանէն առաջ իրենց թագաւոր մը ընարեն : Անոնք ալ զինքն ուզեցին . Հստմուշու սիրով յանձն առաւ , ու ետքը զօրքին և հաւատքին ալ գլուխ ինքզինքը որոշեց : Արդ դրաւ որ երբոր ինքը գուրս կելլէ , քովի զօրքէն իղաա՛ տասւերկու դահիճ ալ առջևէն երթան ձեռվընին կացին բռնած : Հարիւր հոգի խելացիներէն ու կարիճներէն խորհրդական ընարեց որ Ծէրախոյս ըսեցան . և անոնց ցեղը Պասարիկ կըսէին՝ որ Հստմայեցոց մէջ ազնուականներն էին և քաղաքական ու զինուորական բաները կը հոգային : Գլուխ մըն ալ դրաւ իրենց որ իր փոխանորդը կըսեալէր հսն չեղած ատենը : Իսկ հասարակ ժողովրդեան իշխանուածի տուաւ դատաւորներ ընարելու , օրէնք հաստատելու և պատերազմ կամ հաշտուածի ուղեւու : Բայց որոշելը ծերակուտին թողուց : Օրէէն ալ դրաւ որ առանց հաւասմաներուն ու լերդահմաներուն հարցընելու՝ բանի մը ձեռք չիզարնըւի , և ոչ իշխան մը ընարըւի : Կրիկմարդկանց ինչվան ըսպաննելու իշխանուածի տուաւ իրենց կնոջ ու տղոցը

վերայ : Հարիւր զինուորի գլուխ մէյմէկ
 հարիւրապետ դրաւ, երկուք ալ դատա-
 ւոր . մէկ քուրմ մըն ալ անոնց զոհերն
 ընելու համար :

Հ . Հռոմայեցիք որովհետև ասդիէն
 անդիէն փախած ժողովրւած մարդիկ էին
 ի՞նչ կերպով կրրցան տունտեղ ըլլալ :

Պ . Հռոմուլոս ուզելով որ ամէնքը
 կարգըին՝ տղոցտէր ըլլան, դեսպան խըր-
 կեց Սաբինեանց , որ իրենց մօտ կարիճ
 ազգ մըն էին , և ուզեց որ անոնք Հռո-
 մայեցոց հետ խնամու թի ընեն . Սաբի-
 նեանք ծաղր ըրին դեսպանները : Հռո-
 մուլոս անոնցմէ սրաին ոխը հանելու հա-
 մար ձայն հանեց թէ Պոսիդոն կուռքին
 մեծ տօն պիտի կատարեմ . ուստի չորս
 դիէն ժողովուրդները Հռոմ թափե-
 ցան , Սաբինեանք ալ մէկտեղ : Հանգե-
 սին խաղերն ըսկսելուն պէս Հռոմայեցի
 կարիճները թուր ձեռվընին վազեցին՝
 Սաբինեանց աղջիկները յափշտակեցին ,
 փախան : Աս բանիս վերայ կատուելով
 Սաբինեանց Դատիոս թագաւորը՝ շատ
 զօրքով Հռոմին վերան եկաւ : Ան միջո-
 ցին Կապիտոլիոնի գլխաւոր բերդասա-
 նին Տարսուէոսի աղջիկը ջուր բերելու հա-
 մար դուրս ելեր էր : Բռնեցին զինքն
 ու կաշառքով քաղքին դուռն իրենց
 բանալ տուին , և աղջիկն ըսպաննեցին՝
 վահաննին վերան նետելով որ չիմացւի
 ըրած խարդախութիւնին . ու սաստիկ
 պատերազմիլ ըսկսան : Բայց երկու կող-

Բ. Ա

մէն ալ շատ մարդ ջարդուելէն ետքը, հռոմայեցոց յափշտակած կնիկները մազերնին ցրցըքնած պատերազմողներուն մէջ նետուեցան կանչվաւելով. մէկը հօրը կաղաչէ, մէկալն էրկանը՝ որ չքսպաննէն մէկզմէկ, այնչափ որ պատերազմողները չիղիմացան դադրեցան: Հռոմուլոս ու Դաաիոսն ալ հաշարուեցան դաշինք գրին որ երկուքնին մէկատեղ հռոմին մէջը թագաւորեն: Ուստի հարիւր հօգի ալ Սաբինեանցմէ ծերակոյտ ընտրուեցան. և որոշեցին որ քաղաքը հռոմուլոսին անունովը կոչուի, և ժողովուրդը Սաբինեանց Կուրէս մայրաքաղաքին անունովը Կուիրացիք ըուին:

Հ. Հռոմուլոսին ու Դաաիոսին մէկատեղ թագաւորելը ո՞րչափ ատեն քշեց:

Պ. Հինգ տարի. վասն զի անգամ մը մէկքանի Սաբինացիք Ղաւինիացոց միաստուին ու ետքը անոնց դէսսրաններն ալ մեռուցին. Ղաւինիացիք ալ կատղած՝ Դաաիոսն ըստաններն երբոր Ղալինիա զոհ ընելու գնացեր էր, ետքը նորէն Հռոմուլոս մինակ թագաւորեց:

ՀԳ

Հ. Հռոմուլոս ի՞նչպէս մեռաւ:

715

Պ. Երսուհըվէց տարի շատ պատերազմներ ու շատ յողթու թիներ ընելով խիստ հպարտացած երբոր ըսկսաւ անիրաւութիւններ ընել ու իր գրած կանոնները չիսպահել, ծերակոյտն ասեանի

ձեջ դադառուկ ըսպաննեցին զինքը . և ձայն հանեցին՝ թէ Հռոմուլոս երկինք թռաւ : Ետքը կռատուն մըն ալ շինեցին ու ըսկտան սրաշաւէլ Հռոմուլոսը կուրի-րինոս անուանելով :

Հ . Հռոմուլոսին ո՞վ յաջորդեց :

Պ . Սաբինեանք կուզէին որ թագաւորն իրենցմէ ընտրուի . բայց Հռոմայեցեք յանձ չէին առնէր . անոր համար որոշեցին որ հինգ օրը ձէյմը կարգաւ ձէկը թագաւոր ըլլայ : Աս բանիս վերայ Ժողովուրդը նեղացած՝ տարի մը համբերելէն ետքը որոշեցին որ երկու ազգին վերայ վիճակ ձգեն . որուն որ ելլէ վիճակը , անոնք մէկալ ցեղէն թագաւոր ընտրեն : Ա իճակը Հռոմայեցոց ինկաւ , ուստի իրենք Սաբինեանցմէ ընտրեցին Նումա Պոմպիլիոսը՝ որ քառասուն տարւան խելացի արգար մարգ մըն էր , ու թագաւորուիլը չուզէլով յանձն առաւ :

Հ . Նումա Պոմպիլիոս ի՞նչ երևելի գործք ըրաւ :

Պ . Գիտնալով որ ամէն բանէն աւելի հարկաւոր չածպաշտունն է , նոր տօներ որոշեց , կռատուններ շինեց . Յանոս կուռքին համար ալ կռատուն մը շինեց որ միայն սպատերազմի ատեն կրբացուէր , և չորս Աէստեան ըսւած կուսանքներն ալ հոն սպասաւոր դրաւ . և կոպիտ անկիրթ մարդիկները առանց աստտամբեցընելու ճամբայ բերելու համար ինչ որ հարկաւոր էր՝ ըրաւ : Տոմարը կարգի

Ք. Ա գրաւ : Քառասուն իրէք տարի խաղա-
զուք թագաւորելէն ետքը մեռաւ : Եւ
ինչպէս որ ինքն ապաստան էր, մարմինը
չայրած՝ քարէ տապանակի մը մէջ դրին.
գրած գիրքերն ալ ուրիշ քարէ տապա-
նակի մէջ հետը թաղեցին :

Հ. Նուսիս Պոմպիլիոսին տեղը ո՞վ
նստաւ :

672

Պ. Տուղլոս Ոստիլիոս հռոմայեցի ազ-
նուականը . որ շատ սրտաբարզմատէր էր,
և առիթ ալ ըլլալով՝ նստաւ չինըստաւ
Ալբայեցոց գէմ սրտաբարզմի ելաւ : Բայց
Ալբայեցոց զօրապետը յանկարծ ինքի-
րէն բանակին մէջ մեռնելով՝ ուրիշ մը
տեղն անցաւ . որ խաղաղու թի ընել ու-
զելով՝ հռոմայեցոց ըսաւ թէ Քանի մը
հոգի երկու կողմէն ելլեն մինակ ծեծ-
կըլին, ու որ կողմիններն որ վերայ ել-
լին, յաղթուիլ անոնց սեպւի . հռո-
մայեցիք ալ հաւնեցան աս բանիս : Ուս-
տի երկու կողմէն ալ իրէք իրէք կարիճ
եղբայրներ մէկզմէկու գէմ ելան . հռո-
մայեցոց կողմիններն Ովրատիոսք կրկոչ-
ւէին . իսկ Ալբայեցոցը Վուրատիոսք :
Առաջ Ովրատիոսներուն երկուքը զար-
նըւեցան մեռան, բայց իրէք Վուրատի-
ոսներն ալ վերաւորեցան ու Ալբայեցոց
կանչվրաւորելէն սիրտ առած՝ մնացած
մէկ Ովրատիոսին վերայ վազեցին . Ովրա-
տիոս ըսկաւ փախչիլ . մէյմալ դարձաւ
տեսաւ որ իրէք Վուրատիոսները ահարա-
ցած՝ իրեն ետէն վազելով մէկզմէկէ հե-

ապեր էն, յանկարծ ետ դարձաւ՝ ու անոնք մէկզմէկու քով չիհասած՝ մէկիկ մէկիկ իրէքն ալ ըսպաննեց : Որ չտփ որ մեծ էր Հռոմայեցոց սրախն վախը իրենց տէրուիը կորսընցընելու, այնչտփ աւելի մեծ եղաւ Ալքայեցոց վերայ եղած յաղթուէ ուրախութիը :

ՀԵ

Հ. Ովքատիոսը Կուրատիոսներուն յաղթելուն համար ինչ պատուոյ հասաւ :

Պ. Պատիւ մը չառնեւէն ետքը, մեռնելու պատժէն ալ ճորով ազատեցաւ : Վասն զի երբոր յաղթանակով Հռոմ կը գառնար, իր քոյրն որ Կուրատիոսներուն մէկուն նշանած էր, ու վերայ ձգելու լաթ մը բանած անոր ընծայ խրկեր էր, երբոր ան իր բանած լաթը Ովքատիոսին ուսը տեսաւ, ըսկտաւ լալ՝ վայնասուն ընել ու մագերը փետտել՝ նախատելով Ովքատիոսը : Անատենը կատղեցաւ Ովքատիոս ու զարկաւ ըսպաննեց զքոյրն ըսելով. թող կորսըլի թշնամւոյն վերայ լացող Հռոմայեցին : Ասանկ մեծ անգըթութիը վերայ հրաման եղաւ որ Ովքատիոս մեռնի . ինքն ալ սիրով յանձն առաւ . բայց Ովքատիոսին հայրը՝ սիրաբ խշխրչալով ըսկտաւ ողբ ընել ու յիշեցընել անոր ձեռքովն եղած Հռոմին ազատուիը, Հռոմայեցոց վաստրկած տէրութիը, առած աւարները . և աչքի առջև

Ք. Ա բերել թշնամւոյն կտրիճներուն գերեզմանները՝ որ անոր զօրունէն յաղթըւեր մեռեր էին : Աս ամէնը կարգով յիշեցընելով ու լալով՝ անանկ ժողովրդեան սիրարը շարժեց՝ որ Ավրատիոսին վերանտուգանք գնելով՝ մեռնելէն ազատեցին :

Հ. Տուղղոս Աստիլիոս Ավրատիոսեանց պատերազմէն ետև ուրիշ ինչ գործք ըրաւ , և ինչպէս մեռաւ :

Պ. Բիչ առնէն Ալբայեցիք ապատամբեցան , գնաց անոնց յաղթեց , Ալբաքաղաքն աւրեց , ու բոլոր Ալբայեցիները Հռոմ բերաւ : Բիգենացոց , Սաբինեանց ու Լատիններուն ալ պատերազմով յաղթեց : Ետքը Հռոմ սաստիկ ժանտախտ խնելով՝ Աստիլիոսն ալ բռնըւեցաւ , ու անկէ ետքը ուժէ ինկաւ , կառավարութի կերպը փոխեց . և կրսն թէ անոր համար օր մը զոհ մատուցանելու առնն կայծակէն զարնըւեցաւ : Ինչպէս որ կերևնայ՝ զինքը գաղտուկ ըսպաններ են երսուններկու տարի թագաւորելէն ետքը :

Հ. Տուղղոս Աստիլիոսին յաջորդն սովեղաւ :

640

Պ. Անկոս Մարկիոս Նումային թուռը . որ նստելուն պէս իր պապուն ճամբան բռնելով շատ կարգաւորեց տէրութիը : Ետքը երբոր Լատիններն ըսկասն աւազակութի ընել ասդիս անդին , վերանին ելաւ յաղթեց , երկիրնին աւրըջտըկեց , ու զիրենք ներս առնելով Հռո.

մայեցոց տէրուիր մեծցուց : Ասանկ ալ յաղթեց Ալեյացոց , Փիզէնացոց , Աղսկէանց ու Սարինեանց : Կռատուններ բանաւ շինեց , պարխապները նորոգեց : Տիբերիս գետին բերանն ալ Ոստիա ըսւած նաւահանգիստը շինեց . որ Հռոմայեցիք ծովու վաճառականուն ըսկրտան ու հարստցան : Երսուներչորս տարի թագաւորելէն ետքը մեռաւ :

Հ . Անկոսէն ետքը ո՞վ թագաւորեց :

Պ . Իր աղոյքը դաստիարակը Տարկուի նիոս երէց , որ թագաւոր ընտրուելու օրը պատճառով մը աղաքը ժողովքին մէջ չիհանեց . ու ժողովրդեան առջև ցուցնելով իր հայրենասիրուիր և ջանքը , թագաւոր ընտրուեցաւ : Եւ ինքզինքը սիրցնելու համար ծերակուտին թիւը շատցուց՝ իրէքհարիւր հոգի ըրաւ . Լատիններուն յաղթեց , ետքը Սարինեանց ալ յաղթեց վարպետութեմը : Ասան զինոնք Տիբերիսին վըրայ նաւերով վայտէ կամուրջ շինեւր էին ու երկու կողմը կեցած՝ պատերազմի պատրաստուէր էին : Տարկուինիոս անոնց բազմութեմը յաղթելու համար գետին մէջ պզտի նաւակներ իջեցուց , մէջը լեցուցած շուտ բռնկելու բաներով . ու կէսգիշերուն վառած , կամուրջներուն վըրայ խրկեց որ բոլոր բռնկեցան , ու ինքն ալ առաւօտանց՝ երբոր Սարինեանք մարելու կաշխատէին , վըրանին վազեց , գետին մէկ կողմը մնացածներուն ալէկ ջարդ մը

Ք. Ա տուաւ, որը ցրուեց, որը գետին մէջ
խողեց. ետքը մէկ քանի պատերազմով
աւ բողորովին տիրեց անոնց վերայ Հռոմ
քաղաքն ալ շէնքերով զարդարեց, և
փառաւոր ջրմուղներ ալ շինեց :

ՀԶ

Հ. Անկոսին աղաքը իրենց հօրը թա-
գաւորուէն զրկուելուն համար ջինե-
ղացան :

Պ. Խիստ կատաղած՝ առիթի կրօպա-
սէին յիսերհին հանելու. բայց երսու-
նըութը տարի ճար մը չի գըտնելով յու-
սահատած՝ երկու յանգուգն գեղացի-
ներու խրատ տուին որ գնացին ձեռվը-
նին մէյմէկ կացին առած Տարկուինիո-
սի պալատին առջևը կռուիլ ըսկօան՝
բողոքելով թագաւորին մէկը զմէկու
դէմ: Երբոր պալատը մտան, երկուքը
մէկտեղ կրկան չվառէին՝ իրարու խօսքը
կտրելով: Հազիւ մէկը լուեցուցին, ու
թագաւորն ըսկսաւ մտիկ ընել մէկալին
խօսքը. ան միջոցին լուռ կեցողը կա-
ցինը վերցընելն ու թագաւորին գլխուն
զարնելն ու մեռցընելը մէկ ըրաւ: Անոնք
երկուքն ալ ըսպաննըւեցան. բայց Ան-
կոսի աղաքը փախչելով ազատեցան :

Հ. Հռոմայեցիք երբոր լսեցին Տար-
կուինիոս երէցին մահն ինչ ըրին :

578

Պ. Ժողովուրդը խռոված՝ պալատը
թափեցան. թագաւորին կլինն ալ վախ-
նալով որ չըլլայ թէ Անկոսին աղաքը

Թագաւորուիլը առնեն, գոները գոցեց՝
 ու պատուհանէն ըսաւ թէ Թագաւորը
 սասաիկ վիրաւորւած է, քանի մը օրէն
 կառողջանայ. հիմակուհիմա կառավա-
 րութիւնը կըյանձնէ իր փեսին: Ուստի
 փեսան Սերվիոս Տուղլիոս մէկքանի օր
 Թագաւորին անունովը կառավարեց. և
 երբոր տեսաւ որ ծերակոյտն իրեն կը-
 հաւնի, յայտնեց թէ Թագաւորը մե-
 ռաւ, ու ինքն անոր տեղն անցաւ:

Հ. Սերվիոս Տուղլիոս ինչ մարդ էր,
 և ինչ երևելի գործք ըրաւ:

Պ. Սերվիոս գերի կնկան մը տղայ էր,
 և օր մը պալատը տղուն օրորոցին վըրայ
 բոց մը պատած երևցաւ կրսէն. Թա-
 գուհին ալ աս բանս աղէկ նշան սեպե-
 լով, զՍերվիոսն իրեն փեսայացուցեր էր:
 Սերվիոս քանիմը պատերազմներ ըրաւ ու
 Ետրուրացոց բոլորովին յաղթեց: Երբոր
 հաշտուի եղաւ, ըսկսաւ քաղաքը մեծցը
 նել. առաջ որ հինգ բլուրի վըրայ շինած
 էր, երկու բլուր ալ ինքը քաղքին մէջ
 առաւ: Քաղքին մէջի խռովուիլը պակ-
 սեցընել ու զելով վարպետութիւն մը ժո-
 ղովըդեան իշխանութիւնը պակսեցուց:
 Որովհետև առաջ բոլոր ժողովուրդը վե-
 ճակ կըձգէին, ինքը զանոնք հարիւրական
 հոգի խումբ խումբ բաժնեց, ապրսալը
 բեց որ անոնք իրենց մէջը վեճակ ձգեն, ու
 ընդհանուր ժողովքին մէջ անոնց գըլ-
 խաւորը միայն երևնայ. ասով մինակ ալ
 նուականներուն ձեռքը մնաց իշխանու-

Թիր : Հարկ տալու կարգ դրաւ ամէն մարդուն կարողուէր չափով և ժողովըրդեան համրանքը և ամէն մէկուն հարրատու Թիր խմանալու համար օրէնք դրաւ որ հինգ տարին մէյմը ամէնքը զէնքերով Արեսի հրապարակը շարւին ու ըսեն՝ քանի հոգի ունին աներնին ու ինչ հարրատուէ տէր են : Ասանկ խելացի կարգեր դնելով ժողովրդեան խիստ սիրելի եղաւ : Թէպէտ ասանկ սիրելոյ կեանք անցուց, բայց ատելի անզգամի սէս մեռաւ խելճ կերպով :

ՀԵ

Հ . Սերվիտսին մահն ինչպէս եղաւ :

Պ . Սերվիտս իր երկու աղջիկը Տարկուինիոսին երկու Թոռներուն հետ կարգեր էր : Եւ որովհետև իր աղջիկներն ու փեսաները իրարու ներհակ բնուծի ունէին, հեզը հպարտ աղուն տուաւ, կռուասէրն ալ հեզին, յուսալով Թէ մէկզմէկ կըկրթեն : Բայց Ղուկիոս Տարկուինիոս դաժան փեսան և կռուասէր իր աղջիկը Տուղղիան խօսքը մէկ ըրած՝ իրենց ընկերներն ըսպաննեցին ու մէկըզմէկ առին : Ետքը Ղուկիոս ծերակուտին մէկ մասը իրեն կողմը ձգելով Սերվիտսի դէմ դատատանի ելաւ՝ ըսելով Թէ Անիկա բռնուք Թագաւորեր է իմ տեղըս : Ան միջոցին Սերվիտս եկաւ առանց սլահասպանի, ու երբոր կուզէր

զՂուկիտան ամթուէն մէկդի ընել, Ղուկիտար խեղճ ծերուն մէջքէն բռնեց՝ աստիճաններէն վար կլտորցուց. Ղուկիտոսի մարդիկն ալ հոն զարկին ըսպաննեցին Սերվիտար քառսուն տարի թագաւորէէն ետքը, ու արիւնլուայ ճամբուն վերայ ձգեցին: Տուղղիան լսելուն սէս՝ ելաւ ատեանը եկաւ Ղուկիտոսին շնորհաւորելու համար. ու դառնալու ատենը երբոր Սերվիտոսի մեռելին ձգւած տեղը հասան ու կառավարը զարհուրած իրեն կրցուցընէր, Տուղղիան կատղած՝ հրաման տուաւ ու կառքը հօրը մեռելին վերայէն կոխկռտելով անցուց:

Հ. Ղուկիտոս Տարկուինիտո ինչպիսի՞ թագաւորութի քչեց:

Պ. Նախ որոնց վերայ որ կռակածի գնաց թէ Սերվիտոսին կողմն են՝ թրէ անցուց. և իր բնական անգթութիւններովն ու սասանութիւններովը քսանըհինգ տարի թագաւորեց ու անունն ալ Գոռոզ կոչւեցաւ: Ամէնուն ատելի էր. անոր համար իր թիկնապահները շառցուց, ժողովուրդն ալ միշտ պատերազմի և շէնքեր շինելու կրգրաղեցընէր՝ որ իր անխրաւութիւնները մոռցըլին: Իր անգթութիւնը զածը առաջ տարած գործքերէն մէկը յիշեմ՝ որ անով իր անցուցած կեանքն աղէկ խնացլի: Սերվիտոսի մեռնելէն ետքը երբոր Սաբինեանք սարստամբեցան, Տարկուինիտո Ղափիններուն քաղաքներէն պատգամաւորներ կանչեց որ խորհուրդ

ընեն, ու նոյն օրը ինքն ուշացաւ գա-
 լու: Պատգամաւորները նեղացան, բայց
 ամէնէն աւելի Տուրնոս Երզոնիոսն որ
 մէկալնոնց առջև Տարկուինիոսի վերայ
 շատ չարիք խօսեցաւ: Իրիկվան գէմ հա-
 սաւ Տարկուինիոս, և ուշանալուն պաա-
 ճառ բերաւ թէ անհնազանդ տղու մը
 դատաստանիւ տեսեր է: Տուրնոս պատաս-
 խան տուաւ թէ Անհնազանդ տղան պաա-
 ժեղու է. անոր՝ Ժմկ ի՞նչ պէտք է: Ետքը
 ատենն ուշ ըլլալուն՝ Ժողովքն ալ վա-
 դուան թողուցին: Տուրնոսի յանդուգն
 պատասխանին վերայ Տարկուինիոս նե-
 դացած՝ վրէժը հանելու համար՝ անոր
 ծառաներէն մէկ քանին կաշառեց՝ ու
 ապապըրեց որ Տուրնոսի տանը մէջ զէն-
 քեր տանին ու պահեն: Առաւօտանց
 կանուխ կանչեց պատգամաւորներն ը-
 սելով թէ Տուրնոս երէկ զամէնքնիս սի-
 աի մեռցընէր՝ թէ որ ես կանուխ հասած
 ըլլայի. և աս ճշմարտուէ նշան՝ զէնքե-
 ըր երթանք տեսնենք, ըսաւ, որ տանը
 մէջ դիզեր է: Անոնք առջի բերանը չե-
 հաւտացին. բայց երբոր գացին զէնքերը
 տեսան, զարմացած շնորհակալ եղան որ
 զիրենք մահուանէ վրկեց: Ուստի Տար-
 կուինիոս Տուրնոսը ողջ ողջ վիհի մը մէջ
 թաղել տուաւ. ու ինքն ան ազգերուն
 հետ միաբանած՝ Աղլսկեանց ու Սաբի-
 նեանց գէմ ելաւ: Աղլսկեանց յաղթեց,
 բայց Գաբիա քաղաքը խարդախու թիւ ա-
 ռաւ:

Հ . Տարկուինիոս Գոռոզը Գարիա քաղաքն առնելու համար ի՞նչ խարդախութի բանեցուց :

Պ . Նախ Սեքստոս որդին խրկեց անոնց, որ գնաց՝ իր հօլը ձեռքէն փախածի պէս այնչափ խեղճ ըրաւ անոնց առջևն՝ որ վերան կսկծային, ու զանիկա իրենց զօրապետ դնելով Տարկուինիոսին վերայ խրկեցին : Սեքստոս առջի մէկ քանի պատերազմներուն մէջ Տարկուինիոսին յաղթել ձեացուց . ու երբոր տեսաւ որ Սաբինեանք իր վերայ բոլորովին վստահացեր են, մարդ խրկեց հօրը հարցընելու թէ ի՞նչ ընէ : Տարկուինիոս առանց պատասխան տալու՝ պարտէզն իջաւ ու դեսպանին հետ քալելու ասէն խաշխաշներուն մէջէն խիստ երկաններուն գլուխները կտրտեց : Սեքստոս երբոր լսեց, հօրը միտքը հասկընալով՝ Սաբինեանց մեծամեծները մէյմէկ սրածառաւ մեռուց ու ըստակնին աղքատներուն բաժնեց : Ժողովուրդը թէպէտ ձայն չհիշանեցին՝ եղածը բարիք սեպելով, բայց ետքը մեծ մը չունենալով Տարկուինիոսին տակն ինկան :

ՀԸ

Հ . Տարկուինիոս Գոռոզն ի՞նչ երևելի շէնքեր շինեց :

Պ . Կապիտոլիոն բերդին կռատունն որ առաջուց ըսկսւած էր՝ լմընցուց : Աս

Ք. Ա շէնքին ատենը Հռոմին մէջ գրատեցի Սիրիւ
 լա ըուած մարգարէ կնիկ մը թագաւո
 րին ինը կտոր գիրք բերաւ ծախելու :
 Երբոր թագաւորը չիտուաւ անոր ու
 զած գինը, կնիկը գնաց ան գիրքերուն
 իրէքն այրեց, ու նորէն եկաւ մնացած
 վէցին համար բոլորին գինն ուզեց. Տար
 կուինիոս վաւրնաեց զինքը : Գնաց կինը
 իրէք մըն ալ այրեց ու եկաւ նորէն իրէք
 մնացածին համար բոլորին գինն ուզեց,
 ըսելով թէ Ասոնք ալ պիտի այրեմ :
 Զարմացաւ թագաւորը՝ հաւահարցնե
 րը կանչեց, հարցուց. անոնք ալ ցաւե
 լով այրածներուն վերայ, մնացածները
 գնել տուին : Կնիկն ըստակն առածին
 պէս գնաց, մէյմալ չերեցաւ : Աս գի
 պուածս Տարկուինիոսին հնարքն էր
 կրտեն՝ որ ան գիրքերով ժողովուրդը
 խաբէ ու անոնց իր ուզածը ընել տայ :
 Ետքը հրամայեց Տարկուինիոս որ ան
 գրքերը իր բարեկամներէն երկու հոգի
 ըզգուշու թեամբ պահեն Կապիտոլիոնի
 կռատանը մէջ : Հարիւր տարիէն ետքը
 տասներհինգ հոգի եղան ան գրքերուն
 պահապանները. որոնք եղած ու ըլլա
 լու գիպուածները ան գրքերուն մէջէն
 կրտուգէին :

Հ. Տարկուինիոս Գոռոզին վերջն ինչ
 պէս եղաւ :

509

Պ. Կապիտոլիոնի շէնքը ըմբնալէն
 ետքը Հռուսուլէանց վերայ պատերազ
 մի ելաւ ու Հռոմէն տասներվեց մկրն

Հեռու Արդէա քաղաքը պաշարեց : Ան
 միջոցին՝ Թագաւորին տղան Սեքստոս
 Տարկուինիոս, Կոլլատինոս իշխանը, և
 ուրիշ զօրապետներ մեկտեղ իրենց վը-
 րանին մէջ կերուխումի հետ եղած ա-
 տեննին՝ կանանց վըրայ խօսք եղաւ, ու
 դինին դլուխնին զարկած՝ ամէն մարդ ի-
 րենը կը գովէր : Եւ անանց աղէկութիւն
 խմանալու համար Կոլլատինոսին խորհրը-
 դովը մեկէն հեծան ձիերնին՝ գնացին ու
 տեսան որ ուրիշ կանայքը խաղերու ու
 խնտումի հետ էին . իսկ Կոլլատինոսինը
 Լուկրեական իր անական բաներուն կաշ-
 խատէր, ամէնքն անոր հաւնեցան : Սեքս-
 տոս վըրան աչք ձգեց ու քանխը օ-
 րէն նորէն գնաց գէշ մտքով, և Լու-
 կրեական չարչարեց ու գարձաւ : Երկ-
 րորդ օրը Լուկրեական մարդ խրկեց իր
 հօրն ու երկանը՝ որ շուտ հեաերնին
 երկու բարեկամ առած՝ տուն գան : Երբ-
 որ անոնք եկան, Լուկրեական հասկը-
 ցուց եղածը, աղաչեց որ վրէժխնդրուի
 ընեն, ու ինքը իր նախատինքը վըրայէն
 վերցնելու համար յանկարծ Թուր մը
 հանեց՝ իր սիրտը խօթեց մեռաւ : Սար-
 սափեցան ամէնքն ու ըսկասն ըլլ . և
 Բրուտոս բարեկամնին քաշեց հանեց
 արիւնլուայ Թուրն ու դէպի երկինքը
 վերցնելով երգում ըրաւ վրէժն հանե-
 լու Տարկուինեանցմէ . մեկալնոնք ալ
 նոյնպէս ըրին : Ետքը Լուկրեականի մար-
 մինը Ժողովրդեան ցցուցին, ու Տարկուի-

Ք. Ա նիստին բռնութիւններն յիշելով դրդուեցին զամէնքն որ Տարկուինիոսը քսանըհինգ տարի թագաւորեւէն ետքը անով տեղով Ետրուրիա քշել տուին, ու թշնամեաց հեանն ալ տասներհինգ տարւան զինադադարումն ըրին :

Հ. Բրուատոս ինչ մարդ էր :

Պ. Բրուատոսը իսելացի մարդ մըն էր, որուն հայրն ու եղբայրը Տարկուինիոս մեռուցեր էր, անոր համար ինքն ալ վախնալով կամօք խենթ ձեւացեր էր. Տարկուինիոս ալ անոր անունը Բրուատոս դրեր էր որ անասուն ըսել է, և անոր բոլոր ըստակներն առեր էր ու ըզբրուատոսը միմոսի տեղ իր տղոցը քով դրեր էր : Բրուատոսն ալ առթի կըսպասէր որ հօրն ու եղբօրը մահուան վրէժն առնէ :

ՀԹ

ՀՌՈՄԱՅԵՅՈՅ

ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

Հ. Տարկուինիոսի Գոռոզին քշելէն ետքը Հռոմայեցոց սով իշխեց :

509

Պ. Հռոմայեցիք թագաւորին բռնութիւններէն ձանձրացած՝ հասարակասպետուի հաստատեցին. ու Հիւսպատոս անունով երկու հոգի ընտրեցին, և անոնց յանձնեցին թագաւորին իշխանութիւն :

կարգ ալ դրին որ տարւէ տարի փոխւին անոնք : Առջի հիւպատոսները Բրուտոսն ու Կոլլատիոսն եղան :

Հ . Տարկուինիոս Գոռոզն աքսորւելէն ետքը չիջանաց թագաւորուիլը նորէն ձեռք ձգելու :

Պ . Առջի բերանն ըսկսաւ աղաչել ուրիշ ազգերուն՝ որ միջնորդ ըլլան զինքը դարձնելու . երբոր չիկըրցաւ , անասելը խարդախութեւ հրաման ուղեց որ իր ունեցածները հռոմէն իրեն խրկեն . ուստի հռոմ դեսպաններ խրկեց որ տանին : Անոնք եկան գաղտուկ մէկը մէկալը գըր գուեցին՝ որ Տարկուինիոսը նորէն թագաւոր նստեցընեն : Աինդիկոս անունով ծառայ մը կասկած երթալով , անոնց ժողովըւած տեղը պահւրտեցաւ՝ ըսեց ամէն խորհուրդնին ու գնաց տէրուէ խմացուց . և անոնք բոլորն ալ բռնըւեցան : Եւ թէպէտ մեծերու աղաքէին , բայց Բրուտոս միայն արգարութի մտածելով՝ վճռեց , ու իր երկու որդիքն ալ մէկտեղ ըսպաննել տուաւ իր աչքին առջև . շարժեցաւ գութը , բայց ինքը բոլոր ազգը աւելի սիրեց , քան իր երկու ապստամբ աղաքը : Ետքը Տարկուինիոսի բաներն ալ իրեն դարձնելու տեղը ժողովըգեան ցրուեցին , ու հռոմին մէջէն անոր յիշատակը ջնջեցին : Եւ որովհետև Կոլլատիոսն ալ անոր ազգականն էր , վերան կասկածիլ ըսկսան , ու աղաչելով հիւպատոսութէն հրաժարե-

ցուցին, որ անով տեղով պարգև ալ
 առած՝ Հռոմէն գուրս գնաց: Տարկուի
 նիոս ուրիշ ճար չիգանալով Աէյացինե-
 րը յորդորեց՝ Հռոմայեցոց վերայ պատե-
 րազմի ելաւ: Հիւսրատոսները գէմն
 ելան. շատ ջարդ եղաւ երկու կողմէն ալ:
 Արունա Տարկուինիոսի որդին Բրու-
 տոսի հետ զարնըւեցաւ ու երկուքն ալ
 ինկան մեռան. բայց յաղթուածնը Հռո-
 մայեցոցն եղաւ: Անատենը Տարկուի-
 նիոս Ետրուրացոց Պորսենա թագաւորը
 գրգռեց՝ որ բոլոր զօրքովն եկաւ Հռո-
 մին վերայ. Հռոմայեցիք յաղթըւեցան
 փախան, ու հիւսրատոսները վերաւորե-
 ցան: Ետրուրացիք անոնց ետեւէն ինկած
 եկան ինչվան գետին կամրջին քովը. հոն
 Ովրասիոս Կոկղիգէս երկու ընկերով
 կամրջին գլուխը կեցաւ արգիլեց թշնա-
 միները, ինչվան որ Հռոմայեցիք կամրջին
 ծայրը քահեցին ու կամուրջը փլուցին.
 Կոկղիգէսն ալ գետն ինկաւ ու լողա-
 լով ազատեցաւ: Պորսենան ետքը եկաւ
 Հռոմը պաշարեց ու մէջը սասաիկ սով
 ձգելով պիտի առնէր, բայց Մուկիոս
 Սկեւոլա կարիճը իր քաջութիւնը ազատեց
 իր հայրենիքը:

2

Հ. Մուկիոս Սկեւոլա ի՛նչ քաջութի՛ Ք.Ա
ըրաւ Հռոմը ազատելու համար :

Պ. Մուկիոս իր մահն աչքն առած , 508
Ետրուրացոց հագուստով անոնց բանա-
կը մտաւ , աեսաւ որ Պորսենան զորացը
Թոշակ կըբաժնէ . բայց Մուկիոս անոր
զատենագալիրը Թագաւորը կարծելով
յանկարծ սուրն անոր փորը խոթեց ըս-
տաննեց . և մէկէն զինքը բռնեցին : Երբոր
Թագաւորը հարցուց թէ ի՛նչ կուզես .
Մուկիոս կորճուք սպասասխան տուաւ .
Ես Մուկիոս հռոմայեցին եմ , եկայ որ
քեզ ըստաննեմ : Թագորն ուզեց զինքը
տանջանքի դնել որ շիտակն ըսէ . հոն
վառած կրակ կար . Մուկիոս ձեռքը
բոցին մէջ խոթեց , ըսելով . Ես ինքիրես
կրտանջեմ ան ձեռքն որ սխալեցաւ .
բայց գիտցիր՝ որ ինձի պէս իրէքհարիւր
կորիճ ալ կայ որ քեզ մեռցընելու եր-
դում ըրեր են : Չարմացաւ Թագաւորն
անոր քաջութը վերայ ու մէկ երկու սայ-
մանով ուզեց հաշարել անանկ կորիճ
ազգին հետ : Հռոմայեցիք յանձն առին
ու տասը կորիճ տղաք , տասն ալ աղջիկ
սխտանգ տուին : Անոնց մէջէն Ալեքիս
աղջիկ մը դատաւորներուն ձեռքէն փա-
խաւ ու իր ընկերներուն հետ Տիբերիս
գետէն անցաւ՝ Հռոմ եկաւ : Հիւսա-
տոսը վախնալով որ ետքը դէշ կըլայ ,

Ք. Ա զինքը նորէն ետ խրկեց . Պորսենան ալ վեհանձնուի ընելով զաղջիկն ազատեց ու անոր հրամանն տուաւ որ մանչերէն ալ կէսը հետը աանի . Ալեքիան պղծախններն ընարեց , ըսելով թէ գերուէ չեն գիմանար :

Հ . Պորսենային Հռոմայեցոց հետ հաշարեւէն ետքը Հռոմ ի՞նչ երևելի գիպուած եղաւ :

497

Պ . Տարկուինիոս իր Մանչիոս փեսին ձեռքով զԼատինները Հռոմայեցոց գէմհանեց : Բայց Հռոմայեցոց ազգաաները շատ պարտքերու տակ ըլլալով պատերազմի երթալ չէին ուզէր . ասոր ուրիշ ճար չիգրանելով որոշեցին որ անկէ ետքը պէտք եղած աստե՛նը բոլոր իշխանութիւր մէկու մը յանձնըւի միայն վեց ամիս . ան մարդուն անունը ըլլայ Բիկատատոր կամ Իշխանապետ՝ որ ամէն ուզածը կարենայ ընել : Ուստի ընտրուեցաւ Լարտիոս հիւպատոսը . որ ժողովուրդը վախցընելու համար քսանըչորս տապարաւոր առջեւէն կրտանէր . և ուզածին պէս զօրք ժողովեց ու գնաց , և պատերազմի չըսկըսած՝ անոնց ցրուած զօրքէն շատ մարդ ջարդեց ու ձեռք ինկածներն ազատ թողուց . անոնք ալ նեղը մտած՝ տարի մը զինադադարում ըրին : Բայց երբոր մէկ տարին լրմնցաւ , Լատինները Տարկուինիոսի առաջնորդելովը նորէն պատերազմի ելան . անատենը Հռոմայեցիք ալ նոր իշխանապետ մը գնելով գնացին բոլորո .

վին յաղթեցին . ինչպէս որ Լատինները նեղը մտած հաշտուի ուզեցին՝ վաճառելով իրենց քաղքընէրէն Տարկուինիոսն ու անոր կուսակիցները : Տարկուինիոս ալ փախաւ հեռու տեղ մը ու հոն խեղճութիւն մեռաւ իննըսուն տարեան :

ՁԱ

Հ. Երբոր հռոմայեցիք Տարկուինիոսի Գուռզին մեանիլը լսեցին՝ ինչ ըրին :

Պ. Մեծ վախէ ազատելով ուրախացան . և իշխաններն անկէց ետքը ասլոստամբուլ թէ վախ չունենալով՝ զժողովուրդը նեղել ըսկսան . անոնք ալ ձանձրացած՝ ձգեցին ելան հռոմէն դուրս ինը միոն հեռու Նուիրական ըսւած լեռը գնացին : Անտանը ծերակոյտը վախցան շփոթեցան ու մարդ խրկեցին յորդորելու որ հռոմ դառնան : Երբոր անոնք մտիկ չըրին , Ագրիպպաս ըսւած խոհեմ մարդուն խորհրդովը նորէն տասը դեսպան խրկեցին , զինքն ալ մէկտեղ , որ երթան խոստանան ուղածնին ընելու : Ժողովուրդը զգեսպանները սիրով ընդունեցան . Ագրիպպաս ալ զանոնք յորդորելու ատեն առակ մը բերաւ՝ թէ Անդամ մը անդամները ստամբուէն ասլոստամբերեն՝ ըսելով թէ Մենք կաշխատինք ու ստամբսը կը վայելէ . բայց ետքը զջջացեր են՝ իմանալով որ իրենց ուժն ալ ստամբսէն է : Ժողովուրդը ասանկ խօսքերէն կակըղ-

Ք. Ա ցած՝ ան լեռանը վերայ զո՛հ ըրին ու դարձան . բայց առաջ խօսք առին ծերակուտէն որ անկէ ետքը տարւէ տարի մէկքանի հոգի ժողովրդեան պաշտպան ընտրուին : Ուստի անասենը Տրիբուն անունով հինգ հոգի ժողովրդապետ դրին , որոնք ասեն անցնելէն ետքը տասն եղան : 'Նոր կանոն մը ելածին պէս՝ Տրիբունները կը բննէին , ու թէ որ չի հաւնէին՝ veto կարգիւէ՛մ կը գրէին . իսկ հաւնէլիուն նշան T թէ գիրն էր :

Հ. Տրիբուն դրեւելէն ետքը Հռոմայեցիք հանդարտ մնացի՞ն :

Պ. Չէ . վասնզի ժողովրդեան տարտամբելուն պատճառովը տարի մը երկիրները չիբանւելով Հռոմ սովինկաւ : Ծերակոյտը ձեռքէն եկածը կընէր . բայց ժողովուրդը կը գանգրաէին հարուստներուն վերայ , ըսելով թէ Առաջ պարտքերնուս տեղը ցորեննիս աժան գնեցին ու հիմա սուղ սուղ մեզի կը ծախեն : Նւերբոր Սիկիլիայէն ցորենի նաւեր եկան , ծերակոյտն աժան գնով ժողովրդեան բաժնեց , ու անանկով հաշարւեցան : Բայց Մարկիոս Կորիոլանոսին պատճառաւ նորէն ալ մեծ խռովութիւն ելաւ :

Հ. Մարկիոս Կորիոլանոս ի՞նչ խռովութիւն հանեց Հռոմին մէջ :

489

Պ. Աս Կորիոլանոսն ազնուական մըն էր՝ որ շատ բարկք ըրեր էր քաղաքացոյց : Կորիոլոն քաղաքը պաշարւած ասենը մեծ քաջութիւններ ցցուցեր ու քաղքին

տիրեր էր. անոր համար ալ Կորիուլանոս
կրտուէր. և ըրած կողոսուլուսին մէջէն մի
այն զարդարուն ձի մը առեր դերի մըն
ալ ազատեր էր: Բայց երբոր ժողովուրդը
զինքը հիւսպատոս չընարեցին, խիստ նե-
ղացաւ. ու Սիկիլիայէն եկած ցորէնը
կուզէր որ ժողովըդեան չիբաժնեն. և
ջանաց որ Տրիբունի իշխանուիը նորէն
վերցընեն: Տրիբունները զինքը դատաս-
տանի կանչեցին, ու շատ խռովուի ըլլա-
լէն ետքը՝ տրիբուններուն որոշելովը աք-
սորւեցաւ: Անառներ Կորիուլանոս գնաց
Աղակեանց Տուղլոս Ակտիոս իշխանին
ապաւինեցաւ՝ Հռոմայեցոցմէ վրէժ խըն-
դրելու մտքով. և աս երկու ազգին մէջ
կախ բանալ ուղեով, քանի մը հողի
խրկեց Հռոմ որ երթան անտեղացի խա-
ղերը տեսնեն. ձեռաց տակէն ալ ծե-
րակուսին իմացուց՝ իբր թէ անոնք ան
խաղերուն գիշերը քաղաքին կրակ պիտի
տան: Ծերակոյտը հաւտաւով հրաման
հանեց որ արևը չիմրտած քաղաքին մէջի
եղող գրսեցի մարդիկը քաղաքէն դուրս
ելեն: Աս բանըս Տուղլոս իրեն նախա-
սինք սեպելով՝ Հռոմայեցոց վերայ պա-
տերազմի ելաւ. ու Կորիուլանոսին հեռ-
մէկաեղ Հռոմայեցոց երկիրները կոխե-
ցին ու ժողովըդեան շատ վնաս ըրին. և
Հռոմայեցոց քաղաքներն առնելով Կո-
րիուլանոս եկաւ զՀռոմը պաշարեց: Ծե-
րակոյտն ու ժողովուրդը մէկ եղած՝ մէկ
երկու անգամ դեսպան խրկեցին Կորիու-

լանոսին որ թողու թշնամու թիր, գայ
 նորէն պատուով իր հայրենիքը : Կորիւ
 լանոս անոնց մտիկ չընելով իրէք որ մը
 տածեղու ատեն տուաւ : Անոնց ճարը
 հատած՝ քանիմը քուրմեր ու կարգա
 ցողներ խրկեցին որ երեսնին կախած առ
 ջլեն ելան, բայց չիկըրցան զինքը կակ
 ղըցնել : Ետքը իր մայրը Վեարուրիա
 քանիմը ուրիշ տիկիմներ հեան առած՝
 սուգի հագուսաներով ելաւ դիմացը :
 Մայրը լալով ոտքն ինկած կաղաչէր որ
 խնայէ իր հայրենեացը, մէկալներն ալ
 կողքային ու Ողորմէ՛ կըկանչէին, անանկ
 խեղճութի ձեացաւ որ ինչվան զինու
 որներն ալ լաց շարժեցան : Կորիւլանո
 սին սիրտը խշխշաց, զմայրը գրկեց վե
 րուց ու Ո՛վ մայր իմ, ըսաւ, ազատեցիր
 զՀռոմ, բայց որգիդ կորսընցուցիր : Ետքը
 թողուց ետ դարձաւ : Ան միջոցին Տուզ
 դոսն ալ նախանձելով անոր պատուոյն
 վերայ որ իր զօրքը անոր քաջուէր հաւ
 նելով բոլոր անոր գացեր էին, վերան
 ամբաստանուի ըրաւ՝ ըսելով թէ իր քա
 ղաքացոց սիրուն համար արդարութիւր
 ոտքի տակ առաւ : Ուստի կըսեն թէ
 Կորիւլանոս Հռոմէն ետ դառնալու ա
 տեն զօրքը զինքը մեռուցին, և ետքը
 զըջացան ու մեծ պատուով թաղեցին :

ՁԲ

Հ. Կորիզլանոսի մահուանէն ետքը Բ. Ա
 Խնչ նոր դիպուած եղաւ Հռոմին մէջ:

Պ. Քիչմը ատեն հանգիստ անցընելէն 486
 ետքը, Սպուրիոս Կասիոս հիւպատոսը
 Թագաւոր ըլլալու մտքով ըսկսաւ անանկ
 բաներ ընել՝ որ կարենայ Ժողովրդեան
 սիրտը վաստըկիլ. բայց անոնք կասկածի
 երթալով Թէ Սպուրիոսի միտքը գէշ է,
 զինքն ամբաստանեցին, և յանցաւոր
 դտնըւեցաւ. ուստի տարին զինքը Տար-
 պէոնի Ժայռէն վար նեաւեցին որ մեռաւ:
 Ետքը ըսկսաւ Ագարակային օրէնքի
 կռիւը՝ Թշնամիներէն առնըւած երկիր-
 ները Ժողովրդեան բաժնելու վըրայ՝ որ
 շատ տարի քշեց: Աս միջոցիս Ետրուրա-
 ցոց դէմ պատերազմ ըրին ու յաղթեցին,
 բայց իրենք ալ շատ ջարդ կերան: Կրեմե-
 րայի մօտ Փաբիոսեանց ցեղը գրեթէ ջըն-
 ջըւեցաւ, որ խիստ հայրենասէր ու կտրիճ
 մարդիկ էին: Ետքը երբոր պատերազ-
 մէն հանգչեցան՝ ըսկսաւ նորէն խռո-
 վուի ծերակուտին ու Ժողովրդեան մէջ.
 սնոր համար հիւպատոս ընտրեցին զԿին-
 կիննատոսը:

Հ. Կինկիննատոս Խնչ մարդ էր ու
 Խնչ երևելի գործք ըրաւ:

Պ. Կինկիննատոս արգար մարդ մըն 458
 էր. երբոր իր որդին Կեսոն որ պատրիկ
 էր ու անիրաւ տեղը աքսորւեցաւ, Կին-

կիննատոս ալ սխալով՝ գնաց քաշե-
 ցաւ իր գեղը: Քիչ ատենէն զինքը հիւ-
 սատոս ընտրեցին, գնացին զինքը գտան
 որ գեաին կրբանէր, բռնի տարին քա-
 ղաքը, որ ամէնուն սիրելի ըլլալով՝ ամէն
 անկրաւ մարդիկներուն դէմ ելաւ, ու
 ամէնուն աչքը վախցընելով՝ խաղաղութե
 տարին լմնցուց՝ ու նորէն իր գեղը քաշ-
 ւեցաւ: Ետքը նորէն Հռոմայեցիք Ե-
 կուեանց ու Աղսկեանց դէմ սպառե-
 րազմի ելլելով ու Մինուկիոս հիւսա-
 տոսը թշնամիներէն պաշարուելով՝ յու-
 սահատած երբոր սխալ ջարդուէր, քա-
 նիմը զինուոր թշնամեաց մէջէն անցան
 գնացին Հռոմ խմացուցին. Հռոմայեցիք
 ալ տակնուվըրայ եղած՝ նորէն գնացին
 աղաչելով Արևիկիննատոսն իշխանապետ
 դրին՝ որ բոլոր զինուորները հինգ օրւան
 պաշարով Արեսի հրապարակը ժողվեց,
 ու գիշերն իբուն արտորնօք քալելով՝ ա-
 ռաւօտանց կանուխ հասաւ թշնամեաց.
 իր զօրացը կանչվըռաւէլ տուաւ՝ իրենց
 հասնիլը մէկալ Հռոմայեցոց խմացընելու
 համար. ու Եկուեանց փախչելու դին
 փոսեր փորել տալէն եաւ՝ ըսկսաւ վը-
 րանին վազել. հիւսատոսին բանակն ալ
 անդիէն զթշնամիները մէջ առին. որոնց
 ճարը հասնելով անձնատուր եղան՝ իշ-
 խանապետին դրած պայմանները յանձն
 առնելով: Ետքը անոնց գերի ըլլալուն
 նշան՝ զիրենք թրի տակէ անցուց, և յաղ-
 թանակի համար անոնց գլխաւորները

միայն պահէց ու մէկաշնոնք աղաա թո-
ղուց : Առած աւարներն ալ միայն իր
հետը եղած զօրքին բաժնէց ու ինքը բան
մը չառաւ : Տասնըվէց օր իշխանապե-
տութի ընելէն ետքը՝ հրաժարեցաւ ու
նորէն դնաց իր գեղը քաշւեցաւ :

29

Հ . Աինկիննատոսի իշխանապետուէն
եակ Հռոմայեցիք ինչ վիճակ ունեցան :

Պ . Նորէն ըսկաւ խառվուի . կուզէին
ժողովուրդը որ ագարակային օրէնքը
հաստատուի . և Գենտատոս անուհով
ծեր ու տեսքով մարդ մը ժողովրդեան
մէջ ըսկաւ կանչել՝ թէ Քառսուս տա-
րի իմ հայրենեացս մէջ իշխանուի ու-
նեցեր եմ . հարիւրապետ էի , տրիբուն
եղայ . հարիւրքսան պատերազմի մէջ
մտայ . ու տեսակ տեսակ պսակներ ,
թրեր , դիւարկներ , դէնքեր առի , եր-
բեմն պարսպէ անցնելով , երբեմն մինակ
պատերազմելով . քառսուսըհինգ ալ
վերք կայ վերաս՝ բոլորն ալ գիմացի կող-
մըս . ու ինծի փոխարէն մը չէ եղած .
մանաւանդ թէ իմ հնարքովս առած եր-
կիրներուս ալ հիմա ուրիշները տիրեր են :
Ժողովուրդը աս լսելով աւելի կատղե-
ցան ու կըկանչվըռաէին՝ թէ Ագարա-
կային օրէնքը հաստատուի , Գենտատոսին
ալ փոխարէն ըլլուի : Ասանկով տրիբուն-
ներն ու պատրիկները մէկզմէկու գէմ

Ք. Ա շատ վէճ ընելէն ետքը ագարակային օրէնքը մնաց առջինին պէս: Բայց Հռոմայեցիք առ խռովութիւններէն ձանձրացած, կառավարութե կերպը փոխելով տասնպետներ գրին:

Հ. Տասնպետներուն իշխանութիւնն ի՞նչ էր:

451

Պ. Որովհետեւ ինչպան իրեքհարիւր տարի Հռոմայեցոց դատարարները որոշ օրէնք մը չունէին, իրեք հոգի խրկեցին Յունաստան որ իրենց պէտք եղած օրէնքներն ընտրեն ու առնեն բերեն: Աս միջոցիս Հռոմ սաստիկ ժանտամաճ ինկաւ. ինչպէս որ միշտ մէկքանի տարին անգամ մը կըսասականար ու շատ մարդ կըջարգէր. ետէն ալ ժանտամաճին պատճառաւ սով եղաւ: Ետքը երբոր դեսպանները դարձան, ամէնուն ուղեւոր տասը հոգի ընտրուեցան Տասնպետ անունով, որոնց իշխանութիւնը տարեկան էր, և ամէն օր կարգաւ անոնցմէ մէկը գլխաւոր կըստպուէր ու դատատանները կըտեսնէր: Առջի տարին ասոնք ան բերած օրէնքները կարգի գրին ու տասը տախտակի վերայ փորեցին, երկրորդ տարին երկուք ալ աւելցնելով եղաւ տասերկու տախտակ: Եւ անկէ ետքը որոշեցին որ ամէն տեսակ իշխանութիւնները վերցըին ու մինակ ան տասը հոգին ամէն բան հոգան: Ապախոս առջի տարւան տասնպետներուն մէկը ամէնուն սիրելի ըլլալով երկրորդ տա-

րին նորէն ինքն որ ընտրուեցաւ, առջի
 բերանը չուզէլ ձեւացուց, ան մտքով որ
 իր ընկերները հրաժարին: Ուստի երբոր
 ժողովուրդն ստք կոխեցին ու զինքը
 դու իս որոշեցին, մէկէն յանձն առաւ,
 և իր կողմը բռնող ծերունիներէն վեց
 հոգի՝ հասարակ ժողովրդէն ալ իրեք
 հոգի իրեն ընկեր ընտրեց, ու անոնց ճամ-
 բայ սորվեցուց որ մէյմալ չէլլեն տասն-
 պետուէն: Ասոնք աասը մէկ եղած ըսկը-
 սան օրէնքները ստքի տակ առնել. ծե-
 րակուտին և ժողովրդեան ալ մտիկ չը-
 նելով՝ սլաշտօննին չիձրգեցին, ու ամէն
 բռնութի ընել ըսկսան, աքսորել, մեռ-
 ցընել, յախշտակել. վասն զի հեռերնին
 սրիկայ մարդիկներէն իզատ դուռնդ մըն
 ալ զօրք ունէին: Ասոր համար հռոմէն
 շատ մարդ ցրուեցան գնացին. Ն՛ուէ տ՛ք
 ու Վ՛րլակեանք ալ ըսկսան հռոմայ-
 եցոց երկիրները կոխել: Անտանը Աս-
 պիոս զօրքը իրեք բաժնեց ու իր ընկեր-
 ներուն հեա անոնց վըրան գնաց, և ինչ-
 պէս որ հռոմայեցոց սովորութիւն էր որ
 զօրապետին չիհաւնած ատեննին՝ կա-
 մօք կըյաղթըւէին, ան անգամուն ալ
 թշնամին մօտեցածին պէս՝ ձգեցին փա-
 խան: Ասոր վըրայ շատ չանցաւ՝ երկու
 անիրաւ ըսպանուի ալ ըրին տասնպետ-
 ները. մէյմը Սիկկիոս Դենտատոսին,
 մէյմընալ Վիրգինիա անուռով աղջկան
 մը, անով իրենց իշխանութիւն ալ վերցը-
 ւեցաւ:

Ջ. Դենտատոս ինչո՞ւ և ի՞նչպէս ըստ պաննըւեցաւ :

Պ. Երբոր իմացան տասնպէտներն որ Դենտատոս արիքուններուն իշխանուիը նորէն հաստատել կըջանայ, պղտի դունդով մը զինքը մէկ տեղ մը խրկեցին, զորացը գաղտուկ ապսպրրելով որ զինքն ըստաննեն : Անոնք ալ նեղ տեղ մը տարին զանի ու վերան վազեցին . բայց Դենտատոս յանկարծ իմանալով, կարճութեանոնցմէ շատը մեռուց . ետքը ինքն ալ անոնց նետած քարերէն վիրաւորեցաւ ինկաւ : Տասնպէտները սուգ ձեացուցին անոր վերան, բայց խարդախութիւնը իմացեցաւ . ու այլ աւելի ատելի եղան ամէնուն :

Ջ. Ախրգինիա ո՞վ էր և ի՞նչ պատճառաւ մեռուցին զինքը :

Պ. Ախրգինիա՞ Ախրգինիոս հարիւրապետին աղջիկն էր : Անգամ մը Ապպիոս տեսնելով զանի՝ ուզեց իրեն կին առնել . բայց որովհետև ազնուականներուն արգիլած էր ժողովրդեան հետ խնամութիւն ընելը, ուզեց խարդախութեամբը առաջ տանիլ : Խորհուրդ տուաւ Վրոգիոս անունով ցած մարդու մը՝ որ ճամբան Ախրգինիային հանդիպելով բռնեց՝ իմ աղախնիս զաւակն է ըսելով . և Ապպիոսին առջին գատաստանի ելաւ :

Կղողիոս կրպնդէր թէ Ա իրգինիոսն ալ
 գիտէ առ բանըս . բայց հոս չըլլալուն
 համար ըստասենք կրսէր ինչվան որ գայ :
 Անասենը Ապալիոս ըսաւ որ ազջիկը
 Կղողիոսին արւի ինչվան որ Ա իրգինիոս
 գայ : Ինչիւն որ Ա իրգինիային նշանածն
 էր՝ ոտք կօխեց որ ինչվան հայրը չիգայ՝
 տալ չըլար . բայց անօգուտ : Ապալիոս
 գաղտուկ գրեց բանակը զօրապետին որ
 զԱ իրգինիոսը հռոմ չիխրկէ , և գրօը
 ւանց ապստղրեց որ կանչեն Ա իրգինիո-
 սը : Բայց Ապալիոսէն առաջ Ա իրգինիո-
 սին բարեկամները մարդ հասուցեր էին ,
 և անիկա Ապալիոսին գաղտուկ գրած
 հրամանէն առաջ ճամբայ ելած ըլլալով
 շուտ մը հասաւ . ուստի Ապալիոս ապշե-
 ցաւ ու ինչ ընելիքը չէր գիտէր : Իսկ գա-
 տաստանին ասենը թէպէտ Ա իրգինիոս
 Կղողիոսին ամէն խօսքերը սուտ հանեց ,
 և բոլոր ժողովուրդն իմացան թէ որսնն
 է իրաւունքը . բայց Ապալիոս կիրքովը
 կուրցած՝ իր անխելք մտածութենէն ետ
 չիկեցաւ . վճիռ հանեց որ Ա իրգինիան
 Կղողիոսին արւի : Ա իրգինիոս յուսա-
 հատած , տեսաւ որ ուրիշ ճար չիկայ ,
 եղած վճռոյն հաւնիլ ցցուց . և հրաման
 ուզեց որ վերջի բարեւը տայ զաւկին :
 Երբոր Ապալիոս հրաման տուաւ , Ա իր-
 գինիոս էրած սրտով գնաց իր զաւկին
 քով որ կէս մեռածի պէս լալով հօրը
 գիրկն ինկաւ . ան ալ զինքը կամայ կա-
 մայ մէկգի քաշելով ինչվան հրասարաւ

կին մէկ կողմը մտադործի խանութին առջևը տարաւ ու յանկարծ դանակ մը առնելն ու աղջկանը սիրտը խոթելը մէկ րբաւ, ըսելով. Իմ տեղըս աս թուրը ազատէ զքեզ բռնաւորին ձեռքէն : Ետքը քաշեց հանեց դանակն ու Ապպիոսին ցուցընելով, Ա՛յ անդուժ՝ ըսաւ, աս անմեղ արիւնը թող խնդրէ քեզմէ վրէժը : Եւ անանկ դանակը ձեռքը բռնած ըսկտաւ ժողովուրդն ու զօրքը յորդորել որ ելլին ազատուինին ձեռք ձգեն, վրէժ խնդրուի ընեն : Այնչափ որ ամէն ժողովրդեան սիրտը վառւեցաւ, զօրքերն ալ անոնց հետ զօրասպետնին ձգեցին՝ Աւենտին լեռը քաշւեցան :

26

Հ. Տասնսպետներուն վերջանալն ի՞նչ պէս եղաւ :

Պ. Երակոյտը տեսան որ Հռոմ պարպեցաւ և ուրիշ ճար չիկայ խաղաղութիւնը, բռնի իշխանութիւննին ձգել տուին տասնսպետներուն, ու խրկեցին իմացուցին ժողովրդեան՝ յորդորելով որ գան առջի կարգերնին պահեն, անոնք ալ եկան Տրիբուններ ու Հիւսպատոսներ դրին : Ետքը Ապպիոսն ու Ոպպիոսը դատաստանով բանտ դրուեցան ու հոն մեռան, մէկալ տասնսպետներն ալ քշւեցան :

Ն . Տասնպետներուն ջնջուէլէն ետքը Ք . Ա
առջի հիւպատոսուէ կարգը որչափ ա-
տեն գիմացաւ :

Պ . Միշտ նոյնպէս մնաց . և թէպէտ 445
ժողովուրդը ուզէց փոփոխութիւն ել-
բայց առաջ չի գնաց : Ասան զի արիբուն
ները ծերակուտէն երկու օրէնք խնդրե-
ցին . մէյսը որ հասարակ ժողովուրդը
կարենայ ազնուականաց հետ խնամուի
ընել . մէյսալ որ ժողովրդականք կա-
րենան հիւպատոս ընտրուի : Աս բանե-
րուս համար շատ խուժուի ըլլալէն ետքը
որոշեցին որ ան տարւան համար վէց
հոգի ընտրուի հիւպատոսներուն տեղը՝
որ Տէրբան զօրաց կոչուին , իրեքը ծերա-
կուտէն , իրեքն ալ ժողովրդէն : Բայց
ուրիշ երկու իշխաններ ալ գրուեցան հա-
մարակալ անունով , որոնց պաշտօնն եր
ժողովուրդը համբել ու ամէնուն՝ ինչ-
վան ծերակուտին ալ ըրածը քննել ու
գիր անցընել . և պէտք եղած ատենը
հասարակ ժողովրդէն մէկը ազնուակա-
նաց կարգը խոթել : Ասոնց իշխանուիը
հինգ տարի կը քշէր : Իսկ առջի համա-
րակալները Պապիրիոս ու Սեմարոնիոս
ծերունիներն եղան . և ինչվան հարիւր
տարիի չափ ասոնց ցեղին մէջ մնաց հա-
մարակալուիը :

Ն . Համարակալութե իշխանութիը
գրուէլէն ետքը Հռոմայեցիք ինչ ըրին :

Պ . Ան միջոցին Արդէացիք իրենց ծե-
րակուտէն աստատմբեր էին . անոնց ծե-

բակոյտն ալ ժողովրդեան դէմ հռոմայեցոցմէ օգնուի ուզեցին : Ուստի շուտ մը Գեգանիոս հիւսարատօսը գնաց Արգէացոց յաղթեց, ու զամէնքն ալ զէնքերնէն մերկացուց ու թրի տակէ անցուց : Նոյն ատենները հռոմ սաստիկ սով ըլլալով, Սպուրիոս Մելիոս հարուստ մօրդը Եարուրիայի ցորենները բոլոր ինքը գնեց ու ամէն օր աղքատներուն կրբաժնէր՝ սրտերնին շահէլու համար, որ զինքը թագաւորեցընեն :

Հ. Սպուրիոս Մելիոս կըրցաւ իր թագաւոր ըլլալու խորհուրդը առաջ տանիլ :

Պ. Չէ. վասն զի ինքը ժողովրդէն ու արիբուններէն բաւական կուսակից ժողվէլէն ետքը՝ երբոր իր տունը գիշերանց շտա զէնքեր ալ սրատրաստեր էր, Մինուկիոս ազնուականը խմացածին պէս՝ ծերակուտին հասկըցուց. անոնք ալ անուանիկիննատոսն որ ութսուն տարւան էր՝ նորէն իշխանասպետ դրին : Աինկիննատոս զՄելիոսը գատաստանի կանչեց. ան երբոր մօտիկ չըրաւ, վերան խորկեց Ահալա զօրասպետը որ բռնէ բերէ. երբոր նորէն Մելիոս չուզեց գալ, Ահալա զինքը հոն հրասպարակին մէջ ըսպաննեց. Աինկիննատոս ալ Մելիոսին երկիրները ծախել տուաւ, տունը վիուց, և մէջի համբարները աղքատաց բաժնեց : Տրիբունները կատղեցան Մելիոսի մահուանը վերայ ու կուզէին օր հիւսար

տոսներուն տեղը նորէն զինուորական արիքուններ գրւին . Բայց Փիղենացոց ու Աէյացոց գէմ պատերազմ Բացւելով չիկրրցան ուղածնին առաջ տանիլ ու մէկալ տարին նորէն հիւպատոսներուն իշխանուիլ հաստատուեցաւ :

22

Հ . Մեղիոսին ըսպաննրուէէն Էաւ ինչ պատճառաւ Հռոմայեցիք Փիղենացոց ու Աէյացոց գէմ ելան :

Պ . Հռոմայեցիք երբոր իմացան թէ Փիղենացիք Աէյացոց հետ միաբաներ են իրենց գէմ , գեսպան խրկեցին՝ պատճառը հարցընելու . անոնք զգեսպաններն ըսպաննեցին Աէյացոց թագաւորին հրամանովը : Անտոնը Հռոմայեցիք աս անիրաւուէ վրէժը հանելու համար՝ թողուցին իրենց մէջի խռովութին ու անոնց գէմ պատերազմի ելան . և իրենցմէ ալ շատ մարդ կորսընցընելով յաղթեցին : Կուռնեղիոս Կոստոս անունով մէկը զԱէյացոց թագաւորն ըսպաննեց ու գլուխը թրին ծայրն անցուցած՝ Աէյացոց ցցուց . անոնք ալ շփոթեցան ցրուեցան : Եւսքը Կուռնեղիոս Կոստոս թիբրին կողոպուաներն առած Հռոմ եկաւ , և Հռոմին մէջ աս երկրորդ անգամն էր որ ասանկ մեծ յաղթանակ եղաւ : Բայց Աէյացիք ու Փիղենացիք չիհանդարտեցան ինչվան որ բոլորովին քաղաքնին ալ չիկորսընցուցին :

Ք.Ա

Հ. Ինչպէս առին Հռոմայեցիք Փի-
գենա ու Աէյէս քաղաքները :

400

Պ. Հռոմաստիկ ժանտամահ իյնա-
լով Աէյացիք ու Փիգենացիք զօրացան,
ինչվան քաղաքին գուռը հասան : Անա-
տենը Սերվիոս իշխանապետ նստելով
գիւրաւ վարնտեց զանոնք ու Փիգենա
քաղաքն առաւ : Բայց Աէյէան ալ առ-
նելու և բոլորովին զանոնք տկարացնե-
լու համար սէտք եղաւ որ բոլոր ուժեր
նին թափեն Հռոմայեցիք : Նախ մեծ
պատրաստութիւն գնացին Աէյէս քա-
ղաքին չորսդին փոսեր փորեցին . և դրսի
թշնամիներէն ալ ազատ մնալու համար՝
իրենց բանակին դրսի կողմէն ալ ուրիշ
փոսեր փորեցին : Ասանկ տասը տարի
քաղաքը պաշարած պահեցին . և իրենք
ձմեռը կաշիէ վրաններու մէջ կրկենային,
ամառը քաղաքին հետ կրպատերազմէին .
ետեւնուն ալ ուրիշ Աէյացիք դրսէն շատ
անգամ վերանին կրվազէին . ասանկով
շատ վտանգներ քաշեցին , շատ մարդ
ալ կորսընցուցին , ինչվան որ Փուրիոս
Կամիլլոս իշխանապետը եկաւ : Ասիկա
գեանին տակէն ինչվան բերդին մէջտեղը
ծածուկ ճամբայ բանալ տուաւ . ու երբ
որ պատրաստուէր էին քաղաքին մէջը
երևնալու , յանկարծ դրսէն քաղաքին
վերայ վազել մը ձևացուց . Աէյացիք
բոլոր պարսպին վերայ ժողվուած՝ ան-
հոգ կեցեր էին , գիտնալով թէ իրենց
ամուր բերդերուն Հռոմայեցիք չեն կըր-

390

նար վնասել: Ան միջոցին Հռոմայեցոց զօրքը յանկարծ քաղաքը լցեցան, Աէյացիք ալ սարսափած մնացին. շատը ջարդըւեցան, շատն ալ անձնատուր եղան: Հռոմայեցիք կողոսուտով լցեցան, և Կամիլլոս հին ատենի թագաւորնէրուն պէս չորս ճերմակ ձիով կառքի մէջ նստած՝ յաղթանակով Հռոմ մտաւ: Բայց աս հանգէսը Հռոմայեցոց շատին աչքին զարկաւ. որովհետեւ ան չորս ճերմակ ձիերն Արև ու Գիտոս անձներուն միայն արժանի կրտսպէին:

Հ. Աէյէան առնելէն ետեւ Կամիլլոս ինչ երևելի գործք ըրաւ:

Պ. Փաղիսկեանց վերայ գնաց, յաղթեց, ու քաղաքին ալ պաշարեց. իր վեհանձնութիւր պատճառ եղաւ որ քաղաքացիք խոնարհին ու հաշտութիւննէն: Ան քաղքին ազնուական տղոց վարժապետը սովորուի ունէր որ ամէն օր տղաքը քաղքէն դուրս կը հանէր կը պտըտցընէր. և որովհետեւ ան պաշարման ատենն ալ կը հանէր, օր մըն ալ յանկարծ տարաւ տղաքը Կամիլլոսին մասնեց, ըսելով որ Քաղաքացիք տղոցը սիրուն համար անձնատուր կը լլան: Բայց Կամիլլոս ակորժեղու տեղ բարկացաւ անոր անհաւատարմութիւր վերայ. հանւեցուց զինքը, ձեռվընէրն ալ ետին կապած՝ աչկերաներուն ձեռքը տուաւ որ ծեծելով ծեծելով զինքը քաղաք տանին: Փաղիսկեանք զարմացան Կամիլլո-

Ք. Ա սին արդարութիւնը վերայ, ու շատ ըստակ վճարելով հաշտութիւն ըրին :

Աս ատենները հռոմայեցոց մէջ խնդ մտաւ որ կէսերնին երթան Ա. էյէս քաղաքը բնակին . բայց Վամիլոս գէմ կէցաւ . անոր համար տրիբունները վերան զրպարսուի ըրին թէ Ա. էյէսի կողոպուտէն շատ բան իրեն սլահեր է : Վամիլոս այսպիսի ապերախտութիւն չի գիմանալով ելաւ հռոմէն . և Վամիլոսին առջևէն անցնելու ատենը դէքերէն խնդրեց որ վրէժը հանեն, ու ինքը գնաց Արգէա քաղաքը քաշուեցաւ . հոն իմացաւ որ տրիբուններն իր վերայ մեծ տուգանք գրեր են . բայց իրենց ապերախտութիւնը համար քաշած տուգանքնին ալ մեծ եղաւ՝ Գաղղիացոց վերանին գալովը :

ԶԷ

Հ. Գաղղիացիք ինչ սլատառով հռոմայեցոց վերայ եկան :

387

Պ. Գաղղիացիք երկու հարիւր տարւընէ իվեր չորս գին տիրելու ըսկսեր էին . և անատենները Նարուրիայի Վլուսիոն քաղաքը սաշարեցին : Նարուրացիք Գաղղիացոց վայրենութեն սարսափած՝ հռոմէն օգնուի խնդրեցին . անոնք ալ Գաղղիացոց դեսպան խրկեցին՝ իմացընելով թէ Անիրաւութիւն է առանց սլատառի օտար տէրութիւն վերայ ելլել : Բրեննոս Գաղղիացոց զօրասլետը դեսպանները

սրատուով ընդունեցաւ, ու սրատասխան
 տուաւ թէ Կարիճ մարդուն իրաւունքն
 իր թրին բերանն է. Հռոմայեցիք ինչ-
 վան հիմա և ոչ մէկ երկիր մը իրաւունք
 քով առած են. բայց հիմա մեր իրաւ-
 ունքն սա է՝ որ Կլուսացիք իրենց եր-
 կիրները բանեցընելու մարդ չունին ու
 մեզի թող չենխտար որ բանեցընենք: Գեւ
 սրանները սա սրատասխանին վերայ նե-
 ղացան, բայց ձայն չիհանեցին. ու Կլու-
 սիոն մտածնուն պէս՝ բնակիչները գր-
 դուելով՝ առջևնին ինկած՝ Գաղղիացոց
 վերայ վազեցին, և դեսսպաններուն մէկն
 իր ձեռքովը Գաղղիացի մը ըսպաննեց:
 Բրեննոս իր զօրքը ետ քաշեց. ու գան-
 դատ խրկեց Հռոմայեցոց. և երբոր ա-
 նոնք լուեցին՝ չուզելով Գաղղիացոց իրա-
 ւունք տալ, Բրեննոս կատղած՝ Հռոմին
 վերայ եկաւ՝ ճամբուն վերայի քաղքը
 ներուն մնաս մը չընելով: Ալլիա գետին
 քով Հռոմայեցոց հետ պարնուեցաւ,
 քառսուն հազար հոգի մեռուց, ու ինչ
 վան երկու օր անոնց կողոսպուաները ժող
 վելու և ուրախութի ընելու անցուց:

Հ. Հռոմայեցիք Ալլիա գետին քով
 յաղթըւելէն ետքը ինչ ըրին:

Պ. Ամենեւին տեղացի մը օգնուէ յոյս
 չունենալով, կարիճները Կապիտոլիոնին
 բերդը մտան սրահւրտեցան. ոմանք ձգե-
 ցին փախան, շան ալ քաղքին մէջ մնա-
 ցին: Իսկ քուրմերն ու ծերակուտին ծե-
 րերը ժողովրդեան մեզքերուն համար

զո՛հ ըլլալու մտքով՝ հագւած կապւած
 և փղոսկրէ աթոռներու վըրայ նստած
 շարեցան ատեան ընելու տեղերնին :
 Գաղղիացիք Ալլիայի պատերազմին եր-
 ըրորդ օրը Հռոմին առջևն եկան ու տե-
 սան որ դռները բաց , և պարխապներուն
 վըրայ մարդ չիկայ . առջի բերանը վախ-
 ցան՝ խարդախութի կարծելով . բայց
 ետքը ըզգուշուք ներս մտան տեսան որ
 ան ծերերը ժանտ երեսով շարւեր նստեր
 են անշարժ : Զարմանք եկաւ վըրա-
 նին , ու Հռոմայեցոց կուռքերը կար-
 ծեցին զանոնք . բայց մէջերնէն մէկը
 գնաց Պապիրիոս ազնուականին մօրուքը
 շոյեց : Պապիրիոս իրեն նախատինք սե-
 պելով ձեռքի փղոսկրէ գաւազանովը
 Գաղղիացիին գլխուն զարկաւ . անա-
 տենը Գաղղիացին ալ բարկացաւ , հա-
 նեց թուրը՝ Պապիրիոսն ըսպաննեց : Ետքը
 կարգաւ զամէնքն ալ մեռուցին , և իրեք
 օր իրեք գիշեր բոլոր քաղաքին կրակ
 տուին , կիներն ու աղաքը անխնայ թրէ
 անցուցին , Ապպիտոլիոնն ալ պաշարե-
 ցին : Բրեննոս խմանալով որ լեռանը կող-
 մէն ծածուկ ճամբայ կայ գէպի բերդը ,
 գիշերանց գունդ մը զօրք խրկեց հօն ,
 որ երբոր պարսպին վըրայ ելան՝ ու սա-
 հասպանները քնոյ մէջ գանկելով՝ բերդը
 մտնելու վըրայ էին , Հերայի կռատանը
 մէջի սադերն ըսկսան կանչվըռտել : Ար-
 թընցան պահասպաններն ու տեսնելով
 վտանգը նախ Մանլիոս անուանով կարիճ

մարդը ձեռքովը երկու Գաղղիացի սլարըս-
 պին վերայէն վար հըրեց. մէկալ Գաղղիա-
 ցիք ալ չեկըրնալով գիմանալ՝ սլարըս-
 պէն վար թափեցան : Ան միջոցին Վա-
 միլոս իր առանձնացած տեղէն ելած իշ-
 խանապետ եղած, ասդիէն անգիէն զօրք
 ժողված, Գաղղիացոց հռոմէն դուրս
 գտնըւող զօրացը աղէկ ջարդ մը տուեր
 էր : Բրեննոս վախնալով որ չըլլայ թէ
 ետեւէն պաշարւի, հռոմայեցիք ալ սո-
 վէն խիստ նեղացած, հաշտութիւն ըրին՝
 դաշինք գնելով որ հռոմայեցիք երկու-
 հարիւր քառսուն հօխայ ոսկի տան Գաղ-
 ղիացոց . անոնք ալ բոլորովին հեռանան
 հռոմայեցոց երկրէն : Ոսկին կշռելու
 ատեն Գաղղիացիք երբոր խարդախութի-
 կընէին, հռոմայեցիք գանգատեցան .
 Բրեննոս հանեց իր թուրն ալ կշեռքին
 մէջ դրաւ, ըսելով . Վայ յաղթըւողին :
 Երբոր սա խօսակցութիւները կըլլային՝ Վա-
 միլոս շատ զօրքով յանկարծ վերայ հա-
 սաւ . ան ոսկին ետ տանել տուաւ ու
 երկու անգամ Գաղղիացոց հետ սաստիկ
 զարնըւելով ջնջեց զամէնքը :

ՁԸ

Հ . Գաղղիացոց ջարդըւելէն ետքը
 հռոմայեցիք ի՞նչ ըրին :

Պ . Չորս դիէն նորէն ժողվըւեցան
 ու նորոգեցին հռոմը . ետքը Մանլիոսին
 ըրած կարճուէր համար ալ իրեն տուն
 մը շինեցին ու ասլրուստ կապեցին : Բայց

անիկա Կամիլլոսին վերայ նախանձելով ըսկսաւ ժողովրդեան խոստմունքներ ընել, ոմանց ալ պարտքը կրվճարէր, ու զամէնքը մեծերուն դէմ կըդրգուէր: Ծեռակոյտը անոր անկարգութիւններուն շատ դէմ գնեւէն ետքը երբոր ճար չեղաւ, իշխանապետի ձեռքով զինքը դատաստանի կանչեցին ու բանտ դրին: Բայց ետքը ժողովրդեան ձեռքով ազատեցաւ ու նորէն ըսկսաւ առջի ջուրին վերայ երթալ: Անոր համար նորէն Կամիլլոսը տրիբուն զօրաց ըրին՝ որ զՄանլիոսը դատաստանի կանչեց, և խմանալով թէ թագաւոր ըլլալ կուզէ՝ դատապարտեց զինքը, որ տարին Տարպէոնի Ժայռէն վար նետեցին. ետքը Մանլիոսի տունն ալ փլուցին ու արգելք դրին որ անկէց ետքը ցեղեր, նուն մէջ Մանլիոս անուն չիգրուի:

Արտէն թէ ան ատենները Հռոմի հրապարակին մէջ մեծ վիհ մը բացուեցաւ՝ որ հողով չէին կըրնար լեցնել. և քուրմերն ըսին՝ թէ Ան վիհը լեցնելու համար Հռոմին ամէնէն ազնիւ բանը մէջը նետելու է: Երբոր ամէնքը սարսափած տարակուսած կըմըտածէին, Կուրտիոս կտրիճ ասպետը զէնքերով զարդարւած՝ ձիովը եկաւ ան վհին մէջ նետուեցաւ, ըսելով թէ Չէնքերն ու կտրճութիւն է ամէն բանէն ազնիւ: Արտէն թէ անատենը վիհն ալ վերան գոցուեցաւ: Ետքը քիչ ատենէն նորէն դարձան Գաղղիացիք Հռոմայեցոց վերայ եկան:

Ջ. Երկրորդ անգամ Գաղղիացոց Ք.Ա
 Հռոմայեցոց վերայ՝ գալու ատենը ի՞նչ
 երևելի դիպուած եղաւ :

Պ. Մէկ հսկայ Գաղղիացի մը մինակ 341
 Հռոմայեցիի մը հետ զարնըւիլ ուզեց .
 դիմացն ելաւ Տորկուատոս Մանչիոս պա-
 տանին , ու անոր թուրէն ըզգուշանա-
 լով՝ իր թուրը անոր փորը խոթեց ու
 ըսպաննեց , և միայն անոր վզի մանեակն
 առաւ ու գարձաւ . անոր համար Տոր-
 կուատոս կոչուեցաւ՝ որ Մանեկաւորը
 սել է : Ետքը Հռոմայեցիք բոլորովին
 յաղթեցին ու վաճնաեցին Գաղղիացի-
 ները : Ասկից ետքը երևելի եղաւ Լա-
 տիններուն ու Սամնիացոց գէմը քամ
 պատերազմին :

Ջ. Հռոմայեցիք ի՞նչ պատճառաւ
 Լատիններուն գէմ ելան :

Պ. Լատիններն ուժովցած ու հպար- 340
 տացած՝ ուղեցին որ Հռոմայեցոց հետ
 մէկ ըլլան , ու հիւսպատոսին մէկը և ծե-
 րակուտին կէսն իրենցմէ ըլլայ : Ասոր
 վերայ Հռոմայեցիք նեղացած՝ սպաե-
 րազմի ելան . և որովհետև Լատիններն
 ամէն բանով Հռոմայեցոց խիստ նման
 էին , Հռոմայեցիք ապապըրեցին որ հրա-
 մանէ դուրս մարդ չիշարժի՝ որ վասն-
 գաւոր բան մը չիհանգըպի : Ան միջոցին
 Լատիններուն զօրապետներէն մէկը ե-
 լաւ կանչեց որ մէկը դիմացն ելլէ՝ մինակ
 կռուելու . բայց Հռոմայեցոցմէ մարդ
 չիշարժեցաւ՝ հրաման չըլլալուն համար :

Անատենը Մանչիոս հիւսարատոսին տղան
Տիտոս Մանչիոս աս ամօթը չեքաշէլով,
վազեց գէմն ելաւ՝ յաղթեց ան մար-
դուն, կողոպտեց, ու հօրը վրանը եկաւ,
մոռնալով թէ հրամանի գէմէր ըրածը:
Հայրը երբոր տեսաւ, սասափի նեղա-
ցաւ. Նաւ է ըսաւ՝ որ զինուորական
կարգը պահէի, քան թէ իմ տղաս քաջ
ու սիրելի ըլլալուն՝ կարգի գէմընէ ու
ողջ մնայ. առէք ըսաւ՝ գահիճներ,
կարեցէք զաւկիս գլուխը: Աս անգութ
հրամանին վերայ սարսափեցան ամէնքը.
քայց երբոր տեսան արիւնչուայ փռուած
կարիճին մարմինը մէկ գին՝ գլուխը մէ-
կալ գին, սարսափը կատաղուի փոխե-
ցաւ, ու ըսկասն անիծել զհայրը: Ետքը
զարնրւեցան Նատինացոց հեա, ու երբ-
որ յաղթըւեցան՝ հարցուցին հաւա-
հարցներուն ու անոնց ապուրրելովը
աւելի տկարացած կողմին հիւսարատոր
Դեկոս՝ երկան ծիրանի մը վերան առած,
գլուխն ալ քօղ ձգած, նիզակի մը վը-
րայ բազկատարած կեցած՝ ինքզինքը
գժոխքի անձներուն նուիրեց. ետքը զէն-
քերն առած՝ ձի հեծաւ ու կրակի պէս
թշնամեաց մէջը նետուելով իրար անցուց
զամէնքը, ու ինքն ալ զարնրւեցաւ ին-
կաւ: Ասով հռոմայեցիք սիրա առին ու
կատաղաբար թշնամւոյն վերայ վազե-
լով անանկ ջարդ մը տուին որ անոնց
չորս մասին մէկը հազիւ ազատեցաւ:
Աս ատեններըս հռոմ սասափի ժանտա-

մահ ըլլալով, Եպիստակոսէն օձ մը բե- Ք. Ա
րին ըսելով թէ Ասկղեպիոսն է՝ բժշկու-
թէ չածը. ու երբոր ժանտամահը դա-
դրեցաւ, ան օձին կուստուն մը շինեցին
Տիրերիսին մէջի կղզիին վերայ:

ՁԹ

Հ. Սամնիացիք ո՞վ էին, և Հռոմայ-
եցիք ի՞նչ պատճառաւ անոնց դէմ
էլան:

Պ. Սարինեանց մէկ մասն էին Նէա 343
սօլսոյ կողմերը, ու Կամպանիացոց դէմ
պատերազմի ելեր էին. Կամպանիացիք
Հռոմայեցոցմէ օգնուի ուղեցին, Հռո-
մայեցիք ալ գնացին յաղթեցին ու մէ-
ջերնին հաշտուի ըրին: Քիչմը ետև Կա-
սուա քաղաքին մէջ եղած Հռոմայեցոց
զօրքը իրենց զօրապետէն ապստամբեցան
ու Կուինտոս անունով ծեր զինուորը
բռնի իրենց գլուխ դրած՝ ինչլան ու թը
մզոն Հռոմին մօտեցան: Ծերակոյսը
մէկէն զՎաղերիոս Կորվոսը* որ Սամնիա-
ցոց յաղթեր էր՝ իշխանապետ գրին ու
անոնց դէմ խրկեցին. և երբոր ամէնքը
կարծ էին թէ Հռոմայեցիք մէջերնին

* Կըսեն թէ անգամ ճշ Գալլիայի հսկայի
ճշ հեթ թնակ պարտերազմելու արենը ագոսա-
ճշ իջեր է լահանին վերայ, ու անով յաղ-
թեր է. անոր համար իրեն Կորվոս անուն
տրեր են, որ Ագոսա ըսել է:

մեծ պատերազմ սխտի ըսկսին , Աս-
 դերիոս անուշուք անանկ համողեց զա-
 մէնքն որ հաշարւեցան ու գրկըւեցան
 մէկգմէկու , և ծերակուտէն թողու թի
 առնելով առանց պատժոյ աղատեցան :
 Բայց Սամնիացիք նորէն ապստամբելով ,
 նորէն շատ անգամ զարնըւեցան , ու
 սաստիկ նեղը մտան . անոնց Պոնտիոս զօ-
 րապետն ալ վախնալով հաշտուի ուղեց-
 բայց Հռոմայեցիք յանձն չառին : Անա-
 տենը Պոնտիոս գիտնալով որ Հռոմայե-
 ցոց պատերազմելով չիկըրնար յալթել ,
 նեղուածք տեղի մը մէջ զիբէնք պաշա-
 րելու համար՝ խարդախուք ձայն հանեց
 թէ Սամնիացիք Հռոմայեցոց դաշնակից-
 ներուն Լուկերիա բերդը պաշարեր են .
 և քանի մը զինուորներ դրաւ որ հովուի
 հագուստով Հռոմայեցոց բանակին մօտ
 ոչխար արածեն . որոնք երբոր Հռո-
 մայեցոցմէ բռնըւեցան՝ ըսին թէ Լու-
 կերիա պաշարւած է : Հիւպատոսներն
 առանց մտածելու գնացին ան նեղ ճամ-
 բէն մտան , ուսկից սէտք էր որ անցնէ-
 ին Լուկերիա երթալու համար : Անա-
 տենը Սամնիացիք ետեւէն առջևէն ճամ-
 բան քարերով գոցեցին . անանկ որ կամ
 սխտի անօթուէ մեռնէին , և կամ անձ-
 նատուր ըլլային : Չպատմըւելու բան է
 ան հսարտ Հռոմայեցոց ամօթն ու
 յուսահատութիւր . ինչվան որ յանձն
 առին ամէն Պոնտիոսի ուղածները , ու
 տուին Սամնիացոց վեցհարիւր սպատանդ ,

և իրենց ամէն զինուորական լաթերը .
 իսկ իրենք շապկանց թրի տակէ անցան
 գնացին, խօսք տալով որ մէյմալ ոտք
 չիկոխեն Սամնիացոց երկիրը : Ասանկ
 խաղք եղած երբոր հռոմ դարձան ,
 ամէնքը սաստիկ սուգ մտան . բայց ետքը
 նորէն պատերազմի ելան, վեց եօթը տար-
 ւան մէջ շատ անգամ յաղթեցին Սամ-
 նիացոց : Անգամ մըն ալ երբոր իրենք
 ըսկսան յաղթըւիլ, Գեկոս հիւսիստոր
 իր հօրը Գեկոսին պէս ինքզինքը կուռ-
 քերուն զոհ ըրաւ . կամօք թշնամեաց
 նեատրուն գիմացը գնաց ու մեռաւ .
 անով զօրքերը նորէն սիրտ առած՝ շատ
 ջարդ ուտելէն ետքը յաղթեցին : Անտ-
 տենը Սամնիացոց ճարը հասաւ , Եսլի-
 րոսի Պիւռոս թագաւորէն օգնուի ու-
 զեցին :

Ղ

Հ. Պիւռոս ինչպէս օգնեց Սամնիա-
 ցոց :

Պ. Իրեք հազար հոգւով իր Կինէաս
 զօրապետը Սամնիացոց օգնական խրկեց .
 ետքը ինքն ալ շատ ձիաւոր ու հետևակ
 զօրքերով և քսան վիղով նաւերով ճամ-
 բայ ելաւ , բայց փոթորիկէ մը փնասւած՝
 մէկ քանի նաւով Իտալիա հասաւ : Երբ-
 որ Պիւռոս Տարենտա քաղաքը մտաւ ,
 մէկէն Սամնիացոց ըզբօսանքի խաղերն
 սրգիլէց, ու միայն պատերազմական խա-

դերու հրամանն տուաւ : Հռոմայեցիք
 Աւելինոս հիւսպատոսը շատ զօրքով վերան
 խաւրեցին . բայց Պիւռոսի բոլոր զօրքը
 հասած չըլլալով՝ դեսպան խրկեց Հռո-
 մայեցոց որ հաշտուին : Հիւսպատոսը ար-
 համարէլով մը զՊիւռոսը՝ ցցուց իր բա-
 նակը դեսպաններուն , ու ըսաւ . Չեմ
 ճանչնար ձեր թագաւորը ոչ բարեկամ
 և ոչ թշնամի : Ետքը եկան Աիրիս դե-
 տին քովը դիմացէ՛ դիմաց բանակնին
 դրին . և Պիւռոս Հռոմայեցոց կարգը
 տեսնելով իմացաւ թէ վայրենի չէն որ-
 չափ որ կը կարծէր . ուստի ըզգուշուք
 կեցած՝ գալու զօրքին կրտսասէր : Մէյ-
 մալ յանկարծ Հռոմայեցիք գետը նեա-
 ւեցան , լողալով անդին անցան . Պիւ-
 ռոս ձիաւոր զօրքերովը կուզէր արգի-
 լել , բայց ճար չեղաւ . ուստի սաստիկ
 պատերազմի բռնըւեցան , երկու կող-
 մէն ալ եօթը անգամ մէկզմէկ ետ քշե-
 ցին . բայց ետքը Հռոմայեցիք Պիւռոսին
 վիղերը տեսնելով՝ վերանին բերդերով
 զօրքերով զարդարած՝ խիստ վախցան ու
 յաղթըւեցան . տասներէնգ հազար հօ-
 գի մեռան , ութը հազար ալ գերի գնա-
 ցին . թէպէտ Պիւռոս ալ շատ մարդ
 կորսընցուց : Արսէն թէ երկրորդ օրը
 Պիւռոս Հռոմայեցոց մեռածները տես-
 նելով որ բոլորն ալ դիմացնէն վերաւոր
 ւած էին , Ա՛հ ըսաւ , թէոր Հռոմայե-
 ցիք իմ զօրքս ըլլային , կի՛մ թէ ես անոնց
 թագաւոր ըլլայի , բոլոր աշխրբիս կը-

տիրէի: Ետքը Պիւսոս ուղեւորով հաշտու-
 թի ընել, Կինէաս ճարտասան զօրապե-
 տը գեսպան խրկեց. որուն համար կը-
 սէ եղեր թէ Կինէասայ լեզուն իմ թրէս
 աւելի ինձի յաղթուիներ տուեր է:
 Բայց ան լեզուն հռոմայեցոց չիկըրնա-
 լով յաղթել, երբոր գարձաւ՝ ըսաւ թէ
 հռոմայեցոց քաղաքը տաճար կրնամանի,
 և ծերակոյտը թագաւորներու ժողով:
 Ըն միջոցին գերի փոխելու համար հռո-
 մէն գեսպաններ եկան, որոնց գլխաւորն
 էր Փաբրիկիոս անուանի մարդը: Պիւ-
 սոս անոր աւաքինու թիները փորձելու
 համար՝ շատ ընծաներ տուաւ, Փաբրի-
 կիոս չառաւ. ետքը վախցընելու համար
 գլխուն վերայ փիղի մը պատիճ երկըն-
 ցընել տուաւ և ուրիշ վախցընելու բա-
 ներ ըրաւ. անատենը Փաբրիկիոս ժրպ-
 տելով ըսաւ. Երեկվան ընծագ, ասօր-
 վան վախցընելը՞ իմ աւջեւըս նոյն են:
 Զարմացաւ Պիւսոս ու երկուհարիւր
 գերի ազատ թողուց, դաշինք դնելով
 որ եթէ չուզեն հաշտուիլ՝ ան գերիները
 ետ դառնան: Հռոմայեցիք հաշտութիւր
 յանձն չառին ու նորէն եկան զարնըւե-
 ցան, և աւելի յաղթութիւր Յունաց
 սեսպէցաւ. բայց Պիւսոս նեղանալով
 ըսաւ. Թէոր ասանկ յաղթուի մըն ալ
 ընենք՝ բաներնիս կըբուսնի:

Հ. Հռոմայեցիք երկրորդ անգամ Պիւռոսին հետ զարնըւելէն վերջը ի՞նչ ըրին :

Պ. Երրորդ տարին նորէն ըսկասն պատերազմիլ : Անատենը Պիւռոսին բժիշկը գաղտուկ թուլթ գրեց Հռոմայեցոց՝ որ ինքը թոյն կուտայ Պիւռոսին՝ թէոր իրեն բան մը խոտասնան : Հռոմայեցիք Պիւռոսին խնայուցին՝ որ քննեց ու պատժեց բժիշկը, և Հռոմայեցոց արգարութիւնը վերայ զարմացած՝ բոլոր գերիներն ազատեց և հաշարւիլ ուղեց, բայց Հռոմայեցիք յանձ չառին. ուստի նորէն զարնըւեցան : Աս անգամ փիղերով ալ չիկրրցաւ վախցընել Հռոմայեցիները. մանաւանդ թէ անոնք գազանները վախցընելու դիւտ ալ գտան, որ կանեփէ գնտակներ կը շինէին ու բարնկցուցած՝ փիղերուն առջևը կը նետէին. փիղերն ալ խրտելով առաջ երթալու տեղ ետ դարձան ու Պիւռոսի զօրքը տակնուվերայ ըրին : Երկու կողմէն ալ շատ ջարդ եղաւ. բայց Հռոմայեցիք Պիւռոսի բանակին ալ տիրեցին, և անով բանակ դնելու կարգ սորվեցան, որ բանակին տեղը չափելու և չորսդին փոս բանալու է եղեր. և անով ետքը շատ յալթուիներ ըրին : Իսկ Պիւռոս երբոր տարակուսած կը մտածէր, Սիկիլիայէն ու Յունաստանէն

մարդ էկաւ որ զինքը կուզէին . ինքն
ալ Տարենտացոց կամփին դէմ հոն պահա-
սականներ թողուց ու գնաց Իտալիայէն՝
խոստանալով որ թէոր պէտք ըլլայ՝ կը-
դառնայ :

Հ . Պիւռոսին ետ դառնալէն ետքը
Սամնիացիք ինչ ըրին :

Պ . Տարենտացիք Պիւռոսին թողու-
ցած պահասականներէն նեղացած , Կար-
քեգոնացոցմէ օգնուի ուզեցին . անոնք
ալ եկան շատ նաւերով Տարենտայի նա-
ւահանգիստը պաշարեցին . ուստի Տա-
րենտացիք իրեք զօրաւոր թշնամիներէն
ըսկսան տանջուիլ . ինչվան որ Հռոմայե-
ցիք բերդին պահասականները համոզելով
բոլոր երկրին տիրեցին , բերդին աշտա-
րակներն ալ փլուցին :

Հ . Հռոմայեցիք Սամնիացոց բոլորո-
վին յաղթելէն ետքը ինչ ըրին :

Պ . Տեսնելով որ գրեթէ բոլոր Իտա-
լիան իրենց հնազանդեցաւ , ըսկսան գրտի
տէրուէց աչք տնկել : Ան միջոցին Կար-
քեգոնացիք ալ Սիկիլիայի մեծ մասին
տիրած ըլլալով , բոլոր կղզին առնել կը-
ջանային : Հերոն Սիրակուսայի թագա-
ւորը որ դեռ Կարքեգոնացոց տակը չէր՝
Մամերտացոց դէմ իրենցմէ օգնուի ու-
զեց , և անոնք ծովէն ու ցամաքէն օգ-
նուի խրկեցին . Մամերտացիք ալ Հռո-
մայեցոց դիմեցին : Եւ թէպէտ Մամեր-
տացոց օգնէն անիրաւուի էր , որովհետև
Մեսսինա քաղաքին բռնուի տիրեր էին ու

Բ. Ա Մամերոսացիք կոչւեր էին, բայց ժողովուրդը աւելի իրենց շահը նայելով՝ Կարբեգոնացոց գէմ ելլել ըսկան: Աս պատերազմը կրուի Պունիկեան պատերազմ, որովհետև Կարբեգոնացիք Փիւնիկեցիներէն ելած էին:

ՂԲ

Հ. Ի՞նչպէս եղաւ առջի Պունիկեան պատերազմը:

264

Պ. Հռոմայեցիք Մեսսինային տիրեցին ու զՀերոն Սիրահուսայի Թագաւորը նեղը խոթեցին՝ որ ուզեց հաշտուիլ Հռոմայեցոց հետ. Հռոմայեցիք սիրով յանձն առին, գիտնալով որ անոր բարեկամուիլը իրենց օգուտ է. ետքը գնացին Ակրագանդ քաղաքը պաշարեցին ու առին, որ Սիկիլոայի մէջ Կարբեգոնացիք իրենց զէնքերու քաղաք ըրեր էին: Բայց Հռոմայեցիք իրենց նաւատորմի շուեննալնուն վերայ շատ կրցաւէին: Անատենները Կարբեգոնացիի նաւ մը ալէկոծուծք Իտալիայի կողմերը զարկած ըլլալով անիկա իրենց օրինակ առին ու երկու ամսըւան մէջ հարիւրքօան նաւով նոր նաւատորմի մը շինեցին: Եւ որովհետև դեռ չէին վարժած նաւերը դիւրաւ շարժելու, Ագաս անունով գործիք մը հնարեցին նաւերուն մէջ՝ որ Թշնամւոյն նաւին մօտիկնալով ան գործիքը կըձգէին, որ Թշնամւոյն նաւը

իրենց նաւին կասպուած կրմընար, և
 ցամաքի պէս նաւուն մէջ կախ կրնէին:
 Ասով Գուկլիոս հիւսարատոր Կարբեգո,
 նացոց գէմէլաւ, ու երբոր անոնք կը-
 ծիծաղէին Հռոմայեցոց նաւերուն կող-
 առածէր վերայ, առջի զարնըւելուն՝ ան
 ագռաւներովը յաղթեց Կարբեգոնացոց,
 և յիսուն կտոր պղտի նաւ ընկղմեց:
 Հռոմայեցիք մեծ հանդէսով յաղթա-
 նակ ըրին Գուկլիոսին, և սիւն մը կանգ-
 նեցին՝ վերան նաւեր փորած: Երկրորդ
 տարին նորէն Ափրիկէի վերայ խրկեցին
 Հակոբուղոսը հարիւր նաւով, որ ծովու
 վերայ փոփոխ զարնըւելէն ետքը յաղ-
 թեց անոնց, քառսունըջորս նաւ առաւ
 ու մնացածը ցրուեց: Ետքը անցան Հռո-
 մայեցիք Ափրիկէ ու շատ յաղթուններ
 ըրին, շատ քաղքըներ առին, անանկ որ
 Կարբեգոնացիք յուսահատած՝ ըսկսան
 վախնալ որ չըլլայ թէ Հակոբուղոս Կար-
 քեգոնի վերայ գայ: Բայց յանկարծ օգ-
 նուի հասաւ իրենց Քսանթիպոս Յու-
 նաց զօրքով, Կարբեգոնացոց զօրացն ալ
 կարգ դրաւ՝ որ սիրտ տունելով պատե-
 րազմի ելան, յաղթեցին, ու Հակոբ-
 ողոսն ալ բռնեցին՝ բանտ դրին: Անդին
 Հռոմայեցոց նաւատորմիլն ալ ալէկո-
 ծուած հանդիպելով շատ նաւ կորարն-
 ցուցին, և Սիկիլիայի Ակրապանդ քա-
 ղաքը Կարբեգոնացոց Կարթագոն զօ-
 րասպետն առաւ: Հռոմայեցիք նոր նա-
 ւատորմիլ մըն ալ շինեցին, բայց ան նա-

Ք. Ա ւերուն ալ մէկ մասը աւաղին վերայ նստաւ՝ ծովուն ամէն օր ցածնալ բարձրանալը չի գիտնալնուն համար : Աս միջոցներուս մէկքանի անգամ ալ զարնըւեցան Կարբեգոնացոց հետ ծովու վերայ և Սիկիլիայի մէջ, ու յալթեցին անգամ մըն ալ շատ փիտեր ձեռք ձգելով և գործածելը չի գիտնալով տեսնելու համար Հռոմ խրկեցին :

Հ. Հռեգուղոսին վերջն ինչպէս եղաւ :

256

Պ. Կարբեգոնացիք հաշտուի ընել և գերիները փոխել ուզելով Հռեգուղոսը որ չորս տարի բանտը կեցեր էր՝ ուրիշ դեսպաններու հետ Հռոմ խրկեցին, դաշինք դնելով որ եթէ Հռոմայեցիք յանձ չառնեն, Հռեգուղոս ետ դառնայ՝ սաստիկ տանջանքներ քաշելու պատրաստըւած : Քնաց Հռեգուղոս ու Հռոմ մտնել ալ չուզեց, ըսելով թէ Ես Կարբեգոնացոց դեսպաններուն հետ եկած գերի եմ : Անատենը ինչպէս որ սովորութիւն էր՝ ծերակոյտը քաղքէն դուրս աեղ մը ժողվըւեցան՝ դեսպաններուն հետ խօսելու : Հոն Հռեգուղոս տեսնելով որ իր վերայ կակրծալով կողեն հաշտուի խօսիլ, ինքը դէմ կեցաւ զամէնքն ապշեցուց, ու բռնի ամէնուն սիրտը խշխշցընելով ետ դարձաւ դեսպաններուն հետ : Անատենը Կարբեգոնացիք վերան սաստիկ բարկանալով, նախ արտեւանունքը կարտեցին բանտ դրին

զինքը, ու երբեմն երբեմն կը հանէին տաք արևուն մէջը կը կէցընէին. և ուրիշ տանջանքներ ալ տալէն ետև, մէջը ցցուած գամերով լեցուն սնտուկի մը մէջ գոցեցին զինքն ու հոն մեռաւ: Անկէց ետքը երկու կողմէն ալ ըսկսան կատաղաբար պատերազմիլ՝ փոփոխ մէկզմէկէ յաղթըւելով: Բայց վերջի նաւական պատերազմին մէջ Կարբէգոնայիք չարաչար յաղթըւեցան ու հաշտութի ուղեցին: Հռոմայեցոց ալ աչքը վախցած որ չըլլայ թէ նորէն դժբաղգուէ մը հանդիպին՝ յանձն առին, պայման դնելով որ Կարբէգոնայիք պատերազմին ծախքերուն համար հազար տաղանդ արծաթ տան. Սիկիլայէն բոլորովին հեռանան. և ձեռվընին եղած գերիները ձրի ազատեն: Ասանկով լմնցաւ առջի Պունիկեան պատերազմը քսանըջորս տարի քշէլէն ետև, երբոր երկու ազգն ալ աղէկ մը տկարացան: Եւ քսաներէք տարիէն ետև եղաւ երկրորդ Պունիկեան պատերազմը:

241

ՂԳ

Ն. Առջի Պունիկեան պատերազմէն ինչվան երկրորդը Հռոմէնչ երևելի գիւտուած եղաւ:

Պ. Նախ ամէն կողմանէ հանդէլով վեց տարի գոցեցին Յանսոսին տաճարը, որ Հռոմ շինուելէն ետքը աս երկրորդ ան

345

Ք. Ա գամն էր, ու ըսկսան խելք սորվելու բաներու ետեէ ըլլալ, մանաւանդ բանաստեղծութե՛ կասակերգութե՛ և ողբերգութե՛, Յուսացմէ օրինակ առնելով: Անատենները Ա իւրիկեցոց գեսպան խորկեցին ծովու վերայ ասպատակութե՛ ընել նուն համար, ու Տեւտէ թագութե՛ն ան գեսպաններուն խրոխտ կերպին վերայ նեղացած՝ ըսպաննել տուաւ զիրենք. ա նոր համար Հռոմայեցիք անոնց վերայ ելան, յաղթեցին, շատ քաղաքներ առին, մնացածներն ալ հարկատու ըրին: Անոր ետեէն Գաղղիացիք Ետրուրիայի կողմերը շատ վնասներ ընելէն ետքը, ինչ վան իրեք օրւան տեղ մօտեցան Հռոմին: Անոնց գէմեւան Հռոմայեցիք, յաղթեցին, և մէկ սրատերազմի մը մէջ Մարկելոս հիւսպատոսը իր ձեռքովն ըսպաննեց Գաղղիացոց Ա իրիդոմարոս թագաւորը: Ետքը հաշտուի ըրին, և անով քիչմըն ալ մեծցաւ Հռոմայեցոց տէրութիւնը:

Հ. Երկրորդ Պունիկեան սրատերազմը ի՞նչ սրտաճառաւ բացեցաւ:

218

Պ. Կարբեգոնացոց առջի հաշտուիլը իրենց նախատինք ըլլալով, առիթ գտած նուն սէս գաշինքը ոտքի տակ առին՝ Հռոմայեցոց աւելորդ բռնութիւնները յիշելով: Ուստի Աննիբալ գնաց սաշարեց Սպանիայի Մագուստոն քաղաքը. և Սագունտացիք շատ քաջուհով գէմ գնելէն՝ ու չորս հինգ անգամ փլած սարսափին տեղ

ուրիշ ստորիսպ քաշելէն ետքը , տեսնելով որ ուրիշ ճար չիկայ , քաղաքին մէջ տեղը մեծ կրակ մը վառեցին ու շատ հարստութիւնն կրակի տուին , իրենք ալ որը պատերազմելով մեռան , որը կրակին մէջ այրեցան , ու բոլոր քաղաքը հիմնայատակ կործանեցաւ : Հռոմայեցիք երբոր խնայան , գանգատ խրկեցին Կարբէգոնացոց , և զԱննիրաղ զօրապետանին՝ որ աս բանիս պատճառն էր՝ ուղեցին որ իրենց ձեռքը տան . անոնք մտիկ չըրին , և ասանկով ըսկաւ պատերազմը :

Հ . Երկրորդ Պունիկեան պատերազմին առջի զարնըւիլը ուր եղաւ , և ո՞վ յաղթեց :

Պ . Կարբէգոնացոց զօրապետը Աննիրաղ՝ քաջ ու վարպետ պատերազմող , Սագունտոն քաղաքն առնելէն ետքը իմանալով որ Հռոմայեցիք պատերազմի կը պատրաստուին , ու գէպի Ափրիկէ՝ գէպի Սիկիլիա և գէպի Սպանիա զօրք կը խրկէն , ինքը մտածեց Խտալիա անցնիլ : Ուստի Ափրիկէն ու Սպանիան բաւական զօրքով ամրցընելէն ետքը , ճամբայ ելաւ քառսունհազար հետևակով և ինը հազար ձիաւորով Սպանիայի լեռներէն անցաւ , և շատ թշնամիներու մէջէն լեռ ու գետ չինայելով քալեց՝ տասը օրէն Ալպեան լեռներուն տակը հասաւ : Անկէց Խտալիա անցնիլը անկարելի կերևնար՝ սաստիկ ձմեռ ըլլալով , բարձր լեռները ձիւնով ծածկած , և բոլոր լեռ-

ներուն բնակիչներն ալ իրեն թշնամի :
 Բայց Աննիբաղին առջին դժուարութի
 չիկայ . ան լեռներէն սասնըհինգ օրւան
 մէջ անցաւ , Իտալիայի դաշտերն իջաւ .
 Թէպէտ իր զօրքն ալ ջարդըւելով . քիչ-
 ցան : Հռոմայեցիք Սկիպիոնն հիւսպատ-
 ուր անոր դէմ խրկեցին . Աննիբաղ անոր
 յաղթեց ու փախուց , ետքը իր զօրքը
 շատցընել նայեցաւ : Գաղղիացիք թէ-
 պէտ առաջ Կարթեգոնացոց թշնամի էին .
 բայց ան սպառերազմին մէջ Աննիբաղին
 կօդնէին :

ՂԴ

Հ . Աննիբաղ Սկիպիոնին յաղթէլէն
 ետքը ուրիշ ի՛նչ պատերազմ ըրաւ :

Պ . Տրեբբիա գետէն անցուց ձիաւոր-
 ներու գունդ մը որ Հռոմայեցոց երկիր-
 ներն ըսկսան աւրըշարկէլ . ինչպէս որ
 Սեմպրոնիոս հիւսպատոսը հասաւ ու զա-
 նոնք փախուց : Բայց Հռոմայեցիք ծանր
 զէնքերով գետը անցնելու ասեն սասախի
 յոգնեցան . ու ետքը չորս գիէն թշնա-
 միներէն պաշարւած՝ մեծ ջարդ ու-
 տելով , շատն ալ գետին մէջ խղզըւելով
 մնացածը Պլահէնտիա քաղաքը փախան :
 Ետքը երրորդ անգամ նորէն զարնըւե-
 ցան Տրասիմեն լճին քովը : Աննիբաղ
 իր զօրքը ան լճին քովի բլուրներուն վը-
 րայ հանեց . իսկ Փլամինիոս հիւսպատոսն
 իրենները ձորերուն մէջ խոթեց : Մշուշ

մըն ալ էլաւ լճէն՝ որ Վարբեղոնացիք զՀռոմայեցիքը վերէն կըրտենէին ու իրենք Հռոմայեցոց աչքին չէին երևնար. ուստի հոն նորէն սասաիկ ջարդ մը արււին Հռոմայեցոց. Վլամինիոս հիւպատոսն ալ մեռուցին, և վեցհազար հոգի գերի առին :

Հ. Հռոմայեցիք իրեք անգամ Աննիբաղէն յաղթուէէն ետքը ի՞նչ ճար մը տածեցին :

Պ. Փաբիոս Մաքսիմոս բարակամիտ ու սրտոտ մարդը իշխանապետ ըրին. որ միաքը գրէր էր թէ օտար երկրի մէջ եկող զօրքին հետ պատերազմելու չէ, հասպա ղիրենք յոգնեցընելու է. ուստի միշտ իր բանակը ասպառաժ տեղւանք կըսարտօցընէր, որ թշնամեաց ձիաւորները չէին կըրնար մօտենալ. ու միշտ գիտելով զանոնք՝ պաշարնին կարգիւէր : Անգամ մըն ալ լեռներու մէջ պաշարեց զԱննիբաղը և կարծեց թէ բոլոր պատերազմներուն վերջ պիտի ըլլայ, ու ինչ վան անատենը կերած ջարդերուն ոխը պիտի հանեն. բայց Աննիբաղին հնարագիտութիւնը զանոնց յոյսը փճացուց : Կէս գիշերուն երկուհազար եզներու եղջիւրներուն վըրայ խուլներ կապեց բռնկցուց, ու Հռոմայեցոց վըրայ քըշեց : Երբոր եզները եղջիւրնին թօթու տելով Հռոմայեցոց վըրայ վաղեցին, Հռոմայեցիք սարսափած փախան : Ան միջոցին Աննիբաղ իր զօրքովը անցաւ

Ք. Ա նեղ ճամբէն ու ազատեցաւ: Ասկէ ետքը
եղաւ վերջի սաստիկ սրատերազմը Կան-
նէս քաղաքին քովը:

Հ. Կաննէսի սրատերազմն ինչպէս
եղաւ:

216

Պ. Փաբիոսին տեղը եկան Ալարրոն
ու Պաւղոս Եմիլիոս հիւպատոսները ին-
նըսուն հազարով աղէկ սրատրաստըւած:
Աննիբաղ ալ քառսուն հազար հետեա-
կով ու քսանհազար ձիաւորով Կաննէս
քաղաքին մօտ կռնակը հովին տուած կըս-
տասէր*: Երբոր ըսկաւ սրատերազմը՝
Աննիբաղ դիտելով պէտք եղածին պէս
մէկ կողմի զօրքերուն փախչել կըձևացը-
նէր, ետքը յանկարծ վերանին կըվազ-
ցրնէր, ինչպէս որ երկու կողմէն ալ
զՀռոմայեցիքը մէջ առաւ ու յիսուն
կամ ու թսուն հազար մարդ ջարդեց Հռո-
մայեցոցմէ, գրեթէ բոլոր Հռոմայեցոց
մեծերը: Կրսէն թէ Աննիբաղ իրեք գրիւ-
մաանի Կարքեզոն խրկեց, որ Հռոմայե-
ցոց մեծերուն նշանն էր: Թէոր Աննի-
բաղ աս սրատերազմէն ետքը մէկէն Հռո-
մին վերայ քալէր, կըրնար ջնջել անոնց
տէրութիւնը. բայց Աճ կուրցուց զինքը՝
որ յոգնուի առնելու և աղէկ մը մտա-
ծելու համար՝ թշնամիին իր վերայ գա-
լու ատեն տուաւ. ու ըսկաւ Իտալիայի

* Ան երկու երեւոյստէն աստէն անանի հո-
վեւ իւրեւն ու գեպնի քառ առաւել ճարտաս-
տեւն իւրաքննէն ու իւրաքննէն:

ուրիշ քաղաքներուն վերայ երթալ, և
չատ քաղաքներ զինքը սիրով կրնգունելին :
Անկից անցաւ Կապուա քաղաքը գնաց
ու հոն անցուց ձմեռը : Հոն զօրքն ալ
զեղևութէ ետևէ ըլլալով, քաջունին
կորուսին :

ԴԵ

Հ . Կտպուացիք զԱննիբաղն ինչպէս
ընգունեցան :

Պ . Բոլոր քաղաքն առջևն ելան ,
մեծ ուրախութի ջցուցին իր դալուն վը-
րայ . միայն Դեկոս Մագիոս իշխանը
սաստիկ դէմ կեցաւ : Եւ երկրորդ օրը ,
երբոր Կալավիտին տունը Աննիբաղն
մեծ սեղան կրնէին , Կալավիտին աղան
Պերոլա՝ Մագիոսին կողմէն ըլլալով
պատրաստը եր էր յանկարծ զԱննիբաղն
ըսպաննելու սեղանին վերայ . բայց առաջ
հօրը յայանեց . որուն աղաչանքին չի-
կրրնալով դէմ դնել , թուրը ձեռքէն
ձգեց ըսելով . Թող իմանայ աշխարհք
որ հօրը հնազանդիլը՝ հայրենեացը պաշտ-
պանելէն մեծ կրսեպէ Պերոլա :

Հ . Հռոմայեցիք երբոր իմացան Կան-
նեայ սրատերազմին մէջ հանդիպած գրժ-
բաղգութիները ինչ ըրին :

Պ . Սաստիկ վախի մէջ ինկած՝ կըր-
ցածնուն չափ նորէն զօրք հանեցին ու
չատ անգամ զարնըւեցան Աննիբաղն ու
ապստամբած քաղաքներուն հետ : Ան-

Բ. Ա նիբաղ երթալով ահարանալ ըսկաաւ .
 Հռոմայեցիք գնացին Կապոււան ալ սլա-
 շարեցին . և Աննիբաղ տեսնելով որ
 չիկըրնար Հռոմայեցոց դէմ քաղքին
 սրաշտպանել , թողուց ու Հռոմին վերայ
 վազեց : Հռոմին մէջ ամէնքը սարսա-
 փած՝ որէ որ մեռնելու կըսպասէին .
 բայց Աննիբաղ երկու անգամ սաստիկ
 փոթորիկ ըլլալուն համար սատերազմե-
 լէն արգիլւեցաւ . անով միտքը դրաւ որ
 աստուածները չեն ուզէր որ ինքը զՀռո-
 մը առնէ . լսելով ալ թէ նոյն ատենը
 Հռոմայեցիք քաղքէն դուրս զօրք կը-
 խրիէն , աչքը վախցաւ ու ետ քաշւե-
 ցաւ . Կապուան ալ մնաց անօգնական ,
 ու սաստիկ սատերազմելէն ետքը յու-
 սահատած՝ քաղաքացոցմէ ոմանք ինք-
 ղինքնին մեռուցին , ուրիշներն ալ քա-
 ղաքը մատնեցին . Հռոմայեցիք ալ բոլոր
 մեծերը բռնեցին ու մեռուցին : Աս մի-
 ջոցիս Կարբեդոնացիք Աննիբաղին Աս-
 տրուբաղ եղբօրը ձեռքովը Սպանիայէն
 օգնական զօրք խրիեցին : Աստրուբաղ
 երբոր եկաւ անցաւ Ալպեան լեռները ,
 Աննիբաղին թուղթ գրեց , և թուղթը
 տանողները ճամբան բռնըւեցան . Հռո-
 մայեցիք ալ թէ անոնցմէ և թէ թղթէն
 իմանալով Աստրուբաղին միտքը , ճամ-
 բան դիմացն առին ու սաստիկ զարնըւե-
 լով զօրքը ջարդեցին ցրուեցին , Աստրու-
 բաղն ալ ինկաւ սատերազմին մէջ : Եւ
 ան գիշերն որ Աննիբաղ իր եղբօրը հաս-

նեւուն կրտսաասէր, Ներոն հիւսաւտոսը
Ատորուբաղին գլուխը անոր բանակին
մէջը նեաւել տուաւ: Ապշեցաւ Աննի-
բաղ, ու քովիններուն դարձաւ ըսաւ.
Ալ ընդեցաւ ամէն բան. ափսոս. քա-
ջուծիւր բաղդին գէմ գնել չիկրցաւ:

Հ. Աննիբաղին քաջուծիները երբոր
Կարբեգոնացիք լսեցին, ի՞նչ ըրին:

Պ. Ուրախուծիք լցուած՝ ըսկասն ի-
րենք ալ Հռոմայեցոց գէմ ելլել. նորէն
Սիկիլիա ալ գնացին մտան. Սիրահու-
սան ալ Հերոն թագաւորին մեռնելէն
ետքը Կարբեգոնացոց կողմն անցաւ:
Բայց երբոր Աննիբաղ ըսկաւ տկարա-
նալ, իրենք ալ ըսկասն ձախորդուծի
ունենալ. Սիրահուսային ալ Հռոմայե-
ցիք տիրեցին, և անով բոլոր Սիկիլիան
Հռոմայեցոց տակն ինկաւ:

Հ. Հռոմայեցիք Սիրահուսան ի՞նչ
պէս կրցան առնել:

Պ. Շաա ջարդ ուտելով. վն զի Ար-
քիմեգէս անուանի երկրաշափընոր հնա-
րած մեքենաներովը թող չէր խտար որ
սլարսպին մօտենան: Հեռուէն՝ մեքե-
նաներով ձգած նեաւերուն սաստկուէր
չէին դիմանար. իսկ մօտէն՝ իրենց մե-
քենաներովը՝ նաւերովը՝ կամ օդը կէ-
լէին կամ ծովը կընկղմէին. անոր համար
պատերազմով առնելէն յուսահատած՝
իրէք տարի սլաշարէլէն ետքը՝ մէջիննե-
րը անմիաբան ըլլալուն համար քաղաքը
առնըւեցաւ: Արքիմեգէսն ալ իր երկրա-

Ք. Ա չափական ձևերուն ըզբաղած ատենը վերայ հասան ըսպաննեցին . բայց Մարկեղոս խիստ տրամեցաւ անոր մահուանը վերայ, ու փառաւոր գերեզմանի մը մէջ թաղեց զինքը :

ԶԶ

Հ. Ի՞նչպէս ըննցաւ Պունիկեան երկրորդ պատերազմը :

205

Պ. Սկիպիոն քսանըջորս տարւան կարիճը, որ Ափրիկէի մէջ ըրած քաջութիւններուն համար Ափրիկեցի ըսւեցաւ, նախ Սպանիայի կողմերը խորհրուեցաւ : Իր հայրը հոն պատերազմի մէջ մեռած ըլլալով վրէժը հանել կուզէր : Հոն շատ յաղթութիւններ ընելէն ետքը՝ հռոմ գարձաւ, հիւսպատոս եղաւ, ու շատ զօրքով Ափրիկէ գնաց Կարթեգոնին վերայ : Ճամբան Անոն զօրապետին յաղթեց ու ըսպաննեց. ետքը Ափրիկէի մէջ շատ յաղթութիւններ ընելով՝ Կարթեգոնացոց աչքը վախցուց . անոր համար Աննիբալը ետ կանչեցին : Աննիբալնեղանալով որ տաս, նըհինգ տարւան աշխատանքը պարապը ելաւ, թողուց ու գնաց : Եւ ինքը դեռ Ափրիկէ չի հասած, Կարթեգոնացիք հռոմ դեսպան խրկեր էին հաշարելու համար . Աննիբալն ալ գնաց մէկէն Սկիպիոնին հետ հաշտութիւն վերայ խօսեցաւ . բայց Սկիպիոն Ափրիկեցոց անհաւատարմութիւնը երեսնին զարկաւ՝ որ

դեսպան խրկելէն ետքը, ալէկոծութի
հանգիստած Հռոմայեցոց քանի մը նա-
ւերուն վերայ վազեր ու բռներ էին :
Ուստի նորէն երկու կողմէն ալ պատ-
րաստըւած՝ կատաղի պատերազմ մը
ըրին, և վերջապէս Հռոմայեցիք յաղ-
թեցին. շատ մարդ ջարդեցին, շատ ալ
գերի առին. Անիբալ ալ գունդ մը զօր-
քով Ադրուսեանն քաղաքը փախաւ :
Ետքը իր յորդորանքովը հաշտուի եղաւ
խիստ ծանր պայմաններով. Իմ Կարբե-
դոնացիք Սպանիայէն՝ Սիկիլիայէն և
միջերկրական ծովուն կղզիներէն հե-
ռանան. յիսուն տարւան մէջ Հռոմայ-
եցոց տասըհազար տաղանդ տան, և փի-
ղերնին ու նաւերնին բոլոր Հռոմայեցոց
տան : Կըսեն թէ հինգհարիւր Կարբե-
դոնացի նաւ Սկիալիոն ծովուն մէջ
տեղը այրեց : Մասինիսսա թագաւորէն
առածնին ետ դարձընեն. շատ մեծե-
րու տղաքներ պատանդ տան Հռոմայ-
եցոց, և առանց Հռոմայեցոց հարցընե-
լու պատերազմ չընեն : Ասանկով լմն-

202

Հ. Երկրորդ Պունիկեան պատերազ-
մէն ետև Հռոմ ինչ էրևէլի զիպուած
էղաւ :

Պ. Անատենն էր Մակեդոնացոց Փի-
լիպոս թագաւորին հետ ըրած պա-
տերազմինն, և Ասորոց Անտիոքոս թա-
գաւորին յաղթեւնին : Որուն հետ դրած

200

Ք. Ա սրայմաններուն մէկն ալ ան էր որ զԱն-
 նիբաղն որ իրեն ասպաւիններ էր՝ Հռո-
 192 մայեցոց ձեռքը տայ: Անիբաղ փախաւ,
 և ասդիս անդին պարտելէն ետքը՝ Բիւ-
 թանացոց Պրուսիաս Թագաւորին աս-
 պաւինեցաւ. բայց երբոր Պրուսիաս նե-
 ղը մտած՝ զԱնիբաղը մատնել խոստա-
 ցաւ, Անիբաղին ճարը հատաւ՝ Թոյն
 խմեց մեռաւ:

ՂԵ

Հ. Ինչ պատճառով եղաւ Պունի-
 կեան երրորդ պատերազմը:

170 Պ. Նումիդիայի Մասինիստա Թագա-
 ւորը Հռոմայեցոց ասպաւինած, Կար-
 քեգոնացոց երկիրներէն կտոր մը իր տա-
 կը առեր էր: Հռոմայեցիք չուզելով ա-
 նոր դէմ վճիռ ընել, դատաստանը կը
 ձգձրգէին, ինչպէս որ Հռոմայեցիք դեռ
 պան խրկեցին որ մէջը գանեն, միշտ
 Կարքեգոնին գէշնալը ուզելով: Աս գեռ
 պաններն երբոր դարձան, պատմեցին
 տեսածնին որ Կարքեգոնացիք ան յի-
 սուն տարւան մէջ նորէն ուժովցեր են:
 149 Անառենը Հռոմայեցիք որոշեցին որ սա-
 տերազմ բացւի, պատճառ բերելով թէ
 Կարքեգոնացիք իրենց գաշանցը դէմ
 նաւեր ունեցեր են ու պատերազմեր են:
 Կարքեգոնացիք զարհուրած՝ Հռոմ դեռ
 պան խրկեցին. բայց Հռոմայեցիք ա-
 նոնց սրատասխան չխաուին, ու պատե-

բազմի համար ճամբայ ելած հիւսպատու ներուհն խրկեցին զանոնք . հիւսպատուներն ալ խարխրբելով զգեսպանները , նախ բոլոր զէնքերը դուրս տալ տուին . ետքը հրաման հանեցին՝ թէ իրենք կուզեն Կարբեգոնը կործանել , ուստի Կարբեգոնացիք ելին քաղքէն երթան ուր որ կուզեն :

Հ . Կարբեգոնացիք բոլոր իրենց զէնքերը հռոմայեցոց յանձնելէն ետքը երբ որ Կարբեգոնէն ալ ելելու հրամանը լսեցին՝ ինչ ըրին :

Պ . Շատ վայնասուհն ողբ ընելէն ետև կատղեցան , ըսկսան նորէն զէնքեր շինել պատերազմելու համար . ինչպան կանայքը մազերնին կտրրտեցին ու աղեղներու լար շինեցին : Ասորուբազ զօրապետն որ հռոմայեցոց դէմ ըլլալուն համար բանտ դրեր էին՝ հանեցին իրենց գլուխ գրին . և մէկէն անանկ աղէկ պատրաստուեցան որ երբ հռոմայեցիք ըսկսան պատերազմիլ , զարմացած յուսահատիլ ըսկսան : Չորս տարի շատ անգամ զարնըւելէն ետքը , Սկիսլիոն Ախրիկեցին եկաւ զիրենք խիստ նեղը խոթեց . քաղքին շատ կողմերն առաւ . ինչպան որ Կարբեգոնացիք յուսահատած՝ քաղքին բերդն ալ տուին , հրաման առնելով որ մէջէն երթան : Միայն քանի մը փախստական հռոմայեցիք ու Կարբեգոնացիք՝ որոնց հրաման չեղաւ երթալու , կուստան մը մէջ պահուեցան ,

Ք. Ա ու երբոր խիստ նեղը մտան՝ կրակ ար-
ւին կռատանն ու իրենք ալ մէջը այրե-
ցան : Անկէց ետքը կամաց կամաց աչ-
խարհիս իրեք մասին մէջն ալ շատ աչ-
խարհակալութիներ ըրին Հռոմայեցիք :

ՂԸ

Հ. Վարբեգոնի կործանելէն ետքը
Հռոմայեցոց մէջ ի՞նչ մասնաւոր գիտ-
նալու գիպուած եղաւ :

Պ. Ամէնուն սիրտը ղեղխուի ու ա-
գահութի տիրելով անանկ խռովութի-
ներ ըսկսան քաղքին մէջ որ ինչպիսի ան-
ատենը չէր եղած : Եւ առջինը եղաւ
Գրակքոսեանց կռիւը :

Հ. Ո՛վ էին Գրակքոսեանք ու ի՞նչ
խռովութի հանեցին :

133

Պ. Տիրերիոս Գրակքոսին երկու որ-
դէքը Տիրերիոս ու Վայիոս, որ աղէկ
կրթըւած ու անուանի ըլլալով ըսկսան
առաջ գալ. բայց չափազանց փառքի
ետեէ ըլլալով իրենք մեռան և քաղքին
մէջ ալ մեծ խռովութի ձգեցին : Տիրերիոս
երբոր տրիբուն եղաւ, ջանաց հաստա-
տել ագարակային օրէնքը՝ որ մեծատանց
աւելորդ երկիրներն աղքատաց բաժ-
նըի : Թէպէտ աս բանիս աղնուական
ները խիստ գէմ էին, բայց Տիրերիոս մըտ-
քին գրածը առաջ տանիլ ուզելով զձե-
րակոյան արհամարհեց ու ժողովուրդը
ոտք հանեց՝ իրենց օգուտը յիշեցընե-

լով : Օր մը ժողովքի մը մէջ ծերակոյտը Բ . Ա
խիստ նեղացան ու գաղտուկ սլափափա
տըւեցան Գրակ.քոսը մեռցընելու : Հոն
ծերակուտին ու ժողովդէան ազազակը
խիստ շատ ըլլալով, և Գրակ.քոս իմա
նալով ծերակուտին միտքը, բայց տես
նելով որ իր ձայնը չիլըսելի, ձեռքը գրլ
խու՛ն տարաւ . իմացընել կուզէր թէ
գլուխը վտանգի մէջ է : Անտեսնը մէ
կէն իրեն գէմեղողները՝ Գլխու՛ն թագ
կուզէ ըսելով կանչվուտելըսկսան : Եւ
Սկիպիոն՝ Նասիկա՝ որ թէպէտ գրակ.քո
սեանց ազգական էր, կանչեց՝ թէ Ովոր
տէրու՛թէ ու արգարու՛է կողմն է, իմ
ետեւէս դայ : Ուստի շատ մարդ մէյմէկ
բիր առած՝ գէմ գնողներն ըսպաննելով
Գրակ.քոսին վըրան վազեցին . Գրակ.քոս
ըսկսաւ փախչիլ, բայց գիպուած ով սա
հեցաւ ինկաւ . հասան ետեւէն զարկին
ըսպաննեցին, մարմինն ալ Տիբերիս գե
տը նետեցին . Գրակ.քոսի կուսակիցնե
րէն ալ իրէքհարիւր հոգի մեռուցին,
և մնացածներն աքսորեցին :

Հ . Տիբերիոս մեռնելէն ետքը Կայիոս
Գրակ.քոսն ի՛նչ ըրաւ :

Պ . Աւջի բերանը առանձին քաշլած,
ցցուց թէ չուզէր բանի խառնըւիլ .
բայց քիչ տտենէն երբոր առիթը գտաւ,
ըսկսաւ եղբօրը ճամբաները բռնել : Շատ
խռովու՛թէ ետքը Ոպիմիոս հիւսպատոսն
ըսկսաւ զօրքով ետեւէն ըյնիլ . ան ալ
Աւենտին լեռը փախաւ : Հոն լսեց որ

Տերակոյտը իր գլուխը բերողին գլխին
 ծանրուածքը ոսկի խոտաօցեր է . երբոր
 տարակուսած՝ աղատելու ճարը կրնտա-
 ծէր, Տերակոյտը ձայն հանեց՝ թէ Ովոր
 թողու զաաւի Վայիոսէն, սրտոժէն կա-
 զաաի . ասով Վայիոսին քովը խիստ քիչ
 մարդ մնաց : Անատենը Ուրիմիտս զօր-
 քով վերան գնաց, և իրէքհազար հոգի
 թրէ անցուց . Գրակքոս ալ երբոր կու-
 ղէր կռատունը փախչել ու հոն ինքզինքն
 ըսպաննել, Պոմպոնիտս ու Ղուկինիտս
 բարեկամներն ըստխաւեցին որ իրենց հետ
 փախչի : Ետեւնուն ընկնողները կամուր-
 ջի մը գլուխ հասան . անատենը Գրակ-
 քոսի բարեկամները անոնց գիմացն ա-
 ուին, ինչվան որ Վայիտս փախչի, իրենք
 հոն մեռան . և Վայիտս Տիբերիսէն ան-
 ցաւ, բայց կախարդներու նուիրած ան-
 տառին մէջ ետեւէն հասան՝ գլուխը կըտ-
 րեցին ու նիզակի մը անցուցած՝ բոլոր
 քաղաքը ստրացընելէն ետեւ Սեպտի-
 մուլիտս անուռնով մէկը առաւ, և ծան-
 րուիր աւելցընելու համար մէջը կապար
 թափեց ու անանկ հիւսպատոսին տա-
 րաւ, տեղը չորս հօխա ոսկի առաւ : Աս-
 կէց ինչվան Օգոստոսի ատենը՝ որչափ
 որ անիրաւ կերպերով ուրիշ տերուինե-
 րը վերցընել կըջանային, այնչափ ալ
 Հռոմին մէջ մէկզմէկու արիւն խմելու
 ետեւէ էին . ինչվան որ բռնութիւնը բոլոր-
 րովին տիրեց ու հասարակապետութիւնը
 միապետութիւն փոխուեցաւ :

ԴԹ

Հ. Գրակ. քոսեանց խառվուէ ատեն Գ. Ա
 ներք ի՞նչ երևելի սրատերազմներ ըրին
 Հռոմայեցիք :

Պ. Նումիդիայի Մասինիսաս Թագա 112
 ւորին խորթ Թուր Յուզուրթ Ժողո-
 վորդեան սիրելի ըլլալով երբոր մեռաւ,
 Մասինիսասային աղան Միկիսաս՝ ուրիշ
 երկու աղայ ալ Թողլով, ու Թագաւո-
 րուէր Յուզուրթին հետ մէկտեղ իրեքին
 մէջը բաժնելով, անոնց մէջը կռիւ բաց
 ւեցաւ : Յուզուրթ իր մեծ եղբայրն
 ըստաննեց որ ինքը Թագաւորէ, բայց
 պզտիկն Ադերբաղ Հռոմ փախաւ՝ օգ-
 նուէ ուղելու համար : Յուզուրթ գիտ-
 նալով որ Հռոմին մէջ արգարուէն աւե-
 լի ըստակը բան կրտեանէ, շատ ընծա-
 ներով Հռոմայեցոց սիրտը վաստրկեցաւ :
 Ուստի Ոպիմիոս հիւսրաստոր խրկրւե-
 ցաւ Հռոմէն որ տէրութիւն երկուքին
 մէջը բաժնէ. ան ալ Յուզուրթէն կա-
 շառք առաւ ու աղէկ մասը անոր տը-
 ւաւ : Բայց Յուզուրթ ուղելով որ մինակ
 Թագաւորէ, սրատճառով մը Ադերբա-
 ղին վերայ սրատերազմի ելաւ ու խաբե-
 լով բռնեց ըստաննեց : Աս անգթուէր
 համար Հռոմ կանջրւեցաւ Յուզուրթ,
 և յուսալով որ նորէն կաշառքով կը-
 յաղթէ, ելաւ դնաց. և Թէպէտ մէկը
 մէկալը կաշառեց իրեն բարեկամ ըրաւ :

Բ. Ա բայց չիկրրցաւ բոլորովին արգարանաւ .
 անոր համար մէկէն զինքը Իսաղիայէն
 դուրս ըրին , ետքը վերան սպատերազմի
 ելան . բայց Յուգուրթ զանոնք խաբխը
 բերով անանկ անյարմար տեղ սպատերազ
 մի բռնեց , որ յաղթըւած՝ յանձն առին
 Յուգուրթին թրին աակէն անցնելու :
 Ետքը Մետեղոս խոհեմ հիւսպատոր
 գնաց քանխմը անգամ Յուգուրթին
 յաղթեց . իսկ Մետեղոսին փոխանորդը
 Մարիոս՝ բոլոր բերդերն առաւ Յու
 գուրթին ձեռքէն . Յուգուրթ ալ յու
 սահատած՝ իր Բոկքոս աներոջը սպա
 շինեցաւ որ Մաւրիտանացոց թագա
 ւորն էր : Անոր հետ մէկտեղ քանի մը
 անգամ նորէն Հռոմայեցոցմէ յաղթը
 լեւէն ետեւ , Բոկքոս նեղը մանելով հաշ
 տուի ուզեց . Հռոմայեցիք ուզեցին Բոկ
 քոսէն որ Յուգուրթը ձեռք տայ . Բոկ
 քոս ալ ազատելու ուրիշ ճար չիգտնե
 լով խաբէուք Յուգուրթը խօսակցուէ
 կանչեց ու բռնեց Հռոմայեցոց ձեռքը
 տուաւ , որ շղթաներով կապած Հռոմ
 տարին ու Մարիոսին յաղթանակին
 հանգէսին մէջը խոթեցին . ետքը բանտ
 դրին , ու վեց օրվան մէջ անօթուէն մե
 105
 ռաւ : Ասկից ետքը Մարիոս երկու մեծ
 յաղթուններ ալ ըրաւ , մէյմը Թեւաոն
 ներուն վերայ Սպանիայի Պրովենաիա
 գաւառին մէջ , մէյմալ որ Վիմերացոցմէ
 իրէքհարիւր հազար հոգի ջարդեց Սպա
 նիայի Վերկէլէ ըսւած դաշտերուն մէջ :

Մեկէ ետքը ըսկաւ գաշնաւորաց պա- Բ. Ա
տերազմը:

Հ. Հռոմայեցոց գաշնաւորաց պա-
տերազմը ո՞րն է:

Պ. Հռոմին մօտ եղած Ժողովուրդնե- 90
րը՝ որ Իտալացի կըսուին, շատոնց կու-
ղէին Հռոմայեցի գրուել, բայց ծերա-
կոյար յանձ չէր առնէր. անոր համար
մէջերնին պատերազմ բացւեցաւ, որ եր-
կու աարի քչելէն ետքը՝ ծերակոյար վախ-
նալով, անոնց մէջէն չաստամբող Ժո-
ղովուրդներուն Հռոմայեցի գրուելու
հրաման տուաւ, մէկալներուն ալ խոս-
տացաւ Հռոմայեցի գրել՝ Թէոր պատե-
րազմէն գազրին: Ասանկով գաշնաւոր
ները հաշարեցան ու Հռոմայեցի գրուե-
ցան. միայն տէրուէ բաներու մէջ չէին
խառնուէր:

Ծ

Հ. Գաշնաւորաց պատերազմէն ետքը
ի՞նչ երևելի դիպուած եղաւ Հռոմին մէջ:

Պ. Ներքին խռովութիւններէն իզատ, 88
գրսէն մէկ նոր մեծ Թշնամի մըն ալ երև-
ցաւ՝ Միհրդատը՝ որ շատ վնաս հասուց
Հռոմայեցոց. բայց ասոնք չիկրրցան մէ-
կէն անոր դէմն առնել: Ասան զի Սիլա
հիւստատուր երբոր անոր վերան երթա-
լու պատրասարւեր էր, Մարիոս զանի
ձգել տուաւ ու ինքը տեղն անցաւ. ան-
ատենը Սիլա խիստ բարկանալով՝ Հռոմ

Ք. Ա գործաւ զօրքով. բռնի ներս մտաւ ու Մարիոսը քշել առաւ իր կուսակիցնէրովը. զԱիննան հիւսպատոս դրաւ. ետքը իր ամէն թշնամիներուն ալ ներելով, նորէն գնաց :

Հ. Մարիոս երբոր Սիւլայէն քշեցաւ, ուր գնաց :

86

Պ. Չինքը սանողներուն ձեռքէն փախաւ մինակ ու բռնակ : Երկար ատեն ասդիս անդին բարբարական պտրտէլէն ու շատ վտանգներէ ազատէլէն ետեւ, Լաօններուն երկիրը գիշեր մը լճի մէջ անցուց, ու առաւօտանց փախչելու նաւ մը գանելու համար երբոր ծովեզերքը կերթար՝ բռնեցին զինքը վերան գլուխը ցելստա, ու վեզը չուան կասպած Մինաուրնոն քաղաքը տարին՝ բանդ դրին : Քաղաքապետը բանար ծառայ մը խորհեց որ ըստաննէ զՄարիոսը. անատենը Մարիոս կատաղի նայուածքով ու ահեղ ձայնով մը կանչեց. Դուն Վայիոս Մարիոսին ձեռք կրվերցընէս : Աս ձայնէն ծառան սարսափած՝ թուրը ձգեց ու փախաւ : Քաղաքապետն աս դիպուածը մեծ բանի նշան սեպեց. ուստի Մարիոսը նաւ մը դրաւ՝ ու Խտալիայէն դուրս խրկեց որ բաղդը գտնէ : Մարիոս Սիկիլիա ելաւ, ու երբոր հոն եղած համարակալներէն մէկը զինքը բռնել պիտի տար, փախաւ Մարիոս իր ընկերներովը կարբեդոն գնաց : Հոնկէ ալ վաճառուելով, ելաւ ծովու վերայ կրպը-

տրտէր աղէկ լուր մը առնելու ըստա-
սելով մէկտեղէ մը : Աստուծոններըս Աին-
նան ալ քշած ըլլալով, Իսաաիայէն շատ
զօրք ժողոված Հռոմին վերայ երթալու
ատենը՝ զՄարիոսն ալ իր քովը կանչեց,
ու մէկտեղ զօրքով Հռոմ մտան, բոլոր
իրենց թշնամիները թրէ անցուցին . ու
րոնց մէջը շատ անմեղներ ալ կային . ա-
սով անանկ եղաւ որ՝ զօրքին գլխաւոր-
ներն ալ գողալով կրմօտենային Մարիո-
սին : Բայց Մարիոս ինքզինքն ուտելու
խմելու տալով քիչ ատենէն մեռաւ,
երբեմն բարեք՝ բայց շատ ալ չարեք հաս-
ցնելով իր հայրենեացը :

Հ . Մարիոսի մեռնելէն ետե Աիննան
ինչ ըրաւ :

Պ . Լսեց որ Սելան Միհրդատայ քա-
նի մը անգամ յաղթելէն ետե հաշտուի
ըրած՝ դարձեր իր վերայ կուգայ, անոր
գէմ զօրք խրկեց . բայց ան զօրքը նաւե-
րով երթալու ատեն ալէկոծութե հան-
գիստելով ցրուեցան . ուստի իր քովը
մնացած զօրքն ալ չուղեցին երթալ : Աին-
նան բարկացաւ, ու երբոր բռնի հնա-
զանգեցնել ու խրկել կուզէր՝ անոնք
գէմ կեցան, և հարիւրապետ մը զինքը
զարկաւ ըսպաննեց :

Հ . Սելան երբոր Հռոմ դարձաւ,
Հռոմն ինչ վիճակի մէջ գտաւ :

Պ . Բոլոր քաղաքը խռովութե լցած .
վն զի իշխանները կըջանային մէկզմէկէ
յափշտակել իշխանութե պատիւները .

անոր համար Սիլւային ալ շատ դէմ գնողներ եղան, բայց Սիլւա ամէնուն յալթեց ու յալթանակով հռոմ մտաւ, և շատ մարդ անխնայ ջարդեց. ետքը ինքզինքը մշտնջենաւոր իշխանապետ ընել տուաւ, ու անանկ բռնաւոր մը եղաւ՝ որ մէկն իրեն դէմ չէր կրնար գնել: Երեք տարի ասանկ իշխանապետութիւն ընելէն ետև, օր մը յանկարծ ինքիր կամօքը իշխանապետութիւն ձգեց, կերուխումի տուաւ ինքզինքը. քիչ ատենէն ոջլահարեցաւ՝ ու վաթսուն տարւան մեռաւ. որուն թաղումը խիստ փառաւոր եղաւ:

ՃԱ

Հ. Սիլւային տեղն ո՞վ անցաւ:

Պ. Լեւսիտոս հիւսպատօսը Գաղղիացոցմէ շատ զօրք ժողովեց՝ ու Բրուտոս և Պերպեննա զօրապետներուն հետ Սիլւային տեղն անցնելու մտքով ըսկսաւ գէպի հռոմ գալ. թէպէտ ինքը Սիլւային վարպետութէն ու քաջութէն խիստ հեռու էր: Ծերակոյտը մէկէն Կատուէլոսը զօրապետ դրին. ասիկա դէմն ելաւ, փախուց զինքը, որ Սիկիլիայի կողմերը գնաց մեռաւ: Պերպեննան ալ Սպանիա գնաց զօրքով ինքնագլուխ տիրելու համար Սերտորիոս զօրապետին պէս՝ որ նոյն ատենը ան կողմերը Լիւսիտանիայի մէջ ինքիր գլխուն պատերազմներ կը-

նէր : Անասէնը ճերտակոյտը Պոմպէտը խրկէց ան երկուքին դէմ Մեռեւլլոսին հետ : Պերպլեննան նեղը մասժ գնաց Սերտորիոսին հետ մէկ եղաւ . Սերտորիոս քաջ ու փորձ մարդ ըլլալով, առջի բերանը աղէկ յաղթութիւններ ըրաւ . աւելի Պոմպէտոսին դէմ . ետքը զՊերպլեննան ըսպաննել առաւ ու ինքը զօրապետ եղաւ . Պոմպէտոսն ալ մէկէն գնաց Սերտորիոսն ըսպաննէց , և ասով լմնցաւ Սպանիայի պատերազմը : Բայց անոր աեղն ըսկաւ ըստրուկներու պատերազմը՝ Սպարտակոս Թրակացիին առաջնորդութիւնը :

Հ . Սպարտակոս ո՞վ էր , և ի՞նչ պատճառաւ ըսկաւ ըստրուկներուն պատերազմը :

Պ . Սպարտակոս կարիճ մարդ մըն էր, որ կապուա քաղաքը գերի ընկած ըլլալով, սուսերամարտ ըրեր էին զինքը : Ասիկա եօթանասուն ընկերով փախաւ . ուրիշ փախսատեան գեղացիներ ալ լսելով անոր քաջութիւնները՝ գլուխը ժողվրէեցան ու մէկտեղ մէծ բանակ մը ձևացուցին : Սպարտակոս անոնցմով իրեք անգամ հռոմայեցոց յաղթեց . բայց քանի մը անգամ ալ մէծ վտանգներէ ազատեցաւ : Ինչպէս անգամ մը Ալեսուվ լեռանը վըրայ սաշարւեցաւ , ու ճարը հատած՝ ան լեռանը վըրայի վայրի որթի ճիւղերէն սանդուխի պէս բան մը ձևացրնել առաւ , ու անով ժայռերէն վար

Իջան ազատեցան, ու Հռոմայեցոց զօ-
 րաց ետևի կողմէն յանկարծ վերանին
 վազեցին, մեծ ջարդ բրին: Ասոր նման
 կերպերով ուրիշ երկու անգամ ալ սա-
 շարւած տեղէն փախաւ: Իսկ իր զօրքը
 կամաց կամաց աւելնալով հարիւրքսան
 հազար եղան. ամէնն ալ արիւնհզակ
 մարդիկ, որոնք Իտալիայի մէջ շատ վը-
 նասներ ընելէն ետքը՝ հռոմին վըրայ եր-
 թալ ըսկան: Կրասոս սրետորը գէմեր-
 նին ելաւ, երկու անգամ անոնց մեծ
 ջարդ տուաւ: Ստարտակոս տեսնելով
 որ երթալով ինքը կրակարանայ, անգամ
 մը յուսահատաբար կռուեցաւ, ջանա-
 լով որ իր ձեռքով զԿրասոսը մեռցնէ.
 բայց ինքը զարնըւեցաւ մեռաւ. միա-
 ցած զօրքն ալ լեռները փախան, ետքը
 նորէն ժողվըւեցան: Պոմպէոս Ստա-
 նիայէն դառնալու ատեն անոնց հանգի-
 սելով գիւրաւ յաղթեց և ուղեց որ
 Կրասոսին տեղ՝ ինքն ընէ յաղթանակին
 հանգէսը, թէպէտ ուղածը չի յաջույե-
 ցաւ, բայց ասով Կրասոս ու Պոմպէոս
 մէկզմէկու հետ աւրըւեցան: Պոմպէոս
 զօրասպետութիւն կողմանէ երևելի էր,
 Կրասոս ալ հարստութիւն կողմանէ:

Հ. Պոմպէոս ու Կրասոս իրարու
 թշնամի ըլլալէն ետքը՝ ինչ գործքի հետ
 եղան:

Պ. Մէկն ըստակ ցրուելով, մէկալն
 ալ ժողովրդեան ուղած օրէնքները հաս-
 տատելով մէկզմէկու գէմ կը ջանային որ

Ճողովորդէան սիրտը իրենց քաշէն : Ան Բ. Ա.
 միջոցին Պոմսէոս միջերկրական ծովուն
 վերայի աւազակներուն ալ յաղթելով
 աւելի փառքը մեծցաւ . ետքը գնաց շատ
 զօրքով Միհրդատայ վերայ՝ յաղթեց ,
 ու յաղթանակով Հռոմ դարձաւ : Բայց
 նոյն միջոցին ալ Հռոմ Կատիլինային
 բռնութիւններէն կրտանջուէր :

ԾԲ

Հ . Ո՞վ էր Կատիլինա , և ի՞նչ զէն
 ըրաւ հասարակապետութիւն :

Պ . Առջի հիւսարտոսներուն ցեղէն՝ 63
 խարդախ՝ լեզուանի՝ անզգամուէ էտն է
 եղող մարդ մըն էր : Երսունի չափ իրեն
 պէս ընկերներուն իր միտքը հասկըցու-
 ցեր էր՝ որ ինքը մինակ կուզէր տիրել
 Հռոմայեցոց : Ասոնք բոլոր Կատիլինան
 ոտք հանելու մտքով պատրաստուէր էին
 որ նախ Հռոմին մէջքանի կողմերուն
 կրակ տան ու ան շփութուէ ատենը Ե-
 տրուրիայէն Ճողված զօրքով ծերակոյտը
 թրէ անցընեն : Աս բաներուս գլուխ
 կեցան Ղենաուլոս ու Կեթեկոս : Կիկե-
 րոն Կեթեկոսին թշնամին աս բաներըս
 խնայաւ Փուլլիա անունով կնոջ մը
 ձեռքով , ու ծերակուտին խնայուց .
 անոնք ալ աղէկ մը ըստուգելու համար
 ըսկասն քննել : Կատիլինան յանցանքը
 ծածկել ու զելով , համարձակ ծերակու-
 տին մէջ մտաւ ու ըսկասաւ ինքզինքն ար-

Ք. Ա գարացրնել. և երբոր Աիկերոնին հարց մուհքներուն չիկրցաւ պատասխան տալ, բարկութի գուրա ելաւ, գնաց Անտու լոսին ու Աեթեկոսին իմացուց իր ընելիքը. ետքը քանի մը ընկերներով Ետրուրիա գնաց զօրք ժողվելու համար: Անտաէնը Աիկերոն զԱնտուլոսն ու Աեթեկոսը և ուրիշ գլխաւորները՝ բանախն մէջ խղդեղ տուաւ: Կատիլինան քսան հազար զօրք ժողված՝ որը թրով որը բրով՝ ճամբայ ինկաւ. իսկ երբ իմացաւ որ հիւսպատոսը իր գաշնակիցներն ըսպաններ է՝ ու իր վերան կուգայ, շուտ մը գէպի Գաղղիա փոխաչել ըսկաւ. բայց չորս դիէն պաշարւած յուսահատաբար պատերազմի կեցաւ՝ ու զօրքին մեծ մասը կորսընցընելէն ետև ինքն ալ մեռաւ:

Հ. Կատիլինային մեռնելէն ետև Պոմպէոս երբոր հռոմ գարձաւ՝ ինչ ըրաւ:

60

Պ. Նորէն ըսկաւ ջանալ Արատոսին գէմ ժողովրդեան աչքը մանել. բայց Յուլիոս Կեսար որ Սպանիայէն շատ հարստութի ու փառքով հռոմ գարձեր էր, ասոնց թշնամութի սօգուտ հանել ուզելով՝ ինք ալ ժողովրդեան կողմը բռնել ըսկաւ՝ ու ըրաւ չըրաւ Պոմպէոսն ալ Արատոսին հետ հաշտեցուց. և աս իրեքը մէջերնին խօսք գրին որ հասարակապետուէ մէջ առանց իրենց գիտնալուն բան մը չըլլայ: Աս միաբանութիը ըսեցաւ Դաշնակցո-ւնի Եռասպէսայ՝ որ

զհասարակապետութիւն բոլորովին տկա Ք. Ա
բացուց :

ՃԳ

Հ. Եռապետաց իշխանութիւն որչափ
դիմացաւ :

Պ. Խիստ քիչ : Նախ Կեսարն ինքնա
գլուխ տիրելու մտքով ծերակուտին կա
մացը դէմ ինքզինքը հիւպատոս ընտրել
տուաւ . դրսի երկիրներն ալ իր իշխա
նակիցներուն հետ բաժնեց . Պոմպէոս
Սպանիան առաւ՝ հանդիսա նստիլ ու
ղելով . Կրասոս հարստուէ սիրով Ասո
րեստանն առաւ , Կեսարն ալ Գաղ
ղիան . և բոլորովին Գաղղիացոց տիրելու
համար ութը տարի սաստիկ աշխատե
ցաւ , հաղարաւոր մարդ ջարդեց , ինք
ալ մեծ վասնդներէ անցաւ . որուն
պատմութիւն համառօտութե համար կը
թողունք հոս յիշելը : Պոմպէոս լսելով
Կեսարին ըրած յաղթութիւնները կընա
խանձէր , ու անոր ըրածները վար զար
նել կըջանար : Եւ ասանկ Պոմպէոսին
Կեսարին հետ աւրբւելուն պատճառը
էր իր կնոջը մեռնելը՝ որ Կեսարին աղ
ջիկն ըլլալով միշտ բարեկամ կըպահէր
զանոնք . մէյմըն ալ Կրասոսին Պարթև
ներէն յաղթըւիլը ու չարաչար մեռնի
լը : Որովհետև Կրասոս որ կողմն որ
բռնէր , անկողմը կըզօրանար , անոր հա
մար երկուքն ալ մէկըմէկէ կըվախէին :

58

Աս միջոցիս անիրաւութիւն ու անկար-
 դութիւն տիրած էին Հռոմայեցոց մէջ. և
 Պոմպէոս արգիլելու տեղ՝ կամօք աւելի
 շփոթութի կը ձգէր, որ ինքն իշխանա-
 սպետ ընտրուի: Ասանկով թէպէտ իշ-
 խանասպետ չեղաւ, բայց մէկ տարւան
 համար ինքը մինակ հիւստատոս ընտրու-
 ւեցաւ, որ ինչպէս ան ատենը եղած
 բան չէր: Աեսար անոր նախանձելով ու-
 զեց որ երկրորդ տարին ինքն ըլլայ մինակ
 հիւստատոս. Պոմպէոս գէմ կեցաւ, ըսե-
 լով թէ Հռոմէն դուրս կեցող մարդու
 հիւստատոսութի չիտրուիր: Աեսար աս
 խօսքիս վերայ կասողեցաւ ու ըսաւ. Ա-
 նիրաւութե արգիլած բանը՝ թրովս կառ-
 նեմ: Ետքը զօրքը ժողովեց, մէկէն Աւ-
 սպեան լեռներէն անցաւ եկաւ ինչպէս
 Տուրիկոն գետին քով, ուսկից ասդին
 զօրքով անցնելու հրաման չիկար: Աե-
 սար կեցաւ գետին քով, թէոր չանց-
 նիմ՝ ըսաւ՝ աս գետը, ես կրկորսըւիմ.
 Իսկ թէոր անցնիմ, Հռոմ կրկորսըւի.
 ուրեմն եկէք Այ ուզածն ընենք, ըսաւ,
 ու գետը նեաւեցաւ՝ դիմացն անցաւ.
 Իր զօրքն ալ ետեւէն եկան: Գնաց Տի-
 մինի քաղաքն առաւ. անկէ անցաւ Ի-
 տալիային մէկ ծայրէն մէկալը կայծակի
 սէս, ու եկաւ սրաշարելու Պոմպէոսը
 Բրինդ քաղաքին մէջ: Իսկ Պոմպէոս՝ նա-
 խատուած իր բարեկամներէն որ գրգը-
 ուեց Աեսարն ու գէմ չիկրնար դնել,
 ձգեց ելաւ Իտալիայէն, ծովով փախաւ

Լիւրիկեցոց Դիւրաքինն քաղաքը : Կե-
սար ալ նաւ չունենալուն որ ետեւէն
հասնի, դարձաւ Հռոմեկաւ. և Հռոմը
պաշտպանելու եկեր եմ ըսելով՝ երբոր
ներս մտաւ, ամէնուն սէր ցուցընելով
սրտերնին վասարկեցաւ :

Հ. Պոմպէոս Կեսարին ձեռքէն Յու-
նաստան փախչելէն ետքը ինչ ըրաւ :

Պ. Բոլոր արեւելքէն շատ զօրք ժող-
վելով Կեսարին հետ զարնըւելու կը-
պատրաստուէր. Կեսարն ալ Սպանիայի
ու Իտալիայի մէջ ամէն բան կարգի դնե-
լէն ետքը՝ անցաւ Յունաստան, ու Թե-
սաղոնիկէի մէջ Պոմպէոսին հանդիպե-
ցաւ : Առաջուց Կեսարին երկու զօրա-
պետները Պոմպէոսին հետ զարնըւելու
յաղթըւեր էին. Կատոն ու Կիկերոն որ
Հռոմին մէջ խիստ երեւելի մարդիկ էին՝
Պոմպէոսի կողմն անցեր էին. անոր հա-
մար Կեսար ուղեց որ հաշտութի ընեն.
բայց Պոմպէոս յանձ չառաւ՝ գիտնա-
լով որ Հռոմայեցիք Կեսարին կողմն են :
Ուստի շատ ըզգուշութի մէկըմէկու գէմ
պատրաստուած պատերազմն ըսկսան,
ու երկար ատեն հաւասար կռուելէն
ետքը՝ Կեսար յաղթըւեցաւ. բայց Պոմ-
պէոս յաղթութիւն բոլորովին չիւրն-
ցուցած եւ քաշուեցաւ :

Ք. Ա Հ. Կեսար Պոմպէոսէն յաղթըւէլէն
 ետքը ինչ ըրաւ :

49 Պ. Բոլոր մնացած զօրքովը Գոմբի
 քաղաքը գնաց . բայց քաղաքացիքը՝ ա-
 նոր յաղթըւելը լամ ըլլալով՝ իրենց
 խոստմանը գէմ գուները գոցեցին : Անա-
 տենը Կեսար բոլոր քաղքին հարստուիը
 զօրքին խոստանալով՝ սանդուխներով
 շուտ մը առաւ քաղաքն ու կողոպտել
 տուաւ : Անկէ անցաւ Յունաստանի
 շատ տեղուանքին տիրեց , և Պոմպէոս
 նորէն վրան եկաւ Փարսաղիա գաշտին
 մէջ պատերազմելու : Պոմպէոսին զօր-
 քերը քառսուներհինգ հազար հեաւակ ու
 եօթը հազար ձիաւոր էին . Կեսարինը՝
 քսաներկու հազար հեաւակ՝ հազար
 ալ ձիաւոր , բայց քաջ ու ալէկ
 կրթըւած : Երբոր զարնըւեցան , Պոմ-
 պէոսին զօրքը ցրուիլ ու փախչել ըսկը-
 սան . և թէպէտ աջ կողմի զօրքը գեռ
 կը պատերազմէր , բայց Կեսար զՀռո-
 մայեցիները թողուց ու օտարազգի զօր-
 քերուն ետեւէն ընկաւ . Հռոմայեցիք
 ալ մէկէն անձնատուր եղան , որովհետեւ
 Կեսար ամէն անձնատուր եղողները ա-
 նուշուծք կրնգունէր , և անոնց մէջէն
 աղնուականներուն հրաման կուտար որ
 ազատ երթան : Առաւօտէն ինչվան կէս-
 օր քչեց պատերազմը . ետքը Կեսար

Պոմպէոսի բանակին մէջի գտնուած զարգեղէն բաներէն իմացաւ Պոմպէոսի զօրքին անխելքութիւն՝ որ զելլաութի ուհարստուի ժողվելու ետևէ եղեր էին : Կեսար իրեններէն երկուհարիւր հոգի կորսընցուց, իսկ Պոմպէոսի կողմէն տասնըհինգ հազար ջարդելէն ետքը՝ քսանը չորս հազար ալ գերի ըրաւ : Անկէց ելաւ Լարիսսա գնաց Պոմպէոսին ետևէն :

Հ. Պոմպէոս Կեսարէն յաղթուէն ետև ինչ ըրաւ :

Պ. Պոմպէոս երբոր տեսաւ որ յաղթուէցաւ ու իր բանակն ալ բոլորովին պաշարւեցաւ, շուտ մը զրահն ու զէնքերը հանեց, թեթև հագուստով մը ձիով գէպի Լարիսսա փախաւ : Ան գիշերը ձկնորսի մը խզի մէջ անցուց, և աւաւօտանց նաւ մը մտաւ Մելիաինէ գնաց իր Կուռնելիա կնոջը քովը : Անիկա լսելով Պոմպէոսի գլխէն անցածները՝ մարեցաւ ինկաւ, և Պոմպէոս զինքը մխիթարելով՝ ուղեց Եգիպտոս երթալ Պաղամէոս թագաւորին քով որուն հօրը շատ աղէկութիւններ ըրած էր : Երբոր նաւով մօտեցաւ Պեղուսիոն՝ որ անատենը հոն էր Պաղամէոս, Եգիպտոսի մեծամեծներէն իրեք չորս հոգի սրտի նաւակով մը եկան զինքը բարևելով հրաւիրեցին : Պոմպէոս ըստաւ կասկածիլ՝ անանկ մինակուկ առանց պատուոյ տանել ուղէնուն համար, բայց կասկածի նշան տալ չուզելով՝ մտաւ նաւակը :

Բ. Ա Ճամբան ամէնքը լուռ կեցեր էին . իսկ երբոր ծովեղերքը մօտեցան , տեսաւ որ զօրքը շարուեր կեցեր են . Պոմպէոս իրեն պատուոյն հմբ կարծելով . քիչմը սիրա առաւ . և երբոր իր ծառային կրթընած կողեր դուրս ելել , կռնրկէն դանակով զարկին ըսպաննեցին : Առննելիան որ սիրար դողի մէջ հեռուէն կրնայեր , աս եղածը տեսնելուն պէս ըսկսաւ կանչվըռտել . և իր նաւավարները մէկէն նաւը դարձուցին վախան . իսկ Պոմպէոսը մեռցրնողները գլուխը կարեցին ու Աեսարին ընծայ տարին : Փիլիպպոս անունով Պոմպէոսին աղաս ըրած ծառան՝ որ ինչվան անատենը քովէն չէր բաժնուած , անոր մարմինն առաւ ծովուն ջրովը լուաց ու հին նաւակի մը կրակովն այրեց :

ՃԵ

Հ . Փարսաղիայի յաղթութէն ետև Աեսար ինչ ըրաւ :

46 Պ . Պոմպէոսին ետևէն գնաց ինչվան Աղէքսանդրիա : Հոն երբոր Պոմպէոսին գլուխն ու մատնին իրեն բերին , երեսը մէկդի դարձուց՝ լացաւ . բայց ետքը իրեն ալ հարկ եղաւ որ իր կեանքը պաշտպանէ Եգիպտացոց դէմ : Այն զի Աղէոսպարան ու Պողոմէոսը քոյր ու եղբայր մէկտեղ թագաւոր նստած ու ետքը Աղէոսպարան քչւած էր . և Փոսինոս

Պողոտէոսին դայեակը Հռոմայեցոց բռնուէն ալ ազատելու համար ետեէ ընկաւ որ զՎեսարն ըսպաննէ : Վեսար կասկած երթալով ծածուկ խրկեց՝ Պոմպէոսին գէմ ելլելու համար պատրասարւած զօրքերն իրեն կանչեց, ու ինքը Եգիպտոսի մեծերուն վատահացած ի պէս ամէն օր անոնց սեղան կրնէր՝ զիրենք ըզբաղեցրնելու համար : Ան միջոցին Վղէոպատրան եկաւ որ Վեսարին առջին դատաստան քչէ. Վեսար Պողոտէոսն ալ կանչեց, բայց ինքը Վղէոպատրայէն խաբւած՝ անոր ուղածն ընել կըջանար : Անտենը Ակիւղաս Եգիպտացոց զօրապետը քսանհազար զօրքով Վեսարին վերան եկաւ. Վեսարին զօրքը քիչ ըլլալուն՝ իր նաւերուն ինքը կրակ առաւ որ չըլլայ թէ թշնամեաց ձեռքն խնայ. և ինքը Փարոս կղզիին տիրեց ու անկէց ըսկսաւ կռուիլ : Անդիէն Արսինոէ Վղէոպատրային պղտի քոյրը Գանիմեդէսին ձեռքովը շատ զօրք ու ըստակ ժողված՝ զԱկիւղասն ըսպաննել առաւ ու եկաւ զՎեսարը սրաշարեց, ջրերուն ճամբան կտրեց՝ գէպի ծովը դարձուց. ցամաքէն Փարոս կղզին անցնելու կամուրջն ալ առաւ : Վեսար երբ որ կըջանար կամուրջը ետ առնելու, յանկարծ շփոթու թի մը ըլլալով Հռոմայեցիք ըսկսան փախչիլ. որը ծովն ընկան, որը թրէ անցան. Վեսար ալ նաւի մը մէջ նետուեցաւ որ իր սպալատը անցնի

ազատի, բայց ետքը վախնալով որ նաւը
 կընկղմի մարդիկներուն շատւորութէն,
 մէկէն ծովը նետուեցաւ, ու ձախ ձեռ-
 քով իր յիշատակարանը բռնած՝ բեր-
 նոջն ալ իր ծիրանին, ինչվան երկուհա-
 րիւր գիրկ տեղ լողալով իր սալաափն
 առջևն ելաւ: Ետքը զԵգիստացիները
 խաղաղցընել ուղելով Պաղոմէոսը խրկեց
 որ երթայ սիրաերնին առնէ: Պաղոմէոս,
 որ կեղծաւորութի ընել աղէկ գիտէր,
 լալով բաժնըւեցաւ Կեսարէն. ու ետքը
 գնաց պատերազմի ելաւ, սաշարեց զԿե-
 սարը: Անառնէր Պերգամոնի Միհրդատ
 թագաւորը Կեսարին օգնութի հասաւ
 ու մէկտեղ բոլորովին յաղթեցին Եգիս-
 տացոյ. Պաղոմէոսն ալ նաւով փախչե-
 լու առնն ընկղմեցաւ մեռաւ. անառն-
 նը Կեսար զԿղէոսպատրան սղտի եղբո-
 րը հետ թագաւորեցուց: Ետքը լեւով
 թէ հռոմ խաւովութի կայ, նախ Փառ-
 նակ թագաւորին վըրայ գնաց, որ հռո-
 մայեցոյ ձեռքէն ազատիլ կըջանար, ու
 Դոմէտիոս հիւպատոսին հետ ալ կռուե-
 լով մէյմը յաղթեր էր. բայց Կեսարին
 գալը լսածին սէս հաշտութի ուղեց.
 Կեսար մտիկ չըբաւ՝ կոխեց Փառնակին
 բանակը ցրուեց. Փառնակն ալ փախչե-
 լու առնն՝ իր զօրավարներուն մէկն ըս-
 պաննեց զինքը: Կեսար առ յաղթուէր
 շուտ ըննալը իմացընելու համար՝ հռոմ
 իր բարեկամներուն մէկուն գրեց՝ թէ
 Եկայ, տեսայ, յաղթեցի:

ՃԶ

Հ. Կեսար Փառնակին յաղթելէն
էտքը ի՞նչ ըրաւ :

Պ. Իտալիա դարձաւ ու անուշուժք
չորս դին հանդարտեցուց. էտքը Սկի-
պիոնին ու Կատոնին վերայ գնաց՝ որ
Պոմպէոսին կողմը բռնելով Ափրիկէի մէջ
շատ մարդ ժողվէր ու իրեն դէմ պատ-
րասարւեր էին : Քիչ ատենի մէջ ամե-
նուն յաղթեց. Սկիպիոնն ալ Սպանիա
փախչելու ատենն ըսպաննըւեցաւ :

Հ. Կատոն ի՞նչպէս մեռաւ :

Պ. Զօրքը ցրուելէն էտքը Ուտիկէ
գնաց. հոն ծերակոյս մը հաստատելու
համար փուճ տեղը ջանալէն ետեւ, տես-
նելով որ քաղաքացիք Կեսարին անձնա-
տուր ըլլալ կուզեն, շատ բարեկամները
քովէն ցրուեց : Մէկալ մնացողներուն
ու աղուն հետ ուրախու թք իրիկան
կերակուրը կերաւ՝ գնաց իր սենեակը
քաշեցաւ, ու Պլատոնին՝ հոգւոյ ան-
մահու թէ վերայ գրած գիրքը կարգա-
լէն ետեւ, ելաւ իր թուրը առաւ ու
նորէն նստաւ կարգալու. խորունկ քուն
մըն ալ քաշելէն ետեւ արթնեցաւ՝ ծա-
ռան կանչեց, ու երբոր իմացաւ թէ
բարեկամները ճամբայ ելեր են, ծառան
դուրս խրկեց ու թուրը առաւ իր վզին
խօթեց. երբոր կուզէր անկողնին վերայ
իյնալ, առջևի սեղանատախտակին զար-

նրւեցաւ ձգեց : Ան ձայնէն ընտանիքը ներս վազեցին , տեսան որ արիւնի մէջ կըլողայ , շուտ մը վերաբոյժ հասուցին՝ որ վէրքը գոցեց : Երբոր Կատոնին խեղքը վերան եկաւ ու խմացաւ որ կուզէն զինքը ազատել , կամօք վէրքը նորէն բացաւ ու հոգին փչեց :

Հ . Ափրիկէի յաղթունն ալ ընեւէն ետքը Կեսար ինչ ըրաւ :

Պ . Հռոմ դարձաւ , ու ինչպէս ան ատենը ըրածներուն համար չորս օր յաղթանակ ըրաւ Գաղղիայի , Եգիպտոսի , Ասիայի ու Ափրիկէի վերայ . իր զինուորներն ալ սլատուեց . քաղաքացոց առատ ըստակ և ուտելիք բաժնեց . ժողովուրդն ալ գովելով Իշխանատեա ու Հայր հայրենեաց կրկանչէին իրեն : Կեսար ազէկ մը Հռոմը շէնցընեւէն ետքը ըսելով որ Լաբիենոս մէկը Պոմպէոսին աղոյք հետ զօրք ժողվեր է Սպանիայի մէջ ու երթալով կուժոյնայ , վերանին գնաց ու Մունդա դաշտին մէջ զանոնք սլատերազմի ըստիպեց : Սաստիկ կռուեցան երկու կողմէն ալ , ու Կեսար մեծ վտանգի մէջ ինկաւ . բայց երբոր Լաբիենոս զօրքին մէկ դունդը ուրիշ տեղ դարձուց , Կեսար կանչեց թէ Փախչիլ ըսկսան : Աս ձայնէն իրենները սիրտ առին , մէկալները թուլցան ու յաղթուեցան : Պոմպէոսեանց կողմէն երսուն հազար հոգի մեռաւ , Լաբիենոսն ալ անոնց հետ , որ Կեսար սլատուով թա-

ղեղ տուաւ : Պոմպէոսին մէկ տղան պահ-
ւրտած տեղէն գտան՝ գլուխը կարե-
ցին, Կեսարին տարին . խոյ Սեքստոս
տղան ազատելով, ետքը ծովու վերայ
աւազակութի կրնէր, ու շատ վախցուց
Հառոմայեցիները :

ԾԷ

Հ. Կեսար իր վերջի յաղթութիւններէն
ետքը ի՞նչ գործքի հետ եղաւ :

Պ. Դարձաւ Հառոմ, ու զինքը մըշ-
տընջէնաւոր իշխանապետ ընտրեցին .
ամէն մեհեաններու մէջ իր արձանը
կանգնեցին ու որոշեցին որ անոնց տօնը
կատարեն : Ետքը ըսկաւ զարդարել
ղՀառոմը փառաւոր շէնքերով : Օրացոյցը
կարգի գրաւ՝ տարին 365 օր որոշեց : Վար-
քեգոնն ու Կորնթոս քաղաքները նորէն
շինեց . և ուրիշ շատ բաներ ալ ընելու
միտք ունէր : Բայց իր թագաւոր կոչուե-
լու փափաքը երբոր իմացան իր բարե-
կամները, սաստիկ թշնամի եղան իրեն ,
ինչպէս որ իր փափաքներուն հետ կե-
նացն ալ վերջ տուին :

Հ. Ի՞նչպէս մեռուցին Կեսարը :

Պ. Բրուտոս ամէնէն հաւատարիմ 44
Կեսարին բարեկամը՝ և Կասիոս՝ ծերու-
կուաէն վաթսուէն հողւոյ հետ միաբա-
նեցան զինքը մեռցնելու մարտին տաս-
ներհինգին՝ որ օրն որ իրեն թագ պիտի
արըւէր . և թէպէտ ինքը կասկած ա-

Ք. Առաւ, բայց բանի տեղ չխեւալեց. և միշտ կրօնէր ինքը թէ Յանկարծ մեռնիլը քան զամէն մահն աղէկ է: Երբոր գնաց իր տեղը նստաւ, թշնամիներն իբր թէ բարևելու համար քովը մօտեցան, և մէջերնէն մէկը իր քշւած եղբօրը համար աղաչել ձեռացրնելով Աեսարին քղանցին սլլըւեցաւ, ինչպէս որ խօսք դրած էին. անառեներ մէկալնոնք ըսկսան զինքը թրով զարնել. Աեսար յանկարծակիի եկած թէպէտ կարծու թէ աղէկ դէմ դրաւ, բայց ինքը քան լիրէք տեղէն զարնուելով, ու ցաւելով որ Բրուտոսն ալ իրեն թշնամի է եղեր, ինկաւ մեռաւ յիսուհըմէց տարւան. ինքն որ բոլոր աշխարհք սակնու վերայ ըրաւ փառք վաստըկելու համար, բայց իր կեանքն ալ փառքին հետ մէկ վայրկեանի մէջ կորսընցուց:

Հ. Աեսարին մեռնելէն ետև Հռոմայեցոց տէրութիւնը ինչ վիճակ ունեցաւ:

43

Պ. Անկարգութիւնը աիրած ըլլալով հասարակապետութիւն դէմ եղող բանաւորը վերցընելու համար անկարգ ճամբայ բռնեցին. անոր համար ալ չիկըրցան ազատ ըլլալ բանութիւն: Այսին զին անառեներ Անտոնիոս ու Ալպիզոս որ անխելքութեամբ իրենց ուղածը միայն կուզէին առաջ տանիլ, նախ ժողովուրդը գրգռեցին որ վրէժ խնդրեն Աեսարին անանկ անողորմ կերպով մեռնելուն համար, ուստի ամէն Աեսարին

Թշնամիները քաղքէն դուրս փախուցին . ետքը Անտոնիոս վասննալով Ոկտաւիանոսէն որ Աեսարին որդեգիրն էր՝ և Ղեպիգոսէն՝ որ չըլլայ թէ անոնք իրեն արդէլք ըլլան փառքի հասնելու, անոնց հետ խորհուրդ ըրաւ ու նորէն եռապետութիւն հաստատեցին : Անտոնիոս Գաղղիան իրեն առաւ, Ղեպիգոս Սպանիան, Ոկտաւիանոսն ալ Ափրիկէն ու միջերկրական ծովուն կղզիները : Գաշինք ալ դրին որ իրենց Թշնամիները վերցընեն . որոնցմէ ոմանք մէկուն Թշնամի՝ բայց մէկալին սիրելի էին . ինչպէս որ Ղեպիգոս իր Պաւղոս եղբայրն ըսպաննեց Անտոնիոսին համար . Անտոնիոսն ալ Թողուց որ իր քեռին քչեն . Ոկտաւիանոսն ալ Թողուց որ Աիկերոն քաջ ճարտասանը որ իր վարպեան էր՝ Անտոնիոս ըսպաննել տուաւ ու գլուխը բերաւ ան բեմին վըրայ դնել տուաւ, ուր որ իր զօրաւոր ճառերը խօսեր էր Աիկերոն :

ԾԸ

Հ . Երկրորդ եռապետները ինչ գործքի հետ եղան :

Պ . Նախ հռոմին մէջ շատ արիւն ընեւէն ետքը, գէպի Յունաստան գնացին Բրուտոսին ու Վասիոսին վըրայ, որոնք շատ զօրք Ժողված՝ Չմիւռնիային մէջ միացեր էին հասարակապետութիւն ազատելու համար : Բրուտոսն ու Վասիոսը ծո-

վունքով մէյմէկ բլրի վերայ գրին բանակ
 նին, ուր որ պաշար գիւրաւ կը գանէին.
 Իսկ եռտպեաները դաշտին մէջ ըլլալով
 պաշարնին քառսունըհինգ մըն հեռու
 տեղէ պիտի բերէին. անոր համար Կասիոս
 կուզէր որ ըսպասեն՝ ինչպէս որ եռա-
 պեաները սովէն նեղին ու ցրուին. բայց
 Բրուտոս չգիտացաւ և ըստիպէց որ պա-
 տերազմ ըսկասն: Անտոնիոս Կասիոսին
 պատնէշներն աւրէց. բայց Բրուտոս
 անանկ ուժով վազէց Ոկտաւիանոսին
 զօրացը վերայ՝ որ ինչպէս բանակնին քէց,
 ու ըսկասաւ կողոպտել: Անդին Կասիոսին
 ձիաւորներն ըսկասն փախչել. Կասիոս
 զանոնք շատ յորդորէլէն ետքը երբ տե-
 սաւ որ մտիկ չեն ըներ, յուսահատե-
 ցաւ, գնաց վրանը մտաւ ու ինքզինքն
 ըսպաննէց: Երբոր լսէց Բրուտոս, շատ
 ցաւեցաւ. երկրորդ օրը անոր մնացած
 զօրքն ալ ժողովէց, և ամէնուն ըստակ
 խոստանալով երկու անգամ նորէն պա-
 տերազմեցաւ, ու յաղթըւած փախչե-
 լու ատենը՝ երբոր ետեէն ինկան զինքը
 բռնելու, Բրուտոսին բարեկամը Լու-
 կիլիոս առջևնին ելաւ, ըսելով թէ Ես
 եմ Բրուտոսը: Անտոնիոս ալ կարծե-
 լով թէ Բրուտոս բռնըւեր է, պատրաս-
 տըւեր էր զինքը նախատելու և ըսպան-
 նելու. Լուկիլիոս ծիծաղելով Անտո-
 նիոսին առջևն ելաւ, ըսելով. Ես Բրու-
 տոսին տեղը կեանքս գրի, զքեզ խաբե-
 ցի: Անտոնիոս զարմացաւ Լուկիլիոսին

սիրոյն վերայ, ներեց, ու իրեն բարե- Ք. Ա
կամ ըրաւ :

Հ. Բրուտոս եռապետներէն յաղ-
թըւած ուր փախաւ :

Պ. Այրի մը մէջ սրահւրտեցաւ, ու
Ստատիլիոս անուճով մէկը խրկեց՝ որ
խմանայ թէ պատերազմը ի՞նչպէս ըմբ-
ցեր է. և երբոր լսեց թէ Ստատիլիոսն
ալ ճամբան ըսպաններէր է, քովիննե-
րուն ըսաւ որ զինքը մեռցնեն, երբոր
անոնք յանձ չառին, ու Բրուտոս իր
ծառաններէն մէկուն հրամայեց, Սարա-
բոն Բրուտոսին ճարտասանութիւն վար-
սեար ըսաւ. Պէտք չէ որ Բրուտոս ծա-
ռայի մը կարօտ մնայ. ուստի ձախ ձեռ-
քով իր աչվըները դոցեց, աջուիւ ալ թրին
ծայրը Բրուտոսին երկնցուց. ան ալ վը-
րան ինկաւ ու հողին փչեց :

ՃԹ

Հ. Բրուտոսի մեռնելէն ետե եռա-
պետներն ի՞նչ ըրին :

Պ. Ոկտաւիանոսը զԱլեպիդոսն ար- 39
համարհելով՝ վերան պատերազմի ելաւ,
յաղթեց՝ ու զինքը քշել տուաւ : Ետքը
Անտոնիոսին հետ իրենք իրենց՝ աէրու-
թիք մէջերնին բաժնեցին. Ոկտաւիա-
նոս արեւմուտքը իրեն աւաւ, Անտո-
նիոսն ալ արևելքը : Իրենց թշնամիներ-
րէն որը իրենք մեռցնել տուին, որն
ալ իրենք զիրենք մեռուցին : Ետքը Ան-

Բ. Ա տոնիրոս Յունաստան ու Ասիա պարտե-
լով շատ պատիւ գտաւ, ու ան կողմի
Թագաւորնէրը ուղածին պէս փոխաբ-
խեց. ինչպէս որ զՀերովդէսն ալ Հրէից
Թագաւոր ըրաւ: Կղէոպատրային մէկ
ղորապետը ատենօք Կասիոսին օգնած
ըլլալուն համար, Անտոնիրոս դատաս-
տանի կանչեց զԿղէոպատրան. և Կղէո-
պատրային երևնալը պատճառ եղաւ
Անտոնիրոսին կործանմանը. որ անկարգ
սիրով կապուած Կղէոպատրային հետ ե-
լաւ Եգիպտոս գնաց՝ մոռնալով իր փառքն
ու շահը: Իսկ Ոկտաւիանոս ան մի-
ջոցին բոլոր Իտալիան ուղածին պէս
կարգի գնելէն ետքը, ջանալ ըսկսաւ որ
բոլոր երկրին տիրէ ինքը մինակ: Պոմ-
պէոսին աղուն Սեքստոսին ալ յազթեց
ու փախուց. որ ծովուն ճամբաները
բռններ էր ու ետքը Անտոնիրոսին ձեռքն
իյնալով մեռաւ:

Հ. Ոկտաւիանոս կըրցաւ առաջ տա-
նել իր խորհուրդը մինակ տիրելու:

32

Պ. Լսելով Ոկտաւիանոս՝ որ Անտո-
նիրոս երեսէ ձգեր է զՈկտաւիան իր քոյրը,
ու Կղէոպատրային հետ կարգուեր է,
իրէքհարիւր նաւով վերան պատերազմի
գնաց. Անտոնիրոս նեղը մտած՝ մէկէն
պատրաստուրէցաւ ու գէմն ելաւ հա-
րիւրհազար հետևակով, տասերկու հա-
զար ձիաւորով, ու հինգ հարիւր նաւով
Ակաիոնի նաւահանգստին բերանը: Եր-
կու կողմէն ալ երկար դիմացան, բայց

Կղէոսպատրան Անտոնիոսին նաւերուն
 իրար խառնելիւ տեսածին պէս՝ ձգեց
 փախաւ : Անտոնիոսն ալ աւելի Կղէո-
 սպատրան մտածելով՝ քան թէ պատերազ-
 մին յաջողութիւն, ելաւ ետեւէն գնաց .
 զօրքն ալ անգլուխ մնալով՝ քիչմը գէմ
 գնելէն ետքը, անձնատուր եղան : Ետքը
 Ոկտաւիանոս ետեւէն ինկաւ ինչվան Պե-
 ղուսիա : Կղէոսպատրան անօրէն թագու-
 հին տեսնելով որ Անտոնիոսին բաները
 ձախորդ կերթան, ըսկաւ գաղտուկ
 դաշինք գնել Ոկտաւիանոսին հետ, թո-
 ղուց զՊեղուսին ալ որ անձնատուր ըլ-
 լայ . և ուրիշ Եգիպտոսի բերդերը բոլոր
 անոր ձեռքը մասնեց . բայց ետքը Ան-
 տոնիոսէն ալ վախնալով իր ամէն ունե-
 ցածներովը Իսիս չմծուհւոյն կուսու-
 նը քաշուեցաւ, ու ձայն հանեց թէ Կղէո-
 սպատրան ինքզինքը մեռուց : Երբոր լսեց

31

Անտոնիոս՝ սաստիկ արամուածէն յու-
 սահատած ինքզինքը զարկաւ . բայց դեռ
 հոգին չելած, Կղէոսպատրան իմացաւ,
 և ալ վախ չունենալով Անտոնիոսէն,
 ձայն հանեց՝ թէ ինքն ողջ է : Անտոնիոս
 ուղեց քովն երթալ . Կղէոսպատրան պա-
 տուհանէն չուան երկնցընել տուաւ ու
 վեր առաւ Անտոնիոսը . որ մէկերկու
 խօսք հաղիւ զրուցելով հոգին փշեց :
 Ափսոս իրեն . կարծեց թէ աշխարհիս
 ախտաւոր սիրոյն մէջ հաւատարմութի
 պիտի գտնէ ու իր ախտին մէջ հանգչի,
 բայց անով աշխարհիս անցաւոր փառքէն

ու հանդատէն ալ զրկուէցաւ :

Հ . Անտոնիոսին մեռնելէն ետե՛ Կղէ-
նուպատրան ի՞նչ ըրաւ :

Պ . Միտքը գրած էր որ Անտոնիոսին
սէս Ոկտաւիանոսն ալ կրխաբէ . բայց
Ոկտաւիանոսին փառասիրուիը ուրիշ
ախտերէն աւելի ըլլալով , անոր խաբող
կերպերուն մտիկ չըրաւ . ու կուզէր ալ
որ զԿղէնուպատրան բռնէ ու հռոմ իր
յաղթանակին մէջը խոթէ : Կղէնուա-
տրան երբոր իմացաւ անոր միտքը , յու-
սահատած ուզէց ըսպաննել ինքզինքը .
բայց Ոկտաւիանոս վախցուց զինքը , ը-
սելով թէ Ես ալ քու աղաքըդ կըմեռ-
ցընեմ . ու Կղէնուպատրային քովը մարդ
դրաւ որ ըզգուշանան , թող չհտան . Կղէ-
նուպատրան ալ ձեւացուց թէ ալ չուզէր
ինքը իրեն ինաս հասցընել : Օր մը քա-
րեկամներուն փառաւոր կոչուիք մը
ըրաւ . ետքը զամէնքը ճամբելով երկու
աղախինը քովը պահէց : Առաջուց սա-
պատով թուզ բերել տուած էր՝ տակը
իժ մը պահած . ան իժին ինք զինքը խած-
նել տուաւ , նստակով ալ իմացուց Ոկ-
տաւիանոսին : Մէկէն Ոկտաւիանոս մարդ
խրկէց որ արդիլէն . բայց անոնք գնա-
ցին տեսան որ Կղէնուպատրան հողին
փչած էր . աղախիններուն մէկն ալ ոտ-
քին քովն ինկած մեռած , մէկալն ալ
գողգըլալով Կղէնուպատրային գլխուն
լաչակը կըշտկէր , որ երկու խօսք մը ըսաւ
չըսաւ , ընկաւ մեռաւ :

ՃԺ

ՀՌՈՄԱՅԵՅՈՅ

ԻՆՔՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ

Հ. Կղէտարային մեռնելէն ետքը Գ. Ա.
Ոկտաւիանոս ի՞նչ ըրաւ :

Պ. Հառմ գարձաւ ու առջի ըրած 30
անգլթու թնեքուն տեղը սէր և գութ
ցուցնելով անանկ կերպ մը բռնեց՝ որ
ամէնքը զինքը կը տիրէին ու իրմէն կը
վախէին : Ուստի Ժողովրդեան ուղելովն
ինքնակալ կոչեցաւ տասը տարւան հա-
մար. իր անունն ալ փոխեցին Օգոստոս
գրին՝ որ վառաւոր ըսել է. բայց ան
տասը տարին մշանջէնաւորի փոխե-
ցաւ : Օգոստոս՝ քաղքին բոլոր կարգե-
րը կանոնները նորոգեց. ուսման ալ սէր
ունենալով միշտ Ա իր գիւլտոս ու Ովրա-
տիոս բանաստեղծներուն հետ կը լար-
ւէր, անոնք ալ իր պակասութիւնները ծած-
կելով միշտ վերան գովեստ կը գրէին :
Օգոստոս ինքզինքը ամէնուն սիրցնե-
լէն ետքը, վեհանձնութի ցուցնելով
ձեւացուց թէ ինքնակալութիւն ձգել կու-
ղէ : Ծերակուտէն իր կողմը բռնողներն
իր մտքը գիտնալով, ըսկասն խօսքերուն
գէմը առնել. անանկով աւելի հազտա-
ւեցաւ. ուստի տասը տարին ըմբնա-
լէն ետքը, ծերակոյտը բոլոր ըրածներուն
հաւնելով իշխանութիւն տուաւ իրեն

օրէնքները փոխելու կամ աւելցրնելու .
և երգվոնցան որ իրենք ալ հնաշանդին :

Հ . Օգոստոս ի՞նչ նոր օրէնք դրաւ
Հռոմայեցոց :

Պ . Նախ ժողովրդեան մէջ մտած ան-
կարգու թիները վերցրնել ջանալով հրա-
ման տուաւ որ սուսերամարտից խաղը
տարին միայն երկու անգամ խաղան :
Աշնուականները պատիւ ունենան . մէ-
կումը վարքը չեքճնած տերուէ մէջ իշ-
խանութի չեալը : Թատրոնի խաղերը
թէպէտ շատ կըսիրէր , բայց սաստիկ
արգելք հանեց անվայել բաներու գէմ :
Ինչվան անատենը արգելած էր՝ որ գերի-
ներն իրենց տիրվրտոցը վըրայ ամբաստա-
նուի չէինկըրնար ընել , Օգոստոս հրա-
ման տուաւ : Ուրիշ աս տեսակ օրէնքնե-
րով շատ կըթըւեցան Հռոմայեցիք : Բայց
Օգոստոս աւելի իր օրինակովը զանոնք
կըկրթէր . ինքը ամէնուն հետ անուշու-
թք կըվարուէր , ինչվան իրեն եղած նա-
խասինքն ալ ուրախերէս մտիկ կընէր .
գատաստանի մէջ արգարուէն դուրս չէր
ելէր : Անգամ մը դողգղալով մէկը իրեն
աղերսագիր տուաւ . Օգոստոս նեղանա-
լով ըսաւ . Բարեկամ , քեզ տեսնողը
կարծէ որ չէ թէ մարդու՝ հապա փիղի
քով կըմօտենաս . քիչմը համարձակ ե-
ղիր : Բայց Օգոստոս իր վեհանճնութիւր
ամէնէն աւելի ցցուց Կուռնելիոս Աին-
նային վըրայ՝ որ Պոմպէոսի թուռն էր ,
ու զՕգոստոսն ըսպաննել կուզէր : Օ-

գոստոս նախ կանչեց անոր ընկերները՝
 ու քիչմը յանդիմանելով արձրկեց. ետև
 ըսաւ Աիննային. Դու իմ կեանքս վեր-
 ցընել կուզես. բայց ես երկու անգամ
 ներեցի քեզի, և այսօր հիւսպատոս ալ
 ըրի զքեզ. եկո՛ ասկէ ետքը բարեկամ
 ըլլանք, տեսնենք ո՞վ որու կըլսող[ծէ :

Օգոստոս արհեստներն ալ ծաղկեցուց,
 զօրքերը շատցուց. ամէն աշխրրքէ գէտ-
 պաններ կուգային բարեկամ ըլլալ ու-
 զելով. Գերմանացիք ալ իրեն ասկը մը-
 տան. անանկ որ բոլոր աշխարհք խա-
 ղաղուի եղաւ, և Յանոս կուռքին տա-
 ճարը գոցւեցաւ : Աս ընդհանուր աշ-
 խարհիս խաղաղուէ պատճառն էր Գա-
 նիէլի չորս ինքնակալներուն համար ը-
 րած մարգարէուէ լմրննալը. անասենն
 որ Քս աշխարհք եկաւ սատանային հետ
 մեր փրկութեան համար պատերազմելու
 համար, ու ամենուն սրտէն մէկզմէկու-
 գէմ ունեցած թշնամութիւնին վերցուց
 որ ճանչնան իրենց բուն թշնամին, և
 բոլոր իրենց թագաւորուիք Քսի յանձ-
 նելով, իրենք ալ Քսի զինուոր գրուին,
 ու մէկ տեղ յաւիտեան հանգիստ խա-
 ղաղութե՛ն մէջը մնան :

Բայց Օգոստոսին տանը մէջ խաղաղուի
 չեկար իր Տիբերիա կնկանը և իր Յուլիա
 աղջկանը պատճառաւ. այնչափ որ Օ-
 գոստոս զՅուլիան կուզէր մեռցընել,
 բայց ուրիշներուն աղաչելուն համար
 Պանտաթարիա կղզին տքորեց :

Ք. Ե
14

Հ. Օգոստոս ի՞նչպէս մեռաւ :

Պ. Ինքը երբոր եօթանասուներջորս տարւան էր՝ Տիբերիոս տղան իր տեղը նստեցուց, և Հառմին բնակիչները համբերել տուաւ որ չորս միլիոնէն աւելի ելան : Քիչմը ետև Տիբերիոսին հետ դէպի Ղիւրիկէ պատերազմի երթալու առնեն հիւանդացաւ, ու ետ դառնալու առնելը եօթանասուներվեց տարւան մեռաւ՝ քառասուներմէկ տարի թագաւորելէն ետև : Ոմանք կըսեն՝ թէ իր Ղիւհիւ կիսն ըստմանեց զՕգոստոս՝ որ իր որդին օր մը առաջ թագաւորէ : Մեծ հանգէս ըրին իրեն թաղմանը . և Տիբերիոս ծերակուտին մէջ կեցած՝ անոր դովեան ընելէն ետև, կտակն ալ կարգացուցաւ որ զՏիբերիոսն ու Ղիւհիւն իրեն ժառանգ ընտրէր էր : Հրաման ելաւ որ կիսերը տարի մը սևեր հագնին . և Օգոստոսին համար կռատուններ շինեցին ու զինքը կուռքի պէս սրաշանցին : Նույն մերիոս Ատտիկոս ազնուականն ալ ըսաւ՝ թէ Ես աչքովըս տեսայ Օգոստոսին երկինք ելելը . անոր համար շատ ըստակ ընծայ առաւ :

Հ. Տիբերիոս ինչպիսի մարդ էր և ի՞նչպէս ըրաւ թագաւորութիւնը :

Պ. Բնութիւն խիստ ու անգութ մարդ էր . բայց աղէկ կեղծել գիտնալով ինք-

զինքը չէր խմացուցած . և Օգոստոսի անուշ վարմունքն ալ միապետուիր ժողովրդեան անուշցուցած ըլլալով, սիրով զինքը կայսր նասեցուցին: Բայց ինքը կամաց կամաց ըսկսու մեծերը հալածել, բանտ դնել, մեռցընել. կամ հարուստ ըլլանուն համար, կամ մեծ անուն ունենանուն համար: Ասանկով ինքն ըսկսու արհամարհել. և երթալով կաւէնար աս արհամարհուիր՝ քանի որ կրատանէին Տիբերիոսին եղբօրը տղուն Պերմանիկոսին աղէկութիները, ու անոր կայսր ըլլալուն կրփափաքէին: Տիբերիոս թէպէտ խմացեր ու նեղացեր էր Պերմանիկոսին վըրայ, բայց պէտք ըլլալով խրկեց զինքը Պերմանացոց վըրայ, որ գնաց յալթեց անոնց, ու ամբողջաւ երկիրներուն: Տիբերիոս նախանձելով շուտ մը ետ կանչեց զինքը՝ բայց անանկ սիրով ու մեծ սպասուով զինքը հռոմ ընդունեցան՝ որ ալ աւելի գըրգըռւեցաւ Տիբերիոսին նախանձը. ու ասի չուզեց որ անիկա մնայ հռոմ. անոր համար խրկեց զինքը գէպի արևելք՝ ու ետքը գաղտուկ թունաւորել տուաւ: Ամէնքը ցաւեցան անոր մահուանը վըրայ, գիանալով որ Տիբերիոսին կատաղուէր պիտի հնազանդին: Երբոր Պերմանիկոսին մարմնոյն մոխիրը հռոմ բերին, ամենուն բերնէն տլբ ու վայնասուն կըլըսէր:

Ք. Ե Հ. Գերմանիկոսին մեռնելէն ետև՝
Տիրերիսս ի՞նչ ըրաւ :

19 Պ. Տեսնելով որ ամէնուն ստելի է
եղեր, ինք ալ զանոնք ստելով՝ շատ ա-
նիրաւուիներ ընելէն ետքը, ելաւ Վա-
պրէա կղզին քաշուեցաւ, ու ինքզինքը
ամէն գէշութեան տուաւ : Եւ թէպէտ
ինքը Հռոմէն հեռացեր էր՝ բայց Հռո-
մին ամէն փողոցները ծածուկ լրաես-
ներ գրեր էր՝ որ սուտումուտ պատճառ-
ներով ամէն անկարգուի կրնէին : Գեր-
մանիկոսին ալաքը վճերոն ու Գրուստը
ըսպաննեցին բանաին մէջ, ըսելով թէ
Տէրուէ թշնամի են, և անոնց Ագրիպ-
պինս մայրը քշեցին : Այնչափ եղաւ որ՝
բարեկամն ու թշնամին չէր որոշէր . ա-
մէնքը Տիրերիսսէն կը լախէին : Ասանկ
անկարգ կեանք անցընելէն ետև Տիրերիսս
հիւանդացաւ ու իրեն յաջորդ ընտրեց
Գերմանիկոսին Վալիգոլա աղան : Ետքը
մարմրուք մը եկաւ վըրան՝ որ ատեն ատեն
մեռածի պէս կիյնար : Օր մըն ալ երբոր
նորէն անանկ մարեցաւ, իր իշխաննե-
րէն մէկը բարձը գլխուն վըրայ դնելով
խղդեց եօթանասուներութը տարւան,
քսանւերկու տարի կայսերութի ընելէն
ետև :

33 Տիրերիսսին կայսերութե տասներու թե-
թորդ տարին զՔն օրն մեր խաչեցին :

Եւ մեր Աբգար Թագաւորը Տիբերիոսին գրեց որ ինքն ալ հաւտայ Քսին . ինչպէս որ Պիղատոս ալ առաջուց Յսին քաշած չարչարանքները , յարուժիլ և հրաշքները Տիբերիոսին գրէր էր : Տիբերիոս ալ ծերակուտին առաջարկեց որ ՂՔս հռոմայեցոց կուռքերուն կարգն անցընեն , բայց անոնք յանձն չառին . Թէպէտ Տիբերիոս քրիստոնեաները հանգիստ կըստահէր :

Հ . Կալիգուլան ինչպէս քշեց կայսերու թիւր :

Պ . Իր խելքէ դուրս ըրած անկարգութիւներովը՝ կերեւոյ թէ ջանաց մտցընել տալ ինչվան իր ատենը եղած անկարգութիւնները : Ինքը իրեն ըսկաւ կուռքերու անուաններ գնել . և Արամազդ , Արէս , Անահիտ , Ափրոզիտէ արձաններուն գլուխները կտարէլ տուաւ ու անոնց տեղը իր գլխուն պատկերը գնել տուաւ : Շատ անգամ կերթար ինք ալ կուռքերուն կարգը կընստէր ու կըհրամէր որ միայն իրեն երկրպագուին ընեն : Շատ կռատուններ շինել տուաւ ու ամէնուն մէջն ալ իր սկիւէ արձանը դրաւ . և ամէն օր ինքն ինչ հագուստ որ կըհագնէր , արձաններուն ալ նմանը հագցընել կուտար : Իր կընիկն ու իր ձին ալ կուռքերուն կարգը անցուց : Իր քուրմերը խիստ շատ էին՝ որ միշտ ազնիւ բաներ իրեն զոհ կընէին . և քրմուպետու թիւր խիստ հարուստներուն կը-

37

արբւէր : Ինքը շատ անգամ կուռքերուն
 հետ խօսակցութիւն ընել կը ձեռացընէր ,
 և Արամազդը կը յորդորէր որ հետը
 կուռի . լուսընկային հետ ալ կատակներ
 կընէր . իսկ ըրած զեղխութիւնը չափ չի-
 կար : Արսէն թէ մարգրիտ ծեծել կու-
 տար ու կերակուրներուն մէջը կըխառ-
 նէր . և երբեմն սեղանը նստողներուն
 սկաւառակով լեցուն ոսկի կըբաժնէր :
 Չիուն համար մարմարիոնէ ախոռ մը
 շինել տուաւ , մուրըր փղոսկրէ , ձիուն
 անունն ալ Աշխոյժ դրաւ . ախոռին
 դուռը գիշերը պահապաններ կեցուց որ
 ձիուն քունին արդէլք մը չիհանգըսի :
 Շատ անգամ Աշխոյժը իր սեղանը կը-
 հրամցընէր , ու իր ձեռքով ձիոյն առջևն
 ոսկեզօծ գարի կըդնէր , և ոսկիէ գաւա-
 թով գինի կըխմցընէր . ինքը երգումն
 ալ անոր գլխուն վըրայ կընէր : Արսէն
 թէ՛ թէոր Աալիգոլան քիչմն ալ ապրէր ,
 զԱշխոյժը հիւսպատոս պիտի ընէր : Ա-
 գահուլութիւն համար ծերակուտէն շատ
 մարդ ըսպաննել տուաւ . որոնց մարմինը
 ատեան կըհանէր ու իրենք զիրենք ըս-
 պաններէն կըսէր : Գազաններուն կե-
 րակուր որոշեր էր մեռցընելու մարդի-
 կը . և տասն օրը մէյմը խեղճ մարդկանց
 բազմութիւն մը կըխրկէր անոնց : Մեռցը-
 նելու մարդը կամաց կամաց չարչարիւ-
 լով ըսպաննել կուտար . թող խմանան
 մեռնիլնին կըսէր :

ՃԺԳ

Հ. Հռոմայեցիք ինչպէս կը համբե-
րէին Կալիգոլային անկարգութեցը :

Պ. Շատը կուզէր զինքը վերցընել,
բայց առջի բերանը կը վախէին խորհուրդ-
նին յայտնելու մէկը մէկու : Ետքն ալ
Գերմանիայի ու Բրիտանիայի վերայ սլա-
տերազմ բացուելով խորհուրդնին ետ
մնաց : Կալիգոլան շատ զօրքով ճամբայ
էլաւ, ու երբեմն զօրքը կը վտայցընէր, եր-
բեմն ալ խիստ ծանր կը քաշեցընէր, ա-
սանկով դնաց՝ Բրիտանիան առնելու
տեղ, անտեղացի իշխան մը բռնեց՝ ու
Բոլոր երկրին օիրեցի ըսելով աւետիս
խրկեց ծերակուտին, ետքը տարաւ իբր
բանակը Ովկիանոսին ծովեզերքը Անգ-
լիայի գլխացները, ու զօրքը պատրաս-
տելէն ետքը, ինքը նաւով ըսկսաւ պտը-
տիլ. ու պատերազմի նշան սուաւ, ան-
տանը զօրքը, ինչպէս որ ապսպրած
էր, մէկէն ըսկսան ժողվել ծովուն ե-
զերքէն ժժմունքներ ու խեցիներ. ետքը
կայսեր դարձան. ան ալ երկայն գովեստ
մը խօսեցաւ իրենց, ու շատ ըտտակ բաժ-
նելով ազատ թողուց որ երթան : Եւ
ստ բանիս յիշատակ անտեղը բարձր աշ-
տարակ մը շինել աուաւ ու դարձաւ :
Անտանը Կասիոս Քերէա, որ միշտ
ծաղր կը ըլլար Կալիգոլայէն ձայնին բա-
րակութեւր համար. խօսքը մէկ ըրած

Ք. Ե ուրիշ իրեն պէս արհամարհած պատ-
րիկներուն հետ, Պաշտօնեան հանդէ-
սին ետքի օրը գնացին խաբարելով զինքը
ժողովոգէն հեռացուցին ու չորս գիէն
զարկին ըստաննեցին չորս տարի թա-
գաւորելէն ետքը :

Հ. Վալիգոլային տեղն ո՞վ անցաւ :

41 Պ. Վալիգոլային մահուանը վերայ
խառված ժողովուրդը իրար անցան,
զինքը մեռցնողներն ալ փախան : Ետքը
քանիմը զինուորներ, Վալիգոլային հօր-
եղբայրը Վղոգիօսը որ ապուշ մարդ մըն
էր, ուսերնուն վերայ առած հրասարա-
կը տարին ու կայսր նստեցուցին, երբոր
ուրիշները կրկարծէին թէ զինքը մեռցը-
նելու կը տանին :

Հ. Վղոգիօս ի՞նչպէս ըրաւ կայսերու
թիւնը :

Պ. Առջի բերանը ամենուն ներեց, և
Վալիգոլային խենթուձենթ հրամաննե-
րը ջնջեց. իրեն առջև զոհ ընել ուզող-
ներուն պատիժ ըստառնացաւ : Ասոր
ատենը Բրիտանիացիք Հռոմայեցոցմէ
օգնուի ուղեցին. Վղոգիօսն ալ Պլաւտոս
պրետորը խրկեց՝ որ գնաց քանի մը ան-
գամ յաղթեց Բրիտանիացոց : Վղոգիօս
լսելով ինք ալ ելաւ գնաց անուն ընելու
համար, ու բան մը չըրած դարձաւ. ծե-
րակոյտը փառաւոր յաղթանակով զինքը
ներս առին ու իրեն համար յաղթական
կամարներ շինեցին : Քիչմը ատենէն
ետև Վղոգիօս անկարգ մարդիկներու

խորհրդով, մանաւանդ իր Մեսալիա անգուծ կնոջը գրգռելովը ըսկաւ անիւրաւ ըսպաննուիններ ընել. անոր համար ժողովրդեան աչքէն ինկաւ: Մեսալիային անգութուծինները խիստ շատ ըլլալուն, սովորուծի եղաւ դէշ կնոջ Մեսալիա կանչել: Աղոգիօսին երկրորդ կինն ալ Ագրիպպինա՝ անգգամին մէկը ըլլալով՝ առջի երկրնէն ունեցած Ներոն ազան կայսերուծէ յաջորդ ընարել տալէն ետքը, Աղոգիօսին սիրած սուսկէ կերակրին մէջ թմրեցնող թոյն խառնեց. ետքը անգուծ բժըշկի մը հետ խօսք դրած՝ դեղի տեղ թունաւոր փետուր մը կըլլեցուց Աղոգիօսին, որ շուտ մը մեռաւ ու թսուներչորս տարւան՝ տասուիրեք տարի կայսերուծի ընելէն ետքը:

ԾՃԴ

Հ. Ներոն ինչպէս թագաւորեց:

Պ. Ներոն տասնըեօթը տարեկան էր, և առջի բերանը արդար ու գթած երկնալով ինքզինքը հաւնեցուց. այնչափ որ անգամ մը յանցաւորի մը համար վճիռ գրելու ատեն կսկըծալով ըսեր է՝ Երանի՛ թէ գիր չգիանայի: Բայց ետքը անանկ սիրաը չարացաւ՝ որ իր Ագրիպպինա մայրն ըսպաննեց. Սենեկա իր վարպեան ալ, որուն պատուոյ համար թողուց որ ինքն ընտրէ մեռնելուն կերպը. Սենեկան ալ երակները ծակելով մեռաւ: Նաև իր երկու կանայքը, մէկ

Բ. Ե

եղբայրը, ուրիշ շատ երևելի մարդիկ ալ ըսպաննել տուաւ Ներոն, որոնք որ իր ըրած անկարգութիւններուն վերայ չի հաւնիլ մը կըցուցնէին՝ վերանին կասկածելով մէկէն կըմեացնէր: Ըրած անկարգութիւններուն ու ղեղխութիւններուն ալ չափ չիկար: Շատ անգամ կառավարի հագուստով կառքի մէջ նստած կըստարէր. մէկ հագուստը միայն մէկ անգամ կըհագնէր. ոսկի թելէ իրեն վարմ շինել տուեր էր թուչուն որսալու համար. անառակ մարդիկներուն շատ ըստակ կըբաժնէր: Իր պալատին հարըստութիւնը համար՝ Ոսկեղէն պալատ Ներոնի՝ կըսէին. երբոր ճամբայ կընէր՝ հազար կառք ետէն կերթային: Ներոնին ատենը հռոմ քաղաքին կէսէն շատը այրեցաւ, և պատճառն ինքը Ներոնն էր կըսեն, որ կրակին ատենը բարձր աշտարակի մը վերայ ելած կըտեսնէր ու նա ագարան զարնելով կերգէր կուրախանար, և թող չէր խօսար որ մարեն: Ետքը կրակին պատճառը քրիստոնէաներն են ըսելով ինքը եղաւ որ առջի հալածանքը հանեց քրիստոնէից գէմ ու ըսկսաւ ըստպաննել զանոնք. որը գաղանի մորթ հագուցած՝ շներու առջին կընետէր, որը խաչը կըհանէր. շատն ալ ողջ ողջ կրակը կըձգէր. ու խաղի պէս աստնցմով կըզուարճանար. Պողոս առաքեալը գրէ խատեց, և Պետրոս առաքեալը խաչ հանեց գլխովար:

64

Հ . Ի՞նչպէս մեռաւ Ներոն :

Պ . Ժողովուրդն անոր խելքէ դուրս
 բրած անգթութիներուն չի գիմանալով՝
 ոտք ելան ու ճարը տեսնել կուզէին :
 Անատենը վ ինդէքս ազնուականին հրա-
 ւիրելովը՝ Սպանիային կուսակալը Գաղ-
 բա կորիճ մարդը՝ որ քաշած կեցեր էր ,
 Հռոմ եկաւ զօրքով : Ներոն երբոր լսեց ,
 վախէն մարեցաւ ընկաւ . արթըննալէն
 ետեւ ալ ըսկսաւ լաթերը սպառնաւել ,
 ձեռվըները գլխուն զարնելով կանչվրո-
 տել , ու փախչելու ճար մը կը մտածէր .
 ետքը յուսահատած կուզէր որ զինքը
 մեռցընեն իր բարեկամները . բայց երբոր
 իրեն չի գրպան՝ ըսաւ . Ուրեմն ես բա-
 րեկամ մըն ալ չունիմ եղեր . ու ըսկսաւ
 հառաչելով խենթի պէս վազվրուտել . և
 երեսը ծածկած՝ որ չի ճանչցրէի՝ գնաց
 Տիբերիս գետը նետուիլ կուզէր : Անա-
 տենը Փանն անուհով իր ազատաւորը
 առջևն ելաւ ու հրամցուց զինքը իր գե-
 ղը . Ներոն չորս հոգւով գնաց ետեւէն ,
 որոնց մէկն էր աւազակութե կողմանէ
 անուանի Սպուրոս անզգամ մարդը :
 'Նոյն ատենը երկինքն ալ կտրոտար՝ փայ-
 լակներ կայծակներ կընէր , մէկ կողմա-
 նէ ալ գեանաշարժ կը լլար . ամէն մարդ
 ալ համարձակ վախը մէկգի գրած՝ վը-
 րան անէծք կը կարգային , ու Ներոնը
 կը փնտռէին : Ներոնին փախչելու ատենը
 գիպւածով երեսը բացւեցաւ , մէկէն
 ճանչցան զինքը , բայց ինքը գեռ փախ-

Ք. Ե չե՛լով կուզէր ազատիլ . անատե՛նը խմացուցին իր բարեկամները թէ Գաղբան կայսր ընտրեր են , և հրաման եղեր է որ Ներոն կախազանի վերայ ծեծով մեռցըւի : Աս երբոր լսեց Ներոն , թուրը քաշեց , գողգըղալով վըզին կըթընցուց ու Եպափրոզիտոս ծառային օգնելովը հոգին փչեց երեսունւերկու տարւան , տասը իրեք տարի ու թըամիս թագաւորելէն ետքը :

ՃԺԵ

Հ . Գաղբան ի՞նչպէս ըրաւ ինքնակալութիւնը :

68 Պ . Ուզեց ամէն բանի մէջ կարգ դնել , զօրքերը զըսպել , ժողովուրդը ճամբայ բերել , և տէրութե՛ գանձը լեցընել , որ սպարաւրէր էր : Բայց խիստ դիւրահաւան ըլլալով , ուրիշի խօսքովը շատ անխոհեմ ու անգութ գործքեր ալ ըրաւ , և քանի մը երևելի մտորդիկ առանց խօսել տալու մեռցընել տուաւ . անոր համար նոր նոր խռովութիւններ ելան :

Հ . Գաղբային ատենը ի՞նչ աստատմբութիւն ելաւ :

Պ . Ինքը եօթանասունւերկու տարեկան կայսր նստելով և տղայ չունենալով Պիսոն ազնուական առաքինի կտրիճն իրեն որդէգիր ըրաւ որ իր ետեւէն կայսր նստի : Զօրքը և ծերակոյտը խռովութե՛ վարժամ ըլլալով չհհաւնեցան Պիսոնին .

Ութոն Ներոնին սիրելին ալ ուղեւով հասնիլ ան պատուոյն, երբոր յուսահատեցաւ, ըսկաւ շատ ըստակ ցրուել. տնանկով առաջ զօրաց սիրան իրեն քաշէց, և օր մը երբոր Գաղբան զո՛հ կընէր, Ութոն գնաց զօրքը ժողվէց ու Գաղբային ագահութիւր և անիրաւութիւր վար զարնելով ինքզինքն ինքնակալ ընարել տուաւ. ետքը յանկարծ Գաղբային վերայ վազէց: Գաղբան՝ թէ որ ըսաւ՝ ժողովրդեան բարւոյն համար է առ ըրածնիդ, կարեցէք գլուխս. ու երկընցուց վիզը կարել տուաւ. ետքը մարմինը փողոցներու մէջ քաշկըռտեցին, ինչվան որ իր մէկ ծառան առաւ թաղէց: Գաղբան թէպէտ եօթը ամիս միայն թագաւորէց, բայց իր աղէկ վարքովը շատ ասրողներէն անուանի եղաւ:

Հ. Ութոն ինչպէս ըրաւ ինքնակալութիւր:

Պ. Թէպէտ ինքն ըսկաւ անուշութիւն վարել, բայց ան միջոցին Ախտելլիոս Գերմանիայի զօրապետը խոստմունքներով և ըստըկով իր զօրքին սիրտը վասարկեցաւ ու ինքնակալ կոչւեցաւ: Ութոն մէկէն գնաց վերան պատերազմի, և իրէք օրւան մէջ իրէք կատաղի պատերազմեղաւ. ու իրէքին մէջն ալ Ութոն յաղթեց. բայց ետքը Ախտելլիոսին զօրապետները Աաղէս ու Կեկինա որ ինչվան անստենը վաթսուն հազար զօրքը երկու բաժնած կըպատերազմէին, մէկ-

տեղ եկան ու յաղթեցին Ոթոնին . ան
ալ յուսահատած՝ ինքզինքն ըսպան
նեց՝ իրեք ամիս օրեւէն ետև : Անատե
նը ծերակոյտը զԱխտելլիոսը կայսր ըն
արեց , որ Գաղղիային մէջ զօրք ժողովե
լու ետևէ էր :

ՃԺԶ

Հ . Ախտելլիոս ինչպէս քշեց կայսե
րութիւր :

Պ . Հառմը յաղթութիւն անաճի պէս
ներս մտաւ , ու ինքզինքը անկարգութեց՝
ուտել խմելու տուաւ : Անբաւ ըստակ
կըմըսիւէր խաղի համար . շատ անգամ
իր իշխաններէն մէկուն մէկալին տունը
կերթար կերակուր ուտելու : Ըրած ա
նիրաւութիւններովն ու մոլութիւններովը
ժողովրդեան ալ՝ նաև ինքնիրեն ալ ա
տելի եղեր էր : Ուստի Ասիայի զօրքը մե
աբանեցան Աեսպասիանոսը կայսր ընե
լու : Ախտելլիոս իր Աաղէս ու Կեկինա
զօրապետներն ապստամբներուն գէմ
խրկեց . բայց երբոր Աեսպասիանոսին
զօրապետը Անատնիոս Իաալիա մտաւ ,
Կեկինա անոր կողմն անցաւ . ետքը Կե
կինային զօրքը զղջալով , զօրապետին
բանա դրին ու իրենք իրենց բոլոր գիշե
րը սպատերազմեցան ու երեսուն հազար
մարդ կորսընցուցին : Անատենը Ախտել
լիոս՝ բնութիւն վախկոտ ըլլալով կայսե
րութիւր Աեսպասիանոսին տալ հարկ

սեպէց . բայց կուզէր որ իրեն աղէկ ապրելու եկամուտ մը կապուի . ուստի կայսերուէ լաթերը հագած ելաւ հանդէսով արդարութեան թուրը կէկիլիոս հիւսպատոսին յանձնեց . բայց ան երբոր յանձն չառաւ , Ախտելլիոս ալ քանի մը հոգւոյ խօսքով սիրա առած ինչպէսն էտքը ապստամբներուն դէմ գնել որոշեց : Անտենը Սարինոս որ Ախտելլիոսը կը յորդորէր կայսերութիւնը Աեսպասիանոսին յանձնելու համար , Աեսպասիանոսին կողմը բռնելով գնաց Կապիտոլիոնին տիրեց : Ախտելլիոսին զօրքն ալ վերան գնացին ու Կապիտոլիոնին կրակ տուին , զՍարինոսն ալ բռնեցին՝ գլուխը կտրեցին : Անդիէն Անտոնիոս հասաւ սրատերազմելով բռնի Հռոմ մտաւ , և ըսկսան իր զօրքերը ջարդել գիմացնին ելողը . Ախտելլիոսն ալ գասն որ կաղաչէր թէ զինքը բանա գնեն՝ ինչպէս Աեսպասիանոսը դայ . ո՞վ մտիկ կրնէ , ձեռվրներն ետեր կտպեցին , վիզը չուան անցուցին՝ թուքումուրով քաշկրուտելով հրապարակը տարին , ու չարաչար ծեծեղէն ետե՛ խոզի պէս մարթեցին զինքն ու մարմինը Տիբերիս գետը նետեցին :

Հ . Աեսպասիանոս ինչպէս կայսր եղաւ :

Պ . Զօրքին ու ծերակուտին աղաչանքովը ընտրուելով՝ Եէմին պաշարումն իր Տիտոս որդւոյն յանձնեց ու Հռոմ

Ք . Ե գարձաւ . արժանաւորները վարձատրեց ,
 իր թշնամեացը ներեց , Հռոմայեցոց
 բարքը փոխեց՝ ինքը անոնց արէկու թէ
 օրինակ ըլլալով : Աեսպասիանոսին կայ-
 սերու թէ օրերը Տիտոս Եէմն առաւ ,
 ու երբոր Հռոմ եկաւ՝ Հռոմայեցիք Տի-
 տոսի փառաւոր յաղթանակ ըլին՝ Եէմի
 ազնիւ կողոպուաներովը , որ էր տաճա-
 րին սեղանը , մեծ աշտանակը , տասը
 պատուիրանքին գրերը՝ բոլորն ալ ոսկիէ ,
 և Ածաշունչը : Հրէից գլխաւոր ապրս-
 տամբներուն մէկն ալ՝ որ Սիմոն կըս-
 ւէր , հոն յաղթանակին զարգն եղաւ :
 Յաղթական կամար մըն ալ շինեցին Տի-
 տոսին , ու վերան Եէմին առնը ելուն
 պատմութիւն գրեցին , որ ինչվան հիմայ
 կեցած է :

Ծ Ֆ Է

Հ . Աեսպասիանոսին վերջը ինչպէս
 եղաւ , և տեղն ունստաւ :

79

Պ . Տասը տարի թագաւորելէն ետքը՝
 ինքը առջինն եղաւ ինքնակալներուն
 մէջ որ իր մահուամբը մեռաւ : Մեռ-
 նելու ատենը ոտք ելաւ , ու կայսրը
 ոտքի վերայ պէտք է մեռնի ըսելով բա-
 րեկամներուն կրթընած՝ հոգին փչեց :
 Իր վերայ շատ գովեստներ կրխօսին պատ-
 միչները . բայց ագահ էր կըսեն , և անի-
 բաւ գործքեր ալ ըրաւ : Հռոմայեցիք
 Տիտոսը տեղը նստեցուցին , և իր անուշ-
 բնութենն ու առատաձեռնութենը հա-

մար՝ իրեն անուն գրին Մարդկանց հան-
 գրասուժի : Ամենուն աղաչանքն ալ
 կըջանար կատարելու . և որ մը ուրիշի
 աղէկուժի մը չըրած անցընելուն վերայ
 հառաչելով ըսաւ . Մեղք , որ մը կոր-
 սընցուցի : Խռովարար մարդիկը հռո-
 մին մէջէն Տիտոս բաւոր մաքրեց . զորոնք
 փողոցէ փողոց ծեծելով պառօցընեւէն
 ետեւ քշել կուտար :

Հ . Տիտոսին օրերն ի՞նչ երևելի դի-
 պուած եղաւ :

Պ . Աեսուժ հրաբուզիս լեռը բռնկե-
 ցաւ , շատ քաղաքներ այրեց . Պլինիոս
 փիլիսոփան ալ հետաքրքրուժք մօտե-
 նալով հրաբուզիսին մէջ այրեցաւ : Հռոմ
 դեանաչարժ՝ սով ժանտամահ եղաւ ,
 և Տիտոս չէ թէ միայն հարկ չէր առնէր
 ան միջոցին , հասպա նաեւ իր պատուա-
 կան քարերն ու զարդերը կըծախէր
 ու գինը խեղճ ժողովրդեան կըբաժնէր :
 Ան միջոցին իր Ագրիկոլա զօրապեան
 ալ Անգղիան առաւ , ու զԱնգղիացիքը
 քիչմը կըթեց , որ առաջ խիստ վայրենի
 էին : Իսկ Տիտոս երկու տարի իրէք ամիս
 տիրելէն ետեւ՝ քառսունըմէկ տարւան
 մեռաւ . և տեղն անցաւ իր եղբայրը Դո-
 մեաիանոս : Ոմանք կըսեն թէ Դոմե-
 աիանոս թոյնով մեռուց զՏիտոսը :

Հ . Դոմեաիանոս ի՞նչպէս ըրաւ ինք-
 նակալուժիը :

Պ . Առջի բերանը գժած ու առա-
 տասիրտ երևցաւ . նոր օրէնքներ դրաւ ,

նոր շէնքեր շննեց . այրած գրքատուն
ները նորոգեց . բայց քիչ առնէն բո-
լորովին ինքզինքը անկարգուէ տուաւ :
Նեա նեռելու վարպետ ըլլալուն համար
հեռուն ծառայ մը կրկեցրնէր՝ թեք
վեր բռնած , ու նետը անոր մատընե-
րուն մէջէն կանցրնէր : Արաժշաութի ,
ձի հեծնել , և ըմբշամարտութի խիտ
կրտիրէր . փիլիսոփաներն ու ուսումնա-
կանները հռոմէն վարնտեց . և ժողո-
վուրդը զուարճացրնելու համար ըրած
ծախքը գեռ մէկ կայսր մը շէ ըրած : Իսկ
ինքը խուցը մինակ եղած առենը ճանճ
բռնելով կրզբօսնուր : Գերմանացոց վը-
րայ պատերազմի ելաւ ու բանմը չըրած
գարձաւ , շատ գերիներ գնեց՝ Գերմա-
նացոց հագուստը հագցուց , ու անանկ
հանդէսով հռոմ մտաւ :

Հ . Գոմեախանոսին առենը ի՞նչ երևե-
լի գիտուած եղաւ :

Պ . Ռուսները թաթարներուն հետ
միացած հռոմայեցոց սահմանը մտան .
ետքը Դակիսացիք ալ իրենց Գեկեբաղ
թագաւորովը հռոմայեցոց վըրայ ելան
ու քանի մը պատերազմի մէջ յաղթե-
ցին : Իսկ երբոր նորէն՝ բռնի կամ ըստը-
կով ետ քաշուցան , Գոմեախանոս փա-
ռաւոր յաղթանակով երկու անգամ
հռոմ մտաւ , ու հրաման հանեց որ իր
արձաններն օսկիէ ու արծըթէ ըլլան ,
և ամէնքը իրեն երկրպագութիւն ընեն :
Փուճ պատճառներով անիրաւ տեղը մէ-

ծամեծներէն շատը մեռցրնել տուաւ :
 Լուկիոս Անտոնիոս Գերմանիայի կուսա-
 կաշն ալ ոտք էլաւ կայսր ըլլալու մտքով
 ու սրատերազմ բացաւ Գոմեաթիանոսին
 դէմ . Գոմեաթիանոսն ալ անոր դաշնակից-
 ները ձեռք բերելու համար շատ մարդ
 չարչարեց մեռուց , որոնցմէ շատն ալ չար-
 չարելէն առաջ կը սպառուէր . ինչպէս որ
 իշխաններուն մէկը երբոր սխտի խաչէր ,
 առջև օրը իր սեղանէն կերակուր խրկեց
 անոր . և Աեսարասիանոսին Աղեմէս եղ-
 բօրորդին ըստաննելու օրը՝ իր գեսպա-
 կինն վըրայ նստեցուց զինքը : Գոմեաթի-
 ոսն՝ ծերակուտին ալ թշնամի էր . ուստի
 օրմը զիրենք վախցրնելու համար Ժողվը-
 ւած տեղերնին զօրքով պաշարել տուաւ :
 Օր մըն ալ զԾերակոյտը հարկիքի հրամ-
 ցուց . խոթեց զիրենք մէկ մուծ սրահի
 մը մէջ որ բոլոր սևերով պատած էր ,
 միայն մէկ քանի կանթեղ կը վառէր , մէջն
 ալ չորս դին ստակալի բաներ գրած . նըս-
 տարանի տեղ գետինը շարած մէյմէկ
 մեռելի անտուկներ՝ ու վըրան մեծամեծ-
 ներուն անուհը գրած , ասդին անգին ալ
 մահուան գործիքներ շարած : Ասխեր-
 նէն ամէնքը լեզունին կապուած մնացին .
 քիչմը ասենէն՝ զինուորներ ներս մտան
 սև երեսով մէկ ձեռւրնին թուր՝ մէկա-
 լը ջահ բռնած . հոն ասոնք մեռել թա-
 ղելու հանգէս ձեացուցին՝ ու գնացին .
 և կերակրէն ետքը մէկէն դռները բաց-
 ւեցան՝ ու կայսրը հրաման տուաւ որ

կերթան: Դոմեախանոս քրիստոնէից երկ-
րորդ հալածանքը հանեց, ու սրտին չա-
րուածէն շատ տանջանքներ ալ ինքը կը-
հընարէր:

ՃԺԸ

Հ. Դոմեախանոսին վերջը ի՞նչպէս
եղաւ:

Պ. Իր Դոմեախա կիներ օր մը թուղթ
մը ձեռք ձգեց, որուն վերայ Դոմեախա-
նոս մեռցընելու մարդիկը կը գրէր ու ծո-
ցը կը պահէր. հոն իր անուէն ալ ատե-
սածին պէս՝ տարաւ Նորբանոս ու Պե-
տրոնիոս իշխաններուն ցցուց. անոնք
ալ իրենց և Ստեփանոս իշխանին անու-
նը ան թղթին վերայ տեսնելով՝ խօսքը
մէկ ըրին, և օր մը երբօր Դոմեախանոս
բաղնիք կերթար, Ստեփանոս Կայսեր
գաղտուկ խօսք մը ունիմ ըսելով ներս
մտաւ ու ըսկտաւ պատմել, թէ Քանի
մը հողի խօսք գրէր են քեզ մեռցընե-
լու. և հանեց թուղթ մը առաւ ձեռքը:
Երբօր Դոմեախանոս ուշագրուածք մը
կը կարգար, և որովհետև կայսեր քով
թրով մտնել չըլլար, Ստեփանոս լածին
տակէն թուր մը հանեց ու զարկաւ, բայց
չիկրրցաւ ըսպաննել. Դոմեախանոս մէ-
կէն բռնեց զինքը գետինը զարկաւ ու
ըսկտաւ օգնութի կանչել: Ներս վաղե-
ցին Պարթենիոս սուսերամարտիկն ու
Քանի մը զինուորներ, ընկան Դոմեախ-
անոսին վերան ու ըսպաննեցին:

Հ. Դոմեաթիանոսին տեղին ո՞վ անցաւ : Բ. Ե

Պ. Երակոյար անոր մահը լսածին պէս՝ արձանները կոտորտել՝ քարերու վերայէ անուներ քերթել աուլին, և մեռելին սովորական թաղումը չըրին. ու մէկէն նոյն օրը Ներուաս անուենով յիսուներհինգ տարւան ազնուական առաքինի մարդը ինքնակալ դրին, և Հռոմայեցոց մեծ ուրախութի եղաւ : Անատենը Ներուաս ըսկաւ ամէն բանի կարգ դնել, թշնամիներուն ներել. բայց տեսնելով որ խռովութիւնը չիպակսիր, ինքը ձանձրացած՝ Գերմանիային կուսակալ Տրայիանոսն իրեն յաջորդ ընտրեց : Աւրան քիչ անցաւ, Հռեգուղոս պատրիկին հետ կալւ մը ունեցաւ ու սրտին ցաւէն հիւանդացաւ մեռաւ՝ չորս ամիս կայսերութի ընելէն ետքը : Օտարազգի կայսերաց մէջ ինքն առաջին եղաւ, որովհետեւ Սպանիացի էր :

Հ. Տրայիանոս ի՞նչպէս ըրաւ կայսերութիւնը :

Պ. Ամէնուն սիրելի եղաւ իր մէկբանի աղէկութիւնը համար. Պլուտարքոս փիլիսոփան իր վարպետն էր : Իր առջի պատերազմը Դակիացոց հետ ըրաւ, որ նորէն Հռոմայեցոց վերայ ելեր էին, ու յաղթեց անոնց Դեկեբալ թագաւորին : Ան պատերազմին մէջ Հռոմայեցոց վերքերը պլելու համար Տրայիանոս իր հագուստն ալ պտտըռտեր տուեր է կըսեն : Դեկեբալ երբոր նորէն գլուխ

96

98

քաշեց, գնաց Տրայիանոս Դանուբ գետին վերայ փառաւոր կամուրջ մը շինեց քաանւերկու կամարով, բարձրութիւնը եօթանասուներհինգ կանգուն, և լայնքը ութսուներհինգ. որուն աւերակները ինչվան հիմա կեցած են: Ետքը անցաւ բաւոր Դակիացոց երկրին տիրեց, և անոնց Դեկէջաղ թագաւորը պատերազմի ատեն ըսպանուեցաւ: Ետքը Տրայիանոս յաղթանակով Հռոմ մտաւ. Հռոմը աշուր շէնքերով զարդարեց, և պարսպ ու չարագործ մարդիկը վաւնտեց: Իր կայսերութե իններորդ տարին երրորդ հալածանքը Տրայիանոս հանեց քրիստոնէից վերայ. թէպէտ ետքը քիչ մը հանդարտեցուց:

ՃԺԹ

Հ. Ի՞նչ երևելի դիպուած եղաւ Տրայիանոսին ատենը:

Պ. Երբոր ինքը Ասիայի կողմերը կը քալէր՝ ողորմելի Հրեաները Հռոմին մօտ ասպտամբեցան, և անանկ կատողեր էին՝ որ ինչվան իրենց թշնամիներուն միտը կուտէին. բայց քիչ ատենէն չարաչար յաղթըւեցան:

Հ. Տրայիանոս ի՞նչպէս մեռաւ:

Պ. Ասիային կողմերը ինչվան Եփրատէն ալ անդին քալելէն ետև՝ Հռոմ դառնալու ատենը տկարացաւ, ու Սելէւկիա քաղաքը երբոր հասաւ՝ մեռաւ

վաթսուներկու տարուան , աասնըինը տարի վեց ամիս կայսերութի ընեւէն ետքը : Ծերակոյտը իրեն պատուոյն համար սիւն մը կանգնեցին Տրայիանոսի հրատարակ ըսուած տեղը՝ հարիւր քառասուն ոտք բարձր , մէջը պարաս , և կըր սանդուխով հարիւր ութսուն ոտք , վըրան Տրայիանոսի պատերազմները փորած , և ծայրը Տրայիանոսին պնծէ արձանը դրած : Աս սեանը բարձրութիւնը կիմացւէր թէ նոյնչափ ցածցուցեր էր Տրայիանոս քովի մօտ եղած լեռը՝ ան հրատարակը շահելու համար :

Հռոմին առջի ինքնակալներուն գրեթէ սովորութի եղեր էր որ մէյմէկ երկերկու սիւն Եգիպտոսէն բերել կուտային , կամ նորէն իրենք կանգնել կուտային , որոնցմէ ինչվան հիմա կան Հռոմին մէջ նորոգած ու վըրանին քրիստոնէութե նշաններ դրած :

Հ . Տրայիանոսին ո՞վ յաջորդեց :

Պ . Ագրիանոս անոր ազգականը որ ուսումնասէր և խաղաղասէր կայսր եղաւ , և իր առջի թշնամիներուն ներեց : Կրտեն թէ օր մը անոնց մէկուն հանգիպելով Բարեկամ , ըսաւ , ազատեցար ձեռքէս , վասն զի ես կայսր եղայ : Շաանգամ ինչվան իր ծառաներուն ալ հիւանդտեսի կերթար : Զարմանալի յիշողութի ունէր . մէկ անգամ մը կարգացած գիրքը բերնուց կըզուրցեր , և իր ամէն զինուորներուն անունը գիտէր .

նոյն ատենի մէջ շատ գրագիրներու
մէկտեղ զատ զատ բաներ տուն կուտար
որ գրեն : Իր ատենի ամէնէն երևելի
Ճարտասանն ու բանաստեղծը ինքն էր :

Հ . Ագրիանոսի ատենն ի՞նչ երևելի
բան հանդիպեցաւ :

Պ . Հիւսիսային ազգերը Հռոմայեցոյ
սահմանները կոխեցին . Ագրիանոս ալ
անոնց դէմ ելաւ ու Տրայիանոսին շի-
նած կամուրջն ալ փլցուց՝ անոնց դիւ-
րաւ անցուդարձն արգիլելու համար :
Քիչմը ատենէն ետև տէրութիւն աչքէ
անցընելու համար ասդիս անդին կը պը-
տրուէր , վասն զի կըսէր՝ թէ Վայսըրը ա-
րևու պէս պիտի ըլլայ , որ ամէն տեղ իր
տաքութիւնը հասցընէ : Քրիստոնեաները
շատ կը սիրէր , անոր համար զՔս իր
կուռքերուն կարգը դնել կուզէր : Ա-
փրիկէ անցաւ քաղաքները շէնցուց , և
հին Վարքեդոնը նորոգեց մեծցուց ու
անունը Ագրիանուպօլիս դրաւ : Ե՛ւմ
ալ դնաց , հրաման տուաւ Հրէից որ
շինեն քաղաքը . անոնք ալ ըսկսան շի-
նել , ու համարձակուի առած՝ Հրէաս-
տանի մէջ գտնուած Հռոմայեցիներն ալ
քրիստոնեաներն ալ բոլոր թրէ անցու-
ցին՝ Բարկոքեբաս անունով սուտ մե-
սիային առաջնորդութիւնը : Անատենը
Ագրիանոս զօրք խրկեց ու վեցհարիւր
հազար հրեայ պատերազմին մէջ ջարդե-
լէն ետքը՝ մնացածներն ալ Հրէաստա-
նէն դուրս վազնտել տուաւ : Տասւիրեք

տարի աշխարհք պարտելէն ետքը՝ Հռոմ՝ Ք. Ե
 դարձաւ, նոր կարգեր դրաւ ու Անտո-
 նինոս անունով գաղղիացին իրեն որդե-
 գիր ըրաւ : Ետքը սաստիկ հիւանդանա-
 լով քովիններուն կաղաչէր որ ըսպան-
 նեն զինքը . ինչպէս որ յուսահատած՝
 Մեծամեծաց մահը բժիշկներէն է ըսե-
 լով պաքը աւրեց և շուտմը մեռաւ եօ-
 թանասուններկու տարւան, քսանը մէկ
 տարի տասնըմէկ ամիս թագաւորելէն
 ետև :

ՃԻԱ

Հ . Ագրիանոսին տեղն ո՞վ անցաւ :

Պ . Իր որդեգիրն Անտոնինոս, որ 158
 ամէնուն սիրելի եղած էր և իր աղէ-
 կութիներուն համար մտկանունն ալ
 Պիոս քր բարեպաշտ գրին : Օրմը յան-
 կարծ հիւանդացաւ տենդով, ու շուտ
 մը բարեկամներն ու գլխաւոր իշխան-
 ները կանչեց, առջևնին հաստատեց թէ
 Աւրեղիոս իր որդեգիրն է, և Բաղդին
 արձանն որ կայսերաց սենեակը կրկե-
 նար՝ Աւրեղիոսին սենեակը խրկեց, ու
 մեռաւ եօթանասունըհինգ տարւան,
 քսաններկու տարի տիրելէն ետև :

Հ . Աւրեղիոս ինչպէ՞ս ըրաւ կայսե-
 րութիւնը :

Պ . Աւրեղիոս իրեն օգնական առաւ 161
 Վերոս ազնուականը . ինքը իր աղէկու-
 թիներուն համար որչափ որ անուանի

եղաւ, այնչափ ալ Վերոս իր մոլութի-
ններովը ատելի եղաւ : Ասոնց ատենն ալ
հիւսիսային աղգերն ապստամբեցան,
բայց շուտով յաղթըւեցան : Ետքը Վե-
րոս Պարթևաց վերայ գնաց, և թէպէտ
յաղթեց, բայց ետ դառնալու ատենը
սովէն ու ժանտախտէն զօրքին կէսը
կորսընցուց, և ինքը փառաւոր յաղ-
թանակով հռոմ մտաւ : Ան միջոցին
Արեղիոս հռոմին մէջ շատ բարեկար-
գութիներ ըրաւ : Բայց իր գահակցին
գէշ մարդ ըլլալուն վր կըցաւէր : Նոյն
միջոցին շատ խեղճութիներ ալ հասնե-
լուն ժողովրդեան վերայ՝ ժանտախտ,
գեանաշարժ, սով, հեղեղներ, մարտի,
մէկ կողմանէ ալ թշնամիները զօրանա-
լուն համար, քուրմերը շատ խենթու-
խելաւ հանգէսներ զօհեր ընելէն ետև :
Աս քաշածներնուս պատճառը քրիստո-
նեաներն են ըսելով՝ չորրորդ հալածանքը
հանեցին : Անտենը Արեղիոս՝ Մար-
կոման ըսած Գերմանացոց վերայ գնաց
Վերոսին հետ, և Ալպեան լեռներուն
մօտ յաղթեց անոնց ու գարձաւ, բայց
Վերոս ճամբան իջուածքով մը մեռաւ
երսուներինը տարւան, Արեղիոսին հետ
ինը տարի կայսերութի ընելէն ետքը :

Հ. Վերոսին մեռնելէն ետքը Արե-
ղիոսի ատենն ի՞նչ նոր բան հանգիպե-
ցաւ :

Պ. Արեղիոս նորէն Մարկոմաննե-
րուն վերայ ելաւ, և պատերազմին մէջ

յանկարծ թշնամիներէն պաշարուեցաւ ,
 իր բանակին ջուրն ալ հատաւ : Երբոր
 Աւրեղիոս յուսահատած չէր գիտէր ինչ
 ընելիքը , բանակին մէջի քրիստոնեա-
 ներուն ազօթքովը այնպէս անձրև մը
 եկաւ որ բոլոր բանակը սաղաւարաներ-
 նին ջրով լեցուցին ու կշտացան . ետքը
 նոյն ամպը թշնամեաց վերայ կայծակ-
 ներ թափելով ցիրուցան փախուց զի-
 րենք : Ասոր վերայ Աւրեղիոս քրիստո-
 նէից հալածմունքը գաղտնեցնել տը-
 ւաւ : Աւրեղիոս իմաստասիրութի խիստ
 կըսիրէր ու երանի կուտար ան ազգին
 որ փիլիսոփայ թագաւոր ունի :

Հ . Աւրեղիոսին վերջն ինչպէս եղաւ :

Պ . Լսելով որ Ռուսներն ու Թաթար
 ները իր տէրութենը վերայ կուգան , դէ-
 մերնին ելաւ ու սլաւերազմին երրորդ
 տարին Վեննա քաղաքին մէջ հիւանդա-
 ցաւ : Իր Կոմոգոս տղուն գէշութիներ
 րուն վերայ ալ ցաւելով կըսեն թէ կա-
 մօք բան չիկերաւ ու տասներինը տարի
 թագաւորելէն ետքը՝ մեռաւ յիսունը-
 ինը տարւան , և գրեթէ Հռոմայեցոց
 տէրութե փառքն ալ հեար մեռաւ : Ա-
 սոր անունովը սիւն մը կանգնեցին Տրայ-
 իանոսին սիւնին նման փառաւոր . իր
 յաղթուններուն հետ ջրին հրաշքն ալ
 վերան փորած : Սեքստոս պապը աս եր-
 կու սիւները նորոգեց ու վերայի ար-
 ձաններն ալ փոխեց՝ Պետրոսի և Պօ-
 ղոսի արձանները դրաւ :

Ք. Ե

180

Հ. Աւրեղիոսին ո՞վ յաջորդեց :

Պ. Կոմոզոս տղան, որ անկարգուէ կողմանէ Գոմեափանոսն աւանցուց՝ կըսեն : Խելքէ չանցած խենթութիւններ կընէր . բան ծախել, կառք քշել, սուսուսուս պատճառներով մէկը մէկալը մեռցընէլ . ինչվան սուսերամարտութի ալ կընէր՝ ուրիշներուն կապարէ սուր տալով ու ինքը սրած երկըթէ թուր առած մէջերնին կըմտնէր ու անխընայ կըջարդէր զամէնքը : Կըսեն թէ ինքն ալ Գոմեափանոսին պէս թուղթ մը կըպահէր՝ վըրան մեռցընէլու մարդիկը գրած, որ օր մը գտան ու Կոմոզոսին վըրայ կատղած՝ նախ թոյն խըմցուցին, ու երբոր թոյնը չազդեց, գաղտուկ սենեակը մտան ու խզդեցին զինքը տասուերկու տարի կայսերութի ընէլէն ետքը, առանց մէկումը իմացընէլու . մարմինն ալ բեռի պէս կապկըպած պալատէն դուրս հանեցին :

Հ. Կոմոզոսին տեղն ո՞վ նստաւ :

193

Պ. Զկոմոզոսը մեռցընալները Պերտինաքս անուանով անուանի մարդն ընտրեցին . բայց երբոր եկան իրեն խնացընէլու, Պերտինաքս կարծելով թէ զինքը մեռցընէլու եկեր են Կոմոզոսին հրամանովը, Զարմանք է, ըսաւ, որ ինչվան հիմա զիս ողջ թողուց : Բայց եր-

բոր եղածն իմացաւ, պաղեցաւ մնաց, Բ. Ե
 ու ակամայ յանձն առաւ կայսերուն իր.
 Ժողովուրդն ալ երբ լսեցին՝ ընդունե-
 ցան: Իսկ Կոմոդոսը՝ հայրենեաց՝ չմծ-
 ներուն՝ և մարդկանց թշնամի էր ըսե-
 լով լուալիքի մը մէջ նետեցին:

Հ. Պերտինաքս ի՞նչպէս ըրաւ կայսե-
 րու թիւ:

Պ. Իր նստելուն վերայ ամէնքն ու-
 րախացան. բայց ինքը խիստ արդարուն
 ետևէ ըլլալուն համար՝ զօրքը կատղած
 վերան վաղեցին ու պալատին մէջ զար-
 կին ըսպաննեցին իրէք ամիս տիրելէն
 ետև:

Հ. Պերտինաքսին տեղն ո՞վ անցաւ:

Պ. Զօրքը ծախեցին զինքնակալու-
 թիւնը կայսեր աներօջը Դիգիոս հիւ-
 պատոսին՝ շատ ըստակով: Ասիկա բո-
 լոր օրը պարսպ կանցըներ. թէպէտ
 բնու թք հեզ ըլլալուն համար ուրիշնե-
 րուն զէն մը չէր ըներ, բայց իր ագա-
 հունքը համար զօրքին ալ ատելի եղաւ:
 Քիչմը ատենէն ետև Աիրիկէի զօրքը
 իրենց Սեպտիմիոս Սեւերոս զօրապետ-
 նին ինքնակալ գրին՝ որ Պերտինաքսին
 մահուանը վրէժն առնելու եկաւ. Դի-
 գիոս ուզեց որ տէրու իր մէջերնին բաժ-
 նեն. բայց անիկա մտիկ չըրաւ, մարդ
 իրկեց Դիգիոսն ըսպաննել տուաւ:

Հ. Սեւերոս ի՞նչպէս ըրաւ կայսե-
 րու թիւ:

Պ. Յաղթեց Ասորոց երկրին Նիգեր 194
 14ⁿ

կուտակալին ու Անգղիայի Ալբինոս զօ-
 րասպետին՝ որ կայսր ըլլալ կուզէին. ետքը
 Պարթևներուն գէմ գնաց, յաղթեց. և
 արևելքի ուրիշ կողմերն ալ պարտելէն
 ետքը դարձաւ Հռոմ: Ան միջոցին Պաւ-
 տիանոս անուհով մէկը կայսր ըլլալ ու-
 զելով պալատի զօրագլուխներէն մէկուն
 ապսպրեց որ Սեւերոսը Հռոմ դարձա-
 ծին պէս՝ տղուն հետ մէկտեղ ըսպան-
 նէ. ան ալ գնաց Սեւերոսին իմացուց.
 բայց Սեւերոս չաւտալով Թողինքը հոս
 գայ ըսաւ: Զօրագլուխը գնաց զինքը
 խաբեց՝ ըսելով թէ Ըսպաննեցի զկայսրը,
 ան տղչուտ մը հաւտաց ու ելաւ. հետը
 կէս գիշերուն պալատը գնաց. հոն յան-
 կարծ Պաւտիանոսին խնտուամբ սարսափ
 փոխեցաւ. տեսաւ որ կայսրը ողջ նր-
 ատը՝ բարեկամներուն հետ իրեն կր-
 պասէ: Անտենը Սեւերոս բարկութիւն
 ըսաւ՝ թէ Ասատէն հոս ի՞նչ բան ու-
 նիս. Պաւտիանոս չգիտնալով ինչ ընե-
 լիքը՝ խոստովանեցաւ ու Թողութի ու-
 զեց. Սեւերոս ալ ներեց. բայց որդին
 Կարակալլա չի համբերելով Թուրք քա-
 շեց ըսպաննեց Պաւտիանոսը: Աս Սե-
 ւերոսը հանեց հինգերորդ հալածանքը
 քրիստոնէից գէմ: Երբոր Անգլիա
 գնաց, հոն իր զօրքը խիստ յոգնեցան
 Կալէ գոնացոց գէմ ըրած պատերազմնե-
 րուն մէջ՝ անտառներ կարելով, գժուար
 ճամբաներ անցնելով, և գետերու վը-
 րոյ կամուրջներ շինելով. բայց Սեւերոս

յաղթեց թշնամեաց . ու ան երևելի ք . Ե
պատը քաչեց հոն՝ որ ինչպան հիմա իր
անուևովը կրկոչւի . և ինքը հոն մեռաւ
վաթսուներկեց տարւան , տասներու թը
տարի թագաւորելէն ետքը :

ՃԻԲ

Հ . Սեւերոսի աեղն ով անցաւ :

Պ . Զօրքը ընտրեցին անոր երկու որ 211
դէքը կարակալւան ու Գետասը . անոնք
իրարու ձեռքէ յափշտակել ուղեւով ան
գամ մը կարակալւա քանի մը հոգւով
եղբօրը պալաար վաղեց ու մօրը գրկին
մէջ ըսպաննեց զԳետասը : Կայսր ըլլա
լէն ետքն ալ անիրաւուե ու անգթուե
կողմանէ Գոմեախանոսն ալ անցուց ,
Ներոնն ալ :

Ասիկա Աղէքսանդրիա քաղաքը գնաց և
հոն շատ ըսպաննութիւններ ըրաւ իր վը
րայ ծիծաղելու համար՝ որ լսեր էին
թէ Աղէքսանդրի նմանիլ կուզէ . բայց
կրսեն թէ գլխուն գէպի ձախ կողմը
ծռութէն իզատ ուրիշ նմանութի չու
նէր Աղէքսանդրին հետ . ետքը օր մը
երբոր կառքով Եգէսիա քաղաքին քովե
րը քանի մը հոգիով կրպառաէր , Մակրի
նոս զօրապետին հրամանովը Մարտիազ
հակայ հարիւրապետ մը ըսպաննեց ըղ
կայօրը . թէտէտ ետքը Մարտիազն ալ
մեռուցին , բայց կայսերութիւր Մակրի
նոսին անցաւ , որ կարգեդոնացի հասա

Ք. Ե րոսկ մարդ մըն էր ու կամաց կամաց
առաջ եկեր էր :

Հ. Մակրինոս ի՞նչպէս ըրաւ կայսե-
րու թիւր :

217

Պ. Թէպէտ իր արգարասէր ու անուշ
բարբովը սիրելի եղաւ, բայց որովհետև
զօրացը կարգեր դնել կուզէր. զօրքը
ապստամբելով զինքը Քալկեդոն փա-
խուցին ու հոն ըսպաննեցին՝ տարի մը
երկու ամիս կայսերու թիւ ընելէն ետքը :

Հ. Մակրինոսին ո՞վ յաշորդեց :

Պ. Կարակալային տասնըջորս տարե-
կան տղան Ելիոֆաբաղոսը նստեցուցին
զօրքը, որ չորս տարի միայն ապրեցաւ՝
անկարգութիւններով լցւած : Կանանց
խորհրդարան մը շինեց ու իր Մեսա-
մայրը անոնց գլուխ դրաւ, որոնց խոր-
հուրդները միայն նորելուք հագուստ-
ներու և իրարու երթալ գալու վերայ
էին : Իր ասպետները կոչուեքի մէջ կը-
նըստեցընէր քամիով ուռեցուցած ա-
թուներու վերայ, որ կամաց կամաց
քամին պարպելով ամէնքը գետինը նըս-
տած կըմնային : Սեղան կընէր միշտ չի-
գըտնըւելու բաներով. ծովու մօտ՝ ցա-
մաքի բերք կուզէր. իսկ ցամաքի վերայ
ձկնեղէն փնտուել կուտար : Ուրիշ շատ
խենթութիւններէն ու անիրաւութիւնե-
րէն իզատ, կըսեն թէ կտրիճ տղաք մոր
թել կուտայ ու անոնց աղիքներուն նայ-
ելով ըլլալու բաները կըգուշակէ եղեր :
Չդիմացան զօրքը, ետեէն ընկան ու

պահւելոած տեղէն հանեցին՝ քաշկըռ-
տելով փողոցները պարտցուցին՝ ու մե-
ռելը Տիբերիա գետը նետեցին :

Հ. Եղիօգաբաղոսին տեղն ո՞վ անցաւ :

222

Պ. Մօրքրոջը տղան Աղէքսանդր Սե-
ւերոս տասնըվեց տարւան, որ գիտուն,
երևելի երաժիշտ, վարպետ արձանա-
գործ և անուանի բանաստեղծ էր : Իր
ամէն բանը ծերակուտին խորհրդովը
կրնէր, և իր Մամէա մօրը խրատովը՝
որ այնպիսի աղէկ կրթութի տուեր էր
իրեն : Վաշառքի խիստ թշնամի էր, և
ամէն օր ուրիշի աղէկուն կուզէր ընել՝
Տիտոսին պէս : Քրիստոնէաներուն հան-
գըստուն տուաւ. ու իր պաշտաին չորս
գին գրած էր աս քրիստոնէաներէն սոր-
ված առածը, թէ Ինչ որ + ելի լէս ուլեր՝
Դուն ալ ուրիշի ճշներ : Իր կարծուքը
թշնամիներն ալ գողացուց. Պարթևնե-
րուն յաղթեց, ու Հռոմայեցոց տե-
րութիւնը առջի մեծութիւնը հասցուց :

Հ. Աղէքսանդր Սեւերոսին վերջը
ի՞նչպէս եղաւ :

Պ. Կայսերութիւնը տասնիրեքերորդ
տարին վերի Գերմանիային կողմի վայ-
րենի աղգերուն դէմ ելաւ. բայց Մո-
գունախայի կողմերն եղած Հռոմայեցի
զօրքին մեծ զօրապետը Մաքսիմինոս ա-
պրտամբեցաւ իրմէն, ու դահլիճ մը
խրկելով գլուխը կտրել տուաւ : Քիչ
մը ետև Մամէա մայրն ալ մեռուցին՝ որ
քրիստոնէայ եղեր էր կրսեն :

Ք. Ե Հ. Աղէքսանդր Սեւերոսէն ետքը ո՞վ
եղաւ ինքնակալ :

235 Պ. Զ ինքը մեռցընել տուող Մաքսի-
մինոսն ընարեցին, որ Յունաստանի կող-
մերը հովուի մը տղայ էր ու աւազակ-
ներու հետ կառուելու սորված. ետքը
Հռոմայեցոց զինուոր դրւեցաւ : Ութ-
ուկէս ոսնաչափ հասակ ունէր, անոր
յարմար ալ հաստութի : Իր կնոջն ա-
պարանջանը մտանիի տեղ մատը կանցը-
նէր : Երկու եզներու շարժել չիկրցած
սայլը մէկ ձեռքով կը քաշէր : Կերակու-
րին սովորական չափը քառսուն լիպրէ,
քի ինը հօխայ ու կէս միս էր, խմած գի-
նին ալ Կապիտոլեան սափոր մը լեցուն,
քի տասներհինգ հօխայի չափ : Իսկ կտրը
ճուէ կողմանէ ամենևին բանէ մը չէր
վախնար : Սեւերոս կայսեր տանը խա-
ղի մը մէջ տասներվեց երևելի ըմբիշներու
յաղթեց, և բարքն ալ աղէկ ըլլալուն՝
կայսրը քոյն առաւ զինքը ու զօրա-
սլետ ըրաւ :

Հ. Մաքսիմինոս ի՞նչպէս ըրաւ կայ-
սերութիւր :

Պ. Կայսերաց ամէնէն ալ չարագործ
եղաւ, և վեցերորդ սաստիկ հալածանքը
հանեց քրիստոնէից դէմ : Բայց պատե-
րազմներու մէջ շատ կարճու իներ ցցուց
Գերմանացոց և հիւսիսականաց դէմ .

զօրքին թոշակն ալ աւելցուց : Հասարակ Բ. Ե
 զինուորի մը պէս կաշխատէր , ու պա-
 տերազմի ատեն վտանգաւոր տեղերը
 կըմտնէր : Սակայն ըրած անգլթուինե-
 բուն համար ամէնքը թշնամի դարձան
 իրեն . ետքը իր ուժէն վախնալով գաղ-
 տուկ վրանը մտան՝ քունին մէջ ըսպան-
 նեցին զինքը իր կայսր դրած տղուն հետ՝
 իրէք ասորի թագաւորէէն ետև , ու
 մարմինը շնորուն նետեցին :

Հ . Մաքսիմինոսէն ետև ո՞վ եղաւ
 կայսր :

Պ . Ծերակոյտն երկու հոգի ընարեց , 237
 Պոպիենոսն ու Բալթինոսը , բայց անոնք
 իրարու հետ անմիաբան ըլլալով և զօրքը
 երկուքին ալ թշնամի , օր մը կոխեցին
 սալաանն ու քաշկրճատելով գուրս հա-
 նեցին՝ երկուքն ալ ըսպաննեցին :

Հ . Պոպիենոսէն ու Բալթինոսէն ետև
 ո՞վ թագաւորեց :

Պ . Մաքսիմինոսին ատենը Գորգիա- 238
 նոս անունով հիւսպատոսի փոխանորդ
 մը կար Ափրիկէ , որ զօրքին սիրելի ըլ-
 լալով կայսր ընարըւեր էր որդւոյն հետ
 մէկտեղ . բայց կապելիանոս իշխանը վը-
 րանին սպատերազմի ելեր էր . որդին սա-
 տերազմի մէջ մեռեր էր , հայրն ալ յու-
 սահատած ինքզինքը մեռուցեր էր : Ա-
 սոր թողը կար Հռոմ Գորգիանոս ա-
 նունով ասանըվէց տարւան , ապատամբ
 ները զանիկա դրին ինքնակալ :

ՃԻԵ

Ք. Ե Տ. Գորդիանոս ի՞նչպէս ըրաւ կայսերու թիւր :

Պ. Առաքինուէ և ուսման շատ սէր ունէր : Ժողովրդեան ու զօրքին մէջէն խռովուիւր վերցընել ջանաց, քանի որ Միսիթէոս վարպետն ողջ էր . բայց երբոր զՄիսիթէոսը թոյնով մեռուց Փիլիպպոս Արաբացին, անոր հաւտալով՝ զինքը զօրքին սպարապետ ըրաւ : Փիլիպպոս ըրաւ չըրաւ՝ Գորդիանոսին հետ մէկտեղ թագաւորեց, ետքը ըսպաննել տուաւ զԳորդիանոսը, որ վեց տարի թագաւորեր էր . և ինքը իր վեց տարեկան տղուն հետ կայսր նստաւ : Պարսից հետ զինադադարում ըրաւ ու ճամբայ ելաւ Հռոմ գալու համար . բայց զօրքը Դեկոս զօրապետին հետ Փիլիպպոսէն ապրստամբեցան ու զինքը մեռուցին՝ հինգ տարի կայսերութի ընելէն ետև : Կայսերաց մէջ առջի քրիստոնեայ եղողն աս Փիլիպպոսն էր կըսեն . ստոյգն ան է որ իր տղան քրիստոնեայ մեռաւ :

Տ. Փիլիպպոսին տեղն ո՞վ անցաւ :

Պ. Դեկոս խելացի ու կտրիճ զօրապետը . բայց անատենը տէրութիւնը խիստ գէշցած էր ու կործանելու վերայ՝ կռապաշտներուն քիչնալուն համար՝ որովհետև քրիստոնեայք շատցեր էին ու իշխանութե հասնիլ չէին կըրնար :

որ տէրուհի պաշտպանեն : Դեկոս Գոթ
Թացոց դէմ գնաց, զարնըւեցաւ ու
որդւոյն հետ մեռաւ երկու տարի ափ
րելէն ետև . իր զօրքն ալ ցրուեցան :
Քրիստոնէից վերայ եօթներորդ մեծ
հալածանքը հանեց Դեկոս :

Հ . Դեկոսին ո՞վ յաջորդեց :

Պ . Գաղղոս զօրաւարն որ պատճառ
եղեր էր Դեկոսին յալթըւելուն, մնա-
ցած զօրքը ժողովեց ու կայսր եղաւ, և
Գոթացոց տարւէ տարի շատ ըստակ
խոստացաւ որ իր վերայ չի գան . իսկ
ինքը անկարգութեց ետևէ ըլլալ ըսկը-
սաւ . կռապաշտներուն ալ իշխանութի
տուաւ որ ուզածնին ընեն Քրիստոնեա-
ներուն : Անտառն սաստիկ չիտեսնըւած
ժանտախտ ընկաւ ժողովրդեան մէջ : Ան-
կեց ետքը Եմիլիանոս զօրասպետը գնաց
Գոթացոց յալթեց՝ ու զօրքին ուղեւոր
ինքնակալ եղաւ . Գաղղոս դէմն ելաւ
ու իր տղուն հետ մէկտեղ ըսպանեցաւ
Եմիլիանոսէն, երկու տարի կայսերութի
ընելէն ետքը : Բայց ծերակոյտն Եմի-
լիանոսը չընդունեցան ու տեղը Վալե-
րիանոսը կայսր նստեցուցին :

251

Հ . Վալերիանոս ի՞նչպէս ըրաւ ինք-
նակալութիւր :

Պ . Ըսկսաւ կարգ գնել տէրուհի, և
առջի բերանը քիչ մը քրիստոնէից ալ
հանգստութի տուաւ . բայց ետքը հա-
նեց ութերորդ հալածանքը խիստ սաս-
տիկ, որուն նմանը չէր եղած : Բայց

253

Ք. Ե ինքն ալ պատիժն առաւ . որ Պարսից
 Շապուհ թագաւորը սրատերազմի մէջ
 զինքը գերի բռնեց , և ձի հեծնելու
 ատենը Վաղերիանոսին վերայ կոխելով
 կելէր , և կըսէր ծաղրելով՝ Թէ Թող
 Հռոմայեցիք Վաղերիանոսին յաղթա-
 նակին արձանը աս ձեռով փորեն : Եւ թը
 տարիէն Շապուհ Վաղերիանոսին աչը-
 ները փորեց , մարմնոյն կաշին ալ քեր-
 թեց :

ՃԻԵ

Հ . Վաղերիանոսին գերի բռնուած
 ատենը Հռոմայեցիք ի՞նչ ըրին :

Պ . Իր Գաղիանոս որդին հօրը վրէժն
 առնելու համար կայսր եղաւ , բայց Յու-
 նաստանի կողմերն ինքնակալ ըլլալ ու-
 զող Ինգենուոս զօրապետին յաղթելէն
 ետև ինքզինքը զուարճութեց առաւ :
 Ան միջոցին ինքնակալութե ետևէ եղող
 երեսուն հօգի ելան որ տէրուիը տակ-
 նու վերայ ըրին , ինչ վան որ Գաղիանոս
 գէմերնին ելաւ , և զանոնցմէ մէկը Մի-
 լան քաղաքին մէջ պաշարած ատենը՝
 ինքը իր զինուորներէն ըսպաննրուեցաւ :

Հ . Գաղիանոսին տեղն ո՞վ անցաւ :

268

Պ . Փլաւիոս Կղոզիոս անուշ բար-
 քով մարդը , որ Գաղիանոսէն ընտրուած
 էր : Ասիկա Գոթացոց վերայ երթալու
 ատենը Յունաստանի կողմերը հիւան-
 դացաւ մեռաւ , և ամէնուն մեծ ցաւ

եղաւ : Ա՛յ զի կըսեն թէ աս մարդը Օ. Ք. Ե
 գոստոսին պէս հեզ, Տրայիանոսին պէս
 քաջ և Անտոնինոսին պէս ալ գթած է
 եղեր :

Հ. Փլաւիոս Կղոզիոսէն ետև ո՛վ եղաւ
 կայսր :

Պ. Աւրեղիանոս անուշով աննշան 270
 ցեղէ կտրիճ և ուժով զօրապետը, որ
 պատերազմի մէջ ինչպան ինըհարիւր հո-
 գիէն աւելի կըսպաննէ եղեր. և անգամ
 մը ինքը մինակ քառսուն հոգի ձեռքովը
 մեռուցեր է : Կտրճուէր համար Յու-
 լիոս Կեսարին նմանցուցեր էին զինքը .
 բայց անոր անուշո՛ւ թիւ չունէր : Յաղ-
 թած թագաւորներուն մէջ ամէնէն ե-
 րևելին Պալմիրայի Չենոբիա թագուհին
 էր, որուն երկիրն առնելէն ետև զինքն
 ալ գերի ըրաւ, ու յաղթանակի համար
 պահեց. և ետքը նորէն առջի հանգըս-
 տուժէր մէջ ասրեւու համար պէտք ե-
 ղածը տուաւ անոր : Աւրեղիանոս հա-
 նեց եկեղեցւոյ իններորդ հալածանքը :

Հ. Աւրեղիանոսի վերջն ի՞նչպէս
 եղաւ :

Պ. Օր մը Մնեսթէոս ատենագրաբար
 սաստիկ յանդիմանւելով Աւրեղիանո-
 սէն՝ միաքը դրաւ որ ըսպաննէ զինքը .
 ուստի Յունաստան երթալու ատենը
 երբոր Հերակլիսայէն կանցնէր Աւրեղիա-
 նոս, Մնեսթէոսին դաշնակիցները մե-
 ուռցին զինքը հինգ տարի տիրելէն ետև :

Ք. Ե Ն. Աւրեղիանոսէն ետև ո՞վ նստաւ
ինքնակալ :

275 Պ. Եօթը ամիս անցնելէն ետքը՝ ծե-
րակոյար ընտրեցին Տակիտոս ազնուա-
կանը որ տարիքն առած աղէկ մարդ էր .
և իր անուանակից Տակիտոս սլատմա-
բանին գրքերուն վերայ մեծ համարում
ունենալով ամէն գրքատուններուն մէջ
գնեւ տուաւ : Ասիկա Պարսից և Թա-
թարաց վերայ երթալու ատենը կայսե-
րու թէր վեցերորդ տարին մեռաւ :

ՃԻԿ

Ն. Տակիտոսին ո՞վ յաջորդեց :

276 Պ. Զօրքը ընտրեցին Պրոբոս անու-
նով կարիճ սպարապետը : Կայսր ըլլա-
լէն ետև ալ շատ կարճութիւն ցցուց .
բայց զօրքը իր սաստիկ կարգին կանոնին
չդիմացան , և Յունաստանի կողմերն
երթալու ատենը մեռուցին զինքը վեց
տարի թագաւորելէն ետև . ետքը վերան
փառաւոր գերեզման մը շինեցին :

Ն. Պրոբոսին տեղն ո՞վ անցաւ :

282 Պ. Մարկոս Աւրեղիոս Կարոս զօրա-
պետը . որ իր Կարինոս ու Նումերիանոս
տղաքը իրեն գահակից ըրաւ : Կարինոս
մուլի մարդ մըն էր . իսկ Նումերիանոս ա-
ռաքինի ու քաջ . քիչ ատենէն Կարոսին
վրանին վերայ կայծակ մը իջաւ ու քո-
վիններովը մէկտեղ ըսպաննեց : Ան միջո-
ցին Նումերիանոս հօրը հետ Թաթար-

ներուն ու Պարսից վերայ գնացեր յաղ-
թեր էր. բայց հօրը մեռնելուն վերայ
այնչափ արցունք թափեց՝ որ աչքի ցաւ
ունեցաւ. և տեղմը երթալու ատեն դես-
պակի մէջ կրնատէր: Իր աները Ապեր՝
ինքնակալ ըլլալու յուսով մեռցընել
տուաւ հուճերիանսը դեսպակին մէջ,
և ձայն հանեց թէ աչքին ցաւէն չիկրը-
նար դուրս ելլել դեսպակէն: Բայց մե-
ռելին հոտէլէն իր չարուին իմացվելով
Գիոկղեախանոս զօրագլուխը կայսր ըն-
տրըվեցաւ, որ իր ձեռքովը զարկաւ մե-
ռուց զԱպերը:

Հ. Գիոկղեախանոս ինչպէս ըրաւ
կայսերութիւնը:

Պ. Ինքը Բաղմատացի ցած մարդու
մը տղայ էր կրսէն, կարճութիւն առաջ
եկած: Անատենները հիւսիսային ազգե-
րը սովորութիւն ըրեր էին որ երբեմն հռո-
մայեցոց վերայ կըվազէին, Գիոկղեախ-
անոսին ատենն ալ Ռուսաստանէն, Լէ-
հաստանէն, Մաճառաստանէն և Գեր-
մանիայի կողմերէն վայրենի ազգերը շատ
զօրքով եկան: Գիոկղեախանոս իր սիրելի
բարեկամ Մաքսիմիանոսն իրեն գահա-
կից ըրած՝ մէկտեղ գէմերնին ելան յաղ-
թեցին: Գիոկղեախանոս առջի տարինե-
րը քրիստոնէից շատ պատիւ կրնէր. բայց
Մաքսիմիանոսը կայսր եղածին պէս՝ ա-
նոր խելքը դարձուց, ու շատ քրիստո-
նեա ջարդել տուին: Քսան տարի տիրե-
լէն ետև կայսերուէ հրաժարեցաւ Գի-

Բ. Ե ոկղէտիանոս, Մաքսիմիանոսին հետ մէկ
 տեղ, և ինչ մահուամբ մեռնիլը յայտնի
 չէ: Ասոր հանած տասներորդ հալա-
 ծանքը խիստ սաստիկ ըլլալուն՝ նոր
 թուական մը ըսկսաւ որ կըսուի Դիոկղե-
 տիանոսի կ՛մ Մարտիրոսաց թուական:

Հ. Երբոր Դիոկղէտիանոսն ու Մաք-
 սիմիանոսը կայսերութէն ելան, տեղեր-
 նին ո՛վ անցաւ:

305

Պ. Իրենց ընտրած Կոստանդ Բլու-
 րոսն ու Գաղերիոսը: Կոստանդ առաքի-
 նի ու խոհեմ մարդ մըն էր. Գաղերիոսը
 կտրիճ՝ բայց անկարգ: Ասոնք տէրութիւն
 մէջերնին բաժնեցին, արեւմտեան կողմը
 Կոստանդն առաւ, արեւելքը՝ Գաղե-
 րիոս: Կոստանդ Անգղիա գնաց, Սկով-
 տիան առաւ, և իր Կոստանդին կամ
 Կոստանդիանոս տղան տեղը դնելով հոն
 մեռաւ, իր տղուն ապսպրրեւով որ քրիս-
 տոնէից տէրութիւն ընէ: Երբոր Գաղերիոս
 չընդունեցաւ Կոստանդիանոսն ու քրիս-
 տոնէից ալ նեղութիւն կուտար, Աստուծմէ
 պատժուելով վերան գլուխը խոցով
 լցւեցաւ, հոտեցաւ, որդնոտեցաւ: Ան-
 առանը իրեն ալ խելքը գլուխը գալով
 քրիստոնէից դէմ հանած հրովարտակ-
 ները բոլոր էտ առաւ, ու անոնց աղօթքն
 ու զեւրսկսաւ, բայց առանց դառնալու
 մեռաւ, և կայսերութիւն բոլոր Կոստան-
 դիանոսին ձեռքը մնաց:

ՃԻԷ

Հ. Կոստանդիանոս ինչպէս ըրաւ Ք.Ե
ինքնակալութիւնը :

Պ. Առջի տարիները քանի մը թշնա- 324
մի սենեցաւ, որոնց գլխաւորն էր Մաք-
սենաիոս իշխանը : Ասոր դէմ երբոր բա-
նակովը Հռոմին վերայ կերթար տարա-
կուսած մտածելով՝ թէ արդեօք ո՞ր ան-
է ճշմարիտ՝ յազթութի տուող, մէյմը-
նալ արևը մտնելու աստէն երկնքին երեսը
երևցաւ երկու սիւն խաչաձև, այսպէս
X, վերան գրած Ասլ յաշիէն : Ասոր
վերայ ամէնքը զարմացան : Մոգերն ըսկը-
սան ըսել թէ Աս գէշ նշան է. բայց Կոս-
տանդիանոս երկրորդ օրը ան նշանովը
գրօշակ մը շինել տուաւ որ միշտ բանա-
կին սաջլէն կըխրկէր : Անկէց ետքը
քրիստոնէութիւնը անդնիտեղը սորվելով
ընդունեցաւ, ու իննսուն հազար հե-
տևակով ութսուն հազար ձիաւորով
Հռոմին մօտեցաւ. Մաքսենաիոսն ալ հա-
րիւր եօթանասուն հազար հետևակով
ու տասնըութը հազար ձիաւորով դի-
մացն էլաւ. ուստի մեծ պատերազմ
էղաւ, Մաքսենաիոսին ձիաւորները
յազթըւեցան, ինքն ալ փախչելու ա-
տենը Տիբերիս գետին կամուրջը փլաւ,
ընկաւ ջրին մէջ խղզըւեցաւ : Կոստան-
դիանոս Հռոմ մտաւ, ու իր ամէն ար-
ձաններուն աջ կողմը երկինքը անսած

խաչը փորել տուաւ՝ աս խորագրով .
 Աս սպատուական խաչին նշանովը Կոս-
 տանդիանոս տէրութիւնը ապստամբի մը
 ձեռքէն ազատեց : Քրիստոնէուէ հետ
 Ուսմունքն ալ ծաղկեցընել ջանաց : Ան
 միջոցին Աօիայի մէջ Մաքսիմիոս կու-
 սակալն ոտք ելաւ ու կայսր ըլլալու մըտ-
 քով Կոստանդիանոսին Ղիկինիոս կամ
 Ղիկիանոս փեսին վերայ պատերազմի
 ելաւ . ու առջի անգամ յաղթեց , բայց
 նորէն վերան ելլել ուզած ատենը մե-
 ռաւ . քրիստոնէայք ալ իր հալածանք-
 ներէն ազատեցան : Անկէց ետքը Կոս-
 տանդիանոսին ու Ղիկիանոսին մէջ կռիւ-
 ընկաւ , ու երկու կողմէն ալ շատ զօր-
 քով պատերազմի սրատրաստըւած , Կոս-
 տանդիանոս քովի քրիստոնէայ եպիսկո-
 պոսներուն հետ աղօթքի կեցաւ . ան-
 դին Ղիկիանոսն ալ քուրմերուն հետ :
 Յաղթըւեցաւ Ղիկիանոս՝ հաշտուի ու-
 ղեց . բայց նորէն պատերազմ բացւելով
 չարաչար յաղթըւեցաւ , ու երգում
 ըրաւ Կոստանդիանոսին որ թշնամուիը
 մէկդի թողած՝ քաշի մնացած օրերն
 ինքիւր գլխուն անցընէ . Կոստանդիանոս
 ալ յանձն առաւ , բայց ետքը իմանա-
 լով թէ նորէն կայսերութե՛ն ետևէ է Ղի-
 կիանոսը՝ Մարտիաղէս զօրապետին հետ
 բռնաբանել տուաւ :

Հ. Կոստանդիանոս քրիստոնեայ ըլլալէն ետքը երբոր ամէն թշնամիներէն ազատեցաւ՝ ինչ գործքի հետ եղաւ :

Պ. Իր աթոռը Բիւզանդիոն փոխարկեց՝ նոր հոռոմ անուանելով : Ետքը ջանալով քրիստոնէութիւնը տարածել՝ հրաման հանեց որ եպիսկոպոսներուն ամէն մարդ հնազանդի. ու եկեղեցւոյ մէջ եղած հերետիկոսները պատժեց, որոնց գլխաւորը Արիոս հերետիկոսն էր :

Ասոր դէմ՝ Նիկիա քաղաքին մէջ ժողով ընել տուաւ, և ինքը իրէքհարիւր տասնըութը եպիսկոպոսով և ուրիշ շատ քահանաներով սարկաւաղներով հոն գտնուեցաւ. ու ժողովքէն ետքը զԱրիոսն իր համախոհներովը քշել տուաւ :

Թէպէտ բոլոր տէրուիւն խաղաղեց Կոստանդիանոս, բայց իր տանը խռովութիւններէն չազատեցաւ, ինչպէս որ իր փաւստա լիրբ կինը, և Կրիսպոս աղան մեռցնել տուաւ :

ՃԻԸ

Հ. Կոստանդիանոս ինչո՞ւ համար Բիւզանդիոն տարաւ իր աթոռը :

Պ. Բուն պատճառը չիղիտցըւիւր : Ոմանք՝ Հռոմայեցոց կռտապաշտութիւնը համար էր կրտեն, ոմանք ալ Ասիային ու Եւրոպային մէջտեղը կենալ ուզեց կրտեն : Պատճառն ինչ ալ ըլլայ՝ Հռոմայեցոց տէրուիւնը կործանումն անկէց եղաւ :

Բ. Ե Ասնոր Հռոմը Կոստանդիանոս տասնը-
չորս թաղ բաժնեց՝ հին Հռոմին պէս .
մէջը Կապիտոլիոն մը շինեց , և խաղե-
րու հրապարակներով՝ եկեղեցիներով
փառաւոր շէնքերով զարդարեց , անունն
ալ Կոստանդինոպօլիս դրաւ : Երկու
տարւան մէջ քաղաքը լճնցուց , ու բո-
լոր տէրութե մեծամեծներուն հետ հոն
փոխադրուեցաւ :

Հ . Կոստանդիանոս Հռոմէն ելեւէն
ետեւ՝ Հռոմ ինչ վիճակի մէջ մնաց :

337 Պ . Կոստանդիանոս բոլոր տէրութիւնը
իրեք բաժնեց . Կոստանդին մեծ որդւոյն
Քաղղիան և արևմտեան կողմերը տուաւ .
Կոստանդ տղուն արևելքի կողմերը .
Կոստաս անունով պզտի տղան ալ Հռոմ
նստեցուց ու Իտալիան անոր յանձնեց :
